



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1762

232

4-75

1972

32  
-75

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ  
ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

*Handwritten signature*  
*Handwritten signature*

2001

2010

ԱՆՈՎՏ. Եզ.

Մ ե ղ

Քարոզացուց

գ ի ա չ Ե Լ Ե ա Լ Ն

Քրիստոս:

Ա. Կրկ/Ք. Ա. 25.



24760-61 Հոգեհոր

աշխատասիրոթիւնը

31.

Ա Մ Ի Ս

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ

Յ Ի Ս Ո Ւ Ր Ս Ի

Գ Ա Ղ Ղ Ի Ե Բ Է Ն Է

Թ Ա Բ Գ Մ Ա Ն Ե Յ

Հ. Գ Է Ո Ր Գ Վ. Փ Ա Ն Չ Ի Կ Ե Ա Ն

ԿՐՕՆ. ՄԽԻԹ.



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Բ Ե Ա Ն Տ Գ Ա Բ Ա Ն

1912.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ուսանց վարանելու կրնանք ըսել թէ Յիսուսի  
Ամենասուրբ Սրտին շերմնոսանդուծիւնն ամէնէն  
ազդեցիկ եւ ամէնէն անվրէպ միջոցն է երանու-  
թեան հասնելու:

Դնշն արդեօք մեր բովանդակ կրօնական պար-  
տաւորութիւնները ճշդիւ կատարելու կը ջանանք.  
ինչո՞ւ ոգի ի բոյն կը ծգնինք մեր շար միտու-  
թեանց յաղթելու եւ մեր արմատացեալ կրից  
վրայ յաղթանակ կանգնելու. եթէ ոչ ստանալու  
համար Աստուծոյ սէրը՝ որ միայն կարող է զմեզ  
յուրիտեանս երջանկացընել: Ուրեմս յամհունս  
երջանիկ համարելու ենք ինք զինքնիս, ունենա-  
լով մեր տրամադրութեան ներքեւ՝ քաղցր, դի-  
րին եւ անվրէպ միջոց մը անոր հասնելու: Այս  
միջոցն է Ամենասուրբ Սրտին շերմնոսանդու-  
ծիւնը, ուր ամենայն ինչ կը ներշնչէ ի մեզ սէր՝  
որուն առարկան է Յիսուսի Բրիստոսի սիրտորո-  
րոյ սիրտը: Այս Սիրտը՝ որ յամնս առաւ զե-  
նուիլ մեզի համար եւ երկրպագելի Հաղորդու-  
թեան մէջ ցկատարած աշխարհի մեզի հետ  
բնակիլ: Սիրով ընդգրկենք ուրեմս այս շերմ-  
նոսանդուծիւնը:

Այս Ամենասուրբ Սիրտն աստուածային ձեռքաց  
հրաշակերտն է, ամենասքանչելի ստեղծագոր-  
ծում: Աշխարհիս վրայ բան մըն ալ չի կրնար

Մտոր հետ համեմատուիլ: Աստուած զայն ստեղծած ժամանակ՝ բնութեան ամէն ձիրքերով եւ շնորհքներով զարդարեց եւ մարդկային գիտութիւնը կարող չէ ի վեր հանել այն զանօճերը, զորս Յաւիտենականն այս Սրտին մէջ զետեղած է: Մարբութեան արեգակն է, գորովոյ եւ գթութեան յորդանոս ազգիւր, խոնարհութեան զանօճարան, սիրոյ վտարան եւ առաքինութեանց ամէն զարդերով օժտուած սրբարան: Ո՛հ, Յիսուսի Ամենասուրբ Սիրտն ինչ անփոփոխելի քաղցրութիւն է: Իւր գթութիւնը ճուր մըն է որ կարող է բովանդակ աշխարհքս տառնել, եթէ անձնասիրութեան եւ անտարբերութեան սանձքն անոր արդիւնքներն ի դերու չհամեն: Կը զարմանանք մեծ, մարուր եւ մեծամեծ սրտերու վրայ, եթէ այսպիսի սրտերու հանդիպինք, շենք կրնար սիրել զաղբիլ: Արդ՝ ահաւասիկ Աստուծոյ մը սիրտը, սիրտ մը՝ որ արժանի է մեր անսահման սիրոյն եւ անեզր մեծարանաց:

Ո՞րոնք են Ամենասուրբ Սրտին ջերմեանդուութեան արդիւնքները: Հոս համառօտիւ զսենք, որովհետեւ զբոյլիս մէջ ընդարձակ պիտի տեսնենք: Յիսուս Զրիստոս հանդիսաւորապէս խտտացած է որ խաղաղութիւն եւ օրհնութիւն պիտի պարգեւէ այն ջերմեանդ ընտանեաց՝ ուր իւր Սրտին պատկերն ի տես դրուած է. կրօնաւորաց եւ քահանայից՝ իրենց վիճակին կատարելութեանը համեմելու շնորհք, քահանայից՝ խտտացած սրտերը շարժելու ձիրք, մեղաւորաց՝ իրենց արմատացեալ գէշ ոճակութիւններէն ուղղուելու զօրութիւն, գաղջ հոգիներուն եռանդ, ջերմեանդներուն՝ բարձրագոյն կատարելութիւն, իսկ Ամենասուրբ Սրտին ջերմեանդութիւնը տարածող-

Հրատարակութիւնք

եղբայրութեան

Անարատ Գրութեան Մ. Կոստին:

1. Մէզհէպէ գարլը սեօզերէ ճէվապէր. Տերփիլեան Հ. Մանուէլ Ա. ին թերճիւն. 1866: Թղթիկամ. 1-50, կիսլթ. 1-75, կիլի. 2-50:
2. Թէօպէրեար Մարիամ Մագդաղենացիին կէճէլերի. իթալլան լիսանքնտան Կ. Ա. ին թերճիւն. 1862: Թղթիկամ. 1-—, կիսլթ. 1-25:
3. Հինն Աստուած: Գոնրատ Պոլանաէնի ժամանակակից վէպ. 1872: Թղթիկամ. —35, կիսլթ. —50:
- 3ա. Ալլաշը գատիւն: Գոնրատ Պոլանաէնի պիթ հիբեպէսի. 1872: Թղթիկամ. —50, կիսլթ. —75, լթիկամ. —90:
4. Յիսուս էֆէնալիֆին մի պարէր Երեւինին եթթիսուեա տօգոճը կիլի. ին հազարլը. Առաքելեան Կ. Ա. ին թերճիւն. 1874: Թղթիկամ. 1-—, կիսլթ. 2-25, լթիկամ. 2-50, կիլի. 2-80, կիլի. 3-—, սակեղ. 5-—:
5. Գրիսմիան թէֆէրբիւրլերի Տերփիլեան Հ. Մանուէլ Ա. ին թերճիւն. 1875: Թղթիկամ. —75, կիսլթ. 1-—:
6. Արթիւք Պատարաստութեան Ե. Գոհտի թեան սրբոյ պատարաստի վտան իրա-

- քանչիւր աւուր շարաթու: Թարգմ. Ի  
 Հ. Թաղէէ Վ. Թոռնեան. 1880: Թղթա-  
 կազմ. 1.—, կիսլթ. 1.25, լթ կզմ. 1.50,  
 կկշէ 2.—:
7. ԵՆԻԻ սուա քիթապը. 1839: Թղթկզմ.  
 2.—, կիսլթ. 2.25, լթ կզմ. 2.45, կկշէ.  
 2.90, կզկզմ. 4.50, կշկզմ. ոսկ. 6.—:
8. Լէյսլիի Օգոստինոս (Գիշէրք Ս. Օգոս-  
 տինոսի): Էնգարէ եպիսկոպոսու Վոա-  
 քելեան Կարապետ Վ. ին թէրճիմէսի.  
 1881: Թղթկզմ. 2.—, կիսլթ. 2.30,  
 լթ կզմ. 2.60, կկշէ 2.90:
9. Լուրտ միւճիգամ լարը: Էնգարէ եպիս-  
 կոպոսու Առաքելեան Կարապետ Վ. ին  
 թէրճիմէսի. 1881: Թղթկզմ. 1.50,  
 կիսլթ. 1.75, կկշէ. 2.50:
10. Լղօթագիրք պաշտօնասիրաց սրբոյն  
 Յովսէփայ Աստուածաճօր: Ի Հ. Ղեւոնդ  
 Վ. Յոննանեան 1883: Թղթկզմ. 2.—,  
 լթ կզմ. 2.50, կկշէ 2.80, կշկզմ. 4.20,  
 կզկզմ. ոսկ. 4.50:
11. Ֆիբրի տուասընս մի. թէպլեգ Հագգ  
 մաստէլէր Թ. Վ. Տէրփիշեան Մանուէլ  
 Վ. ին թէրճիմէսի 1884: Թղթկզմ. —.50,  
 կիսլթ. —.75, լթ կզմ. 1.—, կկշէ. 1.25:
12. Տուա քիթապը ազիգ Պիքիրին վէ  
 Ս. Յովսէփին Իպատէթկի զարլարը Իշին:  
 Էնգարէ եպիսկոպոսու Առաքելեան Կա-  
 րապետ Վ. ին թէրճիմէսի. 1884: Թղթա-  
 կազմ. 2.—, կիսլթ. 2.25, լթ կզմ. 2.50,  
 կկշէ. 2.85, կշկզմ. 4.50, կզկզմ. ոսկ. 6.—:
13. Մեկնութիւն (Համառօտ) նկարագրաց  
 ճոմարիտ կրօնի, գրեալ է Ճէրտիկ Կարգ.  
 թրգմ. Ի Հ. Սամուէլէ Վ. Գաթրճեան.  
 1885: Թղթկզմ. —.50, կիսլթ. —.75:
14. Մարկեղինոս կամ Եկեղեցի առ Կոս-  
 տանդիանոսի: Թրգմ. Հ. Ն. Վ. Ա. գե-  
 րեան. 1886: Թղթկզմ. 1.—, կիսլթ. 1.25:
15. Քէյոյէ Մայիս այը, եախօտ Նէվթարզ  
 Մաշի Մէրիէմ. 1888: Թղթկզմ. 1.—,  
 կիսլթ. 1.25, լթ կզմ. 1.50:

16. Վաննութիւն Յիսուսի Քրիստոսի. Թով-  
 մաս Գեմիացի: Թրգմ. Հ. Թաղէոս Վ.  
 Թոռնեան. 1894: Թղթկզմ. 3.50, կիսլթ.  
 3.75, լթ կզմ. 4.—, կկշէ. 4.35, կշկզմ.  
 ոսկ. 5.20:
17. Հոգի կրօնաւորական, 1894: Թղթկզմ.  
 1.50, կիսլթ. 1.75, լթ կզմ. 2.—, կկշէ.  
 2.35, կշկզմ. ոսկ. 3.20:
18. Լաւրեան Լիւանիայի վրայ Մասճա-  
 կաններ: Թարգմ. Ստեփան Վ. Մեւ-  
 քիսեղեկեան, Արքեպիսկոպոս Տինչիոյ  
 (ՀրժԻԼ. Եպի. Կարնոյ), 1896: Թղթկզմ.  
 3.—, կիսլթ. 3.25, լթ կզմ. 3.50, կկշէ.  
 4.—, կշկզմ. ոսկ. 5.—:
19. Մատենիկ Մարեմայ Դստերաց «Բարե-  
 պաշտական Միութեանց», Ի Տ. Ալե-  
 Փաստերի: Թրգմ. Ի Հ. Մանուէլէ Մա-  
 շուրեան 1898: Թղթկզմ. 1.50, կիսլթ.  
 1.75, լթ կզմ. 2.—, կկշէ. 2.50, կշկզմ.  
 ոսկ. 3.50:
20. Սկզբունք կրօնաւորական կենաց: Թրգմ.  
 Հ. Ա. Վ. Սէֆէրշեան 1898: Թղթկզմ.  
 1.—, կիսլթ. 1.25, լթ կզմ. 1.50, կկշէ.  
 2.—, կշկզմ. ոսկ. 3.—:
21. Ս. Ա. Լիգուորեայ Աղօթք զլնաւոր  
 միջոց երանութեան Հօսանելու: Գերմա-  
 ներենէ թրգմ. Հ. Գ. Փանչիկեան 1899:  
 Թղթկզմ. 1.—, կիսլթ. 1.25, լթ կզմ.  
 1.50, կկշէ. 2.—, կշկզմ. ոսկ. 3.—:
22. Համառօտ գլխաւորութիւն Չարլարանաց  
 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ըստ  
 Կատարիսեայ Էմմերթ, Հանդերձ կարճա-  
 ռօտ պատմութեամբ վարուց նոյն Կոս-  
 սին: Թղթկզմ. 2.—, կիսլթ. 2.50, լա-  
 թակազմ 2.75:
23. Սրբական Տարի կամ Ընդհանրական  
 Յոբելեան Հազար իննհարիւր ամին:  
 — Հ. Բ. Պ. — Թղթկզմ. 0.25, կիսլթ.  
 0.50:
24. Դամացոյց չարլարանաց կամ մոսճու-  
 թիւնը եւ իղէք վասն տանջանացն Յի-

- սուտի քրիստոսի ի սուրբ Ափոնզոսէ Լի-  
զորի: Թրգմ. Հ. Թարգեստ Վ. Թռռնեան,  
երեալ Յաւելուած մի. 1900: Թղթկզմ. 1-50,  
կիսլթ. 1-75, լթկզմ. 2.-:
25. Իննորեայ պատրաստութիւնք Տօնից Ս.  
Կուսին եւ Սրտին Յիսուսի Հանդերձ  
յաւելուածով աղթից: Յօրինեալ եւ  
հաւաքեալ ի Հ. Յակոբբայ Վ. Է. Բօ-  
սեան: 1901: Թղթկզմ. 1.-, կիսլթ. 1-25,  
լթկզմ. 1-50, կիլթ. 2.-:
26. Թագաւորութիւն Սրտին Յիսուսի, 1902:  
Թղթակազմ. —50, կիսլթ. —75:
27. Երազարդ ալիսարհքը Ս. Պատարազի,  
Գոհութեան խորհրդոյ եւ Հաղորդու-  
թեան վրայ ճառեր: Յովսէփ Ե. Վ.  
Մելքիսեդեկեան 1903: Թղթկզմ. 3-50,  
կիսլթ. 4.-:
28. Ի յիշատակ Յիսնամեայ յորելինի Անա-  
րատ Յղութեան Մարեմայ յամէ 1854  
Դեկտ. 8, ցամառ 1904 Դեկտ. 8:  
Թղթկզմ. 1.-:
29. Հոգեւորական պատերազմ, մատենիկ որ  
ճշմարիտ առաքինութեան ճամբան ցու-  
ցնելով՝ ներանձնացեալ կեանքը հա-  
ճելի կ'ընէ ու զմեզ քրիստոնէական կա-  
տարելութեան ծագը կը հասցընէ: Թրգմ.  
Յ. Ա. Բ. Գ. Կ. Մ., 1906: Թղթկզմ.  
1-50, կիսլթ. 1-75, կիլ. 2-35:
30. Եկեփ սոււա բիթապը. Բ. տպ. 1907:  
Թղթկզմ. 2.-, կսլթ. 2-50, լթկզմ.  
2-75, կիլթ. 3.-, կզկզմ. 4-50, կզկզմ.  
ռակ. 5-50:
31. Ամիս ամենասուրբ Սրտին Յիսուսի:  
Թրգմ. Հ. Գեորգ Վ. Փանդիկեան, 1912:  
Թղթկզմ. 1-75, կսլթ. 2-25, լթկզմ.  
2-80:

(Գիններն ֆրանքով են:)



ներուն անունները պիտի արժանագրուին Յի-  
սուսի Սրտին մէջ եւ երբեք պիտի չընջուին:  
Սակայն՝ նթէ Յիսուս խոստացած ալ չըլլար,  
դարձեալ անկարելի էր այս շնորհաւորութեան  
արդիւնքներն ուրանալ:

Հ. տը լա Գոլոմպիէն՝ որ Ամենասուրբ Սրտին  
առաջին երկրպագուն եղաւ, իւր հոգեւոր որդւոցը  
կը յանձնարարէր այս շնորհաւորութիւնը՝ իբրեւ  
անվրէպ միջոց փրկութեան հասնելու, նոյն իսկ  
բողոքականներուն՝ որոնց քով ուրիշ ամէն միջոց  
ի դեռել էր ելած եւ սքանչելի արդեանցքը վրայ  
ինքն իսկ կը զարմանար:

Մենք եւս փափագեալով ներշնչել այս շնորհ-  
աւորութիւնը մերազնէից, հայերէնի վերածե-  
ցինք այս ոսկեղինիկ գրքոյկս. իցիւ թէ տարա-  
ծուէր Յիսուսի Ամենասուրբ Սրտին շնորհաւոր-  
ութիւնը մեր մէջն ալ, որով լիովին հասած  
կ'ըլլանք մեր յառաջադրած նպատակին:

Զմիւռոմիտ, 8 Սեպտ. 1911:

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ



Ա Մ Ի Ս  
Ա Մ Ե Ն Ա Ս ՈՒ Ի Բ Մ Ր Տ Ի Ն  
Յ Ի Ս ՈՒ Ս Ի

—  
Գ Ա Ղ Ա Տ Ա Ն Ք

ԱՌ

Ա Մ Ե Ն Ա Ս ՈՒ Ի Բ Կ Ո Յ Ս

Ո՛վ Մարիամ, գորովագութ մայր, փաստարան եւ ապաւէն մեղաւորաց, քու բարեխօսութեամբդ միայն մեզի ամէն բարիք կը հասնի: Ո՛րչափ երջանիկ կ'ըլլայինք, եթէ կարենայինք այս գրքոյկովս քու աստուածային Որդւոյդ ամենասուրբ Սիրան եւս քան զեւս ծանօթացընելով՝ զքեզ ալ եղանակաւ մը փառաւորել: Ի՞նչ քաղցր է մեզ այս գրքոյկս ոտիցդ առջեւ դնել. բայց մի թողուր որ քու պաշտօնասիրացդ գրուածքներէն քաղուած մատենիկս՝ մեր փանսքի ձեռքէն անցնելով՝ իւր ամբողջ օծութիւնն եւ յառաջ գալի պտուղները կորսնցընէ:

Ո՛վ Սիրտ Մարեմայ, առաջին սրբաւայր, առաջին խորան, ուր զենաւ Յիսուսի Սիրտը,

դունն ես մի միակ արժանի սիրտ անոր հետ միանալու. միայն դունն թափանցած ես անոր սիրոյն գաղտնեացը, զոր մեղք հաւատքի քողին մէջէն հաղիւ ընդ աղօստ կը նշմարենք, եւ զոր մեր մեղաց խաւարն օրէ օր աւելի կը բառնայ մեր աչքէն: Ո՛վ Սիրտ Մարեմայ, քու Որդւոյդ Սիրտը սիրել բաղձացողներուն դունն ինքնին սորվեցուր, տար զանոնք փրկութեան այն սրբավայրը, այն ամրոցը, ուր թշնամին չի կրնար մերձենալ, եւ ապաւինողը չի կորսուիր: Ո՛հ, ինչո՞ւ ամէնքն այս աստուածային Սիրտը մտնել չեն ուզեր, քանի որ բաց է ամէնուն անխտիր, եւ դունն, ով ապաստան մեղաւորաց, ամէն օր նորանոր միջոցներ կը հնարես զանոնք շահելու: Մենք որչափ մեր ոճիրները կ'աճեցընենք, դուն ալ այնչափ քու բարերարութիւններդ կը բաղձապատկես: Գոնեա՛, ով Մարիամ, այս Սրտին մէջ մտնողն ու հոն բնակիլ ուզողն ալ անկէ երբեք դուրս չելլէ: Ո՛վ մայրերու ամէնէն պատուականը Մարիամ, դուն անձամբ այս սուրբ բնակարանիս պահապանն եղիր, եւ քու բոլոր զաւակներդ հոն պահէ: Թող որ մեր բովանդակ կենաց մէջ մեծարենք եւ սիրենք, քանի որ մեր քովն է սրտիդ հետ միացեալ այս ամենասուրբ Սիրտը, թող որ մեր հաւատքին, մեր ջերմեռանդութեան եւ մեծարանաց եռանդը դարմանէ այն նախատինքները՝ որոնցմով իւր թշնամիներն ամէն օր կը նախատեն, եւ չըսուի

թէ անոնց ամպարիշտ ատելութիւնը մեր սերէն աւելի բուռն է:

Ո՛վ ամենասուրբ Սրտեր Յիսուսի եւ Մարեմայ, ձեզի նուիրուած սրտերուն ամէնքն անդադար այրին տոչորին ձեր Սրտին հրովը. թող բոլոր սրտերն մէյ մէկ խորաններ ըլլան, ուր դուք իբրեւ միակ արժանի ողջակէզ Աստուծոյ Հօր մատուցուիք:

Ո՛վ Մարիամ, օրհնէ՛ քու Որդւոյդ ամենասուրբ Սրտին ջերմեռանդները, իբրեւ քու սեպհական եւ սիրելի զաւակներդ, ամէն:

Հ Ի Ա Հ Ա Ն Գ

Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեռանդութեան զլխաւոր նպատակն է պատուել այն երեսունուերեք տարիները՝ զոր Յիսուս երկրիս վրայ անցուց եւ զորս մարդկան փրկութեան եւ իւր Հօր փառացը նուիրեց. ասոր համար է որ Յիսուսի ամենասուրբ Սրտին ամիսն երեսունուերեք օր որոշուած է:

Ահա այս ջերմեռանդութեան կատարման եղանակը: Նախ՝ պէտք է ամէն օր եռանդեամբ կատարել Հրահանդէս ետքը դրուած Յիսուսի ամենասուրբ Սրտին նուիրուած յերգութիւնները. յետոյ կու գայ ընկերացած մը՝ որ մտածականի իբրեւ նիւթ ալ կրնայ ծառայել եւ կը վերջանայ «) սրայական աղօթքով մը՝ զոր օրւան մէջ շատ անգամ կրկնե-

լու է, ք) մտածականի նիւթին նման հրահանգով մը, եւ ք) Յիսուսի եւ Մարեմայ ամենասուրբ Արտերուն երիցս պաղատանքով:

Այս կրթութիւնը կարելի է կատարել ջերմեռանդութեան յօժարութեան համեմատ, առանձին կամ հասարակաց՝ տարւոյն որեւիցէ ժամանակը. բայց ամէնէն պատշաճ ժամանակը կ'երեւայ մեզի Յունիս ամիսը, որուն մէջ սովորաբար՝ ամենասուրբ Հաղորդութեան եւ միշտ՝ ամենասուրբ Արտին Յիսուսի տօնը կը հանդիպի: Այսպէս այս ջերմեռանդութիւնը կը յաջորդէ Մարեմայ ամսոյն, որ անոր իբր պատրաստութիւն մը կ'ըլլայ: Ամենայն վստահութեամբ կը հաստատենք որ այս ամսուան մէջ բարեպաշտ հոգիները՝ հզօր միջոց մը պիտի գտնեն խոնարհութեան, հեզութեան եւ մաքրութեան առաքինութեանց մէջ յառաջանալու, բայց մանաւանդ հսկայաբայլ պիտի յառաջանան աստուածային սիրոյ մէջ՝ որ կրօնի հոգին է:

Հասարակաց աղօթքներուն Աստուծոյ առջեւ շատ աւելի զօրաւոր ըլլալը գիտնալով՝ կը յորդորենք բարեպաշտ հոգիներն՝ որ սրձափ կարելի է միատեղ ընեն այս կրթութիւնը: Կամ լաւ եւս կ'ըլլայ, եթէ Յիսուսի Արտին պարտուպատշաճ յարգանքը տալու համար, ծանօթ անձանց կամ կրօնաւորական հասարակութեանց հետ միանալով՝ այս ամսուան ամէն օրերուն համար վիճակ ձգեն եւ որուն ինչ որ որ ինչայ, նոյն օրն ի պատիւ

Ս. Արտին հաղորդուի եւ Ս. Հաղորդութեան եղած ամէն տեսակ անարգանաց համար Յիսուսէն թողութիւն խնդրէ, կամ եթէ կարելի է վիճակած օրը պատարագ մը մատուցանել տայ ի պատիւ Յիսուսի Արտին: Այս կերպով Յիսուսի ամենասուրբ Սիրան ամէն օր իրեն ամէնէն աւելի հաճելի եղանակաւ կը մեծարուի. որովհետեւ տարակոյս չկայ որ կրօնի ներդրութեանց մէջէն՝ զԱստուած ամէնէն աւելի փառաւորողն եւ հաւատացելոց ամէնէն օգտակարը Ս. Հաղորդութիւնն եւ Ս. Պատարագն է:

Ս. Կուսին պաշտօնասիրաց կողմանէ աւարկութիւն մը եղաւ, որ ամենեւին չզարմացուց զմեզ. որովհետեւ մենք ալ ունեցանք վայրկեան մը սոյն երկիւղը: Այս նոր ամիսը, կ'ըսեն, Մարեմայ ամսոյն յարգը պիտի նուազեցընէ: Եթէ ստուգիւ այս նոր ամիսը Ս. Կուսին ջերմեռանդութիւնը կարենար նսեմացընել, մենք ալ կը վարանէինք եւ իսկոյն մեր բողձանքէն ետ կը կենայինք: Բայց խեղճ մեղաւորներն որուն միջնորդութեամբ Յիսուսի պիտի երթային, եթէ Մարիամ չըլլար: Տարակոյս չունինք, որ այս ամիսը Մարիամ ինքնին ներշնչած է. Յիսուսի ամենասուրբ Արտին միջոցաւ զՄարիամ փառաւորելու փափազն է՝ որ Ս. Կուսին ամէնէն ջերմեռանդներէն մէկուն թելադրեց առ իւր աստուածորդին այս նոր ջերմեռանդութիւնը:

Եւ սակայն ի՞նչ է Մարեմայ մատուցուած պաշտօնին նպատակը, եթէ ոչ իւր միջոցաւ Յիսուսէն շնորհք ընդունիլ. ինչո՞ւ զինքը կը մեծարենք եւ կը սիրենք, որովհետեւ մայր է Յիսուսի. ինչո՞ւ համար Աստուած զՄարիամ այնչափ մեծ, կատարեալ, գթած եւ հզօր ըրաւ, անոր համար վասն զի մայր պիտի ըլլար անոր՝ որմէ մեզի կը հոսն ամէն բարիք: Եթէ Մարիամ ինքնին հաճէր իւր Սրտին բաղձանքները մեզի յայտնել, ի՞նչ պիտի խնդրէր մեզմէ. ի՞նչ պիտի քարոզէր մեզի, եթէ ոչ ճանչնալ եւ սիրել զՅիսուս: Ուրեմն եթէ այս նպատակիս հասնելու համար՝ ամենասուրբ Սրտին ջերմեռանդութիւնն ամէնէն արագ, ամէնէն ազդու միջոցներէն մին է, կրնանք երբեք տարակուսիլ որ զինք մեծարելով՝ զՄարիամ ալ մեծարած կ'ըլլանք, իւր Սրտին ամէնէն ջերմաջերմ իղձերէն մէկուն կը համապատասխանենք. եւ միթէ այսչափս բաւական չէ՞ ինք զինք Յիսուսի նուիրողին համար:

Ս. Եկեղեցին այս ջերմեռանդութեան համար ներողութիւններ ալ շնորհած է. որ են՝ 1. Յունիս ամսոյն մէջ ի պատիւ Յիսուսի Սրտին երաշարակաւ կամ առանչին մասնաւոր աղօթք եւ բարեպաշտական դործքեր կատարողին՝ օրը մէկ անգամ 7 տարւ. եւ 7 քառսն. ներողութիւն. — 2. Այս բարեպաշտական դործերն Յունիս ամսոյն մէջ կամ ա՛նէն օր առանչին կատարելով եւ կամ

գնէր ասն անգամ երաշարակաւ վերստին դռնէն ներկայ ըլլալով՝ սոյն ամսոյն մէջ որեւիցէ օր մը կամ Յուլիս ամսոյ առաջին ութ օրերէն մէկուն մէջ խոստովանանք ըլլալով՝ հաղորդուող եւ եկեղեցի կամ հրապարակական մատուռ մ'այցելութիւն ընելով՝ Ս. Քահանայապետին դիտաւորութեան աղօթողին Լեւիտոսը ներողութիւն:

(Լեւու ԺԳ. 1902, Մայիս 30.)

## Ն Ո Ւ Ի Բ Ո Ւ Մ Ն

ԱՌ

### ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

(Ամսոյս մէջ ամէն օր ընելու է:)

Ո՛վ Յիսուս, քեզի կը նուիրեմ իմ սիրտս, զիր զայն քու Սրտիդ մէջ: Քու Սրտիդ մէջ կ'ուզեմ բնակիլ. քու Սրտովդ կ'ուզեմ զքեզ սիրել. քու Սրտիդ մէջ կ'ուզեմ ապրիլ աշխարհիս անձանօթ եւ քեզի միայն ծանօթ. քու Սրտեզ պիտի առնում սիրոյ հուրը, որպէս զի իմինս սպառէ. հն պիտի գտնեմ զօրութիւն, լոյս, քաջալերութիւն եւ ճշմարիտ մխիթարութիւն: Երբ թողնամ՝ Սիրտդ զիս պիտի զօրացընէ, երբ տրտմամ՝ Սիրտդ զիս պիտի ուրախացընէ. երբ խռովեմ՝ Սիրտդ զիս պիտի հանդարտեցընէ:

Ո՛վ Սիրտ Յիսուսի, տուր որ իմ սիրտս քու սիրոյդ խորանն ըլլայ. լեզուս քու բա-

րութիւնդ հռչակէ. աչուրներս միշտ քու վէրքերուդ վրայ սեւեռած ըլլան. միտքս քու երկրպագելի կատարելութիւններդ մտածէ. յիշողութիւնս քու ողորմութեանցդ յիշատակը միշտ պահէ. ամենայն ինչ յայտնէ յիս քու Սրտիդ ունեցած սէրս, ո՛վ Յիսուս, եւ սիրտս քեզի համար ամէն զոհերու պատրաստ ըլլայ:

Ո՛վ Սիրտ Մարեմայ, Յիսուսի Սրտէն ետեւ ամէնէն սիրելին, ամէնէն կարեկիցը, սրտերու ամէնէն գթածը, քու որդւոյդ Սրտին ներկայացուր մեր նուիրումը, սէրը, յառաջագրութիւնները: Այսու ինք պիտի խղճայ մեր խեղճութեանց վրայ, եւ զմեզ պիտի ազատէ անոնցմէ, եւ այս աշխարհիս վրայ մեր պաշտպանն ըլլալէն ետեւ՝ ո՛վ Մայր Յիսուսի, յերկինս ալ մեր թագուհին պիտի ըլլաս, ամէն:

**Ա. Օ Ր**

Յիսուսի ամենաուրբ Սրտին ջերմ-ամբողջ-  
 իեան սիրքն ու հասարակ-նիւնը:

Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեան-  
 դութիւնն եկեղեցւոյ չափ հին է: Ասիկայ խաչին վրայ սկսաւ, ուր աստուածային Սիրտը՝ տիգաւ խոցուելով՝ այն օրէն ի վեր անբունարարելի ապաստանարան մը բացաւ հաւատացելոց: Երբ առաջին քրիստոնեայք

եւ մարտիրոսք խաչեցեալ Յիսուսի վէրքերը կը համբուրէին այնպիսի հաւատքով եւ սիրով՝ որ անոնց յաղթանակել կու տար տանջանայ եւ մահուան անգամ, ո՛վ կրնայ տարակուսիլ թէ ասոնք իրենց փրկչին խոցեալ կողին վրայ իրենց շթուէքը մերձեցուցած եւ անոր շարձարանքը մտածած ժամանակ՝ յիշած չըլլան միանգամայն անոր Սիրտն եւ այս Սրտին անհուն սէրը, որուն բոցերը կարծես այս խոցուածքէն դուրս կը ցայտէին: Նմանապէս ամբողջ դարերու ամէնէն մեծ Սուրբերը՝ Ս. Աւգոստինոս, Ս. Բեռնարդոս, Ս. Բոնաւենտուրա, Սրբուհի Գերգորուտա, Սրբուհի Մաթիլտէ, Ս. Կատարինէ Սիննացին, այս ջերմեանդութեան առանձինն եղանակաւ յայտնուելէն յառաջ իսկ՝ անոր գաղտնեաց թափանցած էին: Բայց Յիսուսի ամենասուրբ Սրտին հրապարակական պաշտօն մատուցանելն եօթնեւտասներորդ դարուն վերապահուած էր: Աստուած այս ջերմեանդութեան հաստատութեամբ իւր դիտած գթառատ նպատակներն յայտնելու համար, Փարէ-լը-Մոնիալի Այցեելութեան կուսանաց կարգէն Մարգարիտա-Մարիամ Ալագօզ անուամբ խոնարհ միանձնուհին ընտրեց: Այս բարեպաշտ կոյսն՝ ծնեալ 1647ին, ի Պուրկոնեք, իւր մատաղ հասակէն սկսեալ արժանացաւ շատ մ'առանձնական երկնային շնորհաց, որոնց այնպիսի մեծ հաւատարմութեամբ

Համապատասխանեց, որ Տէրն մեր՝ զինքը շատ մեծ կատարելութեան մը բարձրացուց եւ նոյն իսկ հաճեցաւ իրեն հետ ընտանեբար խօսակցիլ:

Օր մ'անոր երեւնալով ըսաւ. «Իմ աստուածային Սիրտս այնչափ զեղեալ է սիրով առ մարդիկ՝ որ իւր վառեալ սիրոյն բոցերն բովանդակել չկարենալով յինքեան, պէտք է որ քու միջնորդութեամբդ զանոնք սփռէ եւ ինքզինք մարդկան յայտնէ, որպէս զի իւր բովանդակած գանձերովը զանոնք ճոխացնէ: Ահա քեզի կը յայտնեմ սոյն գանձերուն արժէքն. անոնց մէջ բովանդակուած են սրբութեան եւ փրկութեան շնորհքներ՝ զմարդիկ կորստեան անդունդէն հանելու համար:»

Քիչ յետոյ աստուածային փրկիչն նպատակներն աւելի պայծառ եղանակաւ յայտնուեցան երանելի Մարգարիտա կուսին: «Մարմնոյ եւ Արեան տօնին ութօրէքին մէջ օր մը, կ'ըսէ Երանելին, Ս. Խորհրդեան առջեւ աղօթած միջոցիս, Աստուծմէ առատապէս շնորհքներ ընդունելով՝ սիրոյ փոխարէն սէր հատուցանելու դրդում մը զգացի. նոյն հետայն փրկիչն ինծի երեւնալով ըսաւ. «Չես կրնար ինծի աւելի մեծ սէր հատուցանել, բայց եթէ կատարելով այն բանը, զոր յայնչափ անգամ քեզմէ խնդրեցի:» Յետոյ իւր աստուածային Սիրտն ինծի բանալով՝ «Ահա, ըսաւ, այս Սիրտն որ այնչափ սիրեց զմար-

դիկ, անոնց համար բան մը չինայեց, մինչեւ անգամ իւր սէրն անոնց ցուցնելու համար հայեցաւ, մաշեցաւ. իսկ մարդկան մեծամասնութիւնն ի փոխարէն՝ ապերախտութիւն, անարգանք, անպատուութիւն, սրբապրդժութիւն եւ ցրտութիւն հատոյց ինծի իմ սիրոյ խորհրդեանս մէջ: Սիրտս ալ աւելի կը զգածուի, տեսնելով որ մեծաւ մասամբ ինծի նուիրուած սրտերն են ասոնք: Անոր համար քեզմէ կը խնդրեմ որ իմ աստուածային Սիրտս մեծարելու եւ խորաններու վրայ ինծի եղած անարդանաց հատուցում ընելու համար Մարմնոյ եւ Արեան տօնին ութօրէքին երէն եկող առաջին ուրբթի օրը՝ ի պատիւ իմ Սրտիս առանձին տօն մը հաստատուի: Սոյն օրւան մէջ մարդիկ Սիրտս պատուեն՝ հաղորդուելով ի քառութիւն եւ ի հատուցումն այն թշնամանաց եւ արհամարհանաց, որոնք խորաններու վրայ ի բազմոցի դրուած ամենասուրբ Հաղորդութեան դէմ եղած են: Կը խոստանամ քեզի, որ Սիրտս պիտի ընդարձակի իւր աստուածային սիրոյն աղդեցութիւններն առատութեամբ շնորհելու անոնց, որոնք այս հատուցումն ու քառութիւնը կը կատարեն, եւ առ այն կը յորդորեն ուրիշներն ալ:» Խոնարհ մայրապետն պատասխանեց. «Բայց Տէր իմ, որուն կը դիմես: Այնքան փանաքի արարածի մը,

1 Լուսաւորչայ Բարեկենդանէն երկու օր յառաջ:

ողորմելի մեղաւորի մը. որուն անարժանութիւնը՝ նպատակիդ կատարումն անգամ կրնայ խափանել: Գուն ուրիշ այնչափ այնչափ ընտիր հոգիներ ունիս, որ կարող են զայն կատարել:» — «Ի՛նչ, ըսաւ Տէրն մեր, չե՞ս գիտեր որ ես ամէնէն տկար ծառաները կը գործածեմ, հզօրներն ամչոյնելու համար, եւ սովորաբար փանաքիմաց, տխեղծ հոգիներուն վրայ իմ կարողութիւնս աւելի փառաւորութեամբ մատնանիշ կ'ընեմ, որպէս զի իրենք իրենց բան մը չվերագրեն:» — «Տո՛ր ուրեմն ինձի, ըսաւ միանձնուհին, տուր հրամայածդ կատարելու միջոց:» Այն ատեն Տէրն մեր աւելցուց. «Գի՛մէ իմ ծառայիս (այս էր Հ. տը լա Գոլումպիէր) եւ իմ կողմանէս ըսէ՛ անոր՝ որ իւրովսանն աշխատի այս ջերմեանդութիւնը հաստատելու եւ սրտիս ուրախութիւն պատճառելու համար: Թո՛ղ չվհատի, երբ դժուարութեանց հանդիպի, որովհետեւ դժուարութիւններ պիտի չպակսին երբեք: սա՛ գիտնալու է որ ինք զինք ուրանալով բոլորանուէր ինձի յանձնուողն առ ամենայն ինչ կարող է:»

Հ. տը լա Գոլումպիէր, որ այս միանձնուհւոյն սրբութիւնը մանրակրկիտ քննած էր. Աստուծոյ հետ ուղղակի հաղորդակցութեան ճշմարտութիւնն զգալի նշաններով իմանալով, հաւանեցաւ այսպիսի սուրբ ջերմեանդութեան մը հաստատուելուն ձեռնտու ըլլալ, որ սակայն կասկածելու կամ տարա-

կուսելու յինքեան բան մը չունէր: Մարգարիտայի տրուած հրահանգաց համաձայն Յիսուսի Սրտին ջերմեանդութիւնն՝ նախ ինք սկսաւ գործադրել եւ ուղեց անոր առաջին երկրպագուն ըլլալ: Մարմնոյ եւ Արեան տօնէն ետքն եկած առաջին ուրբաթ օրը (21 Յունիս, 1675)՝ Հ. տը լա Գոլումպիէր ինք զինքը նուիրեց Ս. Սրտին եւ անոր սիրոյն. այս օրն Յիսուսի ամենասուրբ Սրտին առաջին յաղթանակը կրնանք նկատել: Անկէ ի վեր այս ջերմեանդութեան դէմ այնչափներ կուսեցան, վիճեցին, հակառակեցան եւ զանիկա պարսաւեցին, ինչպէս ամէն Աստուծոյ գործքերուն կը հանդիպի. բայց վերջապէս հրաշալի յաջողութեամբ՝ մանաւանդ Սրբազան Քահանայապետաց հանդիսական հաւանութիւններէն ետեւ՝ ընդ բնաւ անարգել տարածուեցաւ: Ուրեմն իրականացաւ երանելի Մարգարիտայի անդրդուելի վստահութիւնն՝ որով ամբացած կ'ըսէր. «Եթէ նոյն իսկ ամբողջ մարդիկ այս ջերմեանդութեան դէմ կատաղաբար մարտնչին, ես աներկբայ եմ որ վերջ ի վերջոյ անիկա պիտի գտնէ ընդունելութիւն, քանի որ պպահովութիւնը փրկչին բերնէն եմ առած:»

Հրահանգ: Իշխանութեանը ներքեւ գտնուած մարդիկներն յորդորէ որ Մարմնոյ եւ Արեան տօնէն ետքն եկած ուրբաթ օրը՝ կատարեն Յիսուսի ամենասուրբ Սրտին տօնը, սոյն օրն հաղորդուին եւ երկրպագելի Ս. Հաղորդութեան

դէմ եղած ամէն յանցանաց, սրբապղծութեանց, գայթաղութեանց եւ անհոգութեանց հատուցում ընելու դիտաւորութեամբ ընդհանուր թողութիւն խնդրեն:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ  
Ասարատ Սիրտ Սարեմայ, աղօթեմ վասն մեր.

Ամէն ընթերցուածէն կամ մտածականէն վերջը երէք անգամ կրկնէ այս կոչումը: Հաս մ'անձինք խոստովանած են՝ որ Աստուծոյ ծառայութեան մէջ իրենց յառաջադիմութիւնն ու յարատեւութիւնը՝ յաճախակի բռուած այս սլացական աղօթքին պարտական են:

Միտցակիսն աղօթք: Սիրտ Յիսուսի, ձգ՛ զիս քնզի, քու անուշահոտ բուրմանցդ ետեւէն կը վազենք: Զնեա հոտոյ խոյոց քոց ընթացորդ մեք: (Ծրզ երգոց, Ա. 3:)

Այցեդրութիւն ամենասուտոյր Հաղորդութեան:

Սիրտ Յիսուսի, դուն որ իրակամապէս ներկայ ես այս խորանին վրայ, դուն որ փակուած ես այս Նշխարքին մէջ, ձգէ զիս քեզի սիրոյ այն անյաղթելի հրապոյններով՝ որոնց չի կրնար դիմադրել մարդկային սիրտը: Գրաւէ բոլոր իղծերս, բոլոր մտածմանցս առարկան դուն եղիք. հոգւոյս ամէն կարողութիւնները քեզի կապէ, այն ատեն է որ՝ այնքան գաղջ, ընդարմացած եւ անկատար սիրտս՝ որ հագիւ թէ քաշքշուելով կը հետեւի քու շաղացը, ուրախութեամբ հոն պիտի դիմէ, այն ատեն է որ՝ քու անոյշ բուրմանցդ հոտը, մեզի թողած աստուածային օրինակները, սիրոյ անըմբռնելի ցոյցերդ պիտի հրապուրեն իմ

հոգիս, եւ ամէն օր առաւել բոցավառ պիտի բորբորին: Ո՛րչափ հոգիս քու ետեւէն գայ, այնչափ հրապոյններ գտնելով ի քեզ, քեզի հասնելու համար պիտի փութացնէ իւր ընթացքը. ով աստուածային հսկայ, դուն աշխարհիս վրայ ցաւոց եւ թշնամանաց ասպարէզը կատարեցիք բոցավառ սրտի մ'այն ուրախութեամբն, որ իւր նեղութիւնն երբեք չի զգար: Ո՛հ, ե՛րբ պիտի հատուցանեմ քեզ սէր՝ սիրոյդ փոխարէն, ե՛րբ պիտի սկսիմ կրել վիշտ՝ վշտիդ փոխարէն, շարչարանք՝ շարչարանացդ փոխարէն: Դուն ըսիր Ոչ ոք կայրէ գալ առ իս. ն՞թե ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեցե՛ զնա: Ո՛րն է այս հրապոյրը, որ կը ձգէ զհոգին առ Որդի ի ձեռն Հօր, առ Հայր ի ձեռն Որդւոյ: Հոգւոյ Սրբոյ շնորհքն է այս, ով Յիսուս, որուն արժանացար ինձի համար ի ձեռն խաչի, զոր եւ կապեցիր խաչին գօրութեան ըստ խոստմանդ՝ թէ Յորժամ յարձարացայ յերկրէ, զամենեւին ձգեցից առ իս: Ո՛վ Հայր, Որդի եւ Հոգի Սուրբ, այս ամէն գթութիւններով, այս ամէն խոստումներով զիս ձեզի ձգեցէք որովչետեւ այնչափ անկարող եմ, որ ձեզի գալու համար առանց ձեր օգնութեան քայլ մ'անգամ չեմ կրնար առնու:

Բ. Օ Ր

Այս Գերեւելութիւնն ընդգրկուին ուրիշ շնորհի խոստացում է:

Զենք կրնար այս ամիսն օգտակարապէս սկսիլ եւ ջերմեռանդութեամբ կատարել,




եթէ չսխալուիք Յիսուսի Քրիստոսի այն խոստումները՝ զորոնք ինք իւր ամենատուրք Սրտին ջերմեանդուծ իւնն ընդգրկողին խոստացած է: Տէրն մեր ինքնին շատ բացայայտ եղանակաւ խօսեցաւ ասոր մասին երանելոյն Մարգարիտա-Մարեմայ, ըսելով՝ «Կ'ուզեմքեզին սորվեցընել, որ այս շնորհքները միայնքեզին պէտք չեն յատկացընել, ուրիշներուն համար ալ պատրաստուած են. շնորհքներս՝ նպատակներուս համեմատ այլոց բաշխելու համար զքեզ իբրեւ խողովակ կ'ուզեմ գործածել:» Յետոյ իրեն իմացուց որ մարդկան ունեցած գերազանց սէրէն դրդեալ՝ որոշած է իւր Սրտին գանձերը բանալ, այս ջերմեանդուծ իւնն ներշնչելով՝ որ «Դէն անշխարհներուն սրտին մէջ Յիսուսի սէրը պիտի քնանի, եւ գողցընուն սիրտը սիրով պիտի բռնէ:» Ամէն տեղ հրատարակէ, ներշնչէ, ըսաւ իրեն Յիսուս, յանձնէ այս ջերմեանդուծ իւնն աշխարհականաց՝ իբրեւ ապահով եւ գիւրբին միջոց մը ինձմէ Աստուծոյ սէրն ընդունելու. եկեղեցականաց եւ վանականաց՝ իբրեւ աղու միջոց մը իրենց վիճակին կատարելութեան հասնելու. վերջապէս ամէն հաւատացելոց, իբրեւ ամէնէն հաստատուն եւ ամէնէն յարմար ջերմեանդուծ իւն մը, արմատացած կրից վրայ յաղթութիւն կանգնելու, ամէնէն բաժանեալ ընտանեաց մէջ խաղաղութիւն եւ միութիւն մուծանելու, հնացած ակտերէ ազատելու, ինձի համար

ՅԻՍՈՍ  
ՄԱՐԳԱՐԻՏԱ  
ՄԱՐԵՄԱՅ  
ՄԱՐԳԱՐԻՏԱ  
ՄԱՐԵՄԱՅ

սրտաբորբոք եւ գորովալից սէր մը ստանալու, հուսկ ուրեմն քիչ ժամանակուան մէջ դիւրեղանակաւ բարձրագոյն կատարելութեան հասնելու:» Յիսուսի Քրիստոսի սուրբ բերնէն ելած այս խոստումներէն աւելի, ինչ բան յարմարագոյն է զմեզ գրդելու որ այս ջերմեանդուծ իւնն ընդգրկենք:

«Իցիւ թէ այս ջերմեանդուծ եան նկատմամբ բոլոր գիտցածներս կարենայի պատմել, կ'ըսէ երանելին Մարգարիտա-Մարիամ իւր նամակներէն միոյն մէջ, եւ բովանդակ աշխարհիս յայտնել շնորհաց գանձերը, զորոնք Յիսուս այս երկրպագելի Սրտին մէջ մթերած է եւ կ'ուզէ իւր պաշտօնասիրաց վրայ առատութեամբ հեղուլ: Փրկիչն մեր կը հաւաստէ որ այս միջոցով կորստեան ճամբէն զգուշացընելով՝ շատերուն կեանք պիտի տայ, սատանայի պետութիւնը պիտի կործանէ եւ անոր տեղ իւր սէրը պիտի հաստատէ եւ իրեն նոյն-առնելէն մէկ ալ պիտի յնուր՝ որ կ'ըսէ: Այո՛, ապահովութեամբ կ'ըսեմ, եթէ գիտնային որ Յիսուսի Քրիստոսի սրտի հաճոյ է այս ջերմեանդուծ իւնը, չէր գտնուեր քրիստոնեայ մը, որ շնորհգրկէր զայն: Ձանացէք որ աւելի վառ-կան աչքն ստիկայ ընդգրկեն, որովհետեւ այս ջերմեանդուծ ենէն այնչափ օգուտ պիտի քաղեն, որ միաբանութեանց մէջ նախկին եռանդն եւ կանոնաց ճշգրիտ պահպանութիւնը հաստատելու համար ուրիշ

24760-6



միջոցի գիմելու հարկ պիտի չըլլայ. եւ ճշգրիտ կանոնապահութեամբ ասորոյններն ալ կատարելութեան դադար չպիտի հասցընէ: Իմ աստուածային փրկիչս ինձի իմացուց որ հոգ հոգւոցի պարապողներն ամէնէն կարծր սրտերն անգամ շարժելու հանձարը պիտի ունենան եւ հրաշալի յաջողութեամբ պիտի վաստակին, եթէ իրենք եւս այս աստուածային Սրտին ջերմեռանդութիւնն բոլորով սրտիւ ընդգրկած են:»

Լ. տը լս Գողովպիէր ասոր առաջին փորձն առաւ: Իւր հոգեւոր որդիներէն շատերուն փրկութեան այս հղօք միջոցը խորհուրդ տուաւ եւ նոյն իսկ բողոքականներուն՝ որոնց քով ուրիշ ամէն հնարքներ ի դերեւ էին ելած. եւ յառաջ եկած արդիւնքին վրայ ինքն իսկ զարմացաւ: Ի սկզբան մերժողներէն ոմանք՝ յետոյ այս ջերմեռանդութիւնը կատարելով՝ բոլորովին փոխուեցան. այլք Աստուծմէ ընդունած շնորհքներով կատարելութեան մէջ յառաջանալու անվրէպ միջոց մը գտան:

«Բան մ'ալ զարմանալի չ'երեւար ինձի, կը գրէ մեր դարուն մեծ անձնաւորութենէն մին, երբ մեր աստուածային վարդապետին երկրպագելի Սրտին վրայ կը մտածեմ: Ի նմա՝ թան բան կընաւ, նոյն իսկ աղքատիկ, խոնարհ եւ սիրավառ կեանք մ'անցընել աշխարհիս մէջ տեղը՝ առանց նշմարուելու: Աստուածային Սիրտն է, որ իւր Հօր առջեւ:

մեզի համար կը բարեխօսէ եւ մեզի սուրբ բաղձանքներ կը ներշնչէ. փորձութեան ժամանակ մեզի օգնութեան կը հասնի: Առանց մեր դիմնալուն, իւր Հօրը փառալոյս հակառակ եղող արգելքները մեր սրտէն կը խլէ կը հանէ, եւ մեզի զօրութիւն կու տայ յաղթելու այն ամէն դժուարութեանց, որոնցմէ քիչ մը յառաջ կը վախնայինք. այս երկրպագելի Սիրտն է որ աշխարհիս հրապոյրներէն անվկանդ կ'ընէ զմեզ եւ անոր նենգութիւններն ու մոլար սկզբունքները տեսնելու համար աչքերնիս կը բանայ:»

«Վերջապէս ամէն բարիք այս երիցս սուրբ Սրտէն կու դայ մեզի: Թւիլ ուրեմն ինքն ըլլայ մեր ամենայն ինչն ամէն բանի մէջ, իրեն մատուցանենք մեր բովանդակ էութիւնը. չմնայ ի մեզ բան մը, զոր ինքը սպառած չըլլայ, մինչեւ որ վերջապէս այս մարբիչ բոցին կրակէն անցընելով՝ մեր հոգին յաւիտեանականութեան տանի եւ սիրոյ այս հնոցին մէջ զետեղէ: Ամէն. ամէն:»

«Օր մը, կ'ըսէ Ս. Մաթիլտէ, Աստուածորդին՝ իւր Սիրտը ձեռքը բռնած ինձի երեւցաւ, արեւէն աւելի պայծառ էր եւ ամէն կողմ՝ լուսեղէն ճառագայթներ կ'արձակէր. սիրելի փրկիչս ասով ինձի իմացուց որ Աստուծոյ՝ ամէնուն անդադար բաշխած շնորհքներն, այս աստուածային Սրտէն կը բղխին:»

Հրահրի: Այս ամսոյն մէջ շարժ մը չանցընես՝ առանց Յիսուսի Սրտին վրայ խօսելու,

եւ առանց հրապարակելու շնորհաց այն անբաւ գանձերը, զորոնք առանձինն պաշտօնով մը զինքը մեծարողներուն խոստացած է:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր:

Մրցակիսն աղօթք: Բու սէրդ միայն պարգեւէ ինձի, Սիրտ Յիսուսի, եւ ես բաւական հարուստ կ'ըլլամ:

Այցնչութիւն ամենաւստիչ Հարություն: Թեան:

Ո՛վ պատուասէր, ընչաքառց եւ փառամոլ մարդիկ. ձեզի կը թողում Աստուծոյ այս պարգեւներն՝ զոր անխտիր թէ՛ իւր թշնամեաց եւ թէ՛ իւր բարեկամաց կու տայ: Թո՛ղ պատուոյ մէջ արարածոց յետինն ըլլամ. Թո՛ղ այս աշխարհիս ամէն ինչքերէն զրկուած ըլլամ, քայց ի փոխարէն քու Սիրտդ բաց ինձի, ո՛վ Յիսուս իմ, Սրտիդ գանձերը տուր ինձի: Ո՛վ Տէր իմ եւ Աստուած իմ, քեզմէ սա շնորհքը կը ինդրեմ, որ արարածները մոռնամ. արհամարհեմ եւ զքեզ միայն սիրեմ: Կարեւր բան է որ այս աղաչանացս չլսես: Ո՛հ, ըրէ՛ որ աշխարհս ինձի ոչինչ երեւայ, շուք մ'ըլլայ, երազ մը, դո՛ւն միայն կենդանի եւ հրահանգիչ իրականութիւնն ըլլաս ինձի այս արտասուաց վայրին մէջ, ուր՝ իմ առաջնորդս եղիք, տուր որ ասլքիմ ու մոռնիմ քու Սրտիդ մէջ: Թո՛ղ հոս այս փափագելի միայնութեան մէջ՝ քեզի հետ, քեզմով եւ ի քեզ միայն ասլքիմ: Բեզմէ՛ միայն սիրուիմ. զքեզ միայն սիրեմ. սիրոյս կոանդէն յաիշտակուած ալ ամենայն ոչինչ երեւայ ինձի: Ո՛վ Յիսուս, փոխանակ մարդկային ամէն գո-

վեստից՝ խօսք մ'ուղղէ ինձի. փոխանակ մարդկային մեծարանաց՝ հայեցուածք մ'արձակէ ինձի. փոխանակ արարածոց Սիրտն՝ սրտովդ իմնս քեզի ձգէ, ա՛ն այնուհետեւ բաւական հարուստ եւ երջանիկ կ'ըլլամ, եւ աշխարհիս վրայ բան մ'ալ չի կրնար բաղձանքս զրգուել:

### Գ. Օ Ր

Ա՛ն-...-ըք Սրտին Չէր-...-ներ-...-ի-...-ը  
-...-ն-...-ը՝ ...-...-ած-...-յին՝ -...-ը:

Յիսուսի Քրիստոսի բովանդակ օրէնքը սա մի միակ յիշեցիք բառին մէջ պարունակուած է: Ո՛վ քաղցր օրէնք, զարմանալի օրէնք, աստուածավայել օրէնք եւ մարդկան հրատարակուելու արժանի օրէնք: Մարդու սիրան ստեղծողը լաւ գիտէ թէ՛ սիրտը կապելու համար սիրոյ զօրերէն աւելի զօրաւոր կապ չկայ: Այո՛, իւր արարածոց վրայ գեռուրիչ պարտականութիւններ գրած է, սակայն ամբողջն ի միասին յիշեցիք բառին մէջ ամփոփուած են: Յիսուսի Քրիստոսի ամենէն գերազանց պատուիրանը սա՛ է. Այո՛ է պարտիրան իմ, շէ՛ յիշեցիք: Իմ ամենամեծ պատուիրանս, մի միակ խրատս սա է, որ զին սիրէք, զիրար սիրէք, ինչպէս որ ես զձեզ սիրեցի: Աօիկայ պատուիրան մըն է՝ որուն կատարումէն պիտի ճանչցուիք թէ իմ աշակերտներս էք: Սիրողը օրէնքը կը կատարէ.

Որ իրէ, զօրէնսն իսորքէ: Սիրոյ մէջ բնականն յԱստուած կը բնակի եւ Աստուած ի նմա: Ով որ չի սիրեր, բնակէ ի մահու: Որ ոչ ի. է, ոչ ինչ ի մահուն իայ:

Ո՛վ Յիսուս, Ինչ հատուցում ընենք քեզի, որ զքեզ սիրելու պատուիրանը տուիր մեզի եւ ստէպ ստէպ եւ հանդիս սբար զմեզ ապահովցուցիր որ զմեզ կը սիրես:

Եթէ մեր բոլոր պարտքերը, աշխատութիւնները, պատերազմներն ու յաղթանակները կը կայանան մի միակ բարւոյն՝ Աստուծոյ սիրոյն ստացման մէջ, անշուշտ շատ պատուական է մեր տրամադրութեան ներքեւ քաղցր, դիւրին եւ անվրէպ միջոց մ'ունենալ առ այն հասնելու: Այս դիւրամատչելի միջոցն է ամենասուրբ Արտին Չերմեանդութիւնը, իսկ նախանձելի արդիւնք խոստացողն ալ ինքնին Յիսուս Քրիստոս է, ինչպէս յառաջ տեսանք: «Աը խոստանամ քեզի որ՝ ըսաւ Մարգարիտա-Վարեմայ, Սիրոս իւր աստուածային սիրոյն յորդութիւններն առատապէս պիտի հեղու այս պաշտօնը կատարողին վրայ,» Եւ այլուր՝ «Այս Չերմեանդութիւնն ամէն անզգայ սրտերուն մէջ սեր պիտի ծնանի եւ նուազ Չերմեանդներուն սրտերն ալ պիտի բորբոքէ:»

«Աստուած պիտի տիրէ ընդդէմ իւր թշնամեաց, կը գրէ երանելին Մարգարիտա-Վարիամ, եւ մեր սրտերուն տէրն ու ստացիչը պիտի ըլլայ, որովհետեւ այս Չերմեանդ-

դութեան զլխաւոր վախճանը՝ հոգիներն իւր սիրոյն դարձընել է:»

Շատ դիւրին է ըմբռնել թէ ահա այսպիսի է ամենասուրբ Արտին Չերմեանդութեան արդիւնքը: Արդարեւ ի նմա ամենայն ինչ սեր կը ներշնչէ մեզի. անոր առարկան է Յիսուսի Քրիստոսի սիրաբոլորքը Սիրաբ. վախճանը՝ սիրոյ դէմ եղած անիրաւութեանց հատուցումը. կիրառութիւնը՝ սիրոյ հրահանգներ: Մտադիր նկատութեան կը հրաւիրէ ինչ որ կրնայ այս սէրն արծարծել. զոր օրինակ՝ մեր փրկչին սիրոյն եւ բարեբարութեանց յիշատակն ու երախտագիտութիւնը, զլխաւորաբար Ս. Հաղորդութեան խորհրդոյն մէջ:

Յիսուս Քրիստոս ինչեք չէր ըներ անոր՝ որ իւր շարժարանաց ժամանակ հաւատարիմ ընկեր ըլլար իրեն. մինչդեռ ամէնքը զինքը թողուցին փխսան: Կամ մանաւանդ ինչ բաներ չըրաւ Ս. Յովհաննէսին, միակն աշակերտաց մէջ՝ որ մինչեւ վերջին շունչն Յիսուսի քովէն չբաժնուեցաւ: Ուրիշ առաւելութիւն մը տուաւ իրեն, թողուլ անոր իւր սիրոյն վերջին եւ ամէնէն պատուական գրաւականները. իւր աստուածային Մայրը՝ ի մայրութիւն, իւր խաչը՝ ի յիշատակ, իւր Սիրաբ՝ ի բնակարան:

Իւր առատաձեռնութեան այս անգին պարգեւներն անոնց ալ կը վերապահէ, որոնք իւր տաճարներուն լքմանէն եւ միայ-

նութ ենէն, թշնամանքներէն, ատելութիւններէն եւ քրիստոնէից սիրոյ խորհրդեան ունեցած ցրտութենէն շարժելով՝ պարտք կը համարին իրեն ընկերակից ըլլալու, զինքն իրենց սիրան ընդունելով, իրենց հանապազորդութեամբն եւ իրենց եռանդովն կը ճգնին ամէն օր այնչափ անչափ անարգանքները դարմանելու: Մեծանճութեան մէջ Յիսուս այսպիսիներէն վար չի կրնար մնալ, իրենց սիրոյն վարձքը պիտի ըլլայ սէր: Սէրն ոչ թէ չափով պիտի տայ՝ ոչ էլէ չափով աս, հապա այնպիսի առատութեամբ, որ պիտի զեղու, պիտի գերազանցէ իւր տուած եռանդին սաստկութիւնն իսկ: Յիսուս ասիկայ խոստացաւ եւ երդուաւ իսկ. Զիս սիրողը՝ իմ Հօրմէս պիտի սիրուի. ես ալ զինքը պիտի սիրեմ եւ ինք զինքս անոր պիտի յայտնեմ. Որ սիրէն զիս՝ սիրեցի ի Հօրէ իմէ, եւ եւ սիրեցի զիս, եւ երեւեցուցի զիս զիս:

Երբ որ... Եթէ այս խօսքս աշխարհիս խոստմանց կատարմանը մէջ զմեզ կ'ապահովցընէ, որչափ եւս առաւել Յիսուսի Քրիստոսի ըրած երդումը: Ո՛հ, այսուհետեւ Առաքելոյն հետ լին վստահութեամբ կրկնենք. Յիսուսի Քրիստոսի հաւորին մէջ կ'աղբիմ, որ զիս սիրեց, իւր սէրն ինչի խոստացաւ եւ որուն վերջին խոստմաններս իւր Սիրող բրայ...

Ս. Գերդրուտայի վարուց մէջ կը կարգանք, որ օր մը Ս. Յովհաննէս Աւետարաւ

նիչ իրեն երեւնալով, Սրբուհին հարցուց անոր թէ ինչու ընթրեաց ժամանակ Յիսուսի կուրծքին իսկ կ'աթնելով՝ անոր Սրտին շարժմանց վրայ մեր գիտութեան համար բան մը գրած չէր: Ս. Յովհաննէս հետեւեալ նշանաւոր խօսքերով պատասխան տուաւ. «Իմ պաշտօնս էր նորածին եկեղեցւոյ համար Բանին Աստուծոյ խօսքերը գրել. իսկ այս Սրտին շարժմանց քաղցրութիւնը, Աստուած իրեն վերապահած է, վերջին ժամանակ ծանօթացընելու, որպէս զի արծարծէր, բորբոքէր այն սէրն՝ որ շատ պիտի ցրտանար:», Մենք հիմայ այս ժամանակս հասած ենք, որուն վրայ սիրոյ առաքեալն այս սրբուհւոյն կը խօսէր: Սիրոյ հուրը գրեթէ ամէն սրտերու մէջ մարած է. բայց ինչու պիտի յուսահատինք. ահա ամենասուրբ Սրտին ջերմեռանդութիւնը, որ ընդ բնաւ կը տարածուի, սիրոյ հուրը վերստին պիտի բորբոքէ:

Հրահանգ: Յիսուսի Սիրող ծանօթանալու եւ սիրուելու անսահման փափագ ունի. կ'ուզէ որ մեծ վստահութեամբ իրեն դիմենք, զխաւորաբար պատարագի սուրբ զոհի միջնորդութեամբ: Զերմեռանդութիւնդ արծարծելու համար մտածէ որ միակ պատարագ մ'աւելի փառք կը մատուցանէ Աստուծոյ, քան թէ ամէն սրբոց միացեալ արդիւնքը, եւ այս երկրպագելի զոհին կցուած օրհնութեան պտուղները կը գերազանցեն քու

ուրիշ աղօթքներէդ քաղած պատուհներդ: Եստեք շնն գիտեր թէ պատարագի Ժամանակ քննչ բանով զբաղելուն են: Այսպիսիներն որչափ հակայաբայլ կը յառուջագիմէին Յիսուսի Գրիստոսի սիրոյն մէջ, եթէ Յիսուսի չարչարանքն եւ իւր Սրտին ցաւերը մտածէին՝ քանիցս թէ այս աստուածային զոհին ներկայ կ'ըլլան:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
 Ընարաստ Սիրտ Մարեմայ, աղօթեսս վասն մեր:

Մշտցական աղօթք: Ո՛վ պիտի բաժնէ զմեզ քու սէրէդ, ո՛վ Սիրտ Յիսուսի: Ո՛վ մեկնեցնէ զմեզ ի սիրոյն Արիստոսի:

Այցեդրութիւն աւեմաստոսոյր Հաղորդութեան:

Կը լսեմ որ քու Եռաքեալը կ'արհամարհէ բոլոր արարածներն իքո թէ շնն կրնար զինք քու սէրէդ բաժնել: Միթէ այս փորձութեան բովէն անցած հոգւոյն վստահաւից խօսքերն ես ալ կրննեմ կրնամ համարձակել, ես ողորմեմալ, տկարս: Ո՛հ աղէկ գիտեմ, քեզի հետ միանալ քաղձացող այս դիրաբեկ եղէզն կործանելու համար, ո՛չ հալածանք, ո՛չ սուր, ո՛չ մահուան սպանաւիք հարկ է, խօսք մը, ժպիտ մը, անա բաւական է զիս զինաթափ ընելու: Բայց եթէ, հազար անգամ փորձուած անկարողութենէս համոզուած՝ քեզի դիմեմ, քու վրադ յնում, աղէկ գիտեմ որ ամէնէն մեծամեծ զոհողութեանց համար իսկ զօրութիւն պիտի տաս եւ ես ալ կարող պիտի ըլլամ ըսելու. Ո՛վ մեկնեցնէ զիս ի սիրոյդ. ո՛վ Սիրտ Յիսուսի: Ըպահով եմ, ո՛չ մահ, ո՛չ կեանք, ո՛չ ներկայք,

ո՛չ հանդերձեալք, եւ աշխարհիս վրայ ոչ մէկ արարած պիտի կարենայ զիս քեզմէ անջատել: Ո՛վ Սիրտ Յիսուսի, ուրիշներուն ըրածիդ պէս ինծի ալ հրաշք մ'ըրէ՛, եւ թող տկարութիւնս, անհաստատութիւնս ճանչցողները՝ վրաս զօրութիւն, հաստատամտութիւն եւ հաւատարմութիւն տեսնելով՝ զովնն զքեզ յիս:

Դ Օ Ր

Յիսուսի սիրտը Սրտին ջերմեանդ  
 իւր սիրտն ու իմ սիրտը: — Ամենայն  
 Սրտին է սիրտը խորհրդոյն ջերմեանդ  
 իւր սիրտն է սիրտը սիրտը իւր սիրտը  
 է սիրտը:

«Ամենասուրբ Սրտին ջերմեանդութիւնը՝ բարեպաշտական կրթութիւն մըն է, որուն առարկան է Յիսուսի Գրիստոսի երկրպագելն Սիրտը՝ որ մարդկան համար սիրով բոբբբած է եւ այս միեւնոյն մարդկան ապերախտութեամբը թշնամանուած:» (Հ. Կալիֆէ)

Յայտնի է թէ ամենասուրբ Սրտին ջերմեանդութիւնը չի կայանար միայն յայնմ որ սիրենք եւ առանձինն պաշտօնով մը մեծարենք այս մերինին նման մարմնեղէն սիրտը, որ Յիսուսի Գրիստոսի մարմնոյն մէկ մասն է: Այս ջերմեանդութեան սիրտն եւ գլխաւոր շարժառիթը՝ ինչպէս արդէն ըսինք, է Յիսուսի Գրիստոսի առ մարդիկ

ունեցած անհուն սէրը. եւ որովհետեւ ամէնէն հոգեւոր ջերմեանդու թեանց մէջ իսկ զգալի առարկաներու պէտք ունինք՝ սրպէս զի նորոգեն մեզն անոր յիշատակը, եւ զործաղորութիւնը գիւրացընեն, անոր համար Յիսուս Քրիստոս անձամբ իւր Սիրտը մատոյց մեզի, իբրեւ ամէնէն յարմար առարկայ՝ յիշելու այն սէրը՝ որ մեզի համար յանձն առաւ զենուիլ եւ ցլխածան ժամանակաց երկրպագելի Հաղորդութեան մէջ մեզի հետ բնակիլ: Արդարեւ մարդուս սիրտն ըստ իմիջ սիրոյ աղբիւրն ու զահն ըլլալով՝ հոգւոյն ամէնէն աղնիւ զգածումներն իրաւամբ որտին կը վերագրուին: Յիսուս Քրիստոս ալ սիրտ մ'ունի. արգ եթէ իւր մարմինն ու թանկագին արիւնը մեր երկրպագութեանց արժանի է, սրչափ եւս առաւել իւր ամենասուրբ Սիրտն առանձինն պաշտօնով մը մեծարուելու արժանի է:

Ամենասուրբ Արտին ջերմեանդութեան լախճանն է նախ՝ ճանչնալ եւ մեծարել երկրպագութեամբ, սիրով, երախտագիտութեամբ եւ անսահման անձնուիրութեամբ Յիսուսի ամենասուրբ Արտին առ մարդիկ ունեցած անբաւ սէրը, զլխաւորաբար երկրպագելի Ս. Հաղորդութեան մէջ, ուր շատ քիչ ճանչցուած է, եւ ճանչցողներն ալ այնչափ քիչ սէր կը ցուցընեն իրեն: Երկրորդ՝ ամէն կարելի հնարքներով եւ միջոցներով դարմանել անպատուութիւններն

ու թշնամանքները՝ զորս այս Սիրտն իւր մահականացու կենաց միջոցին կրեց եւ գեռ կը կրէ ամէն օր Ս. Հաղորդութեան մէջ:

Յիսուսի մեզի համար սիրտբոլոր Սիրտը՝ ահա այս ջերմեանդութեան սուրբն. այս սիրտն գէմ, բայց զլխաւորաբար Ս. Հաղորդութեան մէջ եղած թշնամանաց հատուցումն՝ ահա առ փրկիչն մեր սաստիկ եւ բուռն սէր եւ անհամար շնորհքներ՝ ահա առ փրկիչն ու վարձքը:

Յիսուսի ամենասուրբ Արտին ջերմեանդութիւնը սուրբ է Ս. Հաղորդութեան մէջ Յիսուսի մարմնոյն ջերմեանդութենէն, առաջնոյն առարկան է Յիսուսի Սիրտը, առանց իւր երկրպագելի մարմնոյն հետ մասնական յարաբերութեան. իսկ երկրորդին առարկան է Յիսուսի Քրիստոսի բովանդակ մարմինը խորհրդական տեսակաց ներքեւ, իւր Արտին հետ առանց մասնական վերաբերութեան: Ամենասուրբ Հաղորդութեան ջերմեանդութեան մէջ շարժառիթը՝ Յիսուսի Քրիստոսի ընդ Բանին միացեալ սուրբ մարմինը մեծարել է, եւ այս միութեամբ ճշմարտապէս արժանի է հրեշտակաց եւ մարդկան երկրպագութեան: Ամենասուրբ Արտին ջերմեանդութեան էական շարժառիթն է, ընդ Աստուածութեան միացեալ Սիրտը մեծարել զլխաւորաբար առ մարդիկ ունեցած սէրը ճանչնալ եւ կրածներուն եւ գեռ մարդիկներէն ամէն օր իւր սիրոյ խոր-

հրդեհան մէջ կրելիք թշնամանաց համար թողութիւն խնդրել:

Թէեւ ամենասուրբ Սրտին եւ Ս. Խորհրդեհան ջերմեանդութիւնք ըստ առարկային տարբեր են, սակայն ըստ նպատակին յանձուկս մի են: Ամենասուրբ Սրտին ջերմեանդութիւնն չի խափաներ կամ չի նուազցըներ Ս. Հաղորդութեան ջերմեանդութիւնը, նա մանաւանդ նոյնը կ'ազնուացընէ եւ կը կատարելագործէ: Ո՛հ, Ս. Խորհրդեհան մէջ Յիսուսի Սիրտն ի՛նչ մեծ գանձ է: Ասկէ օգուտ չքաղելնուս պատճառն այն է որ՝ չենք գիտեր օգտիւ գործածելու կերպը:

Ձատկի միջոցին եկոյ՛ որհնեալք Ղօր ի՛մ, երգեցուած ժամանակ, Ս. Մաթիլտէ արտաքոյ կարգի եւ անպատում ուրախութեամբ լցեալ, ըսաւ փրկչին. «Ա՛հ, երանի՛ թէ այն աւանձնաշնորհեալ հոգիներէն մին ալ ես ըլլայի, որոնց կ'ուղղես այս մխիթարիչ խօսքը:» Փրկիչն մեր պատասխանեց. «Արնաս յուսալ. Սիրտս իբրեւ գրաւ քեզի կու տամ, միշտ պահէ ի քեզ. ակնկալութեանդ կատարուած օրն ղայն իբրեւ վկայութիւն ինծի ետ կը դարձընես: Դարձեալ իբրեւ ապաստանարան քեզի կու տամ Սիրտս, որպէս զի մահուանդ օրը իմ՝ Սրտէս զատ ապաւէն չունենաս, ուր կարենաս յաւիտենական հանգրստեան ճաշակն առնուլ: Այս պարգեւն Աստուծոյ առաջնակարգ պարգեւներէն մին

է:» Աղոյսն այն ժամանակէն ի վեր, սկսաւ Յիսուսի ամենասուրբ Սրտին սաստիկ ջերմեանդութիւն մը զգալ. ամէն անգամ որ փրկիչն իրեն կ'երեւար, Սրտէն մասնաւոր շնորհք մը կ'ընդունէր: Երբեմն կ'ըսէր, «Եթէ Յիսուսի աստուածային Սրտէն ընդունած ամէն շնորհքներս գրով նշանակուէին, կարծեմ՝ այս քաղուածոյքը մեր շարակնոցէն աւելի մեծածաւալ կ'ըլլար:»

Հրահնգ: Մեր գործոց հանապազօրեայ Աստուծոյ նուիրումն ո՛չ թէ միայն բարեպաշտական կրթութիւն է, հապա նաեւ իրական պարտք. քանի որ Տէրն մեր իրեն ծառայելու համար զմեզ ստեղծեց: Արդ հաւատարմութեամբ ի գործ դիր զայն: Բայց գործքերդ աւելի արդիւնաւոր ընելու համար՝ միջնորդութեամբ Սրտին Յիսուսի հետեւեալ եղանակս նուիրէ. «Աստուած իմ, բոլոր գործքերս Յիսուսի Սրտին, ամենասուրբ կուսին, եւ Սրբոց արժանեաց հետ ի միասին քեզի կը նուիրեմ՝ ի հատուցումն անցած, ներկայ եւ հանդերձեալ մեղքերուս:» Եւ կամ ըսէ՛ Ս. Մաթիլտէի հետ, որուն փրկիչն մեր անձամբ այս ձեւը սորվեցուց. «Անձկալիդ իմ Յիսուս, այսօր սրտէս բոլոր առաջին հաւաչանքը քեզի կ'ուղղեմ, ընդունէ՛ բոլոր իմ գործքերս, որպէս զի քու ամենաքաղցր Սրտիդ մէջ կատարելագործուելով եւ մաքրուելով՝ միանան քու արժանեացդ հետ եւ յաւիտենական գովութեամբ քու աստուածային Հօրդ մատուցուին:»



Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեանց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր:

Միացական աղօթք: Ծնծղուկն ունի իւր բնակարանը, եւ տատարակը իւր բոյնը՝ ձագերը տեղաւորելու համար: Ես ալ, ո՛վ Յիսուս, քու Սիրտդ ինձի ապաստանարան կ'ընենմ:

Այցեդրութիւն ամենաուրախ հաղորդութեան:

Անձն իմ, խեղճ, թափառական հոգի մըն ես այս անապատ, անուղի, անջրդի աշխարհիս վրայ: Ի տես թշնամուղոյ ապաստանարանի մը պէտք ունիս, նմանապէս հանգչելու եւ աշխատութենէ եւ պատերազմէ ետեւ՝ զօրութիւններոյ նորոգելու համար բնակարան մը պէտք է քեզի: Ծնծղուկն ունի իւր բնակարանը, տատարակը՝ իւր բոյնը, մի՛թէ դուն առանց ապաւինն՝ պիտի մնաս...: Գորովաւոր Տէրն մեր որ իւր ստեղծած ոչխարներուն անգամ ապահովութիւնն հոգացած է, իսկ մարդկան բնակութեանը համար աւելի փառաւոր, աւելի արժանի բնակարան մը հնարած է, որ է՝ իւր ամենասուրբ Սիրտը: Յիսուս ուզեց որ իւր Սիրտը խոցուի, եւ այս խորհրդական խոցուածին մէջ կ'ուզէ զքեզ պատըսպարել: Հոն մտիք, երբեք անկէ դուրս մի՛ ելելք. սորվէ հոն՝ թէ ո՞րչափ սիրուած ես, եւ ի փոխարէն ո՞րչափ պէտք ես սիրել:

Ե. Օ Ր

Յիսուսի ամենասուրբ Սրտին աղօթքն ունի  
Բերանդանութիւնը:

«Յիսուսի ամենասուրբ Սրտին վրայ շատ մ'առաւելութիւններ կը նշմարեմ, որոնց միջնորդութեամբ անոր դերագանցութիւնն ու ազնուութիւնը կը ճանչնանք:

«Յիսուսի Սիրտը կենդանացընողն Աստուծոյ ստեղծած ամենագեղեցիկ հոգին է, որ իրենց սուրբ միացման առաջին վայրկենէն սկսեալ, շնորհաց եւ փառաց ամէն հարստութիւնները անոր հաղորդեց եւ այնպիսի մեծ անձն իղձերով, ազնիւ միտութիւններով եւ դովելի յատկութիւններով օժտեց զայն, որ բոլոր սրտերուն մէջ չկայ բան մը՝ որ կարենայ անոր հաւասարել: Պիտի չգտնուի մէկը՝ որ զմեզ այնչափ սիրած կամ մեր թշուառութիւնքն այնքան գորովով զգացած, կամ մեղի համար այնչափ մեծ եւ նպաստաւոր նպատակներ յղացած եւ կամ վերջապէս մեր բարւոյն վրայ այնչափ ուրախացած ըլլայ» (Հ. Նստէ): «Եթէ բոլոր մարդկան սրտերը քեզի համար գոցուին, դուն ամենեւին մի՛ խռովիր, Յիսուսի Սիրտը միշտ հաւատարիմ եւ բաց պիտի ըլլայ քեզի» (Աստեքէ):

Այո՛, քաղցրագութ Յիսուս, երբ հոգւոյս թշնամիներն իրենց լէզէոններն ինձի դէմ շարեն, ես քու Սիրտդ ապաստանած՝ ամենեւին պիտի չզարհուրիմ. երբ պատերազմը

սկսի, քու Սրտիդ վրայ ունեցած վստահու-  
թիւնս յաղթական պիտի հանէ զիս. եթէ  
սաքիս մէկը դժուրի մէջ իսկ ըլլայ, դարձեալ  
քու Սրտիդ վրայ պիտի վստահիմ: Թե՛ պար-  
տաւորեցիք ի վերայ ի՛ս դարեւազ՛, ոչ երկեցե՛ սիրո՛  
ի՛ս. ինչ որ երեցե՛ք ի վերայ ի՛ս նախարարո՛ր, սակայն  
եւ այսուիկ ի տե՛ւ Տէր յոստացայ: (Սղմ. ԻԶ. 3.)

«Յիսուսի Սիրտը սուրբ է՝ նոյն իսկ աս-  
տուածային սրբութեամբ. ուրեմն այս սուրբ  
Սրտին բոլոր յոյդքն ու իղձերը, ամէն հա-  
ռաշանքները, ամէն յօժարութիւնները, ամ-  
բողջ գործերը, բովանդակ բաղձանքներն,  
ըստ արժանաւորութեան զատուք գործող  
անձին՝ անսահման գին եւ արժէք ունին:  
Իրաւացի է ուրեմն որ առանձինն պաշտօնով  
մը մեծարուի այն Սիրտը՝ զոր մեծարելով իւր  
աստուածային անձն ալ մեծարած կ'ըլլանք:

«Յիսուսի Սրտին մէջն է որ կաղմուեցան  
մեր փրկագործութեան բոլոր ծրագիրներն.  
անոր սիրաբարբոք սիրովն է որ գործադրու-  
եցաւ ամբողջապէս: Արնամ ըսել իրաւամբ  
որ այս սիրելի Սրտին պարտական եմ այն  
ամէն յարգանքն ու սէրը, զոր իւր մարմնոյն  
ամէն մէկ մասին ունիմ: Յիսուսի Սիրտն է որ  
իւր աշուրներովը Ղազարու գերեզմանին եւ  
Երուսաղէմ՝ քաղքին վրայ կու լար, որոնք  
ախուր պատկեր մըն էին աշխարհի վիճակին՝  
յորում կը գտնուէր յառաջ քան զչարչա-  
րանսն Յիսուսի եւ յոր պիտի դառնայ դար-  
ձեալ վերջին ժամանակներն: Այն է որ

իւր բերնովն աւետարանական ճշմարտու-  
թիւնները կը հուշակէր եւ երկնից ճամբան  
կը սորվեցընէր մեզի. այն է որ հիւանդները  
կը բուժէր եւ ձեռքը մերձեցընելով մեռ-  
եալները կը յարուցանէր: Այն է որ իւր մոլո-  
րեալ ոչխարը փնտռելու համար այս բարի  
հովուին ամբողջ քայլերուն կ'առաջնորդէր.  
այն է որ Ձիթենեաց պարտիզին մէջ իւր մար-  
մնոյն ամէն մասերէն արիւնախառն քրտինք  
վազցուց, տո՛գունեցաւ եւ ամբողջ մարմնովը  
դողդողաց եւ խաչին վրայ այնքան ուժգին  
գոչմամբ աղաղակեց՝ որ երկիրը շարժեց եւ  
երկինքը թափանցեց, ուր պատշաճ յարգու-  
թեամբ լսելի եղաւ. Լեւի լինէր սուրբ  
Բեանն:» (Նս-է.)

Ի՛նչ պաշտօն. որպիսի՞ սէր պարտական  
չենք ուրեմն այս Սրտին, որուն միջնորդու-  
թեամբ հասած են մեզի ամէն բարիք: Ո՛հ,  
եթէ մեծարելու համար մեր առջեւ դնէին  
Աւգոստինոսի, Փրանկիսկոս Սալեզի, Ալոզիո-  
սի, Թէրէզիայի սիրտը, ի՛նչ շէր ըլլար մեր  
հաւատքը, մեր եռանդը, մեր զարմացումը:  
Ահաւասիկ Յիսուսի Սիրտը... այս Սիրտը՝  
որուն քով ուրիշ ամէն սրտեր անկատարու-  
թիւն են. ահա իւր սիրոյ խորհրդեան մէջ  
իրականապէս ներկայ է. այս Սիրտը՝ որ բա-  
բախեց եւ դեռ կը բարախէ մեր երանութեան  
համար միայն. իսկ մենք անհոգ, անտարբեր  
եւ անզգայ պիտի մնանք: Ո՛հ, Տէր իմ  
Յիսուս, ո՛չ. կը հաւատամ, կ'երկրպագեմ

եւ կը սիրեմ. բայց աւելցուր Հաւատքս ու սէրս:

Ս. Կլարա օր չէր անցըներ առանց Յիսուսի Սիրտն ողջունելու եւ արտաքոյ կարգի հոգով եւ խնամով իւր ձօններն անոր մատուցանելու: Աստուած իւր խօնարհ աղախնոյն եռանդը վարձատրելու համար երբ կոյսն նոյն կրթութեամբ զբաղած կ'ըլլար, անոր հոգին ամէնէն մաքուր քաղցրութիւններով եւ հաճոյքներով կը զեղուր:

Հրահայտ: Ս. Կլարային նմանէ, եւ օր մի անցներ առանց Յիսուսի Սիրտը մեծարելու: Եթէ Յիսուսի Սրտին եղբայրութեան անդամն ես, որու շեւլ ժամուն պաշտօնդ կատարելու մէջ հաւատարիմ եղիր եւ սիրտդ բերնէդ ելած խւսքին ընկերանայ, որովհետեւ Յիսուս սիրտը միայն կ'ուզէ, սրտին վրայ կը նայի:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մրցցակրամ աղօթք: Բու Սրտիդ մէջ խաղաղութեամբ պիտի ննջեմ եւ պիտի հանգչեմ, ով քաղցրագուծ Յիսուս իմ:

Ընցելու թիւն ամենատարբէր Հարություն թեան:

Ով Յիսուս այս տապանակին մէջ փակուած՝ Սիրտդ ինձի կը քանաս, կ'ուզես որ հոս հաստատեմ իմ բնակութիւնս: Եյս նշանաւոր պատիւն երբեք պիտի չմերժեմ. այո՛, քաղցրագուծ Յիսուս իմ, կը մտնեմ յաբիտնականութեանս այս տունը, զոր սէրդ ինձի քացաւ. եւ հոն՝ թող կենաց

ամէն փոթորիկներն վրաս յարծակին. թող բովանդակ դժոխային ոգիք ինձի դէմ զաշինք կունն. հոգիս՝ հանդարտ, անխտով եւ անվրդով պիտի կենայ հակառակութեան եւ փորձութեան ալեաց հանդէպ: Հոգիս միշտ խաղաղութեամբ պիտի պատերազմի, բայց միանգամայն պիտի վայելէ ի քեզ քաղցր հանգիստ մը, եւ քու բարեկամացող վերապահած քնովդ պիտի ննջէ նոյն իսկ այս արտասուաց եւ փորձամաց հովտին եւ մարդկան խառնակութեանց եւ հակառակութեանց մէջ:

2. Օ Ր

Յիսուսի սփռած սէրդ մերին ողորմեաց ինչպէս զեղուր:

« Յիսուսի Սիրտն ամէն սրտերու խօսքն է թէ իւր մեծութեամբը, թէ կարողութեամբն եւ թէ արժանեօքը: »

Յիսուսի Սիրտը օրտերու ամէնէն մեծն է, որովհետեւ զանոնք ամէնքն իրենին մէջ կը պարփակէ: Ամէնէն կարողն է, որովհետեւ իր ուղածին պէս անոնց վրայ կրնայ տրամադրել: Ինքն անոնց ամէն դաղտնիքը դիտէ, անոնց ամբողջ ձգտումները կը ճանչնայ, եւ կրնայ անոնց իւր ուղած շարժումը տալ: Ամէնէն աւելի արժանաւորն է հրամայելու, որովհետեւ ամէնէն ազնիւ, ամէնէն սիրելի եւ սիրող Սիրտն է, ինչու որ առ սիրոյ վերաւորուիլ ուզեց, որպէս զի

որտերը բուժէ եւ իւր արեամբը զանոնք լուանայ:

Յիսուսի վէրքն իւր պսակն է. իւր մեր վրայ ունեցած իրաւունքն ասկէ աւելի օրինաւոր չի կրնար բլլալ: Հնազանդութիւննիս չենք կրնար զլանալ առանց անիրաւութեան, որովհետեւ ամենայն ինչ իրեն պարտական ենք. եւ ոչ առանց յիմարութեան, որովհետեւ բան մը չի հրամայեր որ մեր բարւոյն համար չըլլայ. մեր անձն իրեն տալու համար ստիպիչ հրաւերներուն մի միակ նպատակն է՝ զմեզ երջանիկ եւ սուրբ ընել:

Մեծարենք ուրեմն այս ամենասուրբ Սիրտը, քանի որ այնչափ ազնիւ եւ գերազանց է. իրեն նուիրենք մեր երկրպագութիւնքը, քանի որ Աստուծոյ մը Սիրտն է. հետեւինք անոր ամէն շարժմանց, քանի որ ինքն է աշխարհիս ամէն բարեաց սկիզբն ու անսխալական կանոնը. իրեն հպատակեցընենք մեր կաթնը, քանի որ սրտերու թագաւորն է: Արքայական եւ աստուածային կնիք մը համարինք այս Սիրտը. դրոշմենք զայն մեր սրտին վրայ, որպէս զի անոր ձեւն ու կերպարանքը ճշդիւ հանենք: Ջիւ իբրեւ իւր + ու + րոյիւր + րէր կ'ըսէ Յիսուս Քրիստոս. այսինքն՝ ըստ մեկնութեան Ս. Անսելմոսի կ'ուզէ ըսել. Թո՛ղ տուր որ ես կառավարեմ՝ քու սիրտդ եւ մտածմունքներդ, որպէս զի կենացդ ամէն գործոցը առաջնորդն ես ըլլամ: "Պէտք է զՅիսուս Քրիստոս իր-

րեւ կնիք մեր ճակտին, սրտին եւ բազկին վրայ դնել, կ'ըսէ Ս. Ամբրոսիոս. ճակտին վրայ, որպէս զի ամէնուն առջեւ աներկիւզ դաւանինք հաւատքնիս. սրտին վրայ, իւր սէրը հոն թագաւորեցընելու համար. բազկին վրայ, բարի գործոց կատարմամբ իւր փառքն ածեցընելու համար: Ուրեմն իւր մեծութեան պատկերը փայլեցընենք մեր խօսքերուն, յօժարութիւններուն եւ գործերուն մէջ. եւ եթէ կարելի է, ջանանք ցուցընել ի մեզ իւր առաքինութիւնքը, որովհետեւ ինքն անստեղծ սրբութեան կնիքն է, զոր Հայրն յաւիտենական գամբու, փշերու եւ տէգի ծայրով փորագրած է, որպէս զի մեր հոգիներն անոր խոնարհութեան, քաղցրութեան, կարողութեան, սիրոյ եւ կատարելութեանց կնիքովը դրոշմէ:"

Երբ ուրեմն, քրիստոնեայ հոգի, կ'իմանաս որ աշխարհքիս փառասիրութիւնը մեղմեխանօք կը փայփայէ սիրտդ, եւ կամ ընդունայն փայլով մ'աշուրներդ կը շլացընէ, միտքդ առ Աստուած բարձրացուր եւ ըստ խրատուն Ս. Հերոնիմոսի փեսին սա խօսքերուն մտիկ ըրէ. "Պէ՛ր ը՛ս իբրեւ զի + ու + րոյիւր + րէր կ'ըսէ Յիսուս Քրիստոս. այսինքն՝ ըստ մեկնութեան Ս. Անսելմոսի կ'ուզէ ըսել. Թո՛ղ տուր որ ես կառավարեմ՝ քու սիրտդ եւ մտածմունքներդ, որպէս զի կենացդ ամէն գործոցը առաջնորդն ես ըլլամ: "Պէտք է զՅիսուս Քրիստոս իր-

եթէ այս է Յիսուսի Քրիստոսի բաղձանքը, խնդրենք ուրեմն որ մեր եւ ուրիշներուն սրտերն դէպ ի ինքն դարձընէ. թո՛ղ

Հլու եւ ունկնդիր ընէ այս ստիպիչ հրաւիրին, որով կը հրաւիրէ զմեզ որ իւր աստուածային Սրտին ընծայուինք. «Գուք որ աշխարհքի նենդաւոր հաճոյից ներքեւ պապակած էք, եկէք իմ Սիրտս, ճշմարիտ հաճոյից կենդանւր, կենդանի ջերու աղբիւրը. շնորհաց կարօտ խեղճեր, մտեցէք՝ խմեցէք եւ ծարաւնիդ անցուցէք. եկէք առէք սոսանց գրամի. ինչո՞ւ խաբեպատիր բարութիւններու ետեւէ ինկած կը հալէք ու կը մաշէք, որ ձեր անյազ սիրտը չեն կրնար յագեցընել: Ահա ճշմարիտ հարստութիւններ, Սիրտս հարստութեանց աղբիւրն է. որչափ ջուր կը հանէք, այնչափ կ'ուրախանայ Սիրտս. Ո՞ր ծարար է, երբէք է Լուր:»

Այո՛, քրիստոնէից երջանիկ ազգին մէջ կատարուեցաւ Եսայեայ մարգարէին հետեւեալ գուշակութիւնը՝ Աստուծոյ աղբիւրներէն ուրախութեամբ ջուր պիտի առնուք. Ահէ՛ Լուր ուրբէն յաղբէրցն իրինքն: Բայց եթէ իւր ամբողջ վէրքերը շնորհաց նոյնչափ աղբիւրներ են, կրնանք ըսել որ Սրտին աղբիւրն ամէնէն կենդանին եւ ամէնէն առատն է:

Ս. Փրանկիսկէ կը պատմէ որ անգամ մը տեսաւ Յիսուսի Սրտին վէրքը, ուստի կենդանի ջուր աղբիւր մը կը ժայթքէր եւ հետեւեալ խօսքերը լսեց. «Ես այն սէրն եմ, որ բարձր ձայնիւ կը գոչէ. եթէ մէկը ծարաւի է, թող ինծի գայ եւ խմէ. իմ հրաւիր-

րիս հնազանդողները կը յագեցընեն. ասոր համար է որ Սիրտս բացի, որպէս զի զանոնք Սրտիս ապաստանարանին մէջ ընդունիմ:»

Հրահանգ: Ամէն օր աղօթքդ ի ձեռն Սրտին Յիսուսի՝ Աստուծոյ նուիրէ. ասով աւելի արդիւնաւոր եւ ազդու կ'ըլլայ: Ահա այն ձեւը՝ զոր Մարգարիտա-Մարիամ առ այս վախճան կը գործածէր:

«Աստուած իմ, քեզի կը նուիրեմ Յիսուսի քու միածին Որդւոյդ Սիրտը, իրբեւ ներգործութիւն շնորհակալութեան այն ամէն բարեաց համար, զոր ինծի ըրիր: Ընդունէ՛ ասիկայ, Հայր յաւիտենական, ինծմէ խնդրածիդ թերին լեցընելու համար, որովհետեւ քեզի մատուցանելու արժանի բան մը չունիմ, բայց եթէ զՅիսուս իմ փրկիչս, զոր դուն ինծի ի վայելք եւ ի ստացումն տուիր:»

Սուրբ Սիրտ, Յիսուսի, ողորմեաց մեզ: Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Սյացակիսն աղօթք: Ո՛վ Սիրտ Յիսուսի, զո՞ս սիրոյ. ողորմէ՛ խեղճ մեղաւորիս:

Այցեղութիւն Աննաատուրք Հաղորդութեան:

Ո՛վ Յիսուս իմ, մեզի ունեցած սէրդ որչափ սուղ եկաւ քեզի. ամբողջ կենացդ մէջ մեզի ունեցած սիրոյդ զո՞ն եղար. տարինորդ՝ ճղնաժամիրու եւ հեծեմանաց մէջ սրացան անցան. մեր ապերախտութիւնը, անհոգութիւնն ու մոռացութիւնը շարաշար վերաւորեցին սէրդ: Չիթնեաց պարտիզին մէջ, այս արագին մտած-

մունքն Սիրտդ սեղմելով՝ արեան քրտինքի մէջ  
 թաթաւեցին զքեզ: Խաչին վրայ, հակառակ քու  
 շարժարանացո՞ւ՝ այնչափ կորուսեալ հոգիներու  
 յուսահատական վիճակը Սրտէդ սա զանգաւաք  
 կորզեց Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր  
 թողնի զիս:

Ո՛վ աստուածային Սիրտ, մեթէ այս Խոր-  
 հըրդեան մէջ դարձեալ մեր զոհը, սիրոյ զոհ մը  
 չնս: Այո՛, իբրև այսպիսի զոհ մը, Ս. Պատա-  
 րագի մէջ զանձող մատուցիր եւ Ս. Հաղորդու-  
 թեան մէջ մեզի կու տաս ինք զինքը եւ այս  
 տապանակին մէջ քանտարկեալ կը քնակիս: Եւ  
 մեթէ մեր սրտերն վաստկելու համար այնչափ  
 զոհողութիւն ընողն զմեզ պիտի մերժէ. մեր  
 սողաչանաց առջև խոնկ պիտի մայ. եւ երբ  
 մեղաւորն գթութիւն եւ ողորմութիւն հայցէ,  
 պիտի չփութայ թողութիւն տալու: Ոչ, ոչ,  
 քաղցրագոռթ Յիսուս իմ, աղոյսեանց ինձ մե-  
 դառոյիս փոքրիկ խօսքն անգամ բաւական է  
 ողորմութեանդ աղիքը շարժելու:

**Ե. Օ Ր**

Յիսուսի մեղսութիւնը Սրտի մշտնջենական  
 գիտելանցութիւնը:

Յիսուսի Սիրտն այն խորան է, որուն վրայ  
 ինքն մատոյց Արարչին՝ աշխարհիս ամենէն  
 պատուական զոհը: Այս միեւնոյն խորանին  
 վրայ պէտք ենք դնել մեր բոլոր իղձերը, եւ  
 մատուցանել մեր սրտերն, սրովհետեւ այս  
 խորաններուն վրայէն է՝ որ զանոնք կ'ընդունի

եւ կը լսէ: Արարածոց իրեն մատուցած ամէն  
 պատիւն, գովութիւնն, զոհներն, երկրպա-  
 գութիւնքն եւ սէրը՝ Յիսուսի Սրտէն կա-  
 խեալ արդիւնքներ են. այս արդիւնքներն  
 իրեն բարձրելոյն մատուցած պատուոյն հա-  
 մեմատութեամբ ոչինչ են. ինչու որ ինքը  
 միայն ըստ իւրում արժանեաց զինքը կը սիրէ  
 եւ կը մեծարէ:

Ուրեմն Աստուծոյ ամենէն հաճելի բանն  
 ըրած կ'ըլլանք, եթէ իւր Որդւոյն Սրտին  
 նուէրներն ու երկրպագութիւնքն իրեն կը  
 մատուցանենք. մեր խնդրածներն ընդունե-  
 լու ամենէն ապահով միջոցն է՝ ի ձեռն  
 Սրտին Յիսուսի մեր խնդրուածքն Աստուծոյ  
 ուղղել, Մարգարէին հետ ըսելով. «Տէր,  
 աչուքներդ գթութեամբ իմ վրաս խոնար-  
 հեցուր. բայց որովհետեւ վրաս բան մը  
 պիտի չգտնես, որ պատժոյ արժանի չըլլայ,  
 դարձեալ քու ամենասիրելի Որդւոյդ օծեալ  
 երեսին՝ Սրտին դարձուր: Ընդունէ՛ ինձ  
 դո՛ւր, որ եւ Աստուած, եւ նայեաց յերես օծելոյ  
 քո:» Յիշէ՛ Սրտիդ մեղաւորիս ունեցած ան-  
 հուն սէրը. եւ գթութեանդ հրաշակերտը,  
 վաստակոցդ արգասիքն մի՛ կորսնցընիր:

Ս. Գերդրուտա օր մը տեսաւ որ իւր կար-  
 գին կուսանք Ս. Հաղորդութեան առջև  
 աստուածային շնորհք կ'ընդունէին: Ոմանը  
 ուղղակի Յիսուսի Սրտէն կ'ընդունէին այդ  
 շնորհքները, այլք դամով ծակուած ձեռուր-  
 ներէն ու ստուրներէն, բայց միշտ այս տար-

բերութեամբ որ որչափ Սրտէն հետու կ'ընդունէին, այնչափ դժուարաւ կը հասնէին իրենց բաղձանաց կատարման. ուղղակի Յիսուսի երկրպագելի Սրտէն շնորհք ընդունողներն աւելի շուտով եւ շատ դիւրաւ կը դտնէին հոն իրենց բաղձացածները:

Եկեղեցին Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ ծնաւ. հետեւաբար հաւատացեալք այս Սիրտն իրրեւ իրենց որորոյց պէտք են սիրել եւ երբեք անկէ դուրս չելլել: Յիսուս մահուան քնով ննջած ըլլալով՝ Եկեղեցին իւր Սրտէն բղխեցաւ. ինք ուղեց որ այս Սիրտն բացուի, որպէս զի Եկեղեցին իւր փրկչին կողէն ելած ըլլալու պարծանքն ունենայ: Երջանիկ է այն հոգին, որ յաւիտենականութեան մէջ մտնելու ժամանակ կրնայ ըսել Յիսուսի ամենասուրբ Սրտին ամէնէն ջերմեռանդ առաքեալներէն միոյն հետ. «Յիսուսի Սրտին ինծի ունեցած սիրոյն վրայ մտածած ժամանակս ստէպ ինքն իրենս ըսած էի. Յիսուսի Սիրտն իմ որորոյց է, կենացս մէջ բնակարանս, իցիւ թէ մահուանս ժամանակն ալ շիրիմս ըլլար: Այս որորոյց, բնակարան, չէրէ՛մ երեք բառերուն նշանակութիւնն ինծի հասկցուց:»

«Յիսուսի Սիրտն եկեղեցւոյն սիրտն է, որուն քնացած ժամանակն ինքն կը հսկէ. Եւ ձեզմէ, եւ սիրո իմ արձուտն էս: Սուրբ Գիրքը կ'ըսէ որ առաջին քրիստոնեայք մէկ սիրտ եւ մէկ հոգի ունէին. ասոր շեմ՝ զար-

մանար. որովհետեւ Յիսուսի Սիրտն էր որ անոնց մէջ կը բնակէր եւ երկնաւոր իրերու սէր կը ներշնչէր ամէնուն:» (Եւրեւթ. 1) Այն երջանիկ ժամանակը, այն բարւոյն ընդհանուր միտութիւնը, միթէ չէ՞ կրնար վերստին կենդանանալ այս ամենասուրբ Սրտին ջերմեռանդութեամբ, որ սրտերն իրարու հետ կը միացնէ: Գոնէ մեր բոլոր զորութիւնն առ այս գործածենք, Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեռանդութիւնն ընդգրկելով, աղօթքով եւ բարի գործքերով առ այն հասնելու, որպէս զի եկեղեցւոյ առաջին դարերուն քրիստոնէից պէս մէկ սիրա ունենանք Յիսուսի Սիրտը սիրելու, միակ ձայն մը՝ զինք գովելու եւ օրհնելու. մի միակ եւ միեւնոյն հոգին՝ որուն շարժմունքն Յիսուսի ամենասուրբ Սրտին սիրոյն եւ փառացը նուիրուի:

Հրահանգ: Յիսուսի ամենասուրբ Սիրտն ամէն հաւատացելոց որորոցն է. Ս. Մկրտութեան հոգեւոր ծննդեան՝ ի նմա եւ ի ձեռն նորա կուշուած էս: Ուրեմն այս աստուածային Սրտին հաճոյական գործք մը կը կատարես, եթէ առաւ արթննալուդ պէս նորոգես այն խօստումներն՝ որոնցմով մկրտութեան ատեն ինք զինքդ պարտաւորեցիր: Հետեւեալ կամ ասոր նման ձեւ մը գործածէ. «Ո՛վ Սիրտ Յիսուսի, դարձեալ կը հրաժարիմ սատանայէ, իւր փառաւորութիւններէն, իւր գործքերէն, կենացս ամէն վայրկենին համար ինք զինքս քեզի կը յանձնեմ:» Ո՛հ. այս հրահանգն ինչպիսի՞ շնորհքներ պիտի

**Հայժ պլթէ քեզի: Սատանային ամէն ճիգն ու ջանքը կրնայ եսանգարել:**

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեսնց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, առթնան վասն մեր:

Մշացախան աղօթք: Ո՛վ Սիրտ Յիսուսի, զքեզ շսիրողը նզովեալ ըլլայ. Եթէ որ ոչ սիրե գՏէր Յիսուս, եղիցի նզովեալ:

Այցերու թիրև ամենաստորք Հաղորդութեան:

Ի՞նչ է սիրոյ հրապոյրը. — Սէրը: Եթէ կ'ուզես սիրուիլ, սիրէ՛ կ'ըսեն մարդիկ իրարու մէջ: Եւ միթէ ո՞վ Յիսուս իմ, քու սէրդ միայն պիտի ըլլայ որ սիրով պիտի չվարձատրուի: Դուն կը սիրես եւ երբեք սիրուած չես. սարկեցար, կրեցիր, մտար առ սիրոյ. դուն այս Խորհրդեան մէջ ի սիրոյ մեզի հետ ես, մեզմէ ամէնուն մէջը, եւ ո՞վ է այն որ կարենայ ըսել թէ զքեզ փնտում ըլլայ այնպէս՝ ինչպէս դուն զինքը փնտում ես. եւ քեզի ծառայած ըլլայ ինչպէս դուն ծառայեցիր: Եւ որո՞նց զքեզ կը գոհնն — մտտի եւ ընդունան արարածոց: Ո՛վ արարածք, ի՞նչ են ձեր հրապոյրները, որոնք կարենան իմ Աստուծոյս հետ մըցիլ: Դուք ձեր ամէն հրապոյրներով ինծի կը մօտենարք, քայց ես ձեր զվտուն վրայ չեմ տեսներ փշեայ պսակը՝ որով փառաւորուած է իմ Յիսուս սիրոյս համար. ձեռուընիզ ինծի կը կարկառէք, քայց ես ասոնց վրայ զամերու հետքեր չեմ տեսներ որոնք ինծի համար Յիսուսիս ձեռուընիզ ծակեցին. իմ ետեւէս կը վազէք, քայց ձեր ոտուըններն ծակուած չեն այն զամերով որոնք իմ Տէրս եւ Աստուածս խաչին վրայ զամեցին. դուք ձեր սիրտն ինծի կը խոստանարք,

քայց ես ի՞նչպէս կրնամ ապաւինիլ հոն, քանի որ վերաւորուած չէ այն տէգով, որ քացաւ իմ Յիսուսիս Սիրտը՝ անպիտան արարածի մը համար, որ արժանի չէր Յիսուսի մի միակ հայեցուածքին անգամ. եւ սակայն Յիսուսի ամէն մտածութեանց, ճշմանց եւ շարչարանաց առարկան եղաւ: Ո՛հ, եթէ մէկը չի սիրեր այն Յիսուսը՝ որ զմեզ այնչափ սիրած է, ստուգի արժանի է նզովեալ ըլլալու:

**Ը. Օ Ր**

**Յիսուսի Սրբի գործն ու գործիչն:**

Յիսուս Քրիստոս շքեղ յատկութեանց եւ հոյակապ տիտղոսներու կը կցէ շափազանց գութ ու գորով մը առ մեզ:

«Իմ հաճոյքս մարդկան հետ ըլլալս է կ'ըսէ. Ուրիս լինի յորիս մարդին: Իւր քաղցրութիւնն այնչափ սիրալիւր է որ ամէնէն մահացու թշնամիներն անգամ ապշեցուց: Շնացող կին մը կը բերեն առջեւը, չուզեր զանիկայ դատապարտել եւ անոր ամբաստաններն ամօթով կը պատէ: Կը թողու որ մեղաւորներն իրեն մօտենան, անոնց մէջ կը խառնուի, կը թողու որ իւր անուըն տան եւ ըստ իմիք մեղաւորաց բարեկամն կ'ըլլայ: Մեղաւորաց եւ մաքսաւորաց սեղանը կը հասի: Զո՞վ կը տեսնէք արդեօք Յիսուսի ոտից առջեւ. Մագդաղենացին, ի պաշտօնէ մեղաւոր մը, որուն՝ մի միակ սիրոյ



ներգործութեան մը համար, կը ներէ անկարգ եւ գայթաղալից կեանքը: Ո՛վ Մագդաղենացի, դէպ ի այս բարի վարդապետն առաջին քայլերն առնողն դուն շես. դուն դեռ Յիսուսի ոտից առջեւ չծռած՝ արցունքներովդ չլուացած եւ մաղերովդ չսրբած Յիսուս բախեց եւ սրտիդ դրան առջեւ սպասեց: «Շատ մը մեղքերդ թողուեցան քեզի, որովհետեւ շատ սիրեցիր.» բայց առաւելապէս որովհետեւ շատ սիրուեցար:

Յիսուս իւր խնամքը մինչեւ պղտիկ տողց վրայ կը տարածէ, որոնք դեռ անկարող են զինքը ճանչնալու, բայց իւր քաղցրութիւնն յինքն կը ձգէ զանոնք: Առաքեալները կը մերժեն մանուկները. «Թող տուէք կ'ըսէ Յիսուս, որ պղտիկ տղոք ինձի գան.» զանոնք կը գգուէ, կ'օրհնէ, եւ կը գրկէ: Եթէ ճնողքնին զատուք թողուին, Յիսուս զանոնք պիտի խնամէր. եթէ նոյն իսկ մայր մ'իւր որդիքը մտնայ, Յիսուս երբեք պիտի չմոռնայ: Տեսէք, ի՞նչպէս կ'ընդունի զանառակ որդին, որ Յիսուսի ոտու ընկերուն առջեւ ինկած կը խոստովանի թէ այլ եւս որդին կու չուելու արժանի չէ. ի՞նչպէս ընդառաջ կ'ելլէ. ի՞նչպէս ձեռու ընկերը կը սեղմէ, ի՞նչպէս իւր բազուկներուն տակ զինքը կը ճնշէ. ի՞նչպէս իւր արցունքներով զանիկայ կը թրջէ եւ զղջման առաջին նշանին վրայ ժառանգութեան իրաւանց եւ հայրական սիրոյն մէջ վերստին կը հաստատէ: Այս անդուդական

Հովիւը բարերարութիւն կը սփռէր ամէն անցած տեղը: Ո՛հ, իւր փարախին մէջ շատ հիւանդ տեսնելով՝ իւր ձեռու ընկերովն անոնց վէրքերը կը պատէ, իւր եւ գինի քսելով խոցուածը կը բուժէ. կուրաց տեսութիւն կը պարգեւէ, անդամալոյճք եւ կաղեր իւր ձայնին ոտք կ'ելլեն եւ կը քալեն: Մայր մ'իւր միամօր որդւոյն վրայ կու լայ. Յիսուսի Սիրտը կը փղձկի, գիտէ թէ ինչ մեծ ցաւ եւ կակիժ է մօր մ'իւր սիրելի որդին մահուան ճիրաններուն մէջ թաւալած տեսնել. «Պատանի, ոտք ել, ես քեզի կը հրամայեմ,» եւ պատանին մօրը կը թնձնէ:

Տեսէք զինքը Յակովբայ ջրհորին եղբբը նստած, ճամբէն սաստիկ յոգնած, Սամարացի կնոջ կը սպասէ, իւր Սիրտը զանիկայ կը հալածէ, իւր Սիրտը կը բերէ զանիկայ դտնելու այն ջուրը՝ որ մինչեւ ի կեանս յաւիտենականս կը բղխէ, հոն ուր կինը ապականացու ջուր կը փնտռէր: Սամարացի կնոջ հագուոյն մէջ հեշտալի ծարաւ մը կը զարթուցանէ, զոր անիկայ չէր ճանչնար. իւր աստուածային առաքելութեան գաղտնիքը կը յայտնէ այս նշանաւոր մեղաւորին: Տեսէք զինքը Ղազարու գերեզմանին առջեւ, զոր սուրախութեամբ քորելով ի՛մ կը կոչէ, կու լայ եւ շրեայք զարմացմամբ կը գոչեն. Տեսէք, ինչպէս կը սիրէր զՂազար. Տեսէ՛, «չլա՛վ էրէր շու՛ր քիչ մը վերջը, երուսաղեմի մերձակայ կործանումը կ'ողջայ, այն յանցա-

պարտ քաղաքը՝ որ օր մը ետեւէն պիտի աղաղակէ եւ արտասուօք սա սրտաշարժ գանգատն պիտի կորզէ Յիսուսի բերնէն. «Երուսաղէմ, Երուսաղէմ, քանի՛ քանի՛ անգամներ ուղեցի որդիքդ ժողովել, ինչպէս հաւը կը ժողովէ իւր ձագերը թեւին տակ, բայց դուն չուղեցիր»:

Ինչպէս կը վարուի իւր առաքեալներուն հետ. ինչպիսի՛ երկայնժամութեամբ անոնց կը համբերէ: Յուդա կը մասնէ ղինքը, եւ դեռ կը հաճի ընկեր քաղցր անուներ տալու անոր. ընկեր վասն որո՞յ եկերդ: Այս այն անունն է, զոր ընթրիքէն վերջը սրտաշարժ ճառին մէջ ամէնուն տուած էր ըսելով. Ես զձեզ այլ եւս իմ ծառաներս պիտի չկանչեմ, հապա իմ քարեկաններս: Ոչ ես կուեմ շարժուիլ, այլ շինել ինչքէն քարեկանս: Պետրոս ղինքը կ'ուրանայ, բայց Յիսուս իւր մի միակ քաղցր հայեցումաճքովը, առանց գանգատելու, առանց յանդիմանելու, այս անհաւատարիմ առաքեալն արտասուաց մէջ կը թաղէ: Միով բանիւ, փրկչին բովանդակ կեանքը քաղցրութիւն եւ սէր է առ մարդիկ:

Սակայն իւր քրտինքները, յոգնութիւններն ու հսկումներն դեռ բան մը չեն: Քաղցրագութ փրկիչն մեր ըսաւ. «Բարի հովիւն իւր կեանքը կը զոհէ իւր ոչխարներուն համար»: Այս, կեանքը պիտի զոհէ, իւր ոչխարներէն եւ ոչխարներուն համար պիտի զենուի: Իւր զոհը կատարելէն յառաջ,

իրենները սիրած էր այս աշխարհիս վրայ, եւ զանոնք սիրեց մինչեւ ցկատարած: Առաքեալները կը ժողովէ, եւ ինչ ըրաւ արդեօք այն վերջին ընթրեաց ժամանակ: Ո՛հ, Աստուծոյ այն պարգեւը ճանչողը՝ վրան արժանաբար խօսելու համար բացատրութիւն պիտի չկարենայ գտնել: Ո՛հ, այս սիրելի Սրտին այս սիրաբորբը գիւտն իւր ամէն գործերուն հրաշակերտն է...: Ուրիշ հովիւներ իրենց ոչխարներէն կ'ապրին, իսկ Յիսուս միջոց կը գտնէ ինք ղինք իւր ոչխարներուն կերակուր տալու. այնչափ չափազանց կը սիրէ զանոնք, որ անոնց հետ մեկտեղ մի ըլլալ կ'ուզէ եւ մինչեւ ցկատարած աշխարհի անոնց աքսորանաց մխիթարիչն ու ընկերը մնալ:

Սակայն այս ապերախտ ոչխարներն իրենց Հովուին վրայ յարձակեցան. ղինքն այնպիսի վիճակի մը բերին, որ իրաւամբ կրնայ ըսել թէ ոտուրներէն մինչեւ գլուխը վերքով պատած է: Միթէ Յիսուս վրէժ պիտի չկնդրէ...: Այո, բարութիւն ընելով...: Հողին աւանդելու վրայ է. վրան բան մ'ալ չէ մնացած, ամէն բան մեղի տուաւ, ամէն բան զոհեց: Բայց մայր մ'ունի, այն ալ մերը պիտի ըլլայ: Յիսուս խաչի վրայէն իւր սիրելի աշակերտին կը նայի, որ ընթրեաց ժամանակ իւր Սրտին վրայ հանգչած էր, եւ իրեն կ'ըսէ. Ա՛հ մայր + եւ Մարիամ զմեզ կ'որդեգրէ: Յիսուս

մարդկան մեղաց համար մեռաւ, եւ մարդկան արդարացուցման համար պիտի յառնէ, որպէս զի այս անվիճելի հրաշքով ի կեանս եւ ի մահուան գործած հրաշքներուն ստուգութիւնն հաստատէ: Եթէ յերկինս կը համբաւուայ, իւր սիրեցեալ ժողովրդեան վրայ աւելի առատ շնորհքներ հեղու համար է: Իւր դանձերուն ամենապատուական զՀոգին սուրբ, անոնց կ'առաքէ, եւ հիմայ ալ չի դադրիր բնաւ իւր մարմնոյն վէրքերը՝ բայց ի մանաւորի Սրտին վէրքը խօսեցընելէ իբր եւ բաղմամբիւ ճարտարտախօս բերաններ՝ որոնք մեղաւորաց ողորմութիւն կը հայցեն, արդարոց համար ալ շնորհք եւ սէր:

Հրահանգ: Օր մը որ Ս. Գերգրուտա իւր նեղութիւնն ու վիշտը կը ցուցնէր փրկչին, աստուածային վարդապետը, զինքը իւր Սրտին վրայ հանգուցանելով ըսաւ. «Ամէն վշտերուդ ժամանակ հոս պէտք ես ասպտտանիլ, բայց այս ասպտտանարանէն հեռանալուդ պէս, սրտի դառնութիւն պիտի զգաս, իբրեւ փրկարար անդեղեայ մը, ազդարարելով քեզի՝ որ ես եմ ամենակարող մի միակ մխիթարիչը:» Այս օրինակէն օգուտ քաղեցէք, ձեր ամէն տարակուսանաց, ձանձրութեանց, վշտաց մէջ Յիսուսի Սրտին դիմեցէք ինչպէս կը դիմէ տղայ մը իւր մօր, ինչպէս բարեկամ մը իւր բարեկամին, խնդրելով որ Յիսուս ձեր լոյսը, նեցուկը, մխիթարիչն ըլլայ, եւ չժողու որ իրմէ զատ ուրիշ տեղ խաղաղութիւն կամ մխիթարութիւն գտնէք:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմաց մեզ:  
 Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մխցակիան աղօթք: Ես իմ Թագաւորիս, եղբօրս, ամէնէն սիրելի բարեկամիս, Յիսուսի Սիրտը գտայ. այլ ես նշ կընամ բաղձալ յերկինս եւ փնտոնլ յաշխարհի:

Ելցելոթիւն ամենատարբէր հաղորդութեան:

Անձն իմ, ինչ կընաս յերկինս ընձալ. այս տխուր կեանքիս վշտերուն մէջ ինչ բանի վրայ պիտի գանգատիս. հոս այս Խորհրդեան մէջ, ցորեկ կամ զիշեր, ինչպէս որ քեզ հաճոյ է, պիտի գտնես Անոր Սիրտը, որ միայն կարող է կարեկցիլ խեղճութեանցդ եւ անոնց դարման տանիլ: Բու Թագաւորիդ Սիրտն է այս, որ քեզի համար շահեցաւ իւր Թագաւորութիւնը՝ տանջանքներու տակ իւր բովանդակ արեւնը Թափելով, եւ իւր չարչարանաց գործիքին վրայ արձանագրել տուաւ իւր տիտղոսներն Յիսուս նազովիւցի Թագաւոր Հրեից: Այս Անոր Սիրտն է, որ քու տկարութիւններդ լաւ եւս ըմբռնելու համար ուզեց անոնց փորձն անուիլ իւր անձին վրայ. քու քնութիւնդ առաւ եւ իրականապէս քու եղբայրդ եղաւ. աշխարհիս վրայ երեւցաւ եւ իբրեւ ամէնէն պարզ մահկանացուն ապրեցաւ. բարեկամներու ամէնէն քաղցրին Սիրտն է այս, որուն կընաս վստահիլ անձկութիւններդ, անոր առջև դնել մտքիդ բոլոր միտքեալ գաղափարները, երեսակայութեանդ յիմարութիւնները, կամեսցդ ասպտտանութիւնները, սրտիդ շեղումները, դաւնութիւնները, ընդունայն ուրախութիւնները, անարժան տրտմութիւնները, արդարութիւն խնդրելով Յիսուսէն քու անձինդ դէմ

եւ ըսէ. Տես, Տէր իմ, Թշնամիներս կը պաշարեն զիս, բռնութիւն կ'ընեն վրաս, ինծի երաշխաւոր եղիր. եւ Յիսուս իւր կարողութեան եւ քնզի ունեցած սիրոյն զօրութեամբը՝ սրտիդ մէջ կարգն ու խաղաղութիւնը պիտի հաստատէ:

**Թ. Օ Ր**

**Յիսուսի Սրտին Գործն ու Ժողովի:**

Հուրը շունի այնքան զօրութիւն գիւրավառ նիւթ մը սպառեցը, ոչ քարն այնքան արագութիւն իւր կենդրոնին հասնեցը, ոչ ալ ամէնէն սրնութաց գետն այնքան ուժգնութիւն ծովու հետ միանալու, որչափ Յիսուսի Սիրտը փափաք ունի ինք զինք հաղորդելու հոգիներուն, երբ առ այն կը պատրաստուին բառնալով մեղաց արգելքը՝ որ ըստ իմիք բռնութեամբ կը կասեցընէ իւր աստուածային սիրոյն արդիւնքը: Տէրն մեր Ս. Աստուարինէ Սիենացւոյն ցուցուց, որ առ մարդիկ ունեցած մեծ սիրոյն համար, երբեք այնքան չի բարկանար անոնց դէմ, որ դադրի գիրնը սիրելէն եւ անոնց հետ միանալու փափաքէն. ցուցուց միանգամայն թէ ինչպէս անընդհատ կը ձգնի հոգւոյն մէջ այն բնական հակումը զարթուցանելու, որ այս միութեան համար անոր տուած է: Վերջապէս սրբուհւոյն ցուցուց որ ինքը միշտ պատրաստ է վառելու եւ իւր սիրոյն ամէնէն կիզիչ ճառագայթներովը սրտերը տոչորելու:

Ես դեռ չկայի երբ Յիսուսի Սիրտը միայն ինծի համար կ'ապրէր, իմ փրկութեանս կը տենչար, ինք զինք ինծի տալու կը ցանկանար, ինծի համար միայն կը հսկէր, ինծի համար միայն կը վրդովէր: Այս Սիրտն այնքան լեցուած է իմ սիրովս որ դժուարութիւն չ'ըներ գալու զարնելու իմ սրտիս դուռը եւ իրմէ մուտք խնդրելու: Ահա՛սիկ է իմ ես ու դուրս ելբախէմ:

Տէրն մեր օր մը Ս. Գերգրուտային՝ իւր աստուածային Սրտին երկու զարմանալի եւ շատ քաղցր բաբախումները ցուցընելով ըսաւ. «Այս երկու շարժումներու ձեռօք կը կատարուի մարդկան փրկութիւնը: Առաջինը մեղաւորաց համար է, իսկ երկրորդն արդարոց համար: Սրտիս առաջին բաբախումովը անընդհատ կը խօսիմ Աստուծոյ՝ Հօրս հետ, իւր սիրտը կ'առնում եւ մեղաւորաց հանդէպ գթութեան կը յօժարեցընեմ. յետոյ իմ ամբողջ ընտրեալներուս կը դիմեմ՝ դրդելով զիրենք որ եղբայրսիրաբար մեղաւորաց փակասութիւններուն ներքն եւ անոնց համար աղօթեն. վերջապէս մեղաւորին կը խօսիմ՝ գթութեամբ կոչելով զինքն յապաշխարութիւն, անպատմելի փափագով անոր դարձին սպասելով: Սրտիս երկրորդ բաբախումովը դարձեալ Աստուծոյ՝ Հօրս հետ կը խօսիմ եւ զինքը կը ստիպեմ որ խնդալից ըլլայ ինծի այն արեան համար՝ զոր այնքան օգտիւ թա-

փեցի արդարներուս փրկութեանը համար, որոնց սրտին մէջ կը դտնեմ իմ հաճոյքս պէսպէս եղանակաւ. յետոյ կը ստիպեմ երկնից զօրութիւնները, որ գովեն յիս սուրբերուս զարմանալի կեանքը, որպէս զի ինծի շնորհակալ ըլլան այն ամէն բարերարութեանց համար, զոր անոնց տուի եւ պիտի տամ: Աերջապէս կը դիմեմ արդարներուս, այլ եւ այլ եղանակներով զանոնք փայտայելով եւ զանոնք դրդելով որ սիրոյս մէջ աճին օր քան զօր եւ վայրկենէ վայրկեան: Եւ ինչպէս որ մարդկային սրտին բաբախումներն ոչ տեսողութեամբ, ոչ լսողութեամբ եւ ոչ ուրիշ ազդեցութեամբ մը կը կասին, այսպէս ալ ոչ երկնից, երկրի եւ համայն տիեզերաց կառավարութիւնը, եւ ոչ բան մը աշխարհիս մէջ չի կրնար կասեցընել մինչեւ ցկատարած աշխարհի Սրտիս այս ի նպաստ մարդկան երկու բաբախումները:»

Ո՛վ Տէր իմ, դուն ըսիր. «Ուր որ է ձեր գանձը, հոն է ձեր սիրտը:» Ուրեմն պէտք է որ մենք քու գանձդ ըլլանք, քանի որ Սիրտդ անընդհատ մերինին հետ զբաղած է: Ո՛հ, այնչափ քիչ հոգիներէ ծանչցուած Աստուծոյ անըմբռնելի սէրը, ինչո՞ւ ամէն հոգիներէ պիտի չճանչցուիս. ինչո՞ւ աշխարհ ամենայն պիտի չճանչնայ դքեզ, զիտունները, ագէտները, արդարները, մեղաւորները, դքեզ փնտառողները, քեզմէ փախչողները, քանի որ դուն զամէնքը կը սիրես:

«Սուրբերը այս սիրոյն չափազանցութեան վրայ հոգեզմայլ հիացման մէջ են. եւ սառագիւ պիտի զարմանային եթէ ամէն սրտերը մերինին պէս եղած ըլլային. բայց Աստուած իւր որդւոյն Սրտին մէջ այնքան արժանիք դրած է, որ մերիններն ալ կը սիրէ իրենին համար:

«Ո՛չ, Տէր իմ, ալ չեմ զարմանար թէ որ դու սրտիս Աստուածը կոչուիլ ուզես, թէ նախանձախնդիր ըլլաս իմ սրտիս սիրոյն, թէ որ այնքան փութով սրտիս սէրը փնտռես. բայց կը զարմանամ որ սիրտս զքեզ կը մերժէ, կը վարանի ինք զինք քեզի տալու:» (Եւսէ:) Ի՛նչ, Տէր իմ, քու Սիրտդ որ այնքան մեծ, այնքան սուրբ, այնքան կատարեալ է, կրնայ զիս սիրել: Ի՛նչ կ'ըսեմ, ինծի կը պատուիրէ իսկ զինքը սիրելու, եւ ես պիտի չսիրէի՞, ես՝ որ ծնրադիր քեզմէ պիտի խնդրէի որ զքեզ սիրելու ինծի հրաման տաս. սրովհետեւ բարէ, ես ի՛նչ եմ որ այնչափ պատիւ կ'ընիս ինծի, եւ կը զիջանիս Սիրտդ իմինիս հետ միացընելու, ուր որ ես եւ ոչ իսկ քեզմէ յիշուելու արժանի էի: Զ՞ո՞ւն է մարդ զի մեծացողներ զո՞ւ, ի՞նչ է հոգիս մարդի: Մարմինս փոշոյ կոյտ մըն է. հոգիս բարերարութեանց շիրիմն է. սիրտս ինքնին ապերախտութիւնն է. յիշողութիւնս՝ մուսցութիւն, միտքս՝ խաւար: Ա՛հ, ինչպէս կրնաս ուրեմն սիրել զիս, Աստուած իմ եւ սէր իմ: Ի՛նչպէս կրնաս զիս սիրել եւ զքեզ սիրելու ինծի թոյլատրել:

Աստուծոյ մը իւր արարածներուն հանդէպ այս անբնական սէրը ոչ միայն կը զարմացընէ եւ կ'ապշեցընէ հրեշտակներն ու սուրբերը, հապա նաեւ կը սարսափեցընէ սատանաները, որ իրենց անընդհատ նախանձին առարկան է, այս աշխարհիս վրայ իրենց յարգած մի միակ բարիքն է եւ որմէ զմարդիկ զըկելու կը բաղձան: Սատանան եկեղեցւոյ աղօթից զօրութեամբը սա նշանաւոր խոստովանութիւնն ընելու ստիպուած՝ ըսաւ օր մը. «Բոլոր աշխարհք կը պատիմ, մարդկան մեծամեծ գործքերը կը տեսնեմ, պատեւրաղմները, քաղաքականութիւնը, ատերութեանց կառավարութիւնը կը դիտեմ անոնց կառուցած շէնքերը, արուեստներն ու գիտութիւնները. եւ այս ամէն բանին վրայ կը ծիծաղեմ: Գլխաւորաբար զիս զբաղեցընողն է Աստուծոյ սիրոյն արարածոց մէջ մուտքը. ես սիրով կը թողում կայսրութիւնները՝ ուր կռակաշտութիւնը կը տիրէ, մտնելու համար քրիստոնէութեան մէջ, եւ նեղելու ու վրդովելու հոգի մը՝ երբ Աստուծոյ ծառայելու սկսած է: Մեր ուրախութիւնն է Աստուծոյ հետ միանալու ձգնող հոգին նեղելու»:

Փորձչին փորձութիւններն ի դերեւ հանեցէք բոլորովին Աստուծոյ յանձնելով այն սիրտն՝ որուն նախանձախնդիր է անիկայ, սիրեցէք զինքը, իրմէ սիրուած հոգիներ, ոչ թէ բոլոր սրտով, հապա բովանդակ յեր սրտովը, այն բովանդակ սրտով՝ զոր ձեզի տուած է

այնքան մեծ, վեհանձն, գորովալից, անձնանուէր եւ այնքան անյազ իւր սիրոյն մէջ, որպէս զի զայն միայն անոր ետ դարձընէք, որ կարող է զայն լեցընելու, եւ այսպէս լիովին համապատասխանեցէք այն հրաւիրին՝ զոր ձեզի կ'ուղղէ սա խօսքերով. Տո՛ւր յի՛ ուրեւի՛ զիբր +: (Աւ. ԻԳ. 26:)

Հրահանգ: Մարգարիտա-Մարեմայ վարուց մէջ կը պատմուի որ հրեշտակները չէին քաշուիր ասոր ընկերանալ՝ Յիսուսի Սրտին սիրոյ, երկրպագութեան եւ գովութեան անընդհատ մեծարանք ընելու համար: Դիմէ ուրեմն սուրբ հրեշտակներուն, մանաւանդ պահապան հրեշտակիդ որ հսկէ քովդ անդադար աղօթելով քեզի հետ եւ քեզի համար. խնդրէ իրենցմէ որ իրենց ջերմաջերմ սիրովն եւ իրենց Յիսուսի Սրտին հետ անընդհատ մութեամբը լրացընեն քու աղօթքներուդ ցրտութիւնն ու անբաւականութիւնը: Երբեմն խնդրէ նաեւ անոնց պահապան հրեշտակներէն՝ օրոնց հետ գործ ունիս, որպէս զի անոնց ալ ներշնչեն այս սօստուածային Սրտին ջերմեռանդութիւնը:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմանց մեզ:  
Անարատ Սիրտ Մարիմայ, աղօթեմ վասն մեր:

Մշացական աղօթք: Դնչպէս որ եղջերուն կը փափագի կենդանի լոյ աղբիւրներուն, այսպէս հոգիս ալ քու սիրոյդ կը փափագի, ո՞վ Սիրտ Յիսուսի:

Այցելութիւն ամենատառաջ հարապրութեան:

Հոգիս՝ հալածուած իւր փրկութեան թշնամիներէն՝ որոնք ամենեւին հանգիստ չեն թողուր,

յոզնած եւ շնչասպառ քեզի կը փափագի, ով Սիրտ Յիսուսի, իբրեւ իւր հանգստեան վայրին, իբրեւ իւր պատերազմներու վարձքին, իբրեւ իւր պանդխտութեան վախճանին: Հոգիս այն եռանդեամբ քեզի կը փափագի, ինչ եռանդեամբ որ եռչեքուն որսորդներէ հալածուած՝ կը դիմէ ջրոյ աղբիւրներուն, որ կրնաս իւր ծարաւն անցընել: Ո՛վ ինձի համար վիրաւորեալ Սիրտ Յիսուսի, երբեք մինչեւ քեզի պիտի չհասնին: Մինչեւ ցնորք կնծմէ պիտի ծածկուիս. մինչեւ ցնորք զիս պիտի մոռնաս, կամ մանաւանդ թէ ես զքեզ պիտի մոռնամ՝ միայն եւ միայն քու վրադ մտածելու փափագիս հակառակ: Երկամյս պիտի տեւէ. ցմեշտ պիտի ըլլայ ասիկայ: Գիտես, քեզի միայն կը փափագիմ, զքեզ միայն կ'ուզեմ. եւ սակայն թէ եւ ցայսօր փորձեցի զքեզ սիրելու, անըմբռնելի սէրդ խորհելու, քու տրամադրութեանցդ ներքեւ մտնելու, դարձնալ զքեզ քիչ կը ծանշամ, զքեզ ցուրտ եւ ընդհատեալ սիրով կը սիրեմ: Երբեք չեմ համակերպիր քեզի, քու կամացդ, ինչպէս որ իրաւունք ունիս սպասելու քեզի նուիրուած սրտէ մը: Ո՛հ, հոգիս քեզի կը քաղծայ, կը քաղծայ կատարել ամէն բան, որպէս զի արժանի ըլլայ զքեզ գտնելու, զքեզ ունենալու եւ զքեզ մէյ մ'ալ չկորսնցընելու:

**Ժ. Օ Ր**

**Յիսուսի Սրտին հարգութիւններէ:**

Տէրն մեր ինձի յայտնեց, կ'ըսէ երանելի Մարգարիտա-Մարիամ, որ մարդիկներէ կատարելապէս սիրուելու մեծ փափագը պատ-

ճառ եղած էր իւր Սիրտն անոնց յայտնելու եւ վերջին ժամանակներս զայն անոնց տալու իբրեւ իւր սիրոյն վերջին ճիգը. եւ թէ ասով անոնց կը բանար իւր Սիրտն՝ սիրոյ, շնորհաց, գթութեան, սրբացուցման եւ փրկութեան դանձը, որպէս զի անոր սէր եւ պատիւ ընծայել ուզողները, հարստանան առատօրէն այն գանձերով՝ որոնց բեղմնաւոր եւ անսպառ աղբիւրն է այս աստուածային Սիրտը: «Ահա սիրտս, ըսաւ Յիսուս անգամ մը այս սրբուհւոյն, այնչափ զեղեալ է սիրով առ մարդիկ, որ իւր վառեալ սիրոյն բոցերն բովանդակել չկարենալով յինքեան, պէտք է որ քու միջնորդութեամբդ զանոնք սփռէ եւ ինք զինք մարդկան յայտնէ, որպէս զի իւր բովանդակած գանձերովը զանոնք հարստացընէ: Ես քեզի կը յայտնեմ այս գանձերը՝ որոնց մէջ բովանդակուած են սրբութեան եւ փրկութեան շնորհքներ՝ զմարդիկ կորստեան անդունդէն հանելու համար»:

«Յիսուսի ամենասուրբ Սիրտը, կ'ըսէ Աստուծոյ մեծ ծառայ մը, ամէն առաքիւնութեանց գանձն է, օրհնութեանց աղբիւրը, բովանդակ սուրբ հոգիներու ապաւէնը. այս երկրպագելի Սիրտը մարդկան համար միշտ հրավառ է, միշտ բաց՝ անոնց վրայ ամէն տեսակ շնորհքներ հեղլու, միշտ ցուակից մեր թշուառութեանց, միշտ պատրաստ զմեզ ընդունելու, ինք զինք մեզի ապաստանարան, բնակարան եւ արքայութիւն ընծայելու: Էոս

եկէք ուրեմն դուք որ բեռնաւորեալ էք խա-  
չով, փորձութիւններով, թշուառութիւն-  
ներով. ամենասուրբ Սիրտը զձեզ կը հրաւիրե-  
ձեզի կը սպասէ, զձեզ կը ստիպէ, կը փափա-  
գի զձեզ մխիթարել. խօսքը ձեզի կ'ուղղէ  
ըսելով՝ «ինձի եկէք դուք որ կ'աշխատիք  
եւ բեռնաւորեալ էք, ես ձեզի նորանոր զօ-  
րութիւն պիտի տամ» . «Եկոյ՛տ ա- իս ամենայն  
վարդապետք է- քեանսօրդ, է- ես հանդուգից  
շ)եւ» :

Կարդինալ Պետրոս Գամբանոս կ'ըսէ. «Այս  
երկրպագելի Սրտին մէջ կը գտնենք ամէն  
տեսակ զէնքեր մեր պաշտպանութեան  
համար, ամէն դեղ մեր հիւանդութեանց  
բուժման համար, ամէնէն ազդու օգնութիւն-  
ները մեր թշնամեաց յարձակմանցը դէմ,  
ամէնէն քաղցր մխիթարութիւնները՝ մեր  
վշտերը պիտի ելու համար, ամէնէն մաքուր  
հաճոյքները՝ հոգինիս ուրախութեամբ լեցը-  
նելու համար: Եթէ վշտահար էք, եթէ ձեր  
թշնամիները զձեզ կը հալածեն, եթէ մեղ-  
քերնուդ յիշատակը զձեզ կը վրդովէ, եթէ  
սրտերնիդ անհանգստութեամբ, վախով եւ  
կիրքով խռոված է, ո՛հ, եկէք խորաններուն  
առջեւ ծնրադրեցէք: Յիսուսի Քրիստոսի  
բազուկներուն մէջ նետուեցէք, մինչեւ անոր  
Սիրտը մտէք. անիկայ ապաստարան, սուրբ  
հոգիներու ապաւենն ու կատարեալ ապա-  
հովութեան վայրն է, եւ երկնից գանձն է:  
Ս. Թովմաս կ'ըսէ որ իւր ատենն խաչելու-

թեան ոտքը կոյս մը՝ կը նկարէին, որ Յիսու-  
սի կողին վէրքէն արիւնը բաժակի մը մէջ կը  
լեցընէր, եւ ուրիշ կոյս մը, որ զանիկայ կը  
թափէր. մէկը գլխուն վրայ մեծագին պսակ  
մը կը կրէր, միւսն իրենինը գետինը կը ձգէր.  
Մէկը ծիծաղկոտ եւ լուսավառ դէմք մ'ունէր,  
միւսը տխուր եւ տրտում: Առաջինը կը ներ-  
կայացընէր հաւատարիմ հոգին, որ մտածա-  
կանի միջոցաւ Յիսուսի Սրտէն ուրախութիւն,  
լոյս եւ փառաց պսակը կ'առնու. միւսը կը  
ներկայացընէր անհաւատարիմ հոգին, որ  
մեղքով կը կորսնցընէ այս անհամեմատելի  
երեք պարգեւները՝ շնորհաց լոյսը, բարի  
խղճի ուրախութիւնն ու փառաց պսակը» :

«Ո՛վ քաղցր Յիսուս իմ, կը գոչէ Ս. Բեռ-  
նարդոս, Սրտիդ մէջ որչափ հարստութիւն-  
ներ կը բովանդակես, եւ որչափ դիւրին է  
մեզ հարստանալ, քանի որ Ս. Հաղորդու-  
թեան մէջ կը ստանանք այս անսահման  
գանձը, եւ թէ որչափ հարստութիւններ կը  
կորսնցընենք, զանիկայ գործածել չգիտնալ-  
նուս: Յիսուս Քրիստոս ինքնին խոստացած  
է որ իւր Սրտին միջոցաւ շնորհք խնդրողներն  
առատապէս պիտի ընդունին. կը տեսնուին  
այնպիսիներ՝ որ այս Չերմուանդութիւնը  
կենդանի եւ Չերմ հաւատքով կատարած  
են, այս միջոցով ընդունած են ինչ որ յա-  
ռաջագոյն կրկին եւ յարատեւ աղօթքներով  
չէին կրցած ընդունիլ» :

Ս. Գերդրուտա որ մը պատարագի ատեն



Ս. Գրքին այս երկիրները ինչ է՝ շահագործողի համար խօսքերը լսած ժամանակը, Տէրն մեր ձեռքը իւր Սրտին վրայ դնելով՝ անոր հասկացուց թէ՛ իւր արարածոց հանդէպ անսահման առատածնունդութիւնն որ երկիրներուն վրայ կ'ուղէր խօսիլ: Ասոր վրայ Սրբուհին, սիրոյ այս խորհրդոյն մէջ մտնելով գոչեց. «Ո՛վ երանելի եւ երջանիկ երկիր, դաշտ հաճոյից, դուն երջանկութեանց այնպիսի լիութիւն ունիս, որուն ամենափոքր հատիկն անգամ կրնայ բաւական ըլլալ ամէն ընտրեալներուն ցանկութիւնը յագեցընելու, եւ կը գերազանցէ իսկ, ինչ որ մարդկային սիրտը փափագելի, սիրելի, հաճոյական եւ քաղցր բան կրնայ երեւակայել:»

Հրահանգ: Գիտես թէ Որդին Աստուած վերջին դատաստանին օրը ինչպիսի խօսքերով պիտի ծանուցանէ իւր ընտրեալներուն կենաց վճիռը. Եթէ, Հօր օրհնութիւնը, է՝ անօրէն, Դուրս գալիս իր յետեւի. Է՝ Դուրս գալիս հետեւեցողի: Այս խօսքերը, իրենց ճշմարիտ իմաստովը, կը պատշաճին այն խնամքին ու հոգատարութեան՝ որով պիտի հոգանք աղքատները, անոր տառապող անդամները. այս կէտը մեր ստէպ մտածութեանց նիւթ ընելու ենք, քանի որ Աստուծոյ Որդին մեր առ ընկերօ ցուցած եղբայրերութիւնն իրեն շափ եւ կանոն կ'ուզէ առնուլ մեզի ընելիք յաւիտեանական ողորմութեանը:

Բայց խոստովանելու է որ քրիստոնէից մեծամասնութեան Յիսուսի Քրիստոսի նկատմամբ

ունեցած անտարբերութեան պատճառաւ, այս սիրելի փրկին Ս. Հաղորդութեան մէջ իրապէս առաջին աղքատն է՝ զոր պէտք ենք սփոփել: Փոյթ տար ուրեմն կրցածիդ շափ, որ այս երկրպագելի խորհրդոյն մերձեցողները մաքուր եւ պատշաճ հագուած ըլլան: Դուն քու ձեռքովդ աշխատէ եկեղեցիներուն համար կամ ուրիշներն ալ աշխատելու յորդորէ. եւ եկեղեցւոյ փառաւոր զարդարանքէն աւելի՝ սուրբ խորաններու հարկաւոր լաթերը հոգա: Նուէրդ այնչափ աւելի Յիսուսի հաճոյական կ'ըլլայ, որչափ արտաքին ցոյցերէ ազատ կ'ըլլայ. եւ Յիսուս հոն պիտի տեսնէ ապացոյց մը՝ թէ իւր սուրբ մարմինը կը մեծարես: Ահա այն բարեգործութիւնը՝ որուն կը հաճի ինքն անձնապէս առարկայ ըլլալ. ահա այն անուշահոտ բուրումը՝ զոր կը բաղձայ իւր աստուածացեալ մարմնայն վրայ տարածուած տեսնել, եւ որուն հեղումը գովեց իւր մահուան նախընթաց օրերուն մէջ:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմանց մեզ:

Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր:

Սրացական աղօթք: Ո՛վ Սիրտ Յիսուսի, որչափ ուշ մնացի զքեզ սիրելու:

Այցեպատկերն ամենատարաբար հաղորդութեան:

Ո՛հ, որչափ ժամանակ կորուսի առանց զքեզ սիրելու, ո՛վ Սիրտ, արժանի իմ սիրոյս: Խնձի նկատմամբ սիրով միայն լցեալ Սիրտ: Ափսոս այն ժամանակին, յորում ես զքեզ չսիրեցի, յորում սէքս միայն արարածոց տուի: Թանկագին ժամեր

Աստուծոյս արեան զինը, ալ մէյ մ'ալ պիտի չկարենամ զծեզ ետ ընդունիլ. եւ ես որչափ անհոգ գտնուեցայ այս դժբախտութիւնը դարմանելու: "Սակայն, ով Աստուած սիրոյ, դուն իմ ներսս էիր, իսկ ես բոլորովին արտաքին քաներու մէջ, եւ հոն կը փնտոտէի զքեզ: դուն ինծի հետ էիր, իսկ ես քեզի հետ չէի. այն սնտոի արարածներն էին որ զիս քեզմէ հեռու կը պահէին: Բայց դուն վերջապէս զիս այնպիսի զօրաւոր ծայտով մը կանչեցիր, որ յաղթանակեց այն ամէն բանին որ սրտիս խուրձին կը պատճառէր. փայլակի մը պէս փայլեցար ներսս եւ զիս կուրացընող խաւարը փարատեցիր: Մինչև ինծի հասցուցիտ երկնային բուրումը եւ զայն շնչած ժամանակս մեայն քեզի փափագեցայ: Զու անպատմելի քաղցրութիւններդ մաշակել տուիր ինծի, որոնք ինծի քեզի համար այնպիսի քաղց, այնպիսի ծարաւ մը տուին որ զիս կը լսփեն: Վերջապէս սիրտս շարժեցիր, որ տոչորեցաւ կեզիչ սիրով մը այն հաստատուն եւ ծշմարիտ խաղաղութեան համար, որ միայն քու քովը կը զտնուի:" (Մ. Օգոստինոս):

**ժԱ. Օ Ր**

**Յիսուսի Սրտին ցաւերը:**

Յիսուսի Սիրտն առաջին անգամ խոցողը նիզակը չէ, հապա սէրը զայն խոցեց իւր կենաց առաջին վայրկեանէն. ասիկայ իւր վերջերուն առաջինն ու ամէնէն մեծն եղաւ, զոր ինքն ալ չկրցաւ ծածկել. "Գուն իմ սիրտս

խոցեցիր, քոյր իմ, հարս իմ, սիրտս խոցեցիր": Սրտիս յարեբ զՅիսուսի սիրտը: Յիսուսի Սիրտը խոցուեցաւ նաեւ մեր թշուառութեանց կարեկցութեանէն, որ իրեն այնչափ աւելի խոցեր պատճառեց, որչափ աւելի կը տեսնէր ի մեզ թշուառութիւններ որ կը նեղեն զմեզ:

Մեր մեղաց ցաւէն խոցուեցաւ, աշխարհիս ամէն ոճիրներուն ցաւն ու զղջումը վրան առնելով, ինչպէս որ իւր մարմինը ետքէն անոնց պատիժը կրեց: Այս խաչը Գողգոթայի խաչէն շատ աւելի ծանր եկաւ, նկատելով որ իւր կենաց հետ սկսաւ եւ իւր մատուցը լմնցաւ:

"Իրեն վերապահուած ցաւերը, կ'ըստ երանելի մը, յայտնուեցան իւր մտքին եւ իւր Սիրտը տրտմեցուցին իւր գոյութեան առաջին վայրկեանէն սկսեալ, ոչ թէ խառնաշփոթ հապա ամէնէն պայծառ եւ ամէնէն որոշ եղանակաւ: Ար կանխատեսէր որ երեսունուերեք տարիներու տրտում եւ տարժանելի կեանքէն վերջը, որուն ամէն պարագաներն աչքին առջեւն էին, իւր աշակերտներէն մին զինքը պիտի ծախէր եւ պիտի մատնէր, ուրիշ մը զինքը պիտի ուրանար, ամէնէն պիտի լքուէր, շղթայի պիտի զարնուէր, պիտի ծեծուէր, պիտի ապտակուէր, պիտի զրպարտուէր, հայհոյուէր, ամբաստանուէր, ձողկուէր, փշեայ պսակով պիտի պսակուէր, խաչը բարձած Գողգոթայ պիտի տարուէր, պիտի

խաչուէր, պիտի մեռնէր եւ տիգով պիտի խոցուէր. ահա տեսածն ու իւր բովանդակ կենաց մէջ անդադար խորհածը: Այսպիսի կանխատեսութիւն մը չէր կրնար ըլլալ առանց դառն տրտմութեան, եւ առանց անչափ կակճանաց սրտի եւ մտքի: „Դատէ ասկէ թէ որչափ զօրաւոր եւ անընդհատ եղան Յիսուսի Սրտին ցաւերը:

Մտիկ ընենք դարձեալ այս նիւթիս վըայ դերանելի Մարգարիտա-Մարիամ կամ մանաւանդ թէ ՊՅիսուս Քրիստոս:

“Օր մը՝ որ խորանի վըայ ի տես դրուած սուրբ Հաղորդութեան առջեւն էի, Յիսուս Քրիստոս, աստուածային վարդապետս, ինձի երեւցաւ փառքով շողողուն՝ իւր հինգ արեւներու պէս փայլող հինգ վէրքերովը: Իւր նուիրական մարդկութենէն ամէն կողմ բոցեր կ'ելլէին, բայց գլխաւորաբար իւր երկրպագելի կուրծքէն՝ որ հնոցի մը կը նմանէր. այս բոցավառ հնոցին մէջտեղը, ցուցուց ինձի իւր սիրելի Սիրտը, որ այս բոցերուն աղբիւրն էր: Ահա այս ժամանակս յայտնեց ինձի իւր սիրոյն անբացատրելի հրաշքները եւ թէ ինչ չափազանց սիրով կը սիրէ զմարդիկ՝ որոնք իրեն ապերախտութիւն եւ երախտամոռացութիւն կը հատուցանեն: Այս է, ըսաւ ինձի, որ չարչարանացս մէջ կրածներէս աւելի կը վշտացրնէ զիս, այնպէս որ եթէ սիրոյս հատուցում մ'ընէին, անոնց համար ըրածներս շատ քիչ պիտի համարէի եւ կը

բաղձայի եթէ կարելի ըլլար, աւելին ընել. բայց դժբախտաբար անոնց բարիք ընելու փութոյս դիմացը, անոնք ինձի ցրտութեամբ կը պատասխանեն եւ իզմէ հեռու կը փախչին:”

Յիսուսի Սիրտը շտառապեցաւ միայն ամէն ժամ, հապա իւր մահկանացու կենաց ամէն մէկ վայրկեանը. որովհետեւ երանելի Մարգարիտա-Մարեմայ յայտնածին համաձայն, ամբողջ կեանքը սիրոյ եւ զըկման մէջ անցաւ, ինչպէս որ կեանքը կնքեց խաչի վըայ:

Ո՛հ, այս տեսարանն ինչ քաջալերութիւն պէտք էր տալ մեզի. որչափ թեթեւ են մեր նեղութիւնները. որչափ կարծատեւ են Յիսուսի Սրտին կրած վշտացը համեմատութեամբ: Այլ ես չեմ զարմանար Տէր իմ, որ Ս. Յովհաննէս Խաչեան մը՝ որ անոնց վըայ խորհած էր եւ որուն դուն կը հարցընէիր թէ ինչ կը բաղձար ի վարձ իւր ծառայութեանց, քեզի սապէս պատասխանած է. “Տառապիլ եւ անարգութիւն քեզի համար”. չեմ զարմանար որ Ս. Թերեզիա մը միեւնոյն տրամադրութեամբ վառեալ սապէս գոչած է. “կամ չարչարուիլ կամ մեռնիլ”: Եթէ սրտիս անպտուղ հոլը չ'արտադրեր այքան վեհանձն զգածումներ, գոնէ ով Յիսուս, քու սիրոյդ վըաս խաւրած նեղութիւնները կատարեալ համակերպութեամբ ընդունիմ: Զրուհի: Տէրն մեր խնդրեց Մարգարիտա-Մարիամէն որ ամէն ամուսն առաջին ուրբաթ

օրն իւր Սրտին ցաւօց յիշատակին նուիրէ: Ուրեմն յառաջագորութիւն դիր ամսոյն ամէն առաջին ուրբաթ օրերը, եթէ կարելի է, հաղորդուելու ի պատիւ Սրտին Յիսուսի, ի հատուցումն այն ամէն անփութութիւններու որ կը սպրդին հաղորդուած ժամանակդ: Յիսուսի շատ հաճելի կ'ըլլաս, եթէ՛ ոչ թէ միայն քու, հապա նաեւ ամէն քրիստոնէից անփութութեանց հատուցում՝ ընելու դիտաւորութիւնն ունենաս:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեա՛ վասն մեր:

Սրացական աղօթք: Ո՛վ արհամարհանքով յազած Սիրտ Յիսուսի, սորվեցուր ինձի որ անարզանաց եւ հակառակութեանց համբերութեամբ տանիմ:

Այցեշրջիւն ամենատարաբար հաղորդութեան:

Ո՛վ Սիրտ Յիսուսի, այն նախատինքները, քու բաժակիդ այն բաժինը՝ որմէ մեր տկար սիրտը ամենայն դժկամակութեամբ եւ սարսափով կը փախչի, քեզի համար որչափ դառն էին: Դուն անոնցմով յազած էիր մարգարէներէդ մէկուն բացատրութեան համեմատ: Բու կրած ամէն տանջանքներուդ մէջ, թշնամիներուդ շարումտութիւնը կրցաւ ցաւերուդ նշաւակութիւն խառնել: Իրապէս առարկայ էիր խառնիժաղանժ ամբոխին անարզանաց, նախատանաց, որուն ուզեցիր ինք զինքդ յանձնել: Անարգ խոովարարի մը պէս բանտարկուեցար, յիմարներու հանդերձն հազար, գերոյ մը պէս ծաղկեցար: Յաւիտենական թագաւորութիւնդ հռչակած էիր:

եւ անգութ ծաղրածութեամբ զքեզ փշով պսակեցին, կարմիր քղամիթ հագուցին, ծեռքը ցուպի տեղ եղէզ մը տուին, զահի տեղ խաչ մը, հրաշափառ երեսդ պիղծ թուքերով ծածկեցին: Մարգարէներէն անելի մեծ եւ անելի սուրբ ըլլալը ցուցուցած էիր. եւ աշուղներդ կապելով խաղ խաղացին՝ քեզի զարնելով, մօրուքդ եւ մագերդ փետտելով եւ նախատինքով պոռալով «Բրիստոսդ, մարգարէացիք տեսներք, ո՞վ է քեզի զարնողդ»: Դուն հաստատած էիր աստուածութիւնդ. եւ յանդգնեցան քեզի սապէս ասպարէզ կարդալու. «Թո՛ղ խաչէն վար իջնայ եւ մնայ իրեն կը հաւատանք. ինք զինք որդի Աստուծոյ կոչած է, եթէ Աստուած զինքը կը սիրէ, թո՛ղ ազատէ»: Բարեբարութիւններդ անզամ առակ նշաւակի եղան. «Ուրիշները բուժեց եւ ազատեց, եւ չի կրնար ինք զինք ազատել»: Դսկ դուն, զքեզ ծաղրող ապերախտներուն համար այս ծաղրածութեանց համբերելով կը լռէիր. դուն թշնամիներդ անհաւատալի եռանդով կը սիրէիր եւ անոնց փոկութեան կ'աշխատէիր...: Ո՛վ Յիսուս իմ, մյս նշաններով է որ զքեզ իմ Աստուածս կը ծանշամ...: Որովհետեւ ասոնց բոլորովին հակառակ սպացոյցներով ստիպուած եմ ծանշալու ամէն օր որ ես ոչինչ եմ, տկար արարած մըն եմ, եթէ քու շնորհքդ եւ այն ալ շատ ազդեցիկ շնորհքդ ինձի օգնութեան հասնելու չըլլայ: Ո՛վ Սիրտ Յիսուսի, այս դառն նախատանաց միջեւ, ալեաց մէջ փոթորկահար ժայռի պէս խաղաղ, անքոյթ եւ սիրող, սիրտս որչափ քիչ նման է քեզ, որչափ քիչ բան պէտք է խոովելու, վշտացընելու այս տկար սիրտը, իւր խաղաղութիւնն ու իւր սէրը կորսնցընել

տալու համար: Ո՛հ, արժանի չեմ ես ընդի: Սոց-վեցուր ինձի քու օրինակաւո՞ր որ համբերեմ ա-նարգանաց եւ հակառակութեանց, ընդի համար զանոնք զնահատեմ, զանոնք սիրեմ եւ ընդի հետ զանոնք փնտոնեմ:

**ԺԲ. Օ Ր**

**Յիսուսի աւելանալից Սրտին վերէը:**

“Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բոլոր վերքերը ամենուս համար փրկութեան մէյ մէկ բայ դռներ են. բայց ամենասուրբ Սրտին վերքն ամէնէն աւելի լայնն է:

“Իւր բոլոր վերքերն աղբիւրներ են, ուստի շնորհք կը հոսեն. բայց ամենասուրբ Սրտին վերքն ամէնէն վճիտն ու ամէնէն քաղցրն է:

“Իւր բոլոր վերքերը ծիրանեգոյն գետակներ են, որոնց մէջ կը թաթխենք մեր հոգւոյն բոլոր կարողութիւնները, մեր մտածումներուն, խօսքերուն եւ գործքերուն արժէքը բարձրացընելու համար. բայց ամենասուրբ Սրտին վերքն անոնց աւելի պայծառ գոյն մը, աւելի կենդանի փայլ մը եւ վերջապէս աւելի յարգի կերպարանք մ'առնուլ կու տայ:

“Իւր բոլոր վերքերը սրբոց գիտութիւնը պարունակող կենաց գրքին մէյ մէկ տառերն են. բայց ամենասուրբ Սրտին վերքը զմեզ աւելի գիտուն կ'ընէ:

“Իւր բոլոր վերքերը պատսպարաններ են, ուր ամենամեծ ոճրագործները կ'ապաւինին.

բայց ամենասուրբ Սրտին վերքն ամէնէն նպաստաւորն ու ապահովն է:

“Յիսուսի ամենասուրբ Սրտին վերքը ճարտասան լեզու մըն է, որ սրտերու խորքը կը խօսի, որ Յիսուսի մեղի ունեցած սէրը կը յիշեցընէ եւ մեզմէ փոխարէնը կը պահանջէ:” (Նո-է):

Այս մասին Ս. Բեռնարդոսի ըսածը մտիկ ընենք.

“Այս պաշտելի Սիրտը խոցուեցաւ, կ'ըսէ, որպէս զի այս տեսանելի վերքին միջոցաւ ճանչնանք այն անտեսանելի վերքը՝ զոր սէրը հոն յառաջ բերած է: Ո՛հ, ինչպէս կրնար Յիսուս աւելի դիւրութեամբ յայտանել իւր սէրը, եթէ ոչ ուզելով որ ոչ միայն իւր մարմինն, այլ եւ իւր Սիրտը խոցուի:”

Սրբուհի Կատարինէ իւր մտերիմ յարաբերութեանց մէջ հարցընելով Աստուծոյ թէ՛ ինչո՞ւ համար Տէրն մեր ուղած էր որ իւր Սիրտն այսպէս խոցուէր եւ բացուէր իւր մահուրէն վերջը, Աստուծմէ սա պատասխանն ընդունեցաւ. “Մարդկային ազգը փրկելու փափագն իմ աստուածային Որդւոյս քով անսահման էր եւ իւր մարմինն աստիճան մը միայն կրնար տոկալ ցաւին եւ տանջանքին: Սահմանաւորը չէր կրնար ցուցնել այն անսահման սէրը՝ որով կը սիրէր. ուրեմն ուզեց որ իւր Սրտին գաղանձքը անսնէք. եւ զայն ցուցուց ձեզի բացուած, հասկցընելու համար որ զձեզ շատ աւելի սաստիկ սիրով՝ կը սիրէր,

քան որչափ որ իւր մահուամբը կարող եղաւ ցուցընելն:

Մեր այս աշխարհիս մէջ զգացած տխրութիւններն ու ձանձորոյթները շատ անգամ մեր հոգւոյն կը մնասեն. անոր համար Յիսուսի ամենասուրբ Սիրտը հնարքը գտաւ մեզի տուն տալու, որ իւր վերքերուն՝ մանաւանդ իւր ամենասուրբ Սրտին վերքին մէջ մտնենք, հոն ուրախութեան եւ մխիթարութեան աղբիւր մը գտնելու համար: Երանելին Հենրիկոս Սուգօ օր մը իւր փրկութեան անստուգութեանը վրայ մտածելով խոր տխրութեան մէջ թաղուած էր, յանկարծ երկինքէն ձայն մը լսեց որ զինքն յանսահմանս մխիթարեց ըսելով՝ «Ո՞տք ել, իմ վերքերուս մէջ մտի՛ր, որովհետեւ հոն է քու միակ երջանկութիւնդ»: — «Չեմ կրնար սոսկալ ի տես իմ մեղքերուս բազմութեանը, կ'ըսէ Ս. Օգոստինոս, երբ կը յիշեմ Յիսուսիս մահը, որովհետեւ Քրիստոսի մահը կը յաղթանակէ մեղքերուս: Գամերը, նիզակը ինծի կ'աղաղակեն որ իրապէս հաշտուած եմ Յիսուսի հետ, եթէ զինքը կը սիրեմ: Ղուկիանոս նիզակովը բացաւ ինծի Յիսուսի Քրիստոսի կողը. հոս մտայ եւ հոս կը հանգչիմ լի ապահովութեամբ: Ով որ կը վախնայ թող սիրէ: Սէրը վախը կը փարատէ»:

«Ո՛վ քաղցր վերք, կը գօչէ Ս. Բոնուսենսուսուրա, քեզմով է որ Յիսուսի Քրիստոսի սիրոյ եւ գթութեան մինչեւ ամէնէն ներքին

աղեաց մէջ մտայ: Հոն կը հաստատեմ իմ բնակութիւնս: Հոն մխիթարութեան այնպիսի առատութիւն կը գտնեմ, որ չեմ կրնար բացատրել: Ո՛վ կուրութեան Ագամայ որդւոց, որոնք չեն գիտեր Յիսուսի Քրիստոսի հետ միանալ իւր սուրբ վերքերուն միջոցաւ: Ահա՛ հրեշտակաց երանութիւնը, որ մեզի համար բացուած է. ահա՛ մուտքն արգիլող պատը կործանած է, եւ փոյթ չեն ըներ հոն մտնելու: Հաւատացէ՛ք ինծի, սվ կոյր մարդիկ, եթէ զիտնայիք Յիսուսի Քրիստոսի հետ միանալ իւր սուրբ վերքերուն միջոցաւ, հոն հրաշալի բնակարան մը պիտի գտնէիք: Եթէ մարմինն իսկ իւր հանգստութիւնը հոն կը գտնէ, ինչ աստիճան պիտի ըլլայ հոգւոյն ճաշակած քաղցրութիւնը, միանալով Յիսուսի Քրիստոսի հետ իւր սուրբ վերքերու միջոցաւ: Չունիմ խօսք ինք զինքս բացատրելու. բայց փորձեցէ՛ք, հոն պիտի գտնէք ամէն տեսակ բարութեամբ լի գանձ մը . . . :

«Ահաւասիկ արքայութեան դուռը բացուած է, մուտքն արգիլող սուրը վերցուած է զինուորին նիզակովը. գիտութեան եւ յաւիտենական գթութեան գանձը բացուած է, մտի՛ր ուրեմն հոն աստուածային վերքերուս բացուածքներէն: Ո՛վ երջանիկ նիզակ, որ արժանի եղաւ այնպիսի խոց մը բանալու: Ո՛հ, եթէ ես այդ նիզակին տեղն եղած ըլլայի, բնաւ պիտի չուզէի Յիսուսի Քրիստոսի կողէն դուրս ելլել, եւ պիտի ըսէի՝ Ահաւասիկ իմ

Հանգստեանս յաւիտենական տեղը, հոս պիտի բնակիմ, որովհետեւ անիկա ընտրեցի: Ո՛վ Աստուծոյ պատկերին նման ստեղծուած հաւատարիմ հոգի, ինչպէս պիտի չզմայլիս ուրախութենէդ. ահաւասիկ քու սիրելի փեսայդ, որ սիրոյ առատութենէն իւր կողք քեզի համար բացաւ որպէս զի իւր Սիրտը քեզի նուիրէ:»

Ս. Փրանկիսկոսի ժամանակագրութեան մէջ կը կարդանք որ պնդուական մարդ մը կրօնաւորեցաւ վանքի մը մէջ, ուր իւր թողած հանգիստն ու հաճոյքը չգտնելով՝ միտքը դրաւ աշխարհք դառնալ: Փորձութիւնն այնքան զօրաւոր էր որ՝ որ եւ իցէ մտածութիւն կարող չեղաւ զինքը ետ կեցընելու: Սակայն եւ այնպէս երթալու ժամանակը, անցած տեղւոյն վրայ խաչելութիւն մը տեսաւ, ծունկի վրայ եկաւ գթութիւն խնդրելու համար: Ո՛հ, որչափ գթած է Յիսուսի սուրբ Սիրտը, եւ որչափ մեծ իւր բարութիւնը: Այս կարճ աղօթքը դեռ չաւարտած՝ մտքով յափշտակուեցաւ. նոյն միջոցին Յիսուս իւր երանելի ձորը հետ իրեն երեցաւ եւ հարցուց անոր վանքէ ելլելուն պատճառը: Գասալիքը պատասխանեց թէ՛ փափկութեամբ ապրելու վարժած ըլլալով կարող չէ վանքին կանոններու խտութեան դիմանալ: Այն ժամանակ Յիսուս իւր կողին վէրքը ցոյց տալով, մտիթարեց զանիկա եւ ըսաւ. «Որդեակ իմ ձեռքդ հոս դիր, օճէ զայն

վէրքիս արեամբը եւ պիտի տեսնես որ ամէն բան քեզի դիւրին պիտի գայ՝ որչափ որ ալ դժուարին երեւայ:» Նորընծան հնազանդեցաւ. այն ատենէն ի վեր վրան յարձակած ամէն փորձութեանցը ժամանակ յիշելով Որդւոյն Աստուծոյ կրած չարչարանքները եւ սուրբ Սրտին սիրովաւ վէրքը, իւր ամէն նեղութիւններն ու վիշտերն իսկոյն սուրբ հաճոյքներու կը փոխուէին:

Հրահանգ: Յիսուսի ամենասուրբ Սիրտն առանձինն եղանակաւ մեծարելու համար, շարժուան մէջ օր մ'ընտրէ, զոր օրինակ ուրբաթ օրը, զոր եկեղեցին այս վախճանաւ սահմանած է: Սոյն օրն աւելի երկայն այցելութիւն մը ըրէ Յիսուսի սուրբ Հաղորդութեան մէջ, եւ իւր սուրբ Սրտին վրայ ճառօղ գիրք մը կարդա. այս ջերմեամեղութեան մէջ եռանդդ պահպանելու գլխաւոր միջոցն այս է. որովհետեւ եթէ սնունդ չտաս, իսկոյն կը մարի:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարիմայ, աղօթեալ վասն մեր:

Մրցանակաւ աղօթք: Ո՛վ Յիսուս իմ, թող որ աչքերս ու սիրտս քու ամենասուրբ Սրտիդ վէրքին թեւեռած ապրիմ:

Այցնորութիւն ամենատարբէր շարդարութեամբ:

Ուր որ է մեր գանձը, հոն է նաեւ մեր սիրտը: Ուր որ է մեր սիրած առարկան, դէպ է հոն կ'ողողուին կամայ թէ ակամայ մեր հայեցուածքն ու մտածումը: Իսկ որոնք պիտի ուղղուի իմ

սիրտս, որոնն պիտի ուղղուին աչքերս, եթէ ոչ քու ամենասուրբ Սրտիդ, ով Յիսուս իմ, դուն ես գիս առաջին անգամ սիրողը այս աշխարհիս մէջ, ուր աղքատ, անծանօթ, անարգ, միոցուած մնացած եմ: Ո՛հ, այս աշխարհիս վրայ ինծի տուած քածիներն քնաւ չեմ գանգատիր, քանի որ բոլորովին քեզի ըլլալու համար ծախքաներն ինծի կը հարթէ, քանի որ դուն ինծի կը թոյլատրես որ որչափ թշուառ ալ ըլլամ, ոչ միայն աչքերս մինչեւ քու աստուածային ամենասուրբ Սիրտդ քարծրացնենմ, այլ եւ հոն կարողամ այն սէքը՝ որով կը բորբոքի այն խեղճ արարածիս համար, այլ եւ զքեզ սիրեմ, իբրեւ թէ արժանի ըլլայի այս մեծ պատուոյն: Ո՛հ, քեզմէ շնորհք մը միայն կը խնդրեմ, այսինքն՝ աչքերս քնաւ չհեռանան այնպիսի սքանչելի առարկայէն, քնաւ չյոզնի սիրտս ամենասուրբ Սիրտդ սիրելէն, եւ պանդխտութեանս բոլոր օրերը քու աստուածային Սրտիդ առաքինութեանցը նմանելու մէջ յարատեւեմ, առանց յոգնելու, առանց կասելու, առանց ընդհատելու, առանց հանգչելու:

Ժ Գ. Օ Բ

Ա՛նձաւորք Սրտի՛ն շր՛ն էլ յերբ:

Չորս կենդանի բոցեր կը գտնեմ, որոնք շարունակ կը բորբոքին Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ:

Առաջին բոցն այն փափագն է զոր յայտնեց իւր առաքեալներուն ընթրեաց օրը. «Սաստիկ փափագ ունիմ այս պասեքը ձեզի

հետ ուտելու, չարչարուելէս յառաջ: Յանձնալով ցանկացայ զայս պասեւորքս յերբ յիշ՝ միշտ շարժուելու իցեմ: Քրիստոսի այս խօսքը մեզի կը ցուցնէ թէ՛ երկնային հացը ճաշակելու համար ինչ եռանդեամբ պարտաւոր ենք սուրբ Անդանին մօտենալ. եւ թէ զՅիսուս չենք կրնար երբեք ընդունիլ այնպիսի փափագով՝ որով ինքը կ'ուղէ ինք զինք մեզի պարզեւել: Որովհետեւ կը թուի թէ այս պաշտելի խորհուրդը իւր գործոց կենդրոնն էր եւ թէ՛ զայն կատարած ըլլալով, կարծեց թէ այնպիսի երջանկութեամբ կատարած է իւր կենաց ընթացքը՝ որ այս սիրոյ հրաշակերտէն վերջն իրեն ուրիշ բան չէր մնար, բայց եթէ չարչարուիլ եւ մեզի համար մեռնիլ:

Հոս է երկրորդ իղձն, որով այս Սիրտը՝ անյագ մարդկան համար ունեցած սիրովը, յայտնեց բաւականաչափ իւր եռանդն ըսելով. Միտո՛ւնի՛ն մի աւրելոյ. եւ զիտոյ քոնտրա՛ միշտ կատարելոյ: Ի՞նչ էր այս մկրտութիւնը, եթէ ոչ արեան մկրտութիւնը: Յիսուսի ամենասուրբ Սիրտը կը նկատէր զխաչ իբրեւ այն սեղանը՝ որուն վրայ պէտք էր որ աշխարհիս փրկութեան համար քառութեան պատարագը մատուցանէր. ահաւասիկ ասոր համար այնչափ եռանդագին կը ցանկար:

Չարչարուելու համար ունեցած բուռն եռանդն երրորդ իղձի մ'արդիւնքն էր, որ



առաջուաններէն ա՛լ աւելի սաստիկ էր. այս է՝ հոգւոց փրկութեան համար ունեցած կիզիչ ծարաւն՝ որ իւր ցաւերուն սաստիկութեանը մէջ իրեն շարժել է՛ ըսել տուաւ: Ո՛վ Սիրտ Յիսուսի, ի՛նչ է այն սաստիկ ծարաւը, որ զքեզ կ'այրէ ու կը տոչորէ: — Ես ձեր փրկութեան, ձեր հանգստեան, ձեր սրբացուցման եւ ձեր յաւիտենական երանութեան ունեցած իղձէս կ'այրիմ:

Բայց չորրորդը եւ իւր բոլոր իղձերուն ամէնէն գերագոյնն՝ իւր Հայրը փառաւորել եւ զինքը սիրոյ միջնորդութեամբ մարդկան սրտին մէջ թագաւորեցնել էր: «Ես եկայ, կ'ըսէր, երկրիս վրայ կրակ ձգելու եւ ի՛նչ կը բաղձամ, եթէ ոչ անոր բորբոքիլը»: Հոր էիլ արհամեւ յերկր, եւ զի՛նչ կ'օրհնէի երբեք: Ահա՛ այսպիսի էին Յիսուսի ամենասուրբ Սրտին սուրբ իղձերը. ահա՛ այն օրինակը՝ որուն վրայէն կ'ընթանան բոլոր սուրբերը. ահա՛ հուրը՝ որ կը տաքցընէ, կ'այրէ, կը բորբոքէ անոնց սրտերը: (Նո՛ւէ:)

Ասոնք անբացատրելի քաղցով մը կը մօտենան սուրբ սեղանին, ճննովացի Ս. Կատարինէին պէս, որ տեսնելով սուրբ նշխարքը քահանային ձեռաց մէջ, կը գոչէր: «Շուտ բրէ, շուտ, բեր ինձի կենաց հացը»: Ասոնք շարշարուիլ կ'ուզեն, որովհետեւ Յիսուսի Քրիստոսի նմանելու գլխաւոր միջոցն այս է: Նմանապէս Ս. Անդրէաս իրեն սահմանուած խաչը տեսնելով, ուրախութենէն զմայլած

կը գոչէր. «Ո՛վ բարի խաչ, այնքան երկայն ատենէ ի վեր ցանկացուած, այնքան կաթոզին սիրուած. ո՛վ ամէն ժամանակ փնտռուած խաչ, իսկ հիմայ հոգւոյս ջերմագին թախանձանքներուն պատրաստ, ողջոյն քեզ:» Աստուծոյ փառքը զանոնք այնչափ կը յուզէ որ ինքզինքնին կը մոռնան եւ Ս. Իգնատիոսի հետ մեկտեղ նշանաբան կ'ընտրեն իրենց՝ ամենայն ինչ ընել «ի մեծագոյն փառս Աստուծոյ»: Հոգւոց փրկութեան եւանդը զանոնք այնքան յառաջ կը մղէ, որ իրենց կրելիք շարշարանքները տեսնելով, փոխանակ զանոնք մերժելու, Ս. Փրանկիսկոս ֆոսփիէի պէս կը գոչեն. «Ա՛լ աւելի, Տէր իմ, ա՛լ աւելի», կամ դարուս մեծանուն մեկու մը հետ՝ «Ո՛հ, քանի՛ տխուր է տեսնել որ Աստուծոյ ստեղծած հոգիներէն շատերը ծիծաղելով դժոխք կը նետուին, աշտարակի դաւաթէն ինքզինքնին վար նետող յիմարներու պէս: Շիտակը խօսելով, իմ անձնական մեղքերուս ցաւէն վերջը, ամենամեծ ցաւս այս է:»

Այն վեհանձն զգացումներէն որչափ հեռացած ենք, որչափ քիչ եւանդով կը մերձենանք սուրբ սեղանին. որչափ տարժանելի կը թուի մեզի սուրբ խաչը. որչափ քիչ կը հետաքրքրեն զմեզ Աստուծոյ փառքն ու եղբարց փրկութիւնը: Ո՛վ ամենասուրբ Սիրտ Յիսուսի, դուն զիս որչափ կը սիրես, իսկ իմ սիրտս որչափ ցուրտ է քեզի: Փոխէ սիրտս, դուն կրնաս եւ կ'ուզես:

Հրահանք: Օգնէ՛ Յիսուսի քրիստոսի որ հոգւոց փրկութեան համար զինքը մաշեցնող սաստիկ ծարաւը յագեցընէ: Աւաղ, հազարաւոր հոգիներ կը կորսուին, մինչդեռ դուն հոգեւոր ամէն տեսակ բարիքներով հարուստ ես: Յիսուս իրեն այնքան թանկագին եղող հոգւոց անտարբերութեանդ համար կը գանգատի քեզմէ. աղօթքիդ կը սպասէ զինամօտի ըլլալու համար: «Անոնցմէ մարդ մը փնտռեցի, կ'ըսէ, որ ուղիղ ընթանայ, բարկութեանս ժամանակ աւջեւս կենայ, որ զանոնք չընջեմ. չաւրեմ, բայց չգտայ», ինչո՞ւն է նոյնն այդ փոքր օրհնութիւնը, եւ ի՞նչո՞ւն է նոյնն որտե՞ր է իմ հոգեւոր թափանցանքս: (Եզ. ԻԲ. 30.) Ո՛հ, եթէ անգգայ ես այս սիրալիր գանգատին, այն ատեն չեմ սիրեր Յիսուսի ամենասուրբ Սիրտը: Աղօթէ՛ ուրեմն այս խեղճ հոգւոց համար, աղօթէ՛, եւ նշանաւոր քարոզիչ պիտի ըլլաս առանց մտքեդ անցընելու: Սրբուհի Թերեզիային յայտնուեցաւ որ իւր աղօթքներուն միջոցաւ հազարաւոր հեղիկներ դարձած էին:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմանց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մրցակիսն աղօթք: Ո՛վ սէր Սրտին Յիսուսի, դուն որ միշտ կը բորբոքես եւ քնաւ չես մարիւր, բորբոքէ իմ սիրտս ալ:

Այցեքութիւն ամենաւսուրբ Հաղորդութեան:  
«Ո՛վ սէր, ո՛վ աստուածային հուր, որ անշէշ կը բորբոքես, ո՛վ սէր, դուն որ իմ Աստուածս ես,

այրէ՛ զիս: Յոյսս քու վրադ է, ո՛վ Աստուած իմ, քու զթութեանդ մեծութեանդ վրայ: Հրամայէ՛ ինծի ինչ որ կ'ուզես, բայց տո՛ւր նաեւ ինծի հրամայածն (Ս. Օգոստինոս): Տո՛ւր ինծի այն սէրը, զոր ես կը հայցեմ, զոր եւ չես կրնար ինծի զլանալ, քանի որ օրէնքիդ առաջին ու միմիակ պատուիրանն ըրած ես: Ի՞նչ է քեզի համար իմ սէրս, աւաղ, այն հոյ ջով զոր նետեցիր քու սուրբերուդ եւ Մարեմայ սրտին մէջ: Ի՞նչ քան կրնայ համեմատուիլ այն հոյն հետ որ զքեզ կը հիւծէ, կը սպառէ ինծի համար այս խորհրդեան մէջ: Բո՛ւ սէրդ կը խոնարհի միշտեւ իմ անարգութիւնս, եւ զիս միշտեւ քու աստուածութիւնդ կը բարձրացընէ. ինծի նեցուկ կ'ըլլայ տկարութեանցս մէջ եւ մոլորումներուս ատեն ինծի կը սպասէ, եւ կը կանխէ զիս իւր քաղցրութեան օրհնութիւններովս. անօրհնութեանցս դառն շնորհ չեն կրնար զանհկայ մարել եւ ոչ ալ վայրկեան մը թոյլցընել: Իմ գոյութենէս յառաջ յաւիտեանս սիրեցիր զիս. դեռ ալ պիտի սիրես զիս ընդ ամենայն յաւիտեանս, եթէ որ ուզեմ: Իսկ ես ինչ ըրի. ինչ կ'ուզեմ ընել գոնէ սիրող այս անըմբռնելի չափազանցութեանդ փոխարէն: Ո՛վ Սիրտ Յիսուսի, դուն բորբոքէ սրտիս մէջ սիրոյ հուր մը, որ մնանի բարեբարութեանցդ փոխարէն ունեցած ապեղախտութեանս դառն յիշատակով:

ԺԳ. Օ Ր

Յիսուսի ամենասուրբ Սրբին Վշիտ հարձակ  
քննէ։

«Յիսուսի ամենասուրբ Սիրտը բոլորովին մեզի անձնատուր եղած է։ Իւր Սիրտը, ահա՛ իւր նուէրներուն, իւր բարութիւններուն աղբիւրն եւ իւր շնորհաց սկիզբը։ Յիսուս ինչ կը խնդրէ ի փոխարէն։ Բան մը միայն, այսինքն՝ մեր սիրտը։ սիրտ փոխարէն սրտի։ Յիսուս հարցուց օր մը Սրբուհի Լոգաբարդին թէ իրմէ ինչ կ'ուզէր. «Ուզածս եւ փափագածս ըսաւ Սրբուհին, քու ամենասուրբ Սիրտդ է։ — Բայց ես ալ, պատասխանեց փրկիչն մեր, քու կինդ կ'ուզեմ։» Ասիկայ արդարեւ զարմանալու բան է. որ Յիսուսի ամենասուրբ Սիրտը բոլոր բարութեանց աղբիւրն ըլլալով հանդերձ, դարձեալ անընդհատ մարդուս ետեւէն է եւ իրմէ կը խնդրէ, կարծես թէ չի կրնար մարդէն հրաժարիլ. իսկ անկէ խնդրածն ինչ է. անոր սիրտը. Որդե՛ւն, որդի ինչ զո՞րքո՞ւս . . . : «Բոլոր սրտովդ ինծի դարձիր . . . Երուսաղէմ, լուս սիրտդ, ջնջէ այն արատները որ սիրտդ կ'աղտեղեն . . . : Բոլոր սրտովդ սիրէ զԱստուած։»

«Յիսուսի ամենասուրբ Սիրտը բանի մը պէտք ունի. եւ եթէ պէտք ունենար, մարդկային սիրտը բաւական պիտի ըլլար անոր շքաւորութիւնը սփոփելու։ Ուրեմն ինչպիսիք գանձ կը ծածկենք փոշոյ այս պղտիկ կոյտին

տակ, որուն Յիսուս այնքան վրէժխնդիր է։ Ա՛հ, պատճառն այս է որ սիրտը բոլոր նուէրներուն առաջինն է, եւ այն է որ բոլոր մուսնները հաճելի կ'ընէ։ Յիսուս մեր իրեն տուածին այնչափ չի նայիր, որչափ սրտին կամ դիտաւորութեան որով զայն իրեն կուտանք։ Յիսուս մեր սրտին նախանձախնդիր է, մէկ նայուածք մը, այս սիրտը դէպ ի իրեն ամբառնալ մը բաւական է զինքը յափշտակելու. սրովհետեւ սրտէն աւելի ուրիշ բան մը չկայ իրեն վերաբերող. սիրտն իրեն նուաճած երկիրն է. Յիսուս ազդիկ եւ վեհանձն թակիրն է. Յիսուս ուղիղ եւ շատ կը բաղձայ պատեգաւոր մըն է, որ շատ կը բաղձայ պատեգաւորներ մղել եւ յաղթանակ կանգնել։ Արդ բազմներ մղել եւ յաղթանակ կանգնել։ Արդ է, այլ եւս ամէն բան շահած կ'ըլլայ. անոր համար իւր փառքը անոր յաղթելու վրայ կը կայանայ, եւ անգամ մը որ անոր տիրանայ, չեմ վարմանար եթէ զանիկայ համարի իւր թագաւորութիւնը, իւր երկինքն եւ իւր երկրաւոր դրախտը։

«Այս երկինքը միւս բաներէն աւելի արժած է իրեն. զայն ստանալու համար բառով մը չի շատանար, կ'ըսէ Ս. Բեռնարդոս, իւր արեան եւ կենաց գնովն է որ կը գնէ։ Արդարեւ ինչ կը փնտռէ մուրհին մէջ եւ ախորժի խոտերուն վրայ։ Ինչ կ'ուզէ արտասուք թափելով եւ հեծեծելով. զինքը սիրող սիրտ մը։ Ինչ կը փնտռէ Պաղեստինի մէջ,

գաւառէ գաւառ ընթանալով: Ի՞նչ կը պահանջէ այնչափ աշխատելով եւ քրտինք թափելով: Մարդկան սրտերը վաստկիլ եւ սիրուիլ: Ի՞նչ կը փնտռէ խաչին վրայ. Ս. Հաղորդութեան մէջ. Ի՞նչ կը փնտռէ դարուս մարդկան իւր Սիրտը մատուցանելով: Սրտեր կը փնտռէ. սակայն եւ այնպէս զինքը գոհացընող մը չի գտներ: Երկրիս վրայ կը նայի, բոլոր մարդիկը կը դիտէ. եւ սրտերու անհամար բազմութեան մէջէն՝ որոնցմէ ամէն մէկն ինք զինք իւր սիրածին կը զօհէ, հազիւ հոգի մը կը գտնուի որ բուրբովին իւր բարութեան կապուած ըլլայ:» (Նոսէ:)

Աստուածային փրկիչն ըսաւ որ մը Ֆօլենեօցի Սրբուհի Անժէլին. «Եթէ մէկը զիս իւր հոգւոյն մէջ ընդունիլ ուզէ, ինք զինքս անոր կու տամ, փոխանակ անկէ հեռանալու. եթէ մէկը զիս տեսնել ուզէ, ուրախութեամբ ինք զինքս կը ցուցընեմ: Եթէ մէկն ինծի հետ խօսիլ ուզէ, ուրախութեամբ եւ շատ սիրով հետը կը խօսիմ, որովհետեւ զիս սիրող հոգիներն ինծի այնչափ սիրելի են, որ եթէ գտնեմ մէկն որ զիս իմ նախկին սուրբերէս աւելի սիրէ, որոնց վրայօք այնչափ հրաշալիքներ կը պատմուի, անոր աւելի մեծ շնորհքներ կու տամ:» Արդ՝ չկայ մէկն որ այս սերէն զրկուած ըլլալուն համար արդարացի պատճառներ յառաջ բերել կարենայ: Ո՛չ, ամէն մարդ կարող է սիրել զԱստուած.

որովհետեւ մեզմէ ուրիշ բան չի խնդրեր, բայց եթէ զԱստուած փնտռենք եւ գտնելու ապահով ըլլանք, քանի որ ինք իրապէս կը սիրէ մեր հոգին եւ թէ Աստուած ինքնին է հոգիներուն սերն: «Ձիս անխարդախ սիրող անձի մը ունեցած սէրս անսահման է, կ'ըսէր Տէրն մեր:» Ինծի կ'երեւայ թէ կ'աւելցընէ Սրբուհին, այս աստուածային փրկիչը կ'ուզէ որ հոգին ըստ չափու իւրում՝ առջորի այն միեւնոյն սիրով՝ որով կ'այրի կը տոչորի անոր համար, եւ Յիսուս այս սէրը կը պարգեւէ իրեն՝ եթէ փափագի:»

«Բայց աւանդ, որչափ քիչ են քու սիրոյդ փափագող հոգիները. ո՛վ Տէր իմ, դուն որչափ խեղճ, լքեալ անօգնական ես եւ քու չքաւորութիւնդ որչափ զիս կը յուզէ եւ կը շարչարէ: Քու ծառաններուդ գթասրտութիւնն աղքատները սփոխելու համար ողորմութիւն հաւաքելու գաղափարը գտաւ. ես ալ քեզի համար կ'ուզեմ ողորմութիւն ժողովել: Ա'ուզեմ փնտռել այնպիսի սիրտ մը որ զքեզ սիրէ եւ քու իշխանութեանդ ներքեւ հպատակի: Ո՛վ մարդ, Յիսուս քու սիրտդ կ'ուզէ: Անկարելի է որ այս սիրտը մէկու մը չարուի, քանի որ առանց սիրելու չի կրնար ապրիլ, եւ ոչ ալ սիրել կրնայ՝ առանց անձնատուր ըլլալու: Արդ՝ եթէ կ'ուզես սիրտդ տալ, որուն պիտի տաս, միթէ չէ՞ անոր որ զայն քեզի տուած է: Աշխարհքս քու սիրտդ կ'ուզէ զայն դժոխքի դարձընելու համար. իսկ

Յիսուսի ամենասուրբ Սիրտը կ'ուզէ որ զայն արքայութեան փոխէ. ընտրութիւն ըրէ:» (Կոմէ:) Ո՛վ Յէր իմ, իմ սիրտս քեզի՛ կը պատկանի, զայն քեզի միայն կու տամ: Ինչո՞ւ համար արդեօք բոլոր սրտերուն տէրը չեմ՝ որ զամէնքն ալ քու ամենասուրբ Սրտիդ մէջ զետեղէի:

Հրահանգ: Ամէն տարի շաբաթ մը նուիրէ եւ ամէն ամիս օր մ'ընտրէ, մի միայն հոգւոյդ ոյժերը կրթութեան մէջ նորոգելու համար. ասիկայ փրկութեան եւ կատարելութեան ամէնէն անվճեպ հրահանգներէն է եւ ապահով միջոց մը Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ մտնելու, Ս. Գրոց հետեւեալ խօսքին համեմատ՝ «Հոգին առանձնութեան պիտի տանիմ, եւ անոր սրտին պիտի խօսիմ» . Եւ իբրեքն զն իբրեքն զնապար, եւ իօրեքն ի իբր նոր: Ո՛վ քաղցր խօսակցութիւն, սրչափ սքանչելի գաղտնիքներ պիտի սորվեցընէ քեզի:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մշացական աղօթք: Ո՛վ Սիրտ Յիսուսի, իմ փախած ժամանակս դուն զիս փնտոնցիր. հիմայ ալ ես զքեզ փնտոնած ժամանակս պիտի փախչիս ինծմէ:

Այցեպարտիւն առնենաստուրջը Հայդարտարտիւն:

Ո՛վ Յիսուս իմ, եղաւ ժամանակ մը, երկայն ժամանակ մը, որ ես քեզի՛ կը փախչէի; վախշալով քու հանդիպումէդ, սոսկալով նայուածքէդ,

ողողալով խօսքերէդ, որ չըւայ թէ ստիպուիմ հրաժեշտ տալ արարածոց եւ այն հաճոյքներուն՝ որոնք զիս կենդանուէս հեռու կը պահէին:

Ո՛հ, հնչ անմիտ էի. իբրեւ թէ թէ՛ հոս եւ թէ՛ հոն երանութիւնս քեզի՛ կախում չունենար: Եւ այս երկայն խոտորման միջոցին, դուն զիս կը փնտոնէիր. եւ ինչպիսի անյառնելի հաստատամտութեամբ, ինչպիսի անըմբռնելի համբերութեամբ: Դուն զիս կը կանչէիր եւ ես քու ծայնդ չլսել կը ձեւացընէի. դուն իմ սրտիս դրան առջեւ կը սպասէիր, իսկ ես շլտնու կը զարնէի: Ապերախտ, ապերախտ կը կրկնէիր ինծի, եւ այս արժանի յանդիմանութիւնը՝ որ միշտ կը զոռար սրտիս խորը եւ հոն դառնութիւն եւ խղճի խայթ կը սփռէր, ես խղճելու կը շանայի. որչափ ուրախութիւնս քեզի հետ ի միասին կը հեռանար անհաւատարիմ հոգիէս, այնչափ անոր ետեւէ կ'իջնայի, եւ զիս շըջապատողներու աշաց առջեւ ուրախ ըլլալ կը կեղծէի: Բայց դուն քնաւ ետ չկեցար. երբ քու անարժան արարածդ երկնցոց իւր քազուկները դէպ ի Աստուած՝ զոր երկայն ժամանակէ ի վեր ուրացած էր, իւր քովը, իւր սրտին մէջ գտար զքեզ: Ո՛չ, ո՛չ, դուն չիս որ կը փախչիս զքեզ փնտոնողներէն: Դուն կընաս անոնցմէ ընդ միշտ հեռացընել ներկայութեանդ քաղցրութիւնն, որմէ այնքան ժամանակ կամաւորապէս իրենք զիրենք զրկած են. քայք թշուառներուն այնքան կարեկից Սիրտդ չի զլամար երբեք օգնելու նեղութեան եւ վտանգի ժամանակ:

**Ժ Ե . Օ Ր**

Յիսուսի ամենամարտի Սիրտը զիւր շօտեման էրեն  
կը կանգնէ:

Եկոյ՛ք որ ինչ ամենայն վաստակեալ: «Որ-  
չափ գեղեցիկ են սա խօսքերը, կ'ըսէ Սե-  
լեւկիացի Ս. Բարսեղ. ամենքնիդ ալ ինծի  
եկէք, ես իմ խոստմանցս բնաւ սահման չեմ  
դնել, Սիրտս անհասնում աղբիւր մըն է բա-  
րութեան, որ կրնայ բոլոր մեղքերը ջնջել:

«Ամենքնիդ ալ ինծի եկէք, եւ ես զձեզ  
կը սփոփեմ, ձերն է մեղքը, իմն է դար-  
մանը, ձերն են վէրքերը, իմն է բժշկու-  
թիւնը:

«Ամենքնիդ ալ ինծի եկէք, իմ Սիրտս  
բաւական մեծ է ձեր ամենուն համար: Գթու-  
թեանս ծոփն այնքան լայնածաւալ է որ կրնայ  
հոն ընդունիլ այն բոլոր մեղաւորները, որոնք  
բազմութեամբ անոր մէջը կը նետուին գե-  
տերու պէս, խղրելու համար իրենց մեղքերը:

«Ամենքնիդ ալ ինծի եկէք, վասն զի իմ  
խօսքս ապարդիւն չի մնար: Ուռկան մըն է  
զոր նետած եմ աշխարհիս ծովուն մէջ՝ բոլոր  
մարդիկները մէջը բռնելու եւ հոն փակելու  
համար:

«Ամենքնիդ ալ ինծի եկէք: Ո՛վ հզօր  
ձայն, որ յաղթանակեց աշխարհի բոլոր ա-  
զանց. ո՛վ փրկաւէտ խօսք, ո՛վ գերազոյն  
խօսք, որ բոլոր աշխարհք հաւատքի լուծին  
ներքեւ գերի բրաւ.» (Նո-է):

Ամենքնիդ ալ ինծի եկէք, ամենքնիդ ալ  
իմ Սիրտս եկէք: Տղաք, Յիսուսի Սիրտը  
եկէք. սիրող մօր մը զգացած բաներէն եւ  
ոչ մէկը կը նմանի այն գորովին՝ որով այս  
Սիրտը ձեզի համար կը բարբոքի: Ծերունի-  
ներ, Յիսուսի Սիրտը եկէք. անիկայ ձեր  
երիտասարդութիւնն արծուի պէս պիտի նո-  
րոգէ: Արդարներ, Յիսուսի Սիրտը եկէք, այս  
պատասպարանին մէջ փակուած՝ ամէն օր առա-  
քինութենէ առաքինութիւն պիտի յառա-  
ջանաք: Մեղաւորներ, ախ, եկէք, եկէք  
ամենքնիդ ալ Յիսուսի Սիրտը, ձեր մեղքե-  
րուն պատմուճանը թէ եւ որդան կարմիրի  
պէս կարմիր ըլլալ, ձիւնէն աւելի սպիտակ  
կ'ընէ. Եթէ իցեն մեզ յեր իբրեւ շնորհիւ-  
նիքիք շնորհակալութեամբ. (Ե. Ա. 18):

Արդարեւ, գլխաւորաբար իւր բարու-  
թիւնքն ամենէն աւելի ի շարն վարող մե-  
ղաւորաց համար է որ Յիսուսի ամենասուրբ  
Սիրտն աւելի համբերող գտնուած է, ուզե-  
լով ստուգել Ս. Գրոց սա խօսքը թէ՛ Ուր որ  
անօրէնութիւնը կը շատնայ, հոն գթու-  
թիւնն ալ պիտի շատնայ: Ո՛վ խորայնի  
տունէն մտորած ոչխար, անօրէնութեան  
ճամբուն մէջ յոգնած ողորմելի արարած,  
թերեւս մոլութեանցդ գեղզ առաջնորդած  
խեղճ վիճակին մէջ ինքն իրենդ կ'ըսես.  
«Աստուած զիս բոլորովին թողուց. Աստուած  
ալ զիս չի միշտը». Եթող չի՛ Տէր եւ հո-  
յոս չի՛ Աստուած: Բայց մտիկ ըրէ ինչ որ

Յիսուս ըսաւ Ս. Անժէլին, զոր մեղաց անդունդէն հանած էր, իւր գլխով թեան գանձերէն անոր ալ մաս հանելու համար. «Այն զաւակներս որ իրենց մեղքերովն ուրացան իմ թագաւորութիւնս, եւ սատանային գերի եղան, իրենց Տէրէն լաւ ընդունելութիւն կը գտնեն, երբ իրեն կը դառնան, եւ անոնց դարձը զինքն այնչափ կ'ուրախացընէ որ անոնց այնպիսի շնորհքներ կը բաշխէ, զոր միշտ չի տար անմեղ հոգիներուն: Ինչո՞ւ այսպէս: Նախ՝ անոնց վրայ ունեցած անսահման սիրոյն համար. երկրորդ՝ անոնց խորին թշուառութիւնը զինքն անոնց նկատմամբ ի գութ շարժած է. վերջապէս այն ցաւերուն պատճառաւ, զոր կը զգան այնչափ վեհ եւ այնչափ ողորմած մեծվայելութիւն մը թշնամանած ըլլալուն համար, որուն անարժան կը համարին իրենք զիրենք, ճանչնալով որ դժոխքի արժանացած են: Բոլոր այս պատճառներով, անիկայ որ ամէնէն աւելի մեղք ունի, կրնայ աւելի մեծ շնորհք ստանալ եւ աւելի մեծ գլխով թեան արժանանալ»:

Ո՛վ Սիրտ Յիսուսի, երբ պիտի ըլլայ որ քու այնչափ անարգամեծար բարութեանդ պիտի պատասխանեմ: Երբ պիտի լսեմ քու սիրոյդ ձայնին: Երբ պիտի սկսիմ զքեզ սիրելու: Աւանդ, կեանքիս որ ժամանակն որ քեզի նուիրեմ իմ սիրտս, նոյն իսկ եթէ կենացս առաջին վայրկենէն սկսեալ սիրտս քեզի տուած ըլլայի, սակայն դուն միշտ

իզմէ յառաջ զիս սիրած ես, եւ այնպիսի սիրով մը, որուն փախարէնը բնաւ չեմ կրնար հատուցանել:

«Մարդկան մէջ ամէնէն կատարեալ բարեկամութիւնը այն է՝ զոր մինչեւ ի մահ կը պահեն եւ որուն համար մեռնելն իրենց փառք կը համարին: Բայց Յիսուսի ամենասուրբ Սիրտը թէ ի կեանս, թէ մահուան ատեն եւ թէ մահուանէն վերջը բարեկամ է. որովհետեւ զինքը սիրողներուն յաւիտեանս ինք զինք կու տայ: Ուրեմն ուրիշ ամէն բանէ աւելի այս ամենասուրբ Սիրտն ձեզի բարեկամ ընտրեցէք. միայն այս է որ պիտի պահպանէ ձեր հաւատքը ձեր մահուան ժամուն, երբ ամէն բան ձեզմէ պիտի յափշտակուի: Աստահ եղէք որ բնաւ պիտի չձգէ զձեզ, նոյն իսկ երբ ձեր ամէնէն հաւատարիմ բարեկամները զձեզ լքանեն, ձեր սատանաներուն դէմ մղած պատերազմներու ժամանակ ձեզի պիտի օգնէ, եւ խաւարային իշխանութենէն եւ մահուան ժամուն իրենց աւարը յափշտակելու պատրաստ մռնչող առիւծներէն պիտի ազատէ զձեզ» (Ս. Օգոստինոս):

Ո՛հ, կը գոչէր մահուան անկողնոյ մէջ Աստուծոյ մեծ ծառայ մը, որչափ քաղցր է մեզի համար մեռնող Յիսուսի բազկացը մէջ կննալ: Չեղի ալ որչափ քաղցր պիտի ըլլայ այս կեանքէն ելլելնէդ վերջը ձեզի համար խոցուած Սրտին մէջ նետուիլ, եթէ այժմէն իսկ պատրաստուիք պատասխանելու այն

Յիսուս ըսաւ Ս. Անժէլին, զոր մեղաց անդունդէն հանած էր, իւր գթութեան գանձերէն անոր ալ մաս հանելու համար. «Այն զաւակներս որ իրենց մեղքերովն ուրացան իմ թագաւորութիւնս, եւ սատանային գերի եղան, իրենց Տէրէն լաւ ընդունելութիւն կը գտնեն, երբ իրեն կը դառնան, եւ անոնց դարձը զինքն այնչափ կ'ուրախացընէ որ անոնց այնպիսի շնորհքներ կը բաշխէ, զոր միշտ չի տար անմեղ հոգիներուն: Ինչո՞ւ այսպէս: Դա՞նք անոնց վրայ ունեցած անսահման սիրոյն համար. երկրորդ՝ անոնց խորին թշուառութիւնը զինքն անոնց նկատմամբ ի գութ շարժած է. վերջապէս այն ցաւերուն պատճառաւ, զոր կը զգան այնչափ վեհ եւ այնչափ ողորմած մեծվայելութիւն մը թշնամանած ըլլալուն համար, որուն անարժան կը համարին իրենք զիրենք, ճանչնալով որ դժոխքի արժանացած են: Բոլոր այս պատճառներով, անիկայ որ ամէնէն աւելի մեղք ունի, կրնայ աւելի մեծ շնորհք ստանալ եւ աւելի մեծ գթութեան արժանանալ»:

Ո՛վ Սիրտ Յիսուսի, երբ պիտի ըլլայ որ քու այնչափ անարգամեծար բարութեանդ պիտի պատասխանեմ: Ե՞րբ պիտի լսեմ քու սիրոյդ ձայնին: Ե՞րբ պիտի սկսիմ գրեց սիրելու: Աւա՛ղ, կեանքիս որ ժամանակն որ քեզի նուիրեմ իմ սիրտս, նոյն իսկ եթէ կենացս առաջին վայրկեանէն սկսեալ սիրտս քեզի տուած ըլլայի, սակայն դուն միշտ

իզմէ յառաջ զիս սիրած ես, եւ այնպիսի սիրով մը, որուն փախարէնը բնաւ չեմ կրնար հատուցանել:

«Մարդկան մէջ ամէնէն կատարեալ բարեկամութիւնը այն է՝ զոր մինչեւ ի մահ կը պահեն եւ որուն համար մեռնին իրենց փառք կը համարին: Բայց Յիսուսի ամենասուրբ Սիրտը թէ՛ ի կեանս, թէ՛ մահուան ատեն եւ թէ՛ մահուանէն վերջը բարեկամ է. որովհետեւ զինքը սիրողներուն յաւիտեանս ինք զինք կու տայ: Ուրեմն ուրիշ ամէն բանէ աւելի այս ամենասուրբ Սիրտն ձեզի բարեկամ ընտրեցէք. միայն այս է որ պիտի պահպանէ ձեր հաւատքը ձեր մահուան ժամուն, երբ ամէն բան ձեզմէ պիտի յափշտակուի: Աստահ եղէք որ բնաւ պիտի չձգէ զձեզ, նոյն իսկ երբ ձեր ամէնէն հաւատարիմ բարեկամները զձեզ լքանեն, ձեր սատանաներուն դէմ մղած պատերազմներու ժամանակ ձեզի պիտի օգնէ, եւ խաւարային իշխանութենէն եւ մահուան ժամուն իրենց աւարը յափշտակելու պատրաստ մունչող առիւծներէն պիտի ազատէ զձեզ.» (Ս. Օգոստինոս):

Ո՛հ, կը գոչէր մահուան անկողնոյ մէջ Աստուծոյ մեծ ծառայ մը, որչափ քաղցր է մեզի համար մեռնող Յիսուսի բազկացը մէջ իյնալ: Չեղի ալ որչափ քաղցր պիտի ըլլայ այս կեանքէն ելլելէդ վերջը ձեզի համար խոցուած Սրտին մէջ նետուիլ, եթէ այժմէն իսկ պատրաստուիք պատասխանելու այն



հրաւիրին, որով կը հրաւիրէ գէեզ որ հոն հաստատէք ձեր բնակութիւնը:

Հրահանգ: Տեառն մերոյ ամենասուրբ Սիրտը միթարելու ազդեցիկ միջոցներէն մէկն ալ է՝ քաւարանի հոգիներն ալատելու աշխատիլ: Պատարագի սուրբ զոհը, ներողութեանց մերձեցուցումները, աղօթքները, այս նպատակաւ գործուած ամենափոքր գործքերը, միջոցներ են ազատելու այս հոգիները, որոնց հետ միանալու սաստիկ փափագ ունի Յիսուս. փափագ մը՝ որուն կատարումը կը խափանէ իւր արդարութիւնը, սպասելով քեզմէ որ ստիպես զինքը որ այս աստուածային արդարութիւնը տեղի տայ իւր գթութեան:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեսց մեզ:  
Անարատ Սիրտ Մարինայ, աղօթեմ վասն մեր:

Մրցակցան աղօթք: Ես Աստուծմէ քան մը միայն խնդրեցի եւ կենացս ըզվանդակ օրերուն մէջ պիտի խնդրեմ, այսինքն՝ շարունակաբար իւր ամենասուրբ Սրտին մէջ քնակիլ: Զմի յանդիպեցի ի Տեսումէ եւ գտայն աղաչեմ. բնակե՛ր իմ ի տան Տեսուն զարեմացն արտօրս կեանց իմոց:

Այցելութիւն ամենասուրբ Հաղորդութեան:

Ո՛վ Յիսուս, քնաւ ախտի չբազմացընեմ փափազներս, խնդրուածքս. աղաչանք մը միայն, տննչանք մը միայն կը գրաւէ իմ հոգւոյս ըլլոր կարողութիւնները, շնորհք մը միայն քեզմէ կը խնդրեմ, այս է որ քու ամենասուրբ Սրտիդ մէջ քնակիմ զիշեր ու ցերեկ, մխիթարութեանց եւ տառապանաց մէջ, վախի եւ ապահովութեան

մէջ, կենացս ըլլոր փոփոխութեանց մէջ, այնպէս որ աշխարհիս վրայ քան մը չկարենայ զիս այս սուրբ քնակարանէն դուրս հանել, քան մը չկարենայ հանդարտութիւնս խանգարել. ու քան մը չկարենայ զիս գրաւելով խափանել այս քու սիրտիդ հետ հոգւոյս միութիւնը, որ իմ զբաղմանսցս, հետազօտութեանսցս եւ քաղծանցներուս առարկան է:

Աղէկ զիտես որ քու աստուածային ամենասուրբ Սիրտը ճանչնալէս ի վեր թէ ինծի եւ թէ ինծի սիրելի եղողներուն համար այս է քեզի աղաչանքս: Ամէն բարիք քու ամենասուրբ Սրտիդ մէջն է, անկէ դուրս՝ ամենայն ինչ թշուառութիւն: Ո՛վ Սիրտ Յիսուսի, թէ որ զիս կը սիրես կամ ի սէր քու սիրտի թող որ հոն քնակիմ, թող որ այս տխուր կենացս ըլլոր օրերը քու Սրտիդ մէջ քնակիմ: Ըրէ որ քնաւ չզաղրեմ ամէն վայրկեան զքեզ հետապնդելէ, անդառար զքեզ փնտոնեմ եւ թէ զքեզ ամէն տեղ գտնելով օր քան զօր ածիմ սիրտիդ մէջ, մինչեւ այն երջանիկ վայրկեանը՝ ուր պիտի կարենամ յարիտեանս նկատել քու մեծութիւնը:

Ժ Զ. Օ Բ

Ի՞նչպէս պէտք է ելլու Յիսուսի ամենասուրբ Սրտին:

Նախ՝ պաշխարհութեան հոգւով յօտեցէք Յիսուսի ամենասուրբ Սրտին, լայու ձեր մեղքերուն վրայ եւ անոնց թողութիւնն ընդունելու համար, Ս. Թովմաս առաքելոյն պէս պաշտելով զինքն խորին մեծարանքով եւ

զղջացեալ եւ խոնարհ սրտիւ իրեն ըսելով Տէր ի՛ ե- Աստուծո՛ւ ի՛նչ: — Ո՛վ մի միակ յոյս իմ, թոյլ տուր որ վէրքերուս դարմանը քու Սրտիդ վէրքին մէջ փնտռեմ: Թոյլ տուր որ ես ալ ձեռքս սուրբ կողիդ մէջ դնեմ, ոչ թէ յարութեանդ ճշմարտութեանը վրայ ապահով ըլլալու, հապա բոցավառ Սրտիդ դպչելու եւ յետոյ այսպէս տաքցած ձեռքս աղքատ սրտիս տանելու համար, որպէս զի քու բուռն սիրովդ բորբոքեմ եւ զանիկայ սպառեմ յիշելով իւր թշնամանքները, իւր մոռացութիւնները, իւր ապերախտութիւնը, որ մինչեւ մահ տրտմեցուցին զքեզ: «Մնահամանս սուրբ Սիրտ եւ սիրողդ մաքրութեան, որ ամենադոյզն արատին անգամ չես կրնար համբերել, դրոշմէ՛ սրտիս մէջ ամէնէն թեթեւ թշնամանաց վախն ու սոսկումը: Ո՛վ ապաշխարող Սիրտ, դուն որ ամէն գերեալները փրկանաւորեցիր, ըրէ՛ որ խղեմ կապերս, կուռիմ գէշ սովորութեանցս դէմ, մեռուցանեմ զգայարանքներս եւ ապաշխարութեամբ տեղը բերեմ այն փառքը՝ զոր քեզմէ յափշտակեցի:» (Նս-է:)

Ապահով եղէք որ այս խոնարհ աղօթքը աստուածային Սրտին գութը պիտի շարժէ. որովհետեւ եթէ կ'ուզէ համբերել որ իւր արարածը, սա ապստամբ ոչինչը, սա շնչաւոր փոշին, զինք վշտացընէ եւ զինք անարգէ, յայտնի է որ անմահ վեհանձնութեամբ մը, խոնարհութեան ամենադոյզն ներգործու-

թիւնը կարող է իրեն մոռցընել տալ անոր ամէն վատութիւնները, անոր ամէն ապափառաւորութիւնները:

«Երկրորդ՝ Լսահո-րեան հոգւով ամենասուրբ Սրտին իբրեւ ձեր ապաստարանին դիմեցէք, որպէս զի ձեր տրտմութիւնները, ձանձրոյթները, վշտերը, նեղութիւնները խղիկք այս քաղցրութեան եւ բարութեան անդունդին մէջ:» (Նս-է:) Ո՛րչափ մեղաւոր էք, այնչափ պէտք էք զօրացընել ձեր՝ ամենասուրբ Սրտին վրայ ունեցած վստահութիւնը: Յիսուս արդարներուն համար չեկաւ եւ ոչ ալ անոնց համար որոնք իրենք զիրենք արդար կը համարին, հապա խեղճ մեղաւորներուն համար. ասոնց մէջ գտնուիլ կ'ուզէ. կը թողու որ զինքը մեղաւորաց բարեկամ կոչեն, անոնց առջեւը կ'ելլէ եւ իւր արցունքովը զանոնք կը թրջէ. մեղաւորներէ մէկուն դարձին վրայ աւելի կ'ուրախանայ քան թէ իննսուն եւ ինն արդարաց յարատեւութեանը վրայ: Ո՛հ, ձեր անկումներէն վերջը վստահութիւններդ որչափ հաճոյ է անոր: Ձեր վստահութիւնը հեշտութեամբ կը վիրաւորէ անոր Սիրտը, ինչպէս որ Ս. Գերգրուտային ըսած էր: Անմեղ մանկանց տօնին օր մը, Սրբուհին միտքը գրաւող արտաքին մասձմունքներու պատճառաւ չկարենալով Ս. Հաղորդութեան պատրաստուիլ, յերկնից օգնութիւն խնդրեց եւ աստուածային գթութենէն սա պատասխանն ընդունեցաւ. «Եթէ

մէկը ո եւ է փորձութենէ բռնուած, հաստատուն յուսով պաշտպանութեանն ներքեւ ապաւինի, այնպիսին այն հոգիներէն է՝ որոնց վրայօք կրնամ ըսել՝ Մի է աղաւնի իմ, հազարաւորն բուռն ընտրուած, որ իւր նայուածքովը սիրտս ծակեց: Այնպէս որ եթէ գիտնայի թէ անոր օգնութեան չեմ կրնար հասնիլ, աստուածային Սիրտս այնպէս պիտի տրտմէր, որ երկնային ամէն հաճոյքները պիտի չկարենային Սիրտս ամոքել: Գարձեալ կը յաւելու, «Սիրտս ծակող սիրելւոյս սա նայուածքը՝ անասան վստահութիւնն է, զոր պէտք է վրաս ունենալ, ապահով ըլլալով որ ես կրնամ, գիտեմ եւ կ'ուզեմ ամէն բանի մէջ անոր օգնութեան հասնիլ. այս վստահութիւնը գթութեանս վրայ մեծ բռնութիւն կը բանեցընէ, այնպէս որ անկարելի է անկէ հեռանալ»: Ս. Գերդրուտա կը պատասխանէ. «Բայց եթէ այս վստահութիւնն այնքան մեծ բարիք մըն է եւ թէ առանց քու օգնութեանդ ոչ ոք կրնայ զայն ունենալ, ուրեմն չունեցողն ի՞նչ պիտի ընէ»: Տէրն մեր պատասխանեց. «Ամէն ոք կարող է Ս. Գրոց խօսքերովն իւր անվստահութեան յաղթել, կամ կրնայ ի բոլոր սրտէ Յովթայ հետ ըսել. Եթէ դժոխոց անդունդը թաղուիմ, Աստուածս պիտի ազատէ զիս, եթէ Աստուած մահու հարուած տայ, դարձեալ յոյսս վրան պիտի դնեմ»:

Աստուծոյ մեծ ծառայ մը՝ որուն նշանա-

բանն էր ինք զինք որդիական վստահութեամբ նախախնամութեան յանձնել, մահուանը ժամուն աստուածային գթութեանց մեծութեան վրայ աւելի կենդանի լուսով լուսաւորուած կը գոչէր. «Ո՛հ, ինչու դարձեալ չեմ առողջանար, որպէս զի միայն վստահութեամբ ապրէի»:

Երրորդ՝ մարմնով եւ ազօրէի հոգևով մտեցէք Յիսուսի ամենասուրբ Սրտին, որպէս զի գործքերու տագնապէն ազատիք: Այն ատեն Տէրն մեր, իւր պաշտպանութեան հովանւոյն ներքեւ պահելով զձեզ, եւ աւելի բարութեամբ ձեզի մտենալով, Ս. Գերդրուտային ըսածին պէս ձեզի ալ պիտի ըսէ. «Չես միայն աչքիդ առջեւ ունեցիր, հոգւոյդ ամէն կարողութիւններն ինծի մերձեցուր եւ շնորհացս քաղցրութիւնը վայելէ: Յիսուսի ամենասուրբ Սիրտն է որ կը հրաւիրէ զձեզ այս առանձնութեան եւ ազօրէի հանգըստեան, ինչպէս երբեմն իւր առաքեալներն իրենց գործերէն վերջը. «Եկէք այս աղմուկներէ հեռու ապաստանարանս, եւ քիչ մը հանգչեցէք ձեր վարդապետին Սրտին վրայ, սիրելի աշակերտիս հետ: Ո՛հ, զօրութիւննիր՝ սրչափ պիտի նորոգուին, եւ հոն ինչպիսի կարեւոր ճշմարտութիւններ պիտի սորվիք»:

Հրահանգ: Ուսուրուս յի՛ն, զի հեւ է՛մ է՛ու շուրհ որդի: Թերեւս հազար անգամ լրած ես Յիսուսի այս մեծ վարդապետութիւնը. սակայն անոր բովանդակ նշանակութիւնը դեռ չես հաս-

կնար. Թախանձագին խնդրէ որ քեզի իմաստու-  
 թիւն տայ լաւ հասկնալու: Հիւս-իւն է-  
 նաւ-իւն, ահաւաթիկ երկու առաքինութիւն-  
 ներ՝ զորոնք իւր ամենասուրբ Սրտին գանձէն կը  
 հանէ, զոր եւ մեզի կը սորվեցընէ վարդապետա-  
 կան հեղինակութեամբ: Յիսուսի ճշմարիտ առա-  
 քեալները չենք, չենք կրնար Յիսուսի Սրտին  
 ճշմարիտ ջերմեռանդներն ըլլալ՝ եթէ հաստա-  
 տապէս չենք որոշեր զանոնք սորվելու եւ գոր-  
 ծադրելու. որովհետեւ ամէն ճշմարիտ ջերմեռան-  
 դութեան սեպհական նկարագիրը, հիմն ու  
 էականք, մեր պատուած բանին նմանելու ջա-  
 նալն է:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
 Ընարատ Սիրտ Մարիամայ, աղօթեալ վասն մեր:

Սոցցական աղօթք: Ո՛վ ամենասուրբ Սիրտ  
 Յիսուսի, որ ամենեւին ծանօթ չես. ո՛վ Սիրտ՝ որ  
 ամենեւին սիրուած չես, ծանչցուր եւ սիրցուր  
 ինք զինքդ:

Այցեդրութիւն ամենասուրբ Հայրապետութեան:

Ո՛վ սէր ամենասուրբ Սրտին, զքեզ ծանշա-  
 ւու զքեզ հասկնալու համար պէտք է զքեզ ու-  
 սումնասիրել ծանրութեամբ, յարատեւութեամբ  
 զքեզ խորհել, բայց ո՛վ կ'ընէ ասիկայ: Ո՛հ, շա-  
 տեր երկայն ժամեր, նոյն իսկ իրենց բովանդակ  
 կեանքը կը զոհեն մարդկային գիտութիւններ  
 հետազօտելու համար. զորօքերու, հաճոյից հա-  
 մար ժամանակ կը գտնեն. բայց քեզի համար՝  
 որ տէր ես ժամանակին ամէն վայրկեաններուն,  
 զքեզ ծանշալու համար, ո՛վ Սիրտ Յիսուսի,

զքեզ գտնելու համար, ո՛վ սէր՝ որ իմ Աստուածս  
 ես, քու սիրոյդ այնքան հեշտ կըթուլեամն անծ-  
 նատուր ըլլալու համար, ամէն օր քառորդ մ'ան-  
 գամ չեն զոհեր: Եւ սակայն երկրիս այս գիտու-  
 թիւնները, ժամանակիս այս գործքերը, վայր-  
 կենիս այս հաճոյքները, ամէն քան պիտի փճա-  
 նայ, եւ յաւիտենականութեան Թագաւորութեան  
 մէջ սէրը միայն պիտի ապրի, պիտի սիրենք  
 եւ պիտի սիրուինք, ինչչափ որ աշխարհիս  
 վրայ սիրել գիտցած ենք: Ո՛վ Սիրտ Յիսուսի,  
 ինչեցո՞ւր վրանիս՝ զքեզ տոչորող կրակէն կայծ մը,  
 յայտնէ՛ մեզի այնքան մեծ, այնքան սուրբ Աստու-  
 ծոյ մը այնչափ տկար, այնչափ խեղճ արարածի  
 մը ցուցուցած սիրոյս գաղտնիքը եւ մեր սրտերը  
 պիտի ցաւին այնքան ժամանակ քեզմէ հեռու  
 ապրելուն համար: Դուն միայն կրնաս զքեզ  
 ծանչցընել. զքեզ սիրցընել... Արարածներն  
 անբաւական են հաղորդելու այս լոյսը, դրոշմ-  
 ւու այս սէրը, եթէ դուն անծամբ մեր հոգւոյն  
 չես խօսիր: Ո՛վ մարդկանէ այնչափ քիչ ծանչ-  
 ցուած սէր, ցուցուր ինք զինքդ քու ամբողջ հրա-  
 պոյքներովդ՝ որ մեր սրտերուն հրամայելու հա-  
 մար եղած են, եւ մենք պիտի սկսինք զքեզ ան-  
 դադար սիրելու:

ԺԵ. Օ Ր

Յիսուսի մեղանքից Սիրտը պահելով դարձան  
 յեն է մեր հոգւոյն ամէն դեպքէ հիւսիս-  
 թիւններուն:

Յիսուսի ամենասուրբ Սիրտն իմաստու-  
 թեան խորք մըն է, լիութիւնը ամէն բարու:

թեանց, ուր կը գտնես հոգւոյդ հիւանդութեանցը անվրէպ դարմանը. անիկայ սիրոյ անդունդ մըն է մանաւանդ, ուր պէտք ենք ընկղմել ուրիշ ամէն սէր, մասնաւորաբար մեր անձնասիրութիւնն իւր ամբողջ արդիւնքներովը, որոնք են՝ մարդկային ակնածութիւն եւ զմեզ բարձրացընելու եւ գոհացընելու փոփոագը: Այս միտութիւններն աստուածային սիրոյ անդունդին մէջ խղճելով է որ ձեր այլեւայլ վիճակներուն համապատասխան հարկաւոր օգնութիւնները կը գտնէք:

«Եթէ շորութեան եւ անկարողութեան խորքին մէջն ես, մտիր Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ, որ կարողութեան եւ սիրոյ խորք մըն է, մի բաղձար այս սիրոյ քաղցրութիւնը ճաշակելու, բայց եթէ Աստուծոյ հաճոյ երեւցած ժամանակ:

«Եթէ զրկման եւ վհատութեան խորքին մէջն ես, այս աստուածային Սիրտն ամէն մխիթարութեանց խորք մըն է, որուն մէջ ինք զինքդ կորսնցընելու ես առանց անոր հեշտութիւնը զգալ բաղձալու:

«Եթէ աղքատութեան եւ մերկութեան խորքին մէջն ես, մտիր Յիսուսի ամենասուրբ Սիրտը, անիկայ լի է գանձերով, զքեզ կը հարստացընէ, եթէ ինք զինքդ անոր յանձնես:

«Եթէ տկարութեան, վերստին անկման եւ թշուառութեան մէջ ես, զնա՛ Յիսուսի

ամենասուրբ Սրտին...անիկայ գթութեան եւ զօրութեան խորք մըն է, զքեզ ոտք կը հանէ եւ կը զօրացընէ:

«Եթէ հպարտութեան եւ անձիդ վրայ ընդունայն համարման խորքին մէջ ես, ընկղմէ զայն նոյնհետայն Յիսուսի ամենասուրբ Սրտին խորքին ունայնացմանց մէջ. այս խոնարհ Սիրտը խոնարհութեան խորքն է:

«Եթէ տգիտութեան եւ խաւարի խորքին մէջ ես, Յիսուսի ամենասուրբ Սիրտը գիտութեան եւ լուսոյ խորք մըն է. սորվէ գլխաւորաբար զինքը սիրել եւ միայն անոր քեզմէ ուղածն ընել:

«Եթէ անհաւատարմութեան եւ անհաստատութեան խորքին մէջ ես, Յիսուսի ամենասուրբ Սիրտը հաստատութեան եւ հաւատարմութեան խորքն է. հոն ապահինէ եւ հոն հաստատուն սէր մը պիտի գտնես, որ զմեզ կը սիրէ եւ մեզի բարիք կ'ընէ:

«Եթէ մահուան խորքին մէջ կը գտնուիս, զնա՛ Յիսուսի ամենասուրբ Սրտին. հոն պիտի գտնես կենաց խորք մը, նոր կեանք մը, կեանք մը՝ ուր միայն Յիսուսի աշուրներովը պիտի նայիս, ուր միայն Յիսուսի թելադրութեամբը պիտի գործես, ուր միայն Յիսուսի լեզուաւը պիտի խօսիս, ուր միայն Յիսուսի Սրտովը պիտի սիրես:

«Եթէ ապերախտութեան խորքին մէջ կը գտնուիս, Յիսուսի ամենասուրբ Սիրտը երախտագիտութեան խորք մըն է. ասկէ առ

որ Աստուծոյ մատուցանես այն ամէն բարեաց համար զոր ընդունեցար եւ խնդրէ Յիսուսէն որ իւր առատաձեռնութեամբք քու թերիդ լրացնէ:

“Եթէ յուզման, անհամբերութեան եւ բարկութեան խորքին մէջ ես, զնա Յիսուսի ամենասուրբ Սրտին, որ քաղցրութեան խորք մըն է:

“Եթէ գաղջութեան եւ ցրուածութեան խորքին մէջ ես, Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ պիտի գտնես ամփոփման եւ եռանդի խորք մը, որ ամէն բանի պակասը կը լրացնէ, որ սիրտդ եւ երեւակայութիւնդ կը հաստատէ զանոնք իրեն միացնելով:

“Եթէ տրտմութեան խորքին մէջ թաղուած ես, թաղէ տրտմութիւնդ Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ, որ երկնաւոր ուրախութեան խորք մըն է եւ սուրբերու եւ հրեշտակներու ամէն բերկրութեանց գանձը:

“Եթէ խռովութեան եւ անհանգստութեան մէջ ես, այն աստուածային Սիրտը խաղաղութեան խորք մըն է, եւ այս խաղաղութիւնը քեզի կը հաղորդուի:

“Եթէ դառնութեան եւ վշտաց խորքին մէջ ես, միացուր զանոնք Յիսուսի ամենասուրբ Սրտին անսահման շարչարանաց խորքին հետ եւ իրմէ պիտի սորվես տառապած ժամանակդ գոհ ըլլալ:

“Եթէ վախի խորքին մէջ ես, Յիսուսի ամենասուրբ Սիրտը վստահութեան եւ սիրոյ

խորք մըն է. ինք զինքդ անոր վստահէ, հոն պիտի սորվես որ վախը սերէն յառաջ գալու է:

“Վերջապէս ամէն բանի մէջ եւ ամէն տեղ, մտիւր այս սիրոյ ովկէանոսին մէջ, եւ եթէ կարելի է, մի ելլեր անկէ մինչեւ որ համակուած չըլլաս այն կրակով՝ որով այս Սիրտը բորբոքած է Աստուծոյ եւ մարդկան համար, հնոցի մէջ երկաթի մը կամ ծովու մէջ թաթխուած եւ ջրաթաթաւ սպունդի մը պէս: (Մարգ.՝Մարգ.՝)

Ս. Մաթիլտէ օր մը Աստուծով սաստիկ ղառղած ըլլալով, գթութիւնը կուսի մը կերպարանքով տեսաւ, որ Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ աղամանդ մը կը թաթխէր, եւ այս գործողութիւնը ստեպ կը կրկնէր, իրեն հասկցնելու համար որ չկայ այնքան կարծր եւ այնքան անապաշաւ սիրտ մը՝ զոր Յիսուսի ամենասուրբ Սիրտը զղջմամբ չճալեցնէ: Եթէ մեր սրտերն ալ աղամանդի պէս կարծր ըլլան, անմեղ գառին արեան մէջ թաթխելով եւ Յիսուսի Սրտին հետ միանալով պիտի կակղնան:

Հրահրի: Երբեք յուսահատութեան մի մտուներ ինքզինքդ, որչափ ալ չար մտութիւններդ ուժգին ըլլան եւ յանցանքերդ ալ ծանր. հապա մտածէ խկոյն որ զանոնք ջնջելու եւ դարմանելու համար, Յիսուսի ամենասուրբ Սրտին բովանդակ արդիւնքները տրամադրութեանդ ներքեւ են: Ապաւինէ այս Սրտին, որ

ամենամեծ մեղաւորներն անգամ ընդունելու համար միշտ բաց է եւ բոկ անոր. Ախ, Տէր իմ, թ ող թշուառութեանցս խորքը քու գթութեանդ խորքը վրաս կոչէ. որովհետեւ Մարգարէին բերնով բոկը՝ Իբր է Իբրոյ Խորոյն — Իւր յի կէանտօին մէջ նետուած հրոյ կայծ մը այնքան շուտ չի մարիր, որչափ յանցանքդ շուտով կը ընջուի այս միջոցով: Յորչափ ի կեանս ենք, Յիսուսի ամենասուրբ Սիրաը զմեզ կը հրաւիրէ, զմեզ կը կանչէ, որչափ ալ ապերախտ ըլլանք. աստուածային գթութեան այս դուռը միշտ իսկ բաց է մեզի: Դժմէքը միայն կրնայ այս Սիրաը գոցել այն զոհերուն՝ որ ցմիշտ անոր յանձնուած են:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր:

Մշտցակրան աղօթք: Ո՛վ ամենասուրբ Սիրտ Յիսուսի, դուն իմ յոյսս պիտի ըլլաս խոովութեանցս մէջ. իսկ կրքերուս խորշակին դէմ՝ զովարար հովանի:

Այցեյութիւն Ամենասուրբ Հստոյդորթեան:

Հոգիս պիտի չյուսահատն արդեօք, երբ կը տեսնէ որ ամէն կողմանէ խոովութիւններէ, պէտքերէ, աշխատութիւններէ, այս կեանքիս նեղութիւններէն ծնշուած է, իւր միշտ պատերազմներուն շարունակութենէն ան պարտասած, տկար թշնամիներուն երգեմս շատ թեթեւ իսկ յարձակումներէն ինքզինք անդունդի մինչեւ դուռը մղուած: Ախ, Տէր իմ, ստոյգ է որ, ինչպէս դուն ալ ինծի փորձն առնուլ կու տաս, ես

բան մը շունիմ, եւ բան մը շեմ, ես ինքնիրմէս բան մ'ընելու կարող չեմ: Բայց պիտի յիշես որ երբ տկար եմ, ծիշն այն ատեն ծնարատապէս զօրաւոր եմ. Յորժամ տխարանամ, յայնժամ զօրանամ: Մշտ պիտի վերցնեմ այս խորհրդեան մէջ ծածկուած քու ամենասուրբ Սրտիդ վրայ. անիկայ տխրութեան ժամանակ իմ յոյսս պիտի ըլլայ. անիկայ ամպերու այն սիւնն պիտի ըլլայ որ պիտի պատասպարէ հոգիս ինծի պատերազմ մղող կրքերուս սաստկութենէն. հոն պիտի փնտռեմ նեղութիւններուս մեղքաւորութիւնը. անոր սէրէն վայրկեան մ'իսկ չզրկուելու համար՝ թշնամիներուս պիտի յաղթեմ եւ զանոնք ոտնակոխ պիտի ընեմ. անիկայ իմ պատերազմներուս մի միակ պատճառը պիտի ըլլայ, ինչպէս նաեւ մի միակ վարձքը:

ԺԸ. Օ Ր

Յիսուսի սէնտարբ Սրտին յիշեցոյց Կրտիչին մէջ հոգեւորէ:

Եթէ Տեառն մերոյ բովանդակ կեանքն անընդհատ խաչ եւ մարտիրոսութիւն մ'եղաւ, տեսնելով կանխաւ այն ցաւերը՝ զորոնք պիտի կրէր մարդկան ազգի համար, կրնանք ուրեմն բսել որ այս դառնութեան կեանքին ամէնէն ցաւագին վայրկեանն այն եղաւ, յորում ուզեց միացնել իւր ամենասուրբ Սրտին մէջ այս ամէն ցաւերն եւ կրել անոնց նեղութիւնն ու ծանրութիւնը այս երեք

ժամուան հոգեվարքի մէջ՝ որուն ենթարկուեցաւ ձիթենեաց պարտիզին մէջ: Այս աստուածային Սրտին նուիրեալ անձինք հոն պէտք են ամէն օր նկատել զայն եւ իւր սիրոյն տարածութիւնը չափել: Այս վայրկեանն իւր աստուածային Սրտին մարտիրոսութեան վայրկեանն է: Իւր շարչարանաց նիւթական տանջանքներն ըստ իմիք սփոփանք մ'եղան իւր ցաւին եւ գոհացուցում մը իւր սիրոյն. բայց հոս է որ կը տառապի առանց ամոքման, առանց մխիթարութեան, նոյն իսկ իւր հոգւոյն կը զլանայ այն ամէն մտածմունք՝ որ կրնար իրեն սփոփանք պատճառել:

Նկատե՛ք ուրեմն թէ որինք էին իւր շարչարանքն այս անագորոյն հոգեվարքի միջոցին: Յիսուսի ամենասուրբ Սրտին առաջին շարչարանքն էր իւր Հօրը հաւրեւոյ ցաւիցանքը: Աստուած սէր է, կ'ըսէ մեզի այն Առաքեալը, զոր կը սիրէր Յիսուս: Այս սիրոյ Աստուածը յաւիտենական սիրով սիրեց զմեզ. իւր մեզի ունեցած սէրը՝ բովանդակ յաւիտենականութենէ զբաղցուցին իւր միտքը, իւր գիւթութեան խորհուրդները. Սէր յաւիտենական սիրեցի զիւր: Երբ նախաստեղծն Ազամ մեղանչելովը՝ կորսնցուց այն ամէն բարիքները՝ զոր իրեն սահմանած էր անոր բարութիւնը, Աստուած աւելի իմն առատաձեռնութեամբ սիրեց զինքը, մինչեւ իսկ իւր սիրոյ առարկան զմիածին Որդին տուաւ,

մինչեւ անգամ... այս աստուածային Որդին ամէնէն ցաւագին եւ ամէնէն խայտառակ մահուան մատնեց, մեղուցեալ մարդն ազատուլու համար. Զի այնպէս սիրեաց Աստուած շաւիարհ, մինչև զՈրդին իւր զաճին եր:

Իւր Որդին տալը՝ իւր անձն տալէն աւելի է. այն, Հայրն յաւիտենական ինք զինքն աւելի սիրով կու տար եթէ ասիկայ պատշաճ համարէր: Բայց աշխարհս չճանչցաւ այս անըմբռնելի սէրը, չուզեց անոր հաւատալ, մոռցաւ զայն:

Արդարեւ, սիրոյ այս զարմանալի հրաշքին վրայ, որ հրեշտակաց եւ երկնից սրբոց հիացման առարկան է, ո՞վ կը մտածէ, ո՞վ կը ճանչնայ զայն, ո՞վ զանիկայ խոր կը քննէ, գոնէ այնչափ, որչափ կարող է ընելու արարած մը:

Եթէ ոչ ոք հայր է Աստուծոյ չափ, կրնանք ըսել որ ոչ ոք զգաց երբեք հանդէպ իւր ամենասիրելի Հօր այնքան կենդանի զգացումներ, որչափ Աստուծոյ Որդին իւր Հօրը նկատմամբ: Ուրեմն իւր հոգեվարքին մէջ Յիսուսի Սիրտը չափազանց կը կարեկցէր այս անըմբռնելի սիրոյն, որ թշնամանուեցաւ ապերախտութեամբ եւ անհամար ոճիրներով, որով մարդիկ փոխարինեցին Հօր Աստուծոյ իրենց նկատմամբ անչափ սէրը:

Յիսուսի ամենասուրբ Սրտին երկրորդ շարչարանքն էր իւր ծօրը ցաւերուն հաւրեւոյ կալեցուցանքը: Իւր աստուածային Որդւոյն



ցաւագին չարչարանաց ժամանակ Մարեմայ քաշած ցաւը պատմելու համար պէտք է անոր Սիրտը մտած ըլլալ: Այս Սիրտն այնպիսի ազնիւ, խորունկ եւ պատուական զգացման կարողութեամբ օժտեալ էր, որ ս' եւ է սիրտ չի կրնար անոր Սրտին հետ համեմատուիլ: Անիկայ միայն կրնար ճշմարտութեամբ ըսել որ իւր աստուածային Որդւոյն եղած ամէն մէկ նախատինքն իւր Սրտին մէջ մէկ սլաք էին: Անիկայ միայն կը զգար ծանակութեանց, անարգանաց, Յիսուսի դէմ եղած հայհույութեանց բովանդակ դառնութիւնը: Անիկայ կը լսէր իւր Որդւոյն հառաչանքները, հեծկլտանքը, վերջին խօսքերը. անիկայ կը տեսնէր զինքն իւր Հօրմէն լքուած, խաչի վրայ տարածուած, դամուած եւ ամէնէն անագորոյն հոգեվարքի մէջ մեռած, այնպէս որ կարելի չեղաւ Մարեմայ՝ սրբել այն արցունքները, որ կը հոսէին անոր աչուքներէն, անոր վէրքերուն արիւնը կեցընել, խնամել զանիկայ, որով կարենար անոր վերջին չարչարանքն ամոքել. մանաւանդ անոր վշտացեալ Սրտին ամենափոքր մտիթարութիւն մը պատճառել: Այս տեսարանին ատեն, իւր լուութիւնն ու արտասուքն էին մի միակ ձայնը. Այս բառին Մայր ցառափէն, որդուստալից եւ որդմափէն, յորժամ որդին էր իսպառ:

Ո՛հ, ի՛նչ մարտիրոսութիւն է մեր սիրած անձանց չարչարուիլը տեսնել, մանաւանդ

եթէ անոնք նոյն իսկ մեր պատճառաւ չարչարուին: Արդ աստուածային Որդին Մարեմայ այս անըմբռնելի կսկիծները իւր կսկիծներուն վրայ կ'աւելցընէր, զանոնք կ'ընդունէր, զանոնք իւր Սրտին մէջ կարեկցութեամբ կը կրէր հոգեվարքին մէջ:

Առէ, չափէ քեզի համար քաշած այնքան ցաւերը. խնդրէ Յիսուսի ամենասուրբ Սրտէն, որ քուկինիդ մէջ հեղու այս դառնութեան ծովէն կաթիլ մը, որ իւր Սրտին մէջն ու յուրջն է, որպէս զի այնքան չարեաց փորձառութիւնն զքեզ մեծանձն ընէ ամէն բանի տանելու, եւ ամէն բանի ձեռնամուխ ըլլալու՝ այնքան սիրոյ համապատասխանելու համար:

Հրահանգ: Տէրն մեր իւր Սիրտը մեծարելու համար երանելոյն Մարգ.-Մարեմայ տուած այլ եւ այլ հրահանգներուն մէջէն, անձամբ անոր սորվեցուց այս օրուան խառնուած անուամբ ծանօթ հրահանգը. «Քեզմէ կը խնդրեմ որ, ըսաւ անոր, Հինգշաբթիէն Ուրբաթ, ժամը տասնութ մէկէն մինչեւ տասուերիու, գիշերներն աղօթքով անցընես, որպէս զի մասնակից ըլլաս այն ցաւին, զոր զգացի հոգեվարքի մէջ, մեղաւորաց դէմ բարկութիւնս իջեցընես եւ եղանակաւ մը ամաքես այն դառնութիւնը՝ զոր այն ատեն զգացի այն լքմանէն որ ստիպեց զիս զանոնք յանդիմանելու ինծի հետ ժամ մը հսկել չկարենալուն համար»: Եթէ տարիքդ, առողջութիւնդ կամ վիճակդ չեն ներեր Տեառն մերոյ Յիսուսի որդած ժամը կատարելու, հաւատա՛ որ հատուցում

ըրած կ'ըլլաս, եթէ քունէդ յառաջ ժամ մը զգհես աղօթքին: Գ.հնէ մի մոռնար Տեառն մերոյ նուիրելու ամէն հինգշաբթի երկուշնեբը, ընել չկրցած աղօթքիդ փոխարէն՝ այս հրահանգին հաւատարիմ այնքան սուրբ հոգինեբու աղօթքը, ինդրելով քու պահապան հրեշտակէդ, որ քու տեղդ բռնէ Յիսուսի ամենասուրբ Սրտին քով:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմաց մեզ Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր.

Մշացալիսն աղօթք: Ո՛հ, ո՛վ պիտի տայ մոռնելու քու ամենասուրբ Սրտիդ ներսը. ո՛վ քաղցրագուծ Յիսուս:

Այցեդրութիւն ամենաստորոք Հարոյդութեան:

Ո՛վ ամենասուրբ Սիրտ Յիսուսի, գիտես որ սրտիս ամենաշերմ փափագն է զքեզ գտնելու յաշողիւ, յաղթելով հաստատամտութեամբ այն ամէն արգելքներուն, որոնք խափանեցին զիս համեմուտ այն մշտատեւ միութեան, եւ անընդհատ ի քեզ բնակելու. որ հոգւոյս ամէնէն բուն պէտքն է, եւ որմէ դուրս ուրիշ բան չեմ գտներ քայք եթէ վիշտ, խաւար, անհաստատութիւն, տկարութիւն, դառնութիւն: Եղո՛ւկ Տէր իմ, դուն յիս կը մոնես, իմ սրտիս մէջ կը թափանցես, քայք ես երբեք չեմ մոներ, երբեք չեմ թափանցեր քու Սրտիդ մէջ. դուն իմ մէջս ես, իսկ ես ամենեւին ի քեզ չեմ. դուն զիս կը ծանշաս եւ սրտիս մինչեւ ամէնէն ծածուկ շարժումները կը գանազանես, քայք ես զքեզ ամենեւին չեմ ծանշար եւ քու սիրոյդ ամէնէն պայծառ գոր-

ծերը հազիւ թէ հոգւոյս անուշադիր աչքերուն կը հանդիպին: Ո՛վ պիտի տայ ուրեմն քու Սրտիդ աստուածային տաճարը մոռնելու, ուր վերջապէս պիտի սորվիմ զքեզ ծանշալ, զքեզ սիրել. ո՛վ, եթէ ոչ դուն: Ո՛վ իշխանդ, ո՛վ թագաւորդ փառաց, բաց ինծի այն դուռը՝ որմէ մինչեւ քեզ կը մտցուի, բաց ինծի Սրտիդ վերջը, տար զիս այն բացուածքէն յաւիտենական սիրոյ սրբարանը: Հոն պիտի ծանշամ զքեզ, հոն պիտի չափեմ սիրոյդ տարածութիւնը: Եթէ երբեք քեզի հետ պիտի շմշանամ, եթէ լուսոյդ մէջ լըս պիտի շտեմնեմ, եթէ իմ անհաւատարմութիւնքս քու Սրտիդ դուն պիտի փակես ինծի, մահ խաւրէ քու ծառայիդ: Բայց ո՛ր, ես պիտի շմոնիմ, ինդրուածքիս արդիւնքը պիտի ստանամ, եւ քու ամենասուրբ Սրտիդ մէջ ըովամղակուած սիրոյ հրաշալիքն ալ ուրիշներուն պիտի պատմեմ. այսպէսով ամէնցնիս ալ պիտի տոչորիք այն հոով որով դուն կը տոչորես մեզի համար:

**ԺԹ. Օ Բ**

Յիսուսի տեւորութիւն Սրտին յիշեալ պարտելին յէլ հոգեկորսք:

Օր մը Մարգարիտա-Մարիամ աղօթքի ատեն Տեառն մերոյ ձիթենեաց պարտիզին մէջ զգացած տրտմութիւնն ու հոգեվարքը մտադրութեամբ խորհած միջոցին, աստուածային վարդապետն իրեն ըսաւ. «Հոս կրածս ուրիշ ամէն շարչարանքէս աւելի սաստիկ եղաւ, ինք զինքս երկինքէն ու երկրէն

լքուած եւ մարդկան ամէն մեղքերով բեռնաւորուած տեսնելով: Աստուծոյ սրբութեանն առջեւ այսպէս երեւցայ, որ առանց միտ դնելու անմեղութեանս, իւր սաստկութեամբ զիս վերաւորեց, իմացընելով ինձի այն բաժակը՝ յորում կը գտնուէր իւր արդար բարկութեան ամբողջ լեղին ու դառնութիւնը, եւ կարծես թէ Հայր անունը մոռնալով՝ զիս իւր բարկութեանը կը ղըհէր: Չկայ արարած մը, որ կարող ըլլայ ըմբռնել չարչարանացս մեծութիւնը, զոր այն ատեն կրեցի մարդկան ազգին համար:»

Իւր զայրացած Հօրն այս սոսկալի երեւութիւն կը միանար նաեւ Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ իւր ցաւերուն եւ մարդկան ազգին ցաւերուն համար կարեկցութիւնը:

Յիսուսի ամենասուրբ Սրտին երրորդ չարչարանքն էր իւր անյին համար ունեցած իւրեկցութանելի է քան թէ ինքնին ցաւերը: Յիսուս Քրիստոս թող տուաւ որ իւր ճգնաժամուն՝ իւր չարչարանաց ամէն տանջանքներն մէկ անգամով իւր վրան յարձակին եւ մտքին մէջ նորոգուին այն ամէն պարագաներով, որ զինքը աւելի ցաւագին եւ աւելի նախատալից ըրին: Յիսուս ուզեց անոնց դառնութիւնը ճաշակել եւ զանոնք կրել իւր ամենասուրբ Սրտին մէջ՝ դեռ անոնց փորձն իւր մարմնոյն վրայ չառած: Գամերը, շղթան, խաչը, խարազանն, փշերը, լեղին, քացախը,

թուքը, ապտակը, կարմիր քղամիթը, նախատական ցուպը, իւր թշնամեաց նախատինքը, իւր բարեկամներէն լքումը, իւր առաքեալներէն միոյն մատնութիւնը, միւսին ուրացումը, ամէն բան կանխաւ տեսաւ, ամէն բան յանձն առաւ այս տարժանելի եւ ցաւագին ճգնաժամուն մէջ:

Յիսուսի ամենասուրբ Սրտին չորրորդ չարչարանքն էր Տարգիւն ունեցած իւր իւրեկցութիւնը, զոր անսահման սիրով կը սիրէր: «Յիսուս չէր ողբար միայն մարդկան ընդհանրապէս կորուստը, հապա այն անհամար բազմութեան իւրաքանչիւր անձին մեղքերուն կը կարեկցէր, ամէն մէկ մեղքին վրայ առանձինն վշտանալով, այնպէս որ չեղաւ գործուած եւ գործուելիք ներելի կամ մահու չափ մեղք մը, որ Յիսուսի ամենասուրբ Սիրտը չպատուէր»: (Ս. ԱճԻԼ Փօլէնիոյն): Ով որ ալ ըլլանք, արդար կամ մեղաւոր, ամէնքս ալ այս կարեկցից Սրտին մէջ նետած ենք մեր դառնութեան բաժինը: Այս աստուածային Սրտին անձկութիւններն ու հոգեվարքը ըմբռնելու համար պէտք է հաշուել ապրած եւ ցկատարած աշխարհիս ապրելիք մարդկան բազմութիւնը, անոնց սոսկալի ոճիրներուն թիւն ու մեծութիւնը, այն անչափ սէրը, որով կ'այրէր այս ամենասուրբ Սիրտը հոգիներուն համար, այն հրավառ եռանդը, որ կը փութացընէր զինքը՝ փրկելու համար զամէնքը:

Հողիններու կորստեան եւ անոնց ապերախտութեան հետ միացուցէք այն ցաւերը, մարդկան ազգին նիւթական եւ բարոյական վիշտերը, որ նետուեցան այս դառնութեան ծովուն մէջ, զոր եւ այս աստուածային վարդապետն ուզեց կարեկցութեամբ կրել իւր ամենասուրբ Սրտին մէջ, որպէս զի կարող ըլլանք Առաքելոյն հետ ըսել. «Ոչ եթէ ունիմք քահանայապետ, որ չեցէ կարող շարչարակից լինել տկարութեան մերոյ»:

Այսպիսի են այն անըմբռնելի ցաւերը, որ ամէն կողմանէ կը շրջապատեն եւ Յիսուսի Քրիստոսի Սիրտը կը պատռեն: Ուստի լսեցէք թէ ինչ կը գոչէ. Տրտնո՞ւ է ա՛յն ի՞նչ, միւլի-ն ի՞նչ: Հայր ի՞նչ, եխէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն: Տեսէ՞ք իւր Հօրմէն Լքուած, սարսափի եւ տրտմութեան մատնուած, եւ այնպիսի վիճակի մ'ենթարկուած, որ արեան քրտինք մը կ'ոռոզէ իւր սուրբ մարմինը, եւ իւր ցաւին եւ սիրոյն սաստկութենէն մինչեւ գետին կը վազէ առանց դահիճներու, գամերու, խարազաններու պէտք ունենալու: Ա՛խ, պատճառն այս է որ Յիսուսի ամենասուրբ Սիրտը հոս ալ կը կրէ այնչափ, որչափ խաչի վրայ եւ վշտացեալ սրտերու օրինակ, ապաստանարան եւ մխիթարութիւն կ'ուզէ ըլլալ: Հրեաները՝ Յիսուսի Ղազարու գերեզմանին վրայ թափած արցունքներուն ակնատես, զարմացած կը գոչէին. Տեսէ՛, ի՛նչպէս ի՛նչ

տրե՛ր: Ո՛վ քրիստոնեայ հոգի, ինչ պէտք ես ըսել, ինչ պէտք ես մտածել, անսնելով ո՛չ միայն արցունքները, հապա այն արիւնը, զոր Յիսուս այսօր կը թափէ իւր սէրը մեզի ցուցնելու համար:

Մօտեցիր ուրեմն հոգեվար փրկչիդ. համեմատե քու վիշտերդ եթէ կը համարձակիս, այն վշտերուն հետ՝ որ անոր Սիրտը կը ծակեն եւ խնդրէ յաւիտենական Հօրմէն, որ որչափ ալ անարժան ըլլաս, թոյլ տայ քեզի այն հրեշտակին տեղը բռնելու, զոր առաքեց իւր Որդին մխիթարելու համար, որպէս զի միշտ Յիսուսին քովը մնաս, անոր հետ արթուն կենաս, ինչպէս որ ինքն ալ զքեզ հոն կը հրաւիրէ ըսելով. «Մնացէք աստ եւ արթուն կացէք»: (Մարկ. ԺԴ. 34.)

Վշտերուդ մէջ համբերութիւնն ու համակերպութիւնը մխիթարութիւններ են, զոր քեզմէ կը սպասէ Յիսուսի վշտացեալ Սիրտը:

Հրահանգ: Եթէ խոստովանանքի կը պատրասուուիս, պաղատագին խնդրէ Յիսուսի ամենասուրբ Սրտէն որ հաճի ընդունիլ քու սիրտդ իրենին մէջ, որպէս զի զանիկայ մանակից ընէ այն դառն ցաւին, զոր զգաց քու խոստովանելի մեղքերէդ, այն մեղքերէդ՝ որ իւր ցաւագին հոգեվարքին միջոցին իրեն աչքին առջեւն էին:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմանց մեզ:  
Անարատ Սիրտ Մարմնայ, աղօթեալ վասն մեր:

Մշակական աղօթք: Ո՛վ Յիսուս, ցաւով խոստած Սրտովդ խոցէ՛ իմինս աւ իւր յանցանաց ցաւովը:

Այցելութիւն ամենաստորջ Հաղորդութեան:

“Ո՛վ Տէր իմ, կը խոստովանիմ որ, եթէ միայն իմ արժանիքս նկատեմ, քու պարգեններուդ ամէնէն փոքր մասին անգամ անարժան եմ. բայց քու զահեղ շրջապատող երջանիկ հոգիներուն արժանեաց եւ հրավառ փափագին վրայ յինչով կը խնդրեմ քու աստուածային բարութենէդ որ ի խոր խոցես իմ սիրտս քու սիրոյդ տէգովը, այնպէս որ իմինս այլ եւս երկրաւոր քան մը չբովանդակէ, եւ քու աստուածութեամբդ բոլորովին պաշարուի եւ համակի:” (Մղրտոհի Գեղորոտս:) Սրտիս այս կարծօր վիմէն զըջման ջրեր հանել տուր. թո՛ղ ամբողջ մեղքերս, մանաւանդ զքեզ ծանշալու երջանկութիւնն ունենալէս ետեւ զործած անհամար անհաւատարմութիւններս, գաւազաններ ըլլան՝ զորոնք զործածես այս ժայռը հարուածելու համար: Ո՛վ Յիսուս, քու կարեւոր Սրտովդ իմինս մէջ ցաւ ծնցուր. խոցէ՛ սիրտս ցուկինիդ անընդհատ դառնութեան յիշատակովը: Եւ եթէ այս սիրազ զտուի, մաքրուի, դարձեալ խոցէ՛ զայն քու սիրոյդ տէգերովը, այն մի եւ նոյն նիգակովը որով մեղքերս խոցեցին քու Սիրտդ: Ո՛վ դուք Ս. Փրանկիսկոս, Ս. Գերզորոտս, Ս. Թերեզիս, Ս. Կատարինէ, երանելիդ Մարգարիտա-Մարիամ, ո՛վ ամենայն սուրբք, սիրելի բարեկամք Աստուծոյ, որ արժանի եղաք իմ Յիսուսի Սրտին սիրոյս վէրքը ձեր սրտին վրայ կրելու նախանձելի շնորհքին, ընդունեցէք այս շնորհքը, որ

սիրտս ի ներքուստ խոցուի Յիսուսի սիրով՝ որ իմ սիրոյս համար իւր Սիրազ վնասուրին նիգակին մասնեց:

Ի. Օ Ր

Յիսուսի ամենասուրբ Սրտին Վերջապահ անյիւստի շնորհքը շնորհքով իմ սիրելի:

Մեզմէ ո՞վ հաւատք կ'ընծայէր, ո՞վ խորը կը թափանցէր այն հրավառ բոցերուն՝ որ մեզի համար կը սպառէին Յիսուսի ամենասուրբ Սիրտը, այն անպատում ցաւերուն՝ որ զինքը դառնութեան ծովու մէջ ընկղմեցին, այն մեր փրկութեան անշափ ծարաւին՝ որ զինքը կը նուաղեցընէր, վերջապէս Աստուծոյ մը սիրոյն այն ամէն հրաշալիքներուն, եթէ այս աստուածային փրկիչը ասոր պայծառ եւ շօշափելի ապացոյց մը տուած չըլլար:

Իւր բարեկամացը համար դարձաւ, Եւնի, սիրոյ ամենամեծ ապացոյցն է. “Մեծ եւս քան զայս սեր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց”: Ահա այս ապացոյցը տուաւ Յիսուսի ամենասուրբ Սիրտը: Բայց ո՛չ, Յիսուս ոչ թէ միայն իւր բարեկամաց համար կը մեռնի, հապա իւր թշնամեաց եւ անոնց համար ալ որ զինքը կը սպաննեն: Եւ ո՞վ մեզմէ, կ'ըսէ Ս. Օգոստինոս, պիտի կարենար սիրել, եթէ նա սիրած չըլլար իւր թշնամիները: Յիսուս զմեզ րած չըլլար իւր թշնամիները: Յիսուս զմեզ սիրեց մինչդեռ մենք իրեն թշնամիներ

էինք, եւ զմեզ իւր բարեկամները կոչելու արժանի ըրաւ: Յիսուս կը բաղձայ որ այս անըմբռնելի սիրոյ ապացոյցին եւ մեզի համար կրած մահուան յիշատակը չկորսնցընենք. ասոր համար է որ ամէն օր ասիկայ կ'ուզէ նորոգել պատարագի սուրբ զոհին մէջ: Չենք կրնար շերմեռանդ ըլլալ իւր Սրտին, եթէ չենք ուզեր այնքան անըմբռնելի միջոցներու վրայ խորհիլ, զոր այս աստուածային Սիրտը իւր սիրոյն շափազանցութեամբը հնարեց ապացուցանելու համար այս միեւնոյն սէրը մարդկան դիւրագրած սրտերուն: Յիսուսի ամենասուրբ Սրտին շերմեռանդներն ո՛չ թէ միայն ձիթենեաց պարտիզին մէջ, հապա զինուորաց ձեռաց միջեւ, Երուսաղեմայ փողոցներու վրայ, Աննայի, Այլիափայի, Հերովդէսի առջեւ, սեան, Պիղատոսի ատենին մօտ, Գողգոթայի վրայ պէտք են հետեւիլ այս աստուածային փրկչին եւ անոր ցաւերուն հետ միանալ, որ իւր կենօքը միայն վերջացան:

Այսպիսի մտածութեան մ'արդիւնքն ու արգասիքը բովանդակ Սուրբերը միաձայն կը

1 Յիսուսի Քրիստոսի շարժարանքը մտածել ուզող անձանց շերմագին կը յանձնարարենք Ս. Լիպուորեայ «Ճամայց Նարարանայ» տիտղոսով սքանչելի գիրքը, զոր թարգմանած է Հ. Թարէոս Ա. Թուրքան, Վիեննա, 1900: Եւ Հ. Քերովեզ Ա. Իսպանեանի «Քրիստոսի Նարարանայ (Եր) Ընթաց Երանութեան» անուն աննման գիրքը. Վիեննա 1875:

վկայեն թէ անհամեմատ մեծ է: Ս. Օգոստինոս կ'ըսէ որ «Աւելի կ'արժէ կաթիլ մ'արցունք զոր ի յիշատակ շարժարանաց Քրիստոսի կը թափենք, քան թէ ուխտագնացութիւն յերուսաղէմ եւ տարի մը ծումապահութիւն հացով եւ ջրով»: Սակաւ անձինք կը սիրեն հակառակ, կ'ըսէ Ս. Լիպուորի, վասն զի սակաւ կը խորհին թէ քնչափ վիշտ կրեց Քրիստոս մեզի համար: Բայց այն անձն որ միշտ իւր աչքին առջեւն ունի Քրիստոսի շարժարանքն, ապաքէն չի կրնար ապրիլ առանց սիրելու զՅիսուս, վասն զի իւր սէրը զմեզ կը ստիպէ: Նա մանաւանդ, խորհողն ինք զինք ստիպուած կը զգայ սիրելու զԱստուած՝ որ մարդկան սիրովն վառուած: այնչափ շարժարուիլ ուզեց, որպէս զի մենք ալ փոխարէն սիրենք զինք բոլոր սրտով: Տէրն մեր ըսաւ օր մը Օգոստինեան Արդէ երանելի Աերոնիքայի. «Աը բաղձամ որ մարդիկ պաշտօն մատուցանեն իմ շարժարանացս, անկեղծ ցաւով եւ կենդանի կարեկցութեամբ: Եթէ արցունք մը միայն թափեն, կրնան ապահով ըլլալ որ շատ բան ըրած են. վասն զի մարդկային լեզուն չի կրնար բացատրել այն ուրախութիւնը, զոր այս միմիակ արցունքը ինծի կը պատճառէ»: Հրեշտակները խաչեան Յովհաննային յայտնեցին որ աստուածային մեծ վայելութիւնը՝ Յիսուսի շարժարանաց վրայ թափուած արցունքներուն վրայ այնչափ կ'ուրախանայ, եւ այսպիսի կսկիծ մը այնքան

հաճոյ է իրեն, որ մեր արեան հեղման կամ ամէնէն սաստիկ տանջանաց հաւասար արժէք կը դնէ:

Տէրն մեր ըսաւ օր մը երանելի Անժէլ Ֆօլինեօցիին. «Ով որ կ'ուզէ շնորհք գտնել, աչքերը չդարձրնէ խաչէն, ինչ վիճակի մէջ ալ գտնուի, թէ արտմութեան եւ թէ ուրախութեան ատեն: Անոնք որ կենաց եւ փրկութեան աղբիւր շարչարանացս կամ մահուանս վրայ կը խորհին, իմ ճշմարիտ որդիներս են. իսկ միւսները միայն անուամբ որդիներս են »:

Վերոյիշեալ Սրբուհին զխաչեցեալ Յիսուս տեսնելու շնորհքին արժանանալով, լսեց որ այս աստուածային Գառնը, իւր ցաւերուն ցաւակից եղող եւ ըլլալ ուղղ հոգիներուն սա մխիթարական օրհնութիւնները կու տար. «Օրհնեալ ըլլաք Հօրմէս, դուք որ իմ տանջանքներուս կարեկցելով, իմ վշտերուս մասնակցելով եւ իմ ծամբուս վայէն քալելով, արժանի եղաք իմ պատուական արեամբս ձեր հանդերձը լուալու: Օրհնեալ ըլլաք, դուք որ իմ անչափ կսկիծներուս եւ զձեզ յաւիտենական տանջանքներէն ազատելու, ձեր տեղը հատուցում ընելու եւ զձեզ փրկանաւորելու համար կրած մահուանս ցաւակցելով, արժանի եղաք մասնակցելու իմ աղքատութեանս, խոնարհեցուցմանցս եւ տանջանքներուս: Օրհնեալ ըլլաք, դուք որ հաւատարիմ յի-

շատակը կը պահէք իմ շարչարանացս՝ որ է ամենամեծ հրաշքը բովանդակ դարերու, կորուսելոց փրկութիւնն ու կեանքը, մեղաւորաց ապաստանարանը, վասն զի դուք հաղորդակից պիտի ըլլաք իմ յարութեանս, թագաւորութեանս եւ փառացս, որոնք շարչարանացս գինն են, եւ իմ յաւիտենական ժառանգորդներս պիտի ըլլաք: Օրհնեալ ըլլաք ի Հօրէ եւ ի Հոգւոյն Սրբոյ. օրհնեալ ըլլաք այն օրհնութեամբ զոր պիտի տամ արդարութեան օրը, վասն զի աշխարհք եկած ժամանակս փոխանակ զիս վաճառելու, ինչպէս ըրին հալածիչներս, դուք կարեկցելով իմ վշտերուս, ինձի ապաստանարան տուիք ձեր սրտին մէջ. վասն զի զիս ծարաւէ եւ անօթութենէ նեղուած՝ գամերով խոցուած՝ հոգեվար եւ խաչամահ տեսնելով, իմ մխիթարիչներս եւ իմ ընկերներս ուղեցիք ըլլալ, կատարելով ճշմարիտ գլխութեան գործը: Անոր համար ահագին օրը պիտի լսէք սա խօսքերը, ուրախալի ձեզի համար. ելէ՛, Հօրս օրհնելութիւնը, Ժառանգեցէ՛ այն Խոհարարութիւնը՝ որ յեղի համար պարբարութիւն է ի սիբանէ աշխարհի: Ձեր իրաւունքն անտարակուսելի է. որովհետեւ ունեցեցաք, դուք ինձի ոտբլու կարեկցութեան հաց րոտի:

Հրահանգ: Ամենատուրը կոյսը, բարեպաշտ աւանդութեան մը համեմատ, օր մը չէր անցըներ առանց այցելելու իւր աստուածային Որդ-

ւոյն արեամբը ուռգուած տեղերը. անոր օրինակին հետեւելով առաքեալները, եւ յետոյ ամէն դարու մէջ հաւատացեալք այդ սուրբ տեղերը կը դիմէին:

Ճակարհ Իսկ ըսուած ջերմեանդուծիւնը դրուած է ըստ իմիք այս բարեպաշտ ուխտագնացութեան տեղը բռնելու համար: Սրբազան Քահանայապետք զայն ճոխացուցին ամենառատ ներողութիւններով: Բենեդիկտոս Ժ.Գ. կ'ապահովընէ զմեզ որ մեղաւորները դարձնելու, գաղջերը կենդանացընելու եւ արդարները սրբացընելու համար ամէնէն ազդու միջոցն է այս: Այնպէս ըրէ որ երբեմն երբեմն կատարես այս սուրբ հրահանգն, մանաւանդ տարւոյն այն միջոցին. յորում Եկեղեցին Տեառն մերոյ շարժաբանքը կ'սորհելու կը հրաւիրէ զմեզ:

Սուրբ Սիրոտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրոտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր:

Սրացակախ աղօթք: Իմ Աստուծոյ տանջանքներն երբեք պիտի չմոռնամ. սիրտս անոր անընդհատ յիշատակը պիտի պահէ, եւ հոգիս զարմանքով եւ երախտագիտութեամբ պիտի լեցուի:

Այցեպատկարն ամենաստորք Հաղորդութեան:

Միթէ ես ալ կրնամ ասիկայ յուսալ, նս որ այնքան անհաստատ եմ եւ սիրտս ուրախութիւն եւ երջանկութիւն կը փնտոէ անդադար: Ո՛վ քաղցրագութ Յիսուս, ո՞րն է այն մարդկային սիրտը՝ որ կըցաւ անդադար հետեւի քեզի շար-

շարանացը մտածութեամբը, ցաւերու եւ նախատանաց ծամբաներու մէջ, զոր դուն ընթացար այնպիսի հաստատութեամբ: Սիրոտ մը միայն կը ծանշամ, եւ այս ալ մօր մը սիրտն է, Մարեմայ Սիրտը: Ո՛վ քարեգութ Մայր, դուն միայն կրնաս ըսել. «Ծս երբեք չեմ մոռցած Աստուծոյս եւ Որդւոյս շարժարանքը, աշխարհիս վրայ զայն անընդհատ յիշեցի. սիրտս միշտ անոր կսկծեւի տպաւորութիւնը կ'ոց. աշուղներս միշտ թրջած էին այս մտածութեանն. ըովանդակ ուրախութիւններս մշտատեւ դառնութեամբ խառնուած էին եւ հոգիս սարսափէ, երախտագիտութեանն եւ կսկծեմ կը ցամքեմ»: Ո՛վ անուշակ Մայր, այս անըմբռնելի, այդ անընդհատ կսկծեանն նս պատճառեցի քու Սրտիդ, Յիսուսի Սրտին. թո՛ղ տուր ինձի ուրեմն որ տկրիմ եւ քեզի հետ լամ խաչեցեալ Յիսուսի ցաւերը. թո՛ղ տուր որ որչափ կարելի է աշխարհիս վրայ արարածի մը, մասնակցիմ քու ցաւերուդ: Բաղձանք մը միայն ունիմ, այն է՝ քեզի ընկերակից ըլլալ. քեզի հետ Յիսուսիս վիբաւորուած Սրտին մօտ ընակել արտասուաց հեղեղներ թափելով: Ո՛վ փառատը Կոյս ի մէջ կուսանաց, մի՞ ըլլար ինձի անգութ. թո՛ղ որ քեզի հետ ի միասին լամ:

ԻԱ. Օ Բ

Մարդիւն ուղերիտութիւնը Յիսուսի ասեալ  
«ուրբ Սրտին հանդէպ»:

«Յիսուսի ամենասուրբ Սիրտը թէեւ հիմայ իրապէս չի վերաւորուիր, սակայն իւր



սիրոյ խորհուրդը հաստատելէն ի վեր տար-  
օրինակ անպատուութիւններ կ'ընդունի  
յանձին: Կարելի է երեւակայել աւելի  
ստորին նախատիւք մը՝ որով Հրէիցմէ, հե-  
րետիկոսներէ, անասուածներէ այնքան  
դարերէ ի վեր նախատուեցաւ եւ դեռ եւս  
պիտի նախատուի ցկատարած աշխարհիս,՝  
(Կոտէ):

Բայց թերեւս աւելի ցաւալին այն ան-  
ձանց վարմունքն է, որոնք քրիստոնեայ անունը  
կը կրեն եւ քրիստոնէութեան ինչ ինչ  
հրահանգները կը պահեն դեռ: Յիսուս շատ  
կը բաղձայ մարդկան մէջ բնակիլ. Եւ քն-  
կեաց ի մեզ. անոնց մինչեւ սիրտն իջնալ,  
մինչեւ անգամ՝ ո՛վ սիրոյ անհասկանալի շա-  
փագանցութիւն, սա զարմացուցիչ խօսքերը  
կ'ըսէ. «Ուրախութիւնս մարդկան որդւոց  
հետ է»: Բայց Տէր իմ, ի՞նչպէս կը վա-  
րուին այս մարդիկ քեզի հետ: Դուն կը  
հաճիս անոնց մէջ բազմիլ, իսկ անոնք կը  
զանան քեզի նոյն իսկ համեստ բնակարան  
մը. անոնք պաշտաներու մէջ բնակելով,  
դքեզ վրանի տակ բնակեցընելու կը համար-  
ձակին: Դաւիթ մարգարէ սրտի դառնու-  
թեամբ կ'ըսէր Նաթան մարգարէին. «Ահա-  
ւասիկ ես կը բնակիմ եղեւնափայտէ տան  
մէջ. իսկ Աստուծոյ տապանակը վրանի տակ  
պիտի մնայ»: Ո՛վ ճշմարիտ տապանակ նոր  
կտակարանի, որուն հին տապանակը տկար  
պատկեր մըն էր: Ո՛վ Տէր, ո՛վ Յիսուս,

այսօր շուայութեան մէջ յղիացողներէն որը  
հոգ կ'ընէ եւ կը վշտանայ մեր եկեղեցի-  
ներուն մէջ քու շքաւորութիւնդ տեսնելով:  
Դարձեալ բան մըն էր քեզի համար, եթէ  
առ ի չգոյէ շքեղութեան նիւթական տա-  
ճարներու, գոնէ սրտերու մէջ ընդունե-  
լութիւն գտնէիր: Բայց ո՛չ, դուն գիշեր  
ցերեկ սրբարանդ ես, հոս կը սպասես եւ  
զմարդիկ կը կանչես. ցերեկները, գիշեր-  
ները, շաբաթները իրարու կը յաջորդեն  
առանց զանոնք հոն տեսնելու. կամ եթէ  
կարճ այցելութիւն մ'ալ ընեն, այն  
ալ սովորութիւնը կամ պատշաճութիւնը  
ղիբնք հոն կը մղէ: Անոնց մարմինը առջեւդ  
է, բայց սրտերնին քեզմէ հեռու: Դուն Հա-  
ղորութեան մէջ միշտ անոնցմով զբաղած  
ես, Հօյդ առջեւ միշտ զոհի վիճակի մէջ,  
անոր մատուցանելով վերքերդ մարդկան հա-  
մար. եւ քու ներկայութեանդ առջեւ դքեզ  
պաշտելու վրայ շատ քիչ կը խորհին. առջեւդ  
այնքան անպատկառ գիրքի մը մէջ կը  
կենան, որ քու իրական ներկայութիւնդ  
ուրացող հերետիկոսն անգամ զանոնք կը  
յանդիմանէ: Սուրբ Հաղորութեան մէջ,  
Յիսուս զանձն անոնց կը մատուցանէ.  
Ահաւասիկ Գոռն Աստուծոյ, որ ուշադրիս  
մեզից իւր բառայ, իւր Ընթ. եկէք իրեն  
ամէնքնիդ ալ: Յիսուս ինքնին զանոնք կը  
հրաւիրէ սա զարմանալի խօսքերով. «Կերէք,  
բարեկամներս, եւ խմեցէք. գինովցէք իմ

հաճութեանցս հեղեղովը, իմ սիրելիներս, եկեք, կերեք հացս, խմեցեք գինին՝ զոր ձեզի համար պատրաստեցի»։ Բայց ամենքը կը փախչին իբր այն թէ բուժելու վերք եւ ջնջելու արատ չունենային. կը պատասխանեն թէ այլք զերեւք հրաւիրած են, եւ թէ պոյեղելու ուրիշ բարեկամներ ունին։ Ո՛վ երկինք, զարմացիր ի տես այս աստիճան ապերախտութեան։ Ո՛վ քրիստոնեայք, ան միտ եւ կամակոր ժողովուրդ, այս է այն երախտագիտութիւնը՝ զոր կը ցուցնէք ձեր Յիսուսին եւ ձեր Աստուծոյն։ Աչք Բէ-ր ե-խորբեալ, շնոր Տեառն հարոցանէ՛ր այդէն, ժողովուրդ յի՛տր ե- ոչ ի՛սպոսուն։ Ո՛վ այնքան գորովագութ, մեծանձն եւ սիրազեղ Յիսուս, միթէ կարելի է ասկէ աւելի անգութ վերք մը պատճառել քու աստուածային Սրտիդ։ Ո՛հ, կը լսեմ որ ինծի կ'ըսես. «Սպասեցի որ ձեզմէ սիրածներէս մէկն ինծի դար վշտակցելու համար եւ ամենեւին չգտայ. սպասեցի որ իմ սիրելի բարեկամներէս մէկը գար զիս մխիթարելու, եւ ոչ ոք երեւցաւ»։

Տէրն մեր ինքնին յայտնեց երանելի Մարգարիտա-Մարեմայ թէ որչափ կը նեղանար այս անտարբերութեան վրայ. «Ս. Հաղորդութեան մէջ մարդիկներէ սիրուելու եւ մեծարուելու սաստիկ ծարաւ ունիմ, եւ սակայն գրեթէ ոչ զոք կը գտնեմ, որ ջանայ բողձանքիս համաձայն ծարաւս անցընելու ինծի փոխարէն մ'ընել»։

Հր-հաւք։ Աստուծոյ բարերարութիւնները մշտահոս գետի մը պէս են, որ կ'ուռգնեն մեր հոգին։ Աստուծոյ իրեն համար ընտրած քաղաքը։ Գնացէ՛ք քիչոք սարս-տանն զբարս Աստուծոյ։ Այս աշխարհիս վրայ այս պատուական պարգեւներէն փոքր մաս մը միայն կրնանք գտնել։ Եւ որովհետեւ երեւոյթներու Յիսուսի աս մնասուրբ Սրտին ջերմեւանդութեան որոշիչ նկարագիրներէն մին է, այնպէս պէտք էս ընել որ օր մը շանցընես առանց յիշողութեանդ առջեւ բերելու այն բարերարութիւնները՝ զորոնք Աստուծակէ ընդունած ես. զոր օրինակ ստեղծուիլդ, ապրիլդ, ճամբարիս հաւատքի կուուիլդ, առած քրիստոնէական կրթութիւնդ, ընդունած խորհուրդներդ, մասնական շնորհքներդ, փրկութեանդ համար հարկաւոր շնորհքները, եւ այլն։ Աւելին ըրէ՛ն շնորհակալ եղիր Աստուծոյ այն ամէն շնորհաց համար, որովք զքեզ պիտի ճուայցընէր եթէ աւելի հաւատարիմ ըլլայիր, եւ այն ամէն շնորհաց համար, զորոնք պիտի տայ քեզի. շնորհակալութիւն մտն այն ամէն անձանց համար, որոնք իւր բարերարութեամբ անձերեք չեն մտածեր անոր շնորհակալ ըլլալու, եւ այն շնորհքները զինքը վշտացընելու կը գործածեն։ Երախտագիտութիւնը՝ ազնիւ եւ մեծանձն հոգիներու պիտոյքն է, եւ ամէնէն ապահով միջոց նորանոր բարիքներ օտանալու. ընդհակառակն ապերախտութիւնն անոր աղբիւրը կը ցամաքեցընէ։

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմանց մեզ։  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմս վասն մեր

Մըցակիսն առօրէր: Ի՞նչ փոխարէն տամ Աստուծոյ այն ամէն բարեքներու համար, որով զիս լիացուց: Ձիւնջ տաց տղիտուրու Տեսուն ընդ ամենաշնի, զոր եւ ետ ինձ: Իւր պատուածային Որդւոյն Սիրտն առնում եւ զայն իրն մատուցանեմ, ասով պարտքս կատարելապէս կատարած կ'ըլլամ:

Սյցեալութիւն ամենատարբէր Հաղորդութեան:

Ո՛վ Աստուած իմ, ինչ տրիտուր տամ քեզի այն ամէն բարեաց համար, զոր ինձի պարգեւեցիր: Ուրիշներ ինձմէ աւելի հաստատութեամբ, աւելի եռանդով քեզի կը ծառայէին, եթէ ինձի շահ շնորհք ընդունած ըլլային: Արդէն մեծ բարեք մը չէ քու Տկեղեցւոյդ մէջ ծնած ըլլալս. հապա հրշափ երախտագէտ ըլլալու պարտական եմ այն անզուգական շնորհքին համար, որով զիս աշխարհէ հեռացուցիր, եւ քու հոգւոյդ եւ քու խրատներդ համեմատ ապրելու համար ամէն օր եւ ամէն վայրկեան անհամար շնորհքներ կու տաս: Ի՞նչ ընելու եմ, որուն ղիմելու եմ այս ամէն երախտնաց փոխարէն մ'ընել կարենալու համար: Դուն ինձի միջոց մը, սպաստանարան մը պատրաստեցիր, ուրեմն քու Սրտիդ կը ղիմեմ: Բայց ափսոս, ինչ կ'ըսեմ. երկայն ժամանակէ ի վեր է որ զայն ինձի տուած ես եւ իմն է արդէն այս Սիրտը. բայց ինչպէս կ'ըլլայ որ այնքան հարստութեամբ հանդերձ զարձեալ աղքատ եմ. սիրոյ այսպիսի հնոցին միջեւ դեռ սառոյց եմ: Սէ ինչ կ'ուզեմ. ալ ինչ հրաշք կը մտայ քեզի, սիրտս շարժելու համար: Ախ, քու կողմանէդ որչափ ալ Աստուած ըլլաս, աւելի քան մը չէիք կրնար ընելուրեմն պակասութիւնն իմ կողմանէն է: Եօսէ, ո՛վ

Սիրտ Յիսուսի, իօսէ սրտիս. իօսէ սրտիս համար. արժեցնուր այն վէրքը ինձի համար կրած անընդհատ անձկութեանց խորհրդանշանը. եւ քու Հայրդ պիտի մոռնայ իմ խտորումներս, պիտի մեղմանայ եւ պիտի ներէ իմ երկարատեւ եւ յանցապարտ անտարբերութեանս:

Ի Բ. Օ Ր

Յիսուսի ամենաբարձր Սրտին բանբարեբը:

Մտիկ ընենք այն դանգառները՝ որ Յիսուսի ամենաբարձր Սրտէն կ'ելլեն. ասոնք ալ իւր սիրոյն նոր ապացոյցն են, վասն զի զմեզ սիրելուն համար կը գանգատի. եւ զմեզ կը սիրէ միմիակ մեր երջանկութեանը համար, առանց նկատողութեան առնելու իրենիցը, որ ոչ կրնայ նուազիլ մեր դատապարտութեամբն, եւ ոչ ալ աճիլ՝ մեր փրկութեամբը: Ո՛վ քրիստոնեայ ժողովուրդ, կ'ըսէ մեզի, ո՛վ ժողովուրդ իմ, ինչ պէտք էի ընել ձեզի, եւ ես չըրի: Ձիւնջ դուրս ել եւ եւ ոչ որբի. որբ ի՞նչ դուրս ելի: Ձձեզ ընտրեցի այն ազգերու մէջէն՝ զորոնք խաւարի մէջ, յաւիտենական մահուան շուքին տակ նստած թողուցի, մասնակից ընելու համար զձեզ ճշմարիտ հաւատքի անհամեմատ պարգեւին. իսկ դուք զայն անպտուղ թողուցիք ձեր անտարբեր հոգւոյն մէջ: Դուք գեղեցիկ որթատունկ մ'էիք, զոր իմ ձեռքովս տնկեցի, իսկ դուք դառնութիւն

միայն տուիք ինձի. վասն զի ծարաւած ժամանակս ինձի խմելու համար քացախ մատուակեցիք, եւ ձեր ապերախտութեամբն ուցրտութեամբը նիղակի երկաթէն աւելի խոցեցիք ձեր փրկչին կողմ: Չեղի համար արիւնս մինչեւ ցլետին կաթիլ թափեցի. իսկ դուք ինչ արժէք տուիք անոր, ինչ օգուտ քաղեցիք անկէ: Ես զձեզ իմ թագաւորութեանս եւ ժառանգութեանս կանչեցի. իսկ դուք ինձի իբրեւ արքայական ցուպ՝ եղեգ մը տուիք, իբրեւ վարսակալ՝ փշեայ պսակ մը, ձեր սրտին անհաստատութեամբը, ձեր անառակ բարուց ցուցամոլութեամբն ու հպարտութեամբը: Ես ձեր բնութիւնն առնելով՝ զձեզ մինչեւ աստուածութեանս հաղորդակցութեան բարձրացուցի. իսկ դուք, զիս խաչ հանեցիք ձեր վշտացուցումներով: Ես զձեզ շնուցի մանանայով՝ զոր ձեր նախաջրերը կերան եւ զանոնք մահուրնէ շարժիլեց, հապա այն երկինքէն իջած հացով՝ որ յաւիտենական կեանք կու տայ. իսկ դուք իմ խորհրդական մարմինս պատուեցիք մինչեւ անգամ ուրանալով այս անպատում բարերարութիւնը, որ հիացումն է հրեշտակաց: Դուք ամենքդ որ կենաց ճամբէն կ'անցնիք, դիտեցէք եւ տեսէք թէ կայ ցաւ մը նման ցաւիս, զոր կը զգայ Սիրտս այսպիսի ապերախտութենէ:

Աստուածային Փրկիչն դարձեալ կը դանդաղի իւր հաւատարիմ աղախնոյն՝ Մար-

գարիտա-Մարեմայ. «Ահաւասիկ, կ'ըսէ իւր Աստուածային Սիրտը բանալով, այս Սիրտն որ այնչափ սիրեց զմարդիկ, անոնց համար բան մը չինայեց, մինչեւ անգամ իր սէրն անոնց ցուցընելու համար հալեցաւ, մաշեցաւ. իսկ մարդկան մեծամասնութիւնը՝ ի փոխարէն երախտադիտութեան՝ ապերախտութիւն, անարգանք, անպատուութիւն, սրբապղծութիւն եւ ցրտութիւն հատոյց ինձի իմ սիրոյ խորհրդեանս մէջ: Սիրտս ակաւելի կը զգածուի, տեսնելով որ մեծաւ մասամբ ինձի նուիրուած սրտերն են ասոնք»: Ուրիշ անգամ մը, իւր պատուած եւ հարուածներով խոցուած Սիրտն անոր բանալով՝ «Ահա՛, ըսաւ, այն վէրքերը զոր իմ ընտրեալ ժողովուրդէս կ'ընդունիմ. ուրիշներ կը շատանան մարմնոյս վրայ զարնելով, բայց ասոնք իմ Սրտիս վրայ կը յարձակին, այս Սրտին՝ որ երբեք չէ դադրած զանոնք սիրելէ»:

Եղբօ՛ւկ, այս ապերախտ հօգիները մերինները չեն: Միթէ Յիսուս մեր վրայ չէ որ կը դանդաղի, մենք որ իրեն զինուոր գրուած ենք սուրբ մկրտութեամբ, եւ կը սնանինք իւր նուիրական մարմնով: Մենք թերեւս սուրբ Սրտին եղած նախատանաց հատուցում ընելու ընկերութեան մը անդամ գրուած ենք, սակայն որչափ ցուրտ, որչափ անտարբեր ենք այս աստուածային Սրտին: Ո՛հ, որ ավ իրաւունք ունի մեզի ըսելու մար-

գարէին բերնով. «Եթէ թշնամի մը պայպէս վարուէր ինծի, դարձեալ կը համբերէի. բայց իմ բարեկամներէս, իմ դաւակներէս, իմ սիրածներէս անարգութիւն, Լքութիւն»:

«Սիրտս կրնայ գանգատիլ այս (Գոհու-  
թեան) խորհրդոյն մէջ, ինչպէս կ'ընէր խա-  
չի վըպ, կը յաւելլու աստուածային վարդա-  
պետն իւր հաւատարիմ աղախնոյն, թէ՛ ան-  
մխիթար նշաւակ եղած է թշնամանաց եւ  
ցաւի: Այս Լքման մէջ քու եւ ջերմեռանդ  
հոգիներու փոքրամասնութեան քով մխի-  
թարութիւն մը կը փնտռէ. կը սպասեմ որ  
քու նուէրներովդ հատուցում ընես ինծի  
եղած նախատանաց»: Ա՛խ, եթէ այսօր լսենք  
իւր գանգատներու եւ ցաւերու ձայնը,  
չխտացընենք մեր Սիրտը. Այսօր եթէ յայնի  
նորս Լէյնէ, ֆի իստոյնցանէր զօրոս յեր:  
Երջանիկ կ'ըլլանք եթէ Յիսուսի ամենասուրբ  
Սիրտը հաճի զմեզ ընտրել, ինչպէս երբեմն  
իւր առաքեալները, իրեն հատուցում ընելու  
եւ մխիթարելու այն Լքման փոխարէն՝ որով  
կը Լքանեն զինքն այնքան ապերախտներ:  
Այս սիրելի Սրտին հանդէպ ջերմեռանդու-  
թիւննիս կրկնապատկենք եւ հաստատու-  
թեամբ խոստանանք իրեն որ իւր շնորհաց  
օգնութեամբը զինքը պիտի չթողունք:

Հրահուէ: Մտածական աղօթքի մէջ է՝ որ  
կրնա՞ս սորվիլ թէ որչափ սաստիկ եղաւ Յիսու-  
սի ամենասուրբ Սրտին սէրն առ քեզ, եւ թէ  
ինչպիսի ապերախտութեամբ իրեն փոխարէն ըրիք:

Այս ծանօթութիւնը ցաւ եւ սէր յառաջ պիտի  
բերէ ի քեզ, եւ զքեզ կարող պիտի ընէ Յի-  
սուսի համար ամէն բանի ձեռնամուխ ըլլալու:  
Արդ՝ որ մի անցըներ առանց գտնէ քաւորդ ժամ  
մը մտածականի: Ասիկայ փրկութեան ամենէն  
ազդեցիկ միջոցներէն մին է. այնպէս որ Ս. Թե-  
րեզիա չի վախնար ըսելու՝ որ մտածական աղօթքի  
հաւատարիմ անձին յարատեւութեանը կ'երաշ-  
խաւորէ եւ թէ ընդ հակառակն անոնք որ ան-  
փոյթ կը գտնուին այս սուրբ կրթութեան, պէտք  
չունին սատանաներու որ զանոնք դժօխք քաշ-  
քընն, որովհետեւ անոնք անձամբ արդէն հոն կը  
դիմեն: Միթէ Ս. Գիորջն չ'ընէր որ երկիրս անա-  
պատ է եւ լի չարեօք, վասն զի՝ չկայ մէկն որ  
խօրհի եւ իւր սրտին խորքը մտնէ. Ապա-  
ստոստութեան իմաստը երբեք չի տեսնուիր:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անպարտ Սիրտ Մարեմայ, աղօթեա՛ս վասն մեր:  
Մշացական աղօթք: Ո՛վ ամենասուրբ Սիրտ  
Յիսուսի, ցուցուր այս աշխարհիս վրայ սա հրաշ-  
քը, որ իմննիս պէս ապերախտ սիրտ մը, քու  
սիրովը հրավատ սրտերէն մին ըլլայ:

Այցեղութիւն ամենասուրբ Հայրապետացի:  
Ո՛վ Սիրտ Յիսուսի, դուն որ այնքան կը սիրես  
զմեզ եւ մեզի այնքան կ'առատանաս, միթէ  
կրնաս իմննիս պէս սիրտ մը սիրել, սիրտ մը  
որ այնչափ ապերախտ է եւ իւր երանատագի-  
տութեան արտայայտութեանը մէջ այնքան ա-  
զահ: Բայց նշը կ'ըսեմ. միթէ զքեզ սիրելու, քու

բարեբարութիւնները ծանշալու փորձ մ'ըրի ցայսվայր: Դո՛ւն, ո՛վ պաշտելի Սիրտ, զիս սիրեցիր մանկութեանս անմեղութեան ժամանակը. իսկ ես այն ատենէն ի վեր կանխելով բանաւորութիւնս, փոխանակ սիրոյդ փոխարէն սէր հատուցանելու՝ զքեզ վշտացուցի: Դուն զիս սիրեցիր առանց միտ դնելու յանձնապատանութեանս, քարկացոտութեանս, անհաստատութեանս, երիտասարդութեանս կոյր կիրքերուն, իսկ ես, փոխանակ քեզի դիմելու, եւ կենացս ամէնէն պատուական ժամանակը քեզի նուիրելու, զայն արարածներուն նուիրեցի: Դուն զիս սիրեցիր շայելով որ ես բոլորովին անձնատուր եղած եմ շահադիտական հաշիւներուս եւ փառասիրութեանս յագուրդ տալու, որոնք հասուն հասակիս մէջ բոլորովին խափանեցին զիս քու վրադ մտածելու. քեզմով զբաղելու: Եւ երբ վերջապէս կենացս վերջին սահմաններուն հասած, այլ խոնջած խոտորումներէս, զամ եւ քու ծոցդ ապաստանիմ՝ իբրեւ ապահով նաւահանգիստ մը շատ մը փոթորիկներէ վերջը, դուն դարձեալ զիս չես մերժեր, չես ծամբեր զիս այն աշխարհքը՝ որ այլ եւս ինձի խոստանալիք բան մը չունի եւ ինքադրութիւնները վայելելու իբրեւ անկարող կը վրձնէ զիս:

Ո՛վ Սիրտ Յիսուսի, անարժան եմ ես քու սիրտդ մտնելու, քու վէրքիդ մէջ բնակելու. այսու ամենայնիւ կը համարձակիմ ինչոքել քեզմէ՝ որ իմ այնքան երկարատեւ մոռացմանս, ապերախտութեանս համար ինձմէ վրէժդ լուծես. քայց վրէժդ լուծէ աստուածաբար. ցուցուր այս աշխարհիս վրայ սա հրաշքը թէ իմինիս պէս այնքան երկայն ատեն, այնքան մեծապէս ապե-

րակտ սիրտ մը, քու սիրովդ ամէնէն հրավառ. սրտերէն մին ըլլայ: Տէր, արդարութիւնն այս չէ. վասն զի դուն իսկ ըսիր. Ո՛վ աւելի սիրելու պարտական է, եթէ ոչ անիկայ՝ որուն աւելի թող տրուած է:

### ԻԳ. Օ Բ

Հրահանգ է պարտութեանս Սրտին Յիսուսի:

Աստուած իւր Որդւոյն արժանիքն ու արիւնը նկատի առնելով՝ մեր կենաց ամէն վայրկեանը կը բաշխէ մեզի իւր շնորհքները, որով առիթ կ'ընծայէ մեզի յաւիտեանակա՛նութեան համար այնչափ դանձեր ժողովելու: Սակայն պէտք է խոստովանիլ որ ամէն օր զանցառութեամբ մեծամեծ կորուստներ կ'ընենք, մեր շատ մը գործողութիւններն կը կորսնցընեն իրենց արժէքն ուղիղ դիտաւորութեան պակասութեամբ: Ելլելու է վերջապէս այս թմբբութեան վիճակէն. եւ մեր գործողութիւններն արդիւնաւոր ընելու լաւ միջոցն է հետեւեալ հրահանգը գործածել, զոր Պլոզիոս կը սորվեցընէ մեզի:

Այս հրահանգն է, կ'ըսէ. ձեր բարեգործութիւններն եւ ամբողջ ձեր գործքերն Յիսուսի քաղցրագութեւ՝ ամենասուրբ Սրտին նուիրել, որպէս զի անոնք գտուին, մաքրուին այս աստուածային Սրտով. վասն զի այս Սիրտն այնքան սէր եւ գորով ունի մեզի, որ

միշտ կազմ եւ պատրաստ է իրեն արժանաւոր եղանակաւ կատարելագործելու այն բարին զոր դրած է ի մեզ :

Երանելին Մարգարիտա - Մարիամ իրեն խորհուրդ հարցընող անձի մը պատասխանելով՝ միեւնոյն խորհուրդը կու տայ . « Աստուծոյ ծառայութեան մէջ թոյլ կեանք մ'անցընելուդ վըայ կը արտմիս . ահաւասիկ թէ ինչ խորհուրդ ունիմ քեզի տալիք . երբեք մի խռովիր . զԱստուած այս նկատմամբ գոհացընելու համար ամբողջ ընելի բաներդ Յիսուսի ամենասուրբ Սրտին հետ միացուր . գործողութեանդ սկիզբը՝ որքամարտիւն ունենալու եւ վերջը բաւականարարութեան համար : Գիցուր թէ մտածական աղօթքի մէջ բան մը չես կրնար ընել , շատացիր մատուցանելով այն աղօթքը զոր այս աստուածային Փրկիչն մեզի համար կ'ընէ Գոհութեան Ս . խորհրդոյն մէջ , նուիրելով անոր բուռն եռանդը մեր գաղջութիւնը դարմանելու համար , եւ ըսէ իւրաքանչիւր գործողութեանդ մէջ . Աստուած իմ , ասիկայ կ'ընեմ կամ կը կրեմ քու աստուածային Արդարոյդ ամենասուրբ Սրտին մէջ եւ իւր սուրբ դիտաւորութեանցը համեմատ , զոր կը նուիրեմ քեզի իմիններուս մէջ եղած թերին եւ անմարտերն դարմանելու համար : Մէկ խօսքով՝ այս Սիրտը պիտի լրացընէ քու կողմանէդ եղած թերին , վասն զի անիկայ զԱստուած քեզի համար պիտի սիրէ , եւ

դուն ալ զանիկայ պիտի սիրես ի նմա եւ նովաւ » :

Օր մը որ Ս . Գերդրուտա կ'աղօթէր եւ ճիգեր կ'ընէր այս սուրբ կրթութիւնը մտադրութեամբ կատարելու համար , մարդկային տկարութեան հետեւութեամբ անընդհատ մտաց ցրումներ կ'ունենար , որով խոր վշտանալով ինքն իրեն կ'ըսէր . Ափսոս , ինչ պտուղ կրնայ յուսացուիլ այսպիսի մտաց ցրումներով եղած աղօթքէ : Այն ատեն Յիսուս զինքը մտիթարելու համար , իւր Սիրտը ցուղենքը մտիթարելու համար , իւր Սիրտը ցուղենքը մտիթարելու համար , իւր Սիրտը ցուղենքը մտիթարելու համար , իւր Սիրտը ցուղենքը մտիթարելու համար . ես ասիկայ քեզի կ'ընծայեմ որպէս զի զայս գործածես թերիդ լրացընելու համար . վստահութեամբ անոր յանձնէ ամբողջ գործառնութիւններդ , ասիկայ զանսնք իմ աչքիս ախորժեղի կ'ընէ . Սիրտս ալ այսուհետեւ միշտ պատրաստ է քեզի ծառայելու եւ ամէն ժամ քու զանցառութեանցդ պակասը պիտի լրացընէ :

Օգուտ քաղէ այս հրահանգէն . ուստի եթէ բան մը կը սիրես , աղօթք կամ գործ մը կ'ընես , նեղութիւն կը կրես , սիրէ , աղօթէ , աշխատէ , տառապէ Յիսուսի ամենասուրբ Սրտին չարչարանաց , աշխատութեանց , աղօթից հետ միանալով . ալ աւելն՝ երբ յանցանք մը գործես , խոնարհելէդ ետեւ , զնա Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ անքու մըլութեանդ հակառակ առաքինու-

Թիւնը, զոր օրինակ խոնարհութիւն, եղբայր-  
սիրութիւն, համակերպութիւն, ընկերին  
պակասութեանցը համբերատարութիւն, եւ  
զայն մասո՞յ յաւիտենական Հօր ի քառութիւն  
մեղացոյ: Ասիկայ կարճ եւ դիւրին միջոց մըն  
է պարտքդ կատարելու այն պահուն՝ որ  
պարտական կը մնաս, եւ արժանեաց ան-  
սահման դանձեր ստանալու: Ասիկայ երա-  
նելի Մարգարիտա - Մարեմայ սովորական  
հրահանգն էր: Գուն ալ անոր պէս պարզա-  
պէս Յիսուսի ամենասուրբ Արտին դիմէ եւ  
ըսէ՛ իրեն ինչալէդ վերջը. «Ո՛վ Տէր, կը  
տեսնես սա գործած մեղքս, հատո՞ կը  
խնդրեմ», քու աղքատ գերեզոյդ համար: Իրիկունը  
ցերեկուան բոլոր գործառնու-  
թիւններդ այս պաշտելի Արտին մէջ դիր,  
որպէս զի մաքրէ մէջը դանուած թերին:

Հոհ-նէ: Եթէ կ'ուզես մեղքէ գգուշանալ  
եւ գործքերդ արդիւնաւոր ընել, ջանա՛ որ դիտա-  
ւորութիւնդ ուղիղ ըլլայ. գործողութեանցդ  
սկիզբն ու վերջը սլացական աղօթք մ'ուղղէ  
Յիսուսի ամենասուրբ Արտին, եւ ալ այնու-  
հետեւ հոգ մի ընէր: Գիտուսի ամենասուրբ Սիրտը  
անոնց պակասութիւնը յօժարութեամբ կը լրա-  
ցընէ: Չանա՛յ յարատեւել այս հրահանգին մէջ,  
եւ կը տեսնես որ քիչ ժամանակուան մէջ Յի-  
սուսի ամենասուրբ Արտին մեծ ջերմեանդու-  
թիւն կ'ուեննաս, եւ իւր սիրովը հրավառ խելքդ  
ու՛ միտքդ զինքը հաճեցընելու կը զբաղի: Այս  
չափ ազդեցիկ հրահանգով է որ այնչափ Սուրբեր

եւ Սրբուհիներ՝ կատարելութեան գագաթը հա-  
սած են:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մագսական աղօթք: Ես կը քնամամ, եւ քու  
Սիրտդ, զոր կը ներես ինձ իմինս կոչելու. կը  
հսկէ ինձի համար, իմ վրաս. իմ մէջս: Ես հնչեմ,  
եւ սիրտ իմ ալթուռն կայ:

Այցերութիւն ամենասուրբ Հաղորդութեան:

Քու Սիրտդ է ով Յիսուս իմ, որ կը հսկէ մինչ-  
դեռ ես Աստուծոյ բարեկամաց՝ քաղցր-քունով կը  
հանգչիմ, այն քու Սիրտդ՝ զոր կը ներես ինձ  
խոնկաւ կոչելու: Իս կը քնամամ. եւ քու Սիրտդ  
կը հսկէ, երբ իմ թշուամիներուս ամէնէն սաստիկ  
յարձակմանց միջեւ, պատերազմած ժամանակս  
սա հաստատուն յոյսն ունիմ՝ թէ դուն պիտի  
յաղթես, եւ երբ ես քու վրտդ կը վստահիմ իմ  
ժգամցս յաջողութիւնը: Ես կը քնամամ, եւ քու  
Սիրտդ արթուն կը կենայ, երբ այս աշխարհիս  
խաբեպատիր ուրախութիւններէ հրապուրուած՝  
որոնք մեզի նկուր կ'ըսեն ինձի, աշուղներս  
փակած քու վերքիդ մէջ կ'ապաստանիմ: Այն  
ընդունայնութեանց՝ նայուածքները մէկ կողմ  
ընելով՝ որոնցմէ քու հրապոյրներդ առանց ծիգի  
կ'անջատեն զիս. ես կը քնամամ, եւ քու Սիրտդ  
արթուն կը կենայ, երբ այս աշխարհիս ծախոր-  
դութիւններէ ընկժամ՝ ամէն յոյսերու տապալ-  
ման, ամենասիրելի զօղերու կսկծելի խզման,  
հայհոյութեանց, անարգանաց, հակառակութեանց,  
ամէն արարածներէ լքեալ վիժակն մէջ, եւ  
իբրեւ մնագայ կը մնամ, սիրտս եւ կամքս քու



վրադ հաստատուած: Ո՛վ Սիրտ Յիսուսի, ո՛վ Սիրտ իմ, ո՛վ Սիրտ Աստուծոյ իմոյ, միշտ հսկէ այնպէս, եւ ըրէ որ քնանամ խաղաղութեամբ քու վերջերուդ մէջ: Ծովինք ալ ես քեզմէ զատ ուրիշ բնակարան, հանգստեան ուրիշ վայր չեմ ուզեր:

### Ի Գ. Օ Բ

Սուրբերո՛ւ Յիսուսի առնասուրբ Սրտին ունեցած ջերմ-անդամ-իտիւնը:

Չկայ այնչափ աղքատ մէկը՝ որ տեղ մը չունենայ իւր բնակութիւնը հաստատելու համար: Թուշուններն անգամ իրենց բոյներն ունին, եւ աղուէսներն իրենց որջերը, ինչպէս կ'ըսէ Տէրն մեր. պէտք չէ որ քրիստոնեայ մը առանձին առանց բնակարանի թափառաշրջիկ ըլլայ աշխարհիս վրայ: Բայց ո՞ր աւելի աղէկ կրնայ հաստատուիլ եթէ ոչ Յիսուսի ամենասուրբ Սրտին մէջ, որ ինքնակալաց բոլոր պալատներէն աւելի վեհ, աւելի փառաւոր եւ աւելի սուրբ է: Սուրբերն այս բանը շատ աղէկ գիտնալով՝ հոս կը հաստատէին իրենց բնակութիւնը: Ս. Բոնավենտուրա սուրբ փափագ մ'ունէր այն նիզակին՝ որ բացաւ մեզի այդ պաշտելի Սիրտը եւ կ'ըսէր որ եթէ ինքը նիզակին տեղն ըլլար, երբեք անկէ դուրս չէր ելլեր: «Եթէ զիս գտնել կ'ուզես, կը գրէր Ս. Եղիազար Սրբուհի Դեղձիկնէի, փնտռէ զիս Յիսուսի

Քրիստոսի կողին...վերջին մէջ. այս է իմ բնակավայրս»:

«Այդ վերջին մէջ բնակիլ սորվեցէք, կ'ըսէ Լանբերթ: Եթէ հանգիստը կը սիրէք, անիկայ հարսին շուշաններով եւ վարդերով լի անկողինն է: Եթէ կ'ուզէք ձեր իղձերը յայտնել եւ ի ըյս ածել ձեր բարեգործութիւնները, անիկայ է աղանոյ բոյնը: Եթէ կը սիրէք մտաց ամփոփումը, անիկայ է մեռակեաց ճնճղուկի առանձնարանը: Եթէ կը սիրէք արտասուքն ու հառաչանքը, հոս է որ տատարակը կը թնդացընէ իւր մնջիւնները: Եթէ անօթի էք, հոս պիտի գտնէք երկնից մանանան, որ անապատի մէջ կը տեղայ. եթէ պապակած էք, հոս պիտի գտնէք կենդանի ջրոյ աղբիւրը, որ արքայութենէն կը բղխի եւ հաւատացելոց սրտին մէջ կը տարածուի առատօրէն: Բնաւ մի վախանք, թէ լաւ ընդունելութիւն չ'ըլլար ձեզի, անշուշտ գիտէք այն գագուանքները՝ զոր Որդին Աստուծոյ զինքը մեծ արողներուն կ'ընէ: Անիկայ զանոնք կը հրաւիրէ մեղմով հանգչելու իւր Սրտին վրայ, Ս. Յովհաննէսի պէս. անոնց կը ցուցընէ իւր բացուած կողը ինչպէս Ս. Թովմայի, եւ այս աղբիւրէն խմել կու տայ անոնց: (Նո՛ւէ):

«Մօտենանք, կ'ըսէ Ս. Բեռնարտոս, մօտենանք Յիսուսի. ցնցուինք, ուրախութենէ յափշտակուինք՝ յիշելով իւր Սիրտը: Ո՛հ, ի՞նչ բարի է, ի՞նչ վայելուչ է այս Սրտին

մէջ բնակիլ: Պիտի պաշտեմ՝ եւ գովեմ Տեառն անունը այս տաճարին մէջ, այս սրբոց սրբոյն մէջ, այս տապանակին մէջ ըսելով թագակապ Դաւթին հետ. Գոսայ սիրտ մը Աստուծոյ աղօթելու համար, եւ այս Սիրտը թագաւորիս, եղբօրս եւ շատ քաղցր բարեկամիս՝ Յիսուսին Սիրան է:

“Ո՛վ քաղցրագութ Յիսուս, այս քու Սիրտդ գտնելով՝ որ իմն ալ է, զքեզ պիտի պաշտեմ, զքեզ, ո՛վ Աստուած իմ: Ընդունէ աղօթքս այս քաւութեան սրբարանին մէջ. նա մանաւանդ զիս բուրբովին քու Սրտիդ մէջ քայէ: Ո՛վ Յիսուս, երկրիս ամէն գեղեցկութիւններէն հազար անգամ աւելի գեղեցիկ, աւելի սիրելի, լուս՝ զիս անօրէնութիւններէս, մաքրէ զիս մեղքերէս, որպէս զի կարող ըլլամ քեզի մտննալ եւ կենացս ամէն օրը քու Սրտիդ մէջ բնակիլ. վասն զի Սիրտդ վերաւորուեցաւ, մեղի ապահով առանձնարան մը մատուցանելու համար: Այո՛, Սիրտդ բացուեցաւ, որպէս զի գործոց տագնապէն ազատած՝ հոն կարենանք բնակիլ: Ո՛վ պիտի չտիրէ ուրեմն այս խոցեալ Սիրտը. ո՛վ պիտի չբորբոքի հրով անոր համար, որմէ այնքան սիրուեցաւ: Իսկ մենք, դեռ մարմնոյ կապերով կապուած՝ ըստ կարելոյն փոխարէն ընենք, սիրենք զրկենք աստուածային վարդապետը, որ մեղի համար վերաւորուեցաւ, եւ որուն ձեռքերը, ոտուրներն ու Սիրտը ծակեցին ամպարիշտ դահիճ-

ները. անդադար չովը կենանք, որպէս զի մեր դեռ կարծր ու խրոխտ սիրտը տէգերով խոցուի եւ իւր սիրոյն շղթաներովը կապուի:՝

Անկլանսովացի Ս. Թովմաս սապէս կը բացատրէ Մարգարէին հետեւեալ խօսքը. “Ճնճղուկն իւր բնակութիւնն ունի եւ տատախը բոյն մը՝ իւր ձագերը դնելու համար: Ինչպէս որ աստուածային Որդին իւր Հօրը ծոցին մէջ հաստատած է իւր բնակութիւնը, այսպէս Եկեղեցին իւր բոյնը իւր սիրեցելոյն Սրտին մէջ հաստատած է, մտնելով անոր սուրբ կողին բացուածքէն, հոն խաղաղութեամբ կը հանգչի, հոն կը պահէ իւր զաւակները փոթորիկներէ ապահով: Սրբազան խորան, անտեսանելի առանձնարան, ուր մեջոյ տատրակը կը պատուարէ իւր ձագերը մինչեւ այն օրը, յորում իրենց թեւերը պարզելով՝ անմահութեամբ պիտի զգեստաւորեն այս ապականացու մարմինը:՝

Տէրն մեր յայտնեց երանելի Մարգարիտա-Մարեմայ, որ Ս. Փրանկիսկոս Ասիղացի առանձինն եղանակաւ միացած էր իւր աստուածային Սրտին եւ առանձինն կարողութիւն ունէր անկէ շնորհքներ ստանալու: Ս. Փրանկիսկոս Սայեզացին իւր բովանդակ կենաց մէջ Յիսուսի Սրտին մէջ բնակութիւնը հաստատած էր, ուր իւր հանգիստը ամէնէն մեծ զբաղումներով իսկ չէր վրդովեր: Պէտք պիտի ըլլար յառաջ բերել գրեթէ ամբողջովին Ս. Գերդրուտայի եւ Ս. Մաթիլաէի

պատմութիւնները, եթէ ուզէինք յիշել այն տեղերը՝ ուր ասոնք Յիսուսի ամենասուրբ Սրտին վրայ կը խօսին: Ուրիշ շատ մը Սուրբեր ալ երանելի Մարգարիտա - Մարեմայ յայտնուելէն իսկ յառաջ առանձինն Չերմե-  
ռանդութիւն մ'ունէին այս պաշտելի Սրտին:

Հրահանգ: Եթէ առաքեալներու պէս չես կրնար քարոզել զՅիսուս քրիստոս հեռաւոր երկիրներու մէջ, կրնաս գոնէ բարեկամներուդ սրտին մէջ քարոզել. այս թող ըլլայ առաքելութիւնդ: Գարտական ես ծառաներուդ սորվեցնելու: Աստուած անոնց հոգւոյն համարը քեզմէ պիտի պահանջէ: Գիտցիր որ այս պաշտօնդ քիչ արդիւնաբեր չէ:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմանց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր:

Մշտնջալիս աղօթք: Ո՛վ երջանիկ ընակիչք երկնից, դուք որ Յիսուսի Սիրտը բաց կը տեսնէք, եւ անընդհատ եւ անոսնց անհաստատութեան վախի զինքը կը սիրէք: Երէք որ ես ալ զինքը զանշամ եւ սիրեմ ձեզի պէս ի՛ յաւիտեանս:

Այցեդրութիւն ամենաստուրք հաղորդութեան:

Ո՛վ սուրբք երկնից, ո՛վ արդարք աշխարհիս, ուրախութեամբ կը խոնարհիմ ձեր առջեւ. կը բարձրամ ալս աշխարհիս բոլոր ուրախութիւններովը, բոլոր դառնութիւններովը հատուցում ընել ստանալու համար ձեր սիրտը լեցընող սիրոյն միայն մէկ աստիճանը. լսեցէք զիս, օրհնեցէք

զիս, պաշտպանեցէք զիս. ձեր բարեխօսութեամբն տարէք զիս ձեր հասած տեղը. զիս ալ ձեզի պէս Յիսուսի Սրտին սիրոյն ծածկեալ մարտիրոսն ըրէք:

Ո՛վ սէր, դուն որ բոլորեցեալ ամենայն սրբոց միացեալ սրտերուն մէջ, իմնիս մէջ ալ բորբոքէ: Ո՛վ Յիսուս, ինչ երջանիկ եմ անոնք, որ զքեզ կը ծանշան, զքեզ կը սիրեն եւ քեզի կը ծառայեն այս աշխարհիս վրայ. անոնք որ այս արտօնքէն ետեւ զքեզ առանց շղարշի կը տեսնեն, եւ զքեզ կը սիրեն այն սիրով զոր դուն իսկ կը վառես անոնց Սրտին մէջ այնպիսի հրով մը զոր անկարելի է ըմբռնել այս աշխարհիս վրայ. մաքուր անընդհատ սէր մը, որուն շիջանիւր տեսնելն ամենեւին չեն վախճար: Ո՛հ, ինչ ուրախութիւն եւ մեծախոնութիւն է ինձ այս անկարողութեանս մէջ. եթէ իմ սիրտս չէ, գոնէ կան սրտեր որ զքեզ կը սիրեն՝ ոչ թէ ըստ քու արժանեացդ այնքան կատարելապէս՝ որուն կը բաղձային, հապա որջափ արարած մը կարող է սիրելու: Երջանիկ սրտեր: Ե՞րբ պիտի ըսես իմնիս որ անոնց օրինակին հետեւի: Ա՛խ, մի թողուր որ այս շնորհքէն յառաջ մեռնիմ, առանց որոյ կեանքն ոչինչ է ինձ համար: Դուն որ այնպիսի իրեր կը կենդանացընես, որ չկան, իմ սիրտս ալ կենդանացուր, որովհետեւ չունիմ. սուր անկէ ինձի հատ մը, առիւծի սիրտ մը թշամոյն ղիմադրելու, երկաթեայ սիրտ մը որ ալ երբեք չծոխ. բոցեղէն սիրտ մը որ քեզի համար վառելէ երբեք չզառոյ:

Ի Ե. Օ Ր

Յիսուսի աւանդութիւն Սրտին պատկերներն  
վրայ<sup>1</sup>:

Սիրողը կերպով մը կը մխիթարուի իւր  
բարեկամին բացակայութեան միջոցին՝ դի-  
տելով անոր կենդանագիրը. հետը կը կրէ  
զայն՝ գորովով կը համբուրէ, ստէպ վրան կը  
նայի: Մենք ալ այսպէս ընենք Յիսուսի  
Սրտին նկատմամբ: Ջերմեռանդն Լանբէրժ  
կ'ըսէ. «Ջերմեռանդութիւննիդ վառ պա-  
հելու համար, այս պաշտելի Սրտէն պատկեր  
մ'ունեցէք, զետեղեցէք զայն այնպիսի տեղ  
մը՝ ուր կարենաք զայն ստէպ տեսնել, որպէս  
զի անոր տեսքը բորբոքէ ի ձեզ աստուա-  
ծային սիրոյ հօւրը, համբուրեցէք այս պատ-  
կերը այն ջերմեռանդութեամբ իբր այն թէ  
Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ Սիրտն ըլլար.  
ժող. հոգւով մինչեւ այս աստուածացեալ  
Սրտին մէջ, եռանդեամբ հոն գրոշմելով  
ձեր սիրտը, հոգինիդ ամբողջովն մէջը

<sup>1</sup> Ով որ այցելութիւն ընէ եկեղեցւոյ կամ ա-  
ղօթարանի մը մէջ եւ կամ խորանի մը վրայ հա-  
տարակաց մեծարանաց համար գրուած Յիսուսի ա-  
մենասուրբ Սրտին մէկ պատկերին եւ հոն ժամանակ  
մը աղօթէ Սրբազան Քահանայապետին գիտաւո-  
րութեանը, ամէն անգամ 7 տարւան եւ 7 քառա-  
սուրբի ներողութիւն կը վասակի, որ կրնայ քա-  
ւարանի հոգւոց ալ մերձեցուիլ: (Պիոս Զ. 1799)

թաթխելով՝ փափագելով որ հոգինիդ հոն  
ընկղմի, ջանալով որ ձեր սրտին մէջ ձգէք  
այն հոգին որ կը կենդանացնէ Քրիստոսի  
հոգին, անոր շնորհքները, անոր առաքի-  
նութիւնները, մէկ խօսքով ինչ որ այս սուրբ  
Սրտին մէջ փրկուէտ եւ գերբնական բան մը  
կայ. վասն զի Յիսուսի ամենասուրբ Սիրտն  
ամէն բարեաց առատ ակնաղբիւն է<sup>2</sup>:

Եթէ այս հրահանգը փրկուէտ չըլլար,  
միթէ Եկեղեցին պիտի սորվեցնէր պատ-  
կերաց պաշտօնը: Ս. Թերեզիա իրեն բնածին  
պարզութեամբը սապէս կ'ըսէ. «Առարկա-  
ները մտքիս առջեւ բերելու շատ քիչ յա-  
ջողակ ըլլալուս՝ չափազանց կը սիրէի պատ-  
կերները: Ո՛հ, ի՛նչ դժբախտ են անոնք որ  
իրենց յանցանքովը կը կորսնցնեն այն օ-  
գուտները՝ զոր կրնային անկէ քաղել: Ա՛հ-  
րեւայ թէ չեն սիրեր զՏէրն մեր. վասն զի  
եթէ զինքը սիրէին, պիտի ուրախանային  
անոր կենդանագիրը տեսնելով, ինչպէս որ  
աշխարհիս վրայ մարդս ուրախութիւն կը  
զգայ իւր սիրած անձինքը գիտելով<sup>3</sup>:

Բայց չկայ բան մը՝ որ աւելի կարող ըլլայ  
ի մեզ բորբոքելու Յիսուսի ամենասուրբ  
Սրտին պատկերներուն մեծարանքը, ինչպէս  
այն հաճոյքը զոր կը զգայ Յիսուս իւր պատ-  
կերը մեծարուած տեսնելով: Ահա թէ ինչ  
կը պատմէ այս նկատմամբ Մարգարիտա-Մա-  
րիամ. «Ս. Յովհաննէս Աւետարանչի տօնին  
օր մը, Ս. Հաղորդութենէն վերջը, Յիսուսի

ամենասուրբ Սիրտն ինձի երեւցաւ հրեղէն եւ բոցեղէն գահի մը վրայ, որուն ամէն կողմէն արեւէն աւելի շողշողուն ճառագայթներ կը ցայտէին: Խաչի վրայ ընդունած վէրքը կ'երեւար տեսնելի եղանակաւ, այս սուրբ Սրտին շուրջը փշեայ պսակ մը, իսկ վրան խաչ մը կար: Աստուածային Փրկիչս ասով ինձի յայտնեց որ չարչարանաց այս գործիքները կը նշանակէին թէ՛ իւր Սրտին առ մարդիկ անհուն սէրը ամէն տանջանաց աղբիւրն էր, թէ՛ իւր մարդեղութեան առաջին վայրկենէն սկսեալ այս բոյր շարչարանքներն ու բովանդակ անարգանքները իրեն աչքին ներկայ էին. թէ այս վայրկենէն ի վեր խաչը տնկուեցաւ իւր Սրտին մէջ, թէ այն ատենէն ի վեր ընդունեցաւ ամբողջ ցաւերն եւ ամբողջ անարգանքները՝ զոր իւր սուրբ մարդկութիւնն պիտի կրէր իւր մահականացու կենաց ընթացքին մէջ, ինչպէս նաեւ այն թշնամանքները՝ որոնց ինք զինքը կ'ենթարկէր իւր մարդկան ունեցած սէրը՝ մինչեւ ցկատարած աշխարհիս Ս. Հաղորդութեան մէջ անոնց հետ բնակելով: Փրկիչս զիս ապահովցուց թէ մեծ հաճոյք կը զգայ տեսնելով որ իւր Սրտին եւ սիրոյն ներքին զգածումներն այս մարմնեղէն Սրտի ձեւին ներքեւ կը մեծարուին այնպէս՝ ինչպէս որ ինձ ցուցուցած էր բոցերէ շրջապատեալ, փշով պսակեալ եւ վրան խաչ մը՝ եւ թէ կ'ուզէր որ ասոր պատկերը հասարա-

կաց ի տես գրուի որպէս զի մարդկան անզգայ սիրտը շարժէ. նմանապէս ինձի խոստացաւ որ իւր պատկերը մեծարողներուն սրտին առատութեամբ պիտի հեղու շնորհաց գանձերը՝ որով լցեալ է իւր Սիրտը, եւ թէ ուր որ այս պատկերը ի տես գրուելու ըլլայ առանձինն եղանակաւ մեծարուելու համար, հոն պիտի ընու ամէն տեսակ օրհնութիւններով:

Հրահանգ: Ար պատմուի որ Անտիոքայ բնակիչները յամին 528, մեծ երկրաշարժ մը խափանեցին, գրեւով իրենց աներու գանձերուն վրայ սա խօսքը՝ որ յայտնուած էր սոյն քաղքին բնակիչներէն մէկուն. Քրիստոս ընդ էր Կրիստոս: Յիսուսի ամենասուրբ Սրտին պատկերը սրտերնուս վրայ կրենք եւ մեր ամէն փորձութեանց մէջ փրկութեան թշնամին առ ոչինչ գրելով պիտի կարենանք ըսել. — Յիսուսի ամենասուրբ Սիրտն ինձի հետ է, կեցիր: — Բայց բաւական չէ միայն այս սուրբ պատկերը մեծարել: Քանի որ ամպարշտութիւնն աներեւոյթ ընել կ'ուզէ մեր հաւատքին արտաքին նշանները, ուրմն բարեպաշտութիւնն ալ պէտք է որ անոնց պատիւ տայ: Այնպէս ընելու է որ չգտնուի հաստատութիւն մը, հասարակութիւն մը, վանատուն մը, ուր Յիսուսի ամենասուրբ Սիրտը զետեղուած չըլլայ իւր զենման խորանին՝ խաչին քով: Զանալու է որ իւրաքանչիւր եկեղեցի այս պաշտելի Սրտին նուիրեալ խորան մ'ունենայ:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարմնայ, աղօթեսի վասն մեր:

Միացական աղօթք: Վստահութեամբ դիմենք շնորհաց գահին՝ Յիսուսի ամենասուրբ Սրտին, որպէս զի ողորմութիւն գանենք եւ շնորհք ի հարկատուութեան: Մատիցոռք աշտուհեանն համարձակութեամբք առաջի աթոռոյ շնորհացն անրա, զի ընկալցոռք զողորմութիւն եւ զոցոռք շնորհս ի դէպ ժամանակի օգնականութեան:

Այցեպատիւն ամենասուրբ Հաղորդութեան:

Կը պատմուի որ քու առաքեալներուդ շուքն անգամ կը բուժէր հիւանդները. պարտ է ուրեմն զարմանալ թէ ոչ միայն քու Սիրտդ՝ հապա պատկերդ իսկ կարող է հոգիներու հիւանդութիւնները բուժելու: Որդիք մարդկան յաղթութեան վստահութիւնն զրած են իրենց հնարագիտութեան, պատերազմի մեքենաներու, ակերծ զէնքերու, հեծելազօրի մարդութեան, սպառազինութեան վրայ. քայց մենք, ո՛վ Յիսուս, քու Սրտիդ վրայ կը դնենք մեր յոյսը, այս նշանաւ է որ պիտի յաղթենք: Վտանգներու, փորձութիւններու, կենաց անձկութիւններու, վճատութեան, յուսահատութեան վիճակներու մէջ քու Սրտիդ պիտի նայինք, վստահութեամբ շնորհաց աթոռին պիտի դիմենք. եւ քու ողորմութիւնդ պիտի չկարենայ մերժել մեր թախանձանքները. եւ քու վէրքիդ մէջ պիտի գտնենք հոգւոյն Սրբոյ մշիթարութիւնը, մեր տկարութեանց դէմ ամէնէն ազդեցիկ օգնութիւնը եւ վերջապէս զօրութիւն մեր անկարողութեանց դէմ:

### Ի Զ . Օ Ր

Ամեն...-ըք Սրտին ջնջարիտ ջնջարեանդութեան ճամբուն մէջ կը կասեցընեն զմեզ:

Չորս արգելք կը գտնեմ, որոնք Յիսուսի ամենասուրբ Սրտին ջնջարիտ ջնջարեանդութեան ճամբուն մէջ կը կասեցընեն զմեզ:

Առաջինը գողութիւնն է, շատ տխուր վիճակ: Գողը հոգին այն բանը կ'ընէ ինչ որ չի կրնար զանց առնել: Առանց սիրոյ, առանց երանդի, ինքն իրեն բեռ է, եւ առաքիլութեան ճամբուն մէջ չյառաջանալէն զատ՝ յետս կ'ընկրկի: Ամէն օր բարեվշտական կրթութեամբ զբաղող անձանց վտանգն այն է որ՝ տակաւ կերպով մը կ'ընտանենան այս սուրբ կրթութիւններուն. ուրեմն այսպիսիք վախնալու են առանց յարգանքի, առանց ուշադրութեան, առանց երանդի պարտքերնին կատարելէ, եթէ ջանք չեն ընէր ինք զինքնին արծարծելու, նորոգուելու, արթննալու, հաւատքի մեծ խորհուրդներու եւ աստուածային սիրոյ ոգեւորեալ բոցերու միջոցաւ, որ երբեք թոյլ չի տար որ հոգին քնանայ:

«Գողութեան վիճակն այնքան աւելի վախնալի է, որքան այն անվտանգ կը կարծուի. մեծ մեղքերէն կը զգուշանանք եւ ասով ինք զինքնին ապահով կը կարծենք, բայց

կը մոռնանք Յայտնութեան մէջ Աստուծոյ խօսքը. Գուշ ըլլաւ զի համար զիսիս շինել զիսիս: Իբր թէ ըսել ուղեք. — Արժանի չէք իմ մէջս ապրելու, մինչեւ Սիրտս մուտք պիտի չունենաք, որովհետեւ իմ սիրոյս ամենէն յանցապարտ ցրտութեամբ հատուցում կ'ընէք: — Առանց ուղղութեան խոստովանանքներ, անպտուղ հողորդութիւններ, ահա այս ցաւելի գաղղութեան սովորական հետեւանքները: Մտածեցէք որ Տէրն մեր զձեզ այս տխուր վիճակէն ազատելու համար Ս. Գերբրուտայի պէս ձեզի ալ կ'ըսէ. «Բաւական ատենէ ի վեր իմ թշնամեացս հետ երկրին յարած մնացիք. երկար ատեն փուշերուն մէջէն այս աշխարհիս մխիթարութեանց մեղքը քաղեցիք. ալ ինծի եկէք վերջապէս եւ ես զձեզ իմ հաճոյիցս հեղեղովը կը գինովցընեմ»: Փրկչին այս հրակերին համապատասխանեցէք, եւ բռնելով ձեր սիրոյն համար գամերով ծակուած ձեռքէն՝ զոր իւր ողորմութեամբ կը կարկուտ ձեզի, խոստացէք իրեն որ ասկէ ետքն իրեն ետեւէն կ'ուղեք երթալ, ուր որ ձեզի առաջնորդէ: Չգործ» յետոյ քոյ մի յերթեր: — Ասրբապետ, եկեց եւ ես զինի քոյ մի վայր եւ երթիցես:

«Երկրորդ արգելքն անյանտիրութիւնն է: Աւետարանի վարդապետութեանց գործնականը Յիսուսի Քրիստոսի սա միակ խօսքին մէջ ամբողջովին պարունակուած է. «Թէ որ

մէկը իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող իւր անձն ուրանայ, ամէն օր խաչը բառնայ եւ ինծի հետեւի»: Բայց ափիկայ այնպիսի բան մըն է, որուն վրայ քիչեր ծանրապէս կը խորհին: Իրենց բնութեանը յարմարող եւ զիրենք չնեղող առաքինութիւնները միայն կը սիրեն անոնցմէ ճաշակ կ'առնուն: Արդ՝ այսպիսի տրամադրութիւններ ունեցող սիրտ մը ինչպէս Յիսուսի Սրտին հետ կրնայ միանալ: Այս աստուածային Սիրտն ինք զինք բոլորովին մեղի մատնած է, եւ ինքն իրեն բան մը պահած չէ. անիկայ կ'ուզէ վեհանձն սրտեք՝ որ իրենք զիրենք բոլորովին իրեն տան, երբեք չվախնան շափաղանց յառաջանալէ, ինք զինքնին մեռուցանելէ, Յիսուսի անձնատուր ըլլան առանց բան մ'իրենց անձին պահելու:

«Երրորդ արգելքը՝ արքայութեան կերպն է՝ որմէ հրաժարելու այնչափ կը դժուարին: Ամէն կիբբ պէտք է խաչել, եթէ այս տեսակէն հատ մը միայն մնայ, սրտերու միութիւն չի կրնար յառաջ գալ: Աղէկ մը քննեցէք թէ ո՞րն է այն՝ զոր դեռ կը պահէք, եւ զայն վեհանձնաբար Յիսուսի Սրտին դահեցէք. սակայն վստահ եղէք որ զանիկայ ամբողջովին մերկանալն աւելի դիւրին պիտի ըլլայ ձեզ, քան թէ զայն կէս մը գոհացընելը:

«Չորրորդ արգելքը՝ գողտիկ հարբութիւնն է: Բոլոր միւս թշնամիներուն կը յաղթենք եւ անոնց զօրութիւնը կը տկարացընենք

առաքինութեանց հրահանգով, եւ սակայն այս գաղտնի հպարտութիւնը շատ անգամ ինչ ինչ առաքինութեանց միջոցաւ իսկ կը զօրանայ ի մեզ: Արնայ ըսուիլ որ չկայ մոլութիւն մը որ բարեպաշտութեան ճամբուն մէջ այնչափ հոգիներ կասեցուցած ըլլայ եւ ամէնէն բարձր կատարելութենէն՝ գաղջութեան եւ մինչեւ իսկ անկարգութեան անդունդն իջեցուցած, որչափ այս գաղտնի հպարտութիւնը:

“Այս հպարտութեան հոգիէն յառաջ կու գայ ամէն գործքի մէջ երեւնալու եւ յաջողելու անսովոր փափագը. ձախողածէ մ’ետքը տխրութիւնը, վհատութիւնը. յաջողութեան մէջ սրտի չափազանց ուրախութիւնն մեղի տրուած պատիւները տեսնելով: Այս հոգին կը սպրդի ամենամեծ առաքինութեանց հրահանգներուն մէջ. մահացեալ ենք, հաճոյակատար, եղբայրասէր, հոգիներու փրկութեան համար եռանդով լի. կը սիրենք բեմբասացութիւնը, աղօթքը, եւ այլն, բայց շատ ալ ուրախ կ’ըլլանք իբր այնպիսի մէկը ճանչցուիլ, պատրուակաւ ընկերաց շինութեան:

“Միեւնոյն աղբիւրէն կը ծնանին պատուոյ մասին այն զգայնութիւնը, այն պղտիկ ցրտութիւնները, այն վշտերը՝ որոնք նախանձին այնչափ կը մօտենան, այն գաղտնի սրտնեղութիւնը՝ որուն պատճառն են ընկերին յաջողութիւնները, զոր վար զարնելու

միշտ առիթ կը գտնենք. չափազանց տխրութիւնը եւ վհատութիւնը՝ որ զհոգին կը գրաւէ նուաստացուցիչ թերութեանց մէջ իյնալէն ետքը:

“Արջապէս ինք զինքնիս հոգեւոր անձի տեղ կը դնենք, մեր վըայ այս տեսակ համարում կ’ունենանք, բայց ըրածնիս աշխարհային խոհեմութիւն է միայն. արտաքին կեղեւ մըն է ունեցածնիս՝ որ իրական մոլութիւնները կը ծածկէ. այդ տեսակ մարդիկ որ հոգեւոր հարստութեամբ լի կը կարծուէին, մահուան ժամուն բարեգործութիւններէ ձեռնունայն կը գտնուին, քանի որ այն անձնասիրութիւնը, այն գաղտնի փառասիրութիւնը, այն ընդունայն հպարտութիւնը ամէն բան բարձած եւ ապականած է: Այս այն խմորն է՝ որ ուշ թէ կանուխ բոլոր զանգուածը կ’ապականէ. այն որդը՝ որ ամէնէն երկնաբերձ կաղնիները կը շորցընէ: (Քրտտիւ): Այս է սկիզբն այն մեծ անկումներուն, որ դարուց ի դարս ի խոր խոյեցին եկեղեցին եւ հաւատացելոց տխուր՝ բայց օգտակար դաս մը տուին:

Տեառն մերոյ բարեպաշտ Արմէլի տուած հետեւեալ հրահանգը կը հաստատէ մեր՝ Յիսուսի Սրտին Թագաւորութեանը հակառակող արգելքներու վըայ ըսածը. “Ս. Կուռայման նախընթաց օրը, կ’ըսէ Արբուսի ընծայման նախընթաց օրը, կ’ըսէ Արբուհին, Յիսուսի ամենասուբբ Սրտին մէջ գտնուեցայ, շրջապատուած այնչափ փառ-



քերով եւ այնչափ առատութեամբ որ չէի կրնար բմբռնել: Ես հոս շատ ուրախ եւ զուարթ էի. այս աստուածային Սիրան այնչափ մեծ կը գտնէի որ հազար աշխարհքներ բաւական պիտի չըլլային զայն լեցընելու. ասկէ զատ կը տեսնէի թէ անոնք որ սիրով այս աստուածային Սրտին մէջ կը բնակին, ճշմարիտ եւ կատարեալ ազատութիւն եւ հրաշալի խաղաղութիւն մը կը վայելեն. բայց միւս կողմանէ կը տեսնէի որ հոն մտնելիք դուռն այնչափ փոքր եւ այնչափ նեղ էր, որ սակաւք միայն կրնային մուտք գտնել: Ասիկայ ինծի զարմացում ազդելով կ'ըսէի. Ո՛վ իմ սէրս եւ իմ ամենայն ինչս. ի՞նչպէս կ'ըլլայ որ Սիրտդ այնչափ մեծ եւ այնչափ բնդարձակ է եւ թէ մարդ մէջն այնչափ հանդիստ կրնայ բնակիլ, դուռը սակայն այնչափ փոքր եւ այնչափ նեղ ըլլայ: Այն ատեն Տէրն մեր ինծի հասկցուց որ միայն փոքրէրուն, փոքրէրուն եւ փոքրէրուն անկէ ներս մտնելը կ'ուզէր: Փոքրէրն անոնք են՝ որ սրտանց կը խոնարհին անոր սիրոյն համար, ասոնք կրնան հոն մտնել: Միւսները ամենեւին չեն կրնար մտնել. որովհետեւ սնափառութեամբ ուռած անձ մը այնչափ փոքր դռնէ մը ի՞նչպէս կրնայ անցնիլ: Մեքիւն անոնք են՝ որ իրենց սիրտը հարստութեանց փափագէն եւ այս կենաց հարստութիւններէն կ'անջատեն. իսկ անոնք որ ոսկւոյ եւ արծաթոյ կամ ուրիշ բաներու բեռերով ծանրաբեռնուած

են, անկարելի է որ կարենան այսչափ նեղ տեղէ մը անցնիլ, եթէ անկէ յառաջ ինք զինքնին չթեթեցընեն: Միայն փոքր են՝ որ իրենց սէրն ամէն արարածէ կ'անջատեն. որովհետեւ սէրը զսիրտը սիրուած բանին կը կապէ. ուրեմն իրարու կապուած երկու անձեր չեն կրնար մէկտեղ մտնել այնպիսի դռնէ մը՝ ուր մէկ հոգւոյ համար միայն տեղ կայ, եւ այն ալ շատ փոքր ր:

Հրահանգ: Եթէ կը բաղձս Յիսուսի ամենասուրբ Սրտին ճշմարիտ ջերմեանդութիւն ունենալ, շատ կարեւոր է քննել թէ արդեօք չկայի քեզ մեր թուած արգելքներէն մէկը, որուն յաղթես: Այս քննութեան մէջ յաջողելու միջոցն է ընդհանուր իղծէ Դոպ Կոնսուլտան օրական եւ հաստատուն հրահանգը, զոր Ս. Իգնատիոս շատ կը յարգէր եւ մասամբ իւրը մտածական աղօթքէ աւելի կը յանձնարարէր: Ասիկայ աղէկ ընելու համար, Սուրբին սորվեցուցած հետեւեալ կերպը գործածէ.

- ա. Հնորհակալ եղիւ Աստուծոյ իւր բարեբարութեանցը համար:
- բ. Խնդրէ իրմէ որ ինք զինքդ ճանչնաս եւ մեղքերէդ գարշես:
- գ. Քննէ ներկայ օրուան, ամէն մէկ ժամուան մտածմունքներդ, խօսքերդ ու գործքերդ:
- դ. Յանցանքներուդ համար թողութիւն խնդրէ:
- ե. Քննութիւնդ վերջացուր Հայր Բրաւ կամ ուրիշ ուղած աղօթքովը:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեանց մեզ:  
Անարատ Օիրտ Մարեմայ, աղօթեա՛ վասն մեր:

Մշացախան աղօթք: Ո՛վ ամենասուրբ Սիրտ  
Յիսուսի, տո՛ր որ ծանշամ՝ զքեզ, եւ ծանշամ  
զիս: (Ս. Օգոստոս:)

Այցեպատկերն ամենասուրբ Հաղորդութեան.

Ո՛վ Տէր իմ Յիսուս, դուն որ ներկայ ես այս  
խորանին վրայ, փակուած ես այս տապանակին  
մէջ. կը ինդդեմ՝ քեզմէ՛ք քու Սրտովը, այն փա-  
փագովը որ կը ստիպէ՛ զքեզ ինծի հետ միանա-  
լու, այն օգնութիւններովը՝ որով զիս լիացուցիր  
ցայտօր. տուր ինծի սա շնորհք՝ քու սուրբերուդ  
հաւարտարմութեան սկիզբը, որ զքեզ ձանջնամ  
եւ զիս ձանջնամ: Կը բաղձամ թշուառութիւնս  
խոր քննել, զիտնալ թէ՛ հրշափ վէճք՝ պատճա-  
ռած եմ քու Սրտիդ, զգալ վէճքերուս պատճա-  
ռած ցաւերն եւ զիս այնքան սրտանց անարգել,  
որ կը բաղձամ տեսնել ապերախտութիւնս,  
նուաստութիւնս, կարօտութիւնս եւ ինչ որ զիս  
ամօթով կը պատէ: Ա՛խ, Տէր Յիսուս, լուսաւորէ  
խաւարս, անոր թանձրութիւնն ինծի ըմբռնել  
տուր, որպէս զի լամ անոնց վրայ քու լուսոյդ  
մէջ. ըրէ՛ որ ինչ որ լսեմ, կարդամ, մտածեմ,  
ամէն բան սրտիս մէջ տիրող խորին ապակամու-  
թիւնս մէջտեղ հանելու ծառայէ. տեսնեմ՝ թէ  
հըր եղան իմ մտածմունքներս, խօսքերս, զործ-  
քերս, յիշողութիւնս, միտքս, կամքս, երեւակա-  
յութիւնս, տեսնեմ թէ՛՛ որ միտք ծամբէն գացին:  
Քոկը եղանք եմ բոլորովին. զքեզ միայն սիրած  
եմ. ամէն բան քեզի համար միայն ըրած եմ:  
Արարածները քեզի վերաբերեալ բան մը չեն  
յափշտակած սրտէս: Ո՛վ Աստուած իմ, թշուա-

ռութեանս խոր անդունդէն կը հանեմ՝ իմ աղա-  
շանքներս դէպ ի քեզ: Աւանդ, ո՛վ Տէր, եթէ մեր  
արդարութիւնները քու առջեւը քաւուելու պէտք  
ունին, ինչ պիտի ըլլան հապա մեր անօրէնու-  
թիւնները: Հրեշտակներն անգամ մարուր չեն քու  
առջեւը, ո՛վ եմ ես քու առջեւը: Ի՞նչ զաղափար  
ունիս իմ վրաս: Ի՞նչպէս կրնաս համբերել ին-  
ծի: Ո՛վ Տէր, թող ծանշամ քու մեծութիւնդ եւ  
իմ նուաստութիւնս, քու կարողութիւնդ եւ իմ  
սկարողութիւնս, քու սէրդ եւ իմ ցրտութիւնս, քու  
սրբութիւնդ եւ իմ ապակամութիւնս: Տուր որ  
ինք զինքս ծանշամ իբրեւ ոչինչ, մեղք, հպար-  
տութիւն, անհաստատութիւն, թեթեւամտու-  
թիւն, դիւրաբեկութիւն, իմ առաջին թշամոխ,  
տերեւ մը՝ որ հովէ կը տարուի: Բայց թող զքեզ  
ծանշամ, զքեզ, ո՛վ Սիրտ Յիսուսի, զքեզ՝ որ  
ես սէս, զթութիւն, սրբութիւն, հաստատու-  
թիւն ինքնին. զքեզ՝ որ կը մարտնչիս իմ տեղս  
եւ թէ՛ քեզմով կարող եմ ամէն բանի:

ԻԷ. Օ Ր

Ա՛յն-...-ըք Սբոյն Չէր-...-իւն-...-ը:  
Բեւեբերուն յալիւ-...-իւն-...-ը:

Կ'ուզեմ գիտնալ խղճի մտաց քննութեան  
յերեւան հանած արգելքներուն յաղթելու  
միջոցը: Արիաբար գրկէ՛ ներքին եւ արտաքին  
մահացուցումը. երկուքն ալ կատարելու-  
թեան հասնելու համար բացարձակապէս  
հարկաւոր են. մին առանց միւսոյն չի կրնար  
ըլլալ:

Բայց ամէնէն հարկաւորն արդարեւ ներքինն է, որմէ ոչ ոք կրնայ զանձն տնօրինել: Այս այն բռնութիւնն է որ մեր անձին պարտինք ընել երկնից արքայութիւնը ժառանգելու համար: Յիրաւի չես կրնար երկայնատեն հաւատքի կեանքով ապրիլ, եթէ օրը հազար անգամ չես մեռուցաներ չար միտութիւններդ, անձնասիրութիւնդ, քանի որ ծիշդ է թէ այս կեանքիս մէջ հոգւոյ մը գործը՝ իրել եւ արել է. զԱստուած սրտին ամբողջ տարածութեամբը իրել եւ ինքզինքն առանց վերապահութեան արել:

«Արդ՝ զայս գործադրելու առիթներն ամէն ժամ կը ներկայանան. չկայ մէկն որ չկարենայ մեռուցանել իւր բնաւորութիւնը, իւր բաղձանքները, իւր հակումները, լռել առթի մը մէջ՝ յորում ցատկոտութիւնը պիտի ստիպէր զինքը պատասխանելու եւ մտափառութիւնն խօսելու. ահաւասիկ գլխաւորաբար յորում կը կայանայ այս ներքին մահացուցումն. որուն միջոցաւ անձնասիրութիւնը տկարացնելով եւ նուաճելով, մարդս կը յաջողի իւր անկատարութիւններէն ազատելու: Ի զուր ինք զինքնիս կը խաբենք թէ՛ զՅիսուս Քրիստոս կը սիրենք, եթէ մահացեալ չենք. ջերմեռանդութեան ամէն հրահանգները, բարեպաշտութեան անոյշ զգացումները՝ առանց այս կատարեալ մեռուցման կասկածելի կը դառնան: Ուստի երբ Ս. Իգնատիոսի մէկու մը վրայ իբրեւ սուրբ կը

խօսէին, «Այդպէս ըլլալու է, կը պատասխանէր, եթէ ճշմարտապէս մեռուցեալ է:»

«Բաւական չէ ժամանակ մը եւ քանի մը բանի մէջ ինք զինք մեռուցանել, պէտք է՝ եթէ կարելի է, ամէն բանի մէջ եւ ամէն ժամանակ խոհեմութեամբ եւ շափաւորութեամբ ինք զինք մահացընել: Երբ բնութեան անկարգ մէկ փափագին տեղի տաս, անիկայ աւելի հպարտ աւելի ըմբոստ կը դառնայ, քան որչափ որ անոր վրայ տարած հարիւր յաղթանակովդ յաջողած էիր զանիկա տկարացընել:

«Այս մեռուցման կրթութիւնը քաջ ծանօթ է անոնց՝ որ կատարեալ ըլլալու ճշմարիտ բաղձանք ունին: Չկայ բան մ'որ առիթ չընծայէ, իրենց բնական հակումներուն դէմ գործելու: Տեսնելու կամ խօսելու զգացած մեծ փափագնին՝ բաւական է զանոնք ստիպելու համար որ աչքերնին վար առնուն կամ լռեն: Նոր լուր առնուլու եւ անցած դարձածը կամ ըսուածը գիտնալու փափագը՝ իրենց համար մշտնջենաւոր նիւթ կ'ըլլայ մեռուցման, որ այնչափ աւելի արդիւնաւոր է, որչափ որ սովորական բան մըն է եւ որուն վկայն միայն Աստուած է: Խօսակցութեան միջոցին ի դէպ ըսուած խօսք մը, խելացի կատակ մը պատիւ կը բերէ խօսողին. բայց կրնայ նաեւ զոհողութեան սքանչելի առարկայ մ'ըլլալ: Թող հարիւր անգամ ընդհատեն զմեզ շատ ծանր զբաղման մը տաեն,

Տարիւր անգամ ալ պատասխանենք այն-  
քան համբերութեամբ եւ այնքան քաղ-  
ցրութեամբ՝ իբրեւ թէ բնաւ զբաղեալ  
չըլլայինք:

“Տեղւոյ, եղանակի կամ անձանց պատճա-  
ռած նեղութիւնները, ասոնք ալ դարձեալ  
մեռուցման այնքան առիթներ են, որոնք  
մեծ արժէք ունին, եւ կրնանք ըսել որ ամե-  
նամեծ շնորհքներն ու գերագոյն սրբութիւնը  
սովորաբար կախում ունին այն վեհանձնու-  
թենէն՝ որով անդադար կը մեռուցանենք  
ինք զինքնիս այս անընդհատ ներկայացող  
փոքրիկ առիթներուն մէջ:” (Քրո--աղէ:)

Սակայն մի կարծէք որ մեռուցում ընե-  
լով, պարտական կ'ըլլաք ախուր եւ խիստ  
կեանք մը վարելու. Յիսուսի Քրիստոսի լուծ-  
ք է, եւ քեզ ինչիս: Սուրբերը միթէ կը  
սխալէին երբ կը գոչէին. Լի է՛ միջնաբեր-  
նեամբ, առաւելեալ է՛ ուրիշներեմբ յամե-  
նայն նեղութիւնն մեր: Ս. Փրանկիսկոս Բա-  
վիէ Հռովմ գտնուող կրօնակից եղբարքը  
գրելով՝ կ'ըսէր. “Ես այնպիսի երկիր մը կը  
դտնուիմ, ուր հանգստաւետ կեանքի մը  
ամէն պէտքերը կը պակսին. բայց հոս այնչափ  
ներքին մտիթարութիւններ կը զգամ, որ կը  
վախնամ թէ մի գուցէ ուրախութենէ լալէս  
աչքերս կորսցընեմ:” Աշխարհիս վրայ ո՞վ է  
այն մարդը, որ իւր փառասիրական ծրագրաց  
լիութեան մէջ կամ հեշտութեանց գրկէն  
այս կերպով կարենայ խօսիլ:

“Քիչ մը արիւնթիւն. դժուարութիւնն  
առաջին քայլն առնլու վրայ է. փորձեցէք,  
իրն այնչափ դիւրին է, որ կ'արժէ անգամ  
մը փորձն ընել:”

“Եթէ տանուհինգ որ անընդհատ եւ  
կատարեալ մեռուցումէ մ'ետեւ, չառնուիք  
այն քաղցրութեանց ճաշակը՝ որոնց այլք  
փորձն առած են, կը հաւանիմ կ'ըսէր Աս-  
տուծոյ մի մեծ ծառայն, ըսելու թէ՛ զՅիսուս  
Քրիստոս ճշմարտապէս սիրողներուն կեանքը  
թշուառ է, եւ թէ Յիսուսի լուծք ծանր է:”  
(Քրո--աղէ:)

Սակայն ինչ որ ալ ըլլան այն դժուարու-  
թիւնները՝ զոր կը զգաք ինք զինքնիդ ուրա-  
նալու մէջ, Յիսուսի Սրտին դիմեցէք եւ  
անոնք պիտի անհետանան: Օր մը որ Երա-  
նելի՛ Մարգարիտա-Մարիամ մեծ ամեծ  
դժկամակութիւններէ նեղուելով՝ կը կար-  
ծէր թէ պիտի չկարենար ինք զինք հնազան-  
դելու բոշել, զգացած հակառակութիւնն  
այնչափ մեծ էր: Տէրն մեր երեսը զարկաւ այն  
վատութիւնը՝ զոր կը ցուցընէր իւր անձին  
անոր սիրոյն համար յաղթելու մէջ: “Ի՞նչ  
կ'ուզես որ ընեմ, պատասխանեց Երանելին,  
կամքս ինձմէ աւելի զօրաւոր է: — Դի՛ր  
զայն, ըսաւ Տէրն մեր, դի՛ր զայն իմ Սրտին

1 Մարգարիտա-Մարիամ հանգիստաւորակն Յի-  
րանելեաց կարգը գատուեցաւ Պիոս Թ. Սրբազան  
Քահանայապետէն, յամին 1864 ի 18 Սեպտեմբերի:

վերջին մէջ, եւ հոն քու անձիդ յաղթելու ոյժ պիտի գտնէ: — Ո՛վ Աստուած իմ, գուշեց ուրախութեամբ, զայն այնչափ խորունկ խօթէ Սրտիդ մէջ եւ այնպէս աղէկ փակէ որ այլ եւս անկէ չելլէ:»

Հրահանգ: Ընդհանուր խղճի քննութեան միացուր ժամայն անհետն: Չոր պէտք ես ընել վրադ իշխող պակասութեան կամ առաքինութեան մը վրայ, զոր ստանալու կ'աշխատիս եւ հետեւեալ կերպով ըրէ.

ա) Առտու ելլելուդ պէս հաստատուն յառաջադրութիւն դիր այս պակասութեան վրայ առանձին ուշադրութիւն ընելու:

բ) Կէս օրուան մօտ քննութիւն ըրէ յառաջադրածիդ գէմ գործած պակասութեանցդ վրայ:

գ) Իրիկունը միեւնոյն քննութիւնն ըրէ:

Այս քննութեան պտուղը կախում ունի առաւօտեան յառաջադրութեանդ եռանդէն, հետազոտութեանդ ճշդութենէն, անձինդ վրայ հսկողութենէն, աստուածային օգնութիւնը խնդրելու համար աղօթքի եռանդէդ եւ պակասութիւններդ խնամով նշանակելէն, որպէս զի օրքան զոր ըրած յառաջադրմութեանդ համարը գիտնաս:

Ս. Իգնատիոս իւր դարձէն ի վեր այնպիսի ճշդագահութեամբ կատարեց այս կրթութիւնը, որ իւր մահուան օրն անգամ հոգ տարաւ իւր պակասութիւնները փոքրիկ տետրակի մը մէջ նշանակելու, զոր իւր գլխոյ բարձին տակը գտան: Իւր Միաբանութեան ամէնէն նշանաւոր անձինք

իրենց հիմնադրին այս փրկաւէտ կրթութեան ունեցած հաւատարմութեան նմանեցան:

Սուրբ Սիրոս Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրոս Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մշտնջենի աղօթք: Ո՛վ Յիսուս, թող քու վշտացեալ Սիրտդ սորվեցընէ ինձի փախչիւ երկրաւոր զոհացուցումներէ եւ զանոնք արհամարհել եւ ատել:

Այցեդրութեան ամենատարբէր հարդարութեան:

Սրտի զեղմամբ կ'ուղղեմ քեզ այս աղօթքը: Աւանդ, Տէր իմ, քու կեանքդ ամողջովին խաչ մ'եղաւ, անընդհատ մտքտիրոսութիւն մը, եւ զքեզ ուսումնասիրելէս, Սրտիդ ցաւերն ու վշտերը ծանչնալէս ի վեր հագիւ թէ փորձեցի հետուէն քու ետեւէդ երթալու: Փոխանակ այս աշխարհիս զոհացուցումներէն, ուրախութիւններէն փախչելու, զանոնք արհամարհելու եւ ատելու, զանոնք փնտոցի, յարգեցի, սիրեցի. վախճայ որ մի գուցէ անոնք ինձմէ յափշտակուին, սրտիս զոհունակութիւնն ու հանգիստն անոնցմէ խնդրեցի: Բայց այնչափ եղաւ քու զթուօհիւնդ, որ որչափ ես անոնք անժաատուր կ'ըլլայի, այնչափ վիշտ, ծանձրութիւն եւ խղճի խայթ կը զգաւէին սիրտս: Ո՛վ Յիսուս, իմ զգածումներս որչափ քեզ նմանութիւն ունին քու կ'ընենքուր. բայց եթէ դուն ուզես եւ հաճիս Սիրտդ իմնիս մօտեցընել, ալ չեմ կրնար քեզմէ զատ բան մը սիրել եւ քաղծալ. այնուհետեւ ոչ միայն աշխարհիս հաճութիւններէն պիտի փախչիմ եւ զանոնք պիտի արհամարհեմ, հասլա նաեւ անոնք ինձի բնու

պիտի ըլլան եւ վարջանացս եւ ատելութեանս  
ստարկայ պիտի դառնան:

Ո՛հ, պատժէ զիս այս ծաւառով. քեզմէ զուրս  
սիրածներս՝ ինձի անախորժ, անտանելի ըրէ,  
զոր օրինակ աշխարհիս ընդունայն ուրակու-  
թիւնները, սրտի յիմարական սէրերը, գիտու-  
թեան շոր հաժութիւնները: Ըրէ՛ այս հրաշքը,  
ո՛վ վշտացեալ Սիրտ Յիսուսի, որ քեզի հետ ցաւն  
ու արցունքները միայն սիրեմ:

**Ի Ը . Օ Ր**

Յիսուսի Սրտին Վերստանալու Վերջնային  
Քննութիւն: Առաջին Ժնջ՝ աղօթի:

«Յիսուսի Քրիստոսի եռանդուն սէր մը ու  
իւր սուրբ Սրտին քաղցր Վերմեռանդութիւն  
մը ստանալու առաջին միջոցը՝ աղօթի է:

«Յիրաւի զարմանալի է եթէ քրիստոնեայք՝  
այսպէս ըսելու համար, ամենակարող չըլլան,  
քանի որ իրենց բոլոր փափազածներն ըն-  
դունելու ապահով եւ անվրէպ միջոց մ'ու-  
նին, եւ այս միջոցն է մի միայն խնդրել: Չկայ  
բան մը որուն Յիսուս Քրիստոս այնքան ստեպ  
եւ այնքան հանդիսաւոր եղանակաւ ինք  
զինքը պարտաւորած ըլլայ, որքան մեր ա-  
ղօթքները լսելու:» (Քրիստոս) Խնդրեցէ՛  
եւ պիտի ընդունէի. փնտրեցէ՛ եւ պիտի գտնէի.  
չարիէ՛ եւ պիտի բռնան յեղի. ի՛նչ անսպաս-  
ելի բան մը չէ՛ որ չած... չեցէ՛ եւ պիտի ըն-

դունի, որչէ՛ս չի որսիս... Խնդրեցէ՛ եւ պիտի  
տրուի յեղի: (Աւետարան)

Աղօթքն առաջին պէտքն է զոր Հոգին  
սուրբ կը թելադրէ այն հոգիներուն, զորոնք  
կ'ուզէ կորստեան անդունդէն հանել. դարձի  
առաջին նշանն է: Անանիա կը վախճար  
ղՍաւուղ փնտռելու, որուն Աստուած զինքը  
կը զըկէր. անոր այլ եւս հալածող չըլլալուն  
եւ սրտով եւ կամօք հաւատարիմ ըլլալուն  
ինչ ապացոյց կը տրուի. սա միայն՝ կոյ դե-  
յառնա: Աղօթքն է նաեւ առաջին միջոցը զոր  
հոգիներու թշնամին լքանել կու տայ, երբ  
զանոնք իւր ծուղակին մէջ ձգել կ'ուզէ:  
Ուստի Սրբուհի Թերեզիա կ'ըսէր. «Ա՛նգէի  
ունենալ ձայն մը՝ որ բոլոր աշխարհքը կա-  
րենար թնդացընել եւ անդադար ամենուն  
ականջէն վար կրկնել՝ աղօթեցէ՛, աղօթեցէ՛:»

Ուրեմն աղօթե՛ք եւ աղօթե՛ք վատա-  
հու թեամբ, խոնարհու թեամբ եւ մանաւանդ  
յարատելու թեամբ. չյոգնիրք երբեք, չվհա-  
տիրք: Այն վայրկեանը՝ յորում աստուած-  
ային գութը խնդրելէ կը դադրինք, թերեւս  
այն վայրկեանն է՝ որուն մէջ Աստուած  
պիտի լսէր մեր աղաղակը: Աղօթքը կ'ըսէ  
Ս. Լաւրենտիոս Յուստինիանոս, կ'իջեցընէ  
Աստուծոյ բարկութիւնը, որ կը ներէ խոնար-  
հու թեամբ աղօթող մեղաւորին: Մարդուս  
բոլոր խնդրածները կ'ընդունի աղօթքը, կը  
յաղթէ մեր փրկութեան թշնամեաց ճիգի-

պիտի ըլլան եւ գարշանացս եւ ատելութեանս  
առարկայ պիտի դառնան:

Ո՛հ, պատժէ՛ զիս այս ծամբով. քեզմէ՛ դուրս  
սիրածներս՝ ինծի անախորժ, անտանելի ըրէ;  
զոր օրինակ աշխարհիս ընդունայն ուրախու-  
թիւնները, սրտի յիմարական սէրերը, գիտու-  
թեան շոր հաճութիւնները: Ըրէ՛ այս հրաշքը,  
ո՛վ վշտացեսու Սիրտ Յիսուսի, որ քեզի հետ ցաւն  
ու արցունքները միայն սիրեմ:

Ի Ը . Օ Ր

Յիսուսի Սրտին Վերստանալու Ինչպէ՛ս  
Վերցնէր: Առաջին Վերց՝ աղբիւն:

“Յիսուսի Քրիստոսի եռանդուն սէր մը ու  
իւր սուրբ Սրտին քաղցր ջերմեռանդութիւն  
մը ստանալու առաջին միջոցը՝ աղբիւն է:

“Յիրաւի դարմանալի է եթէ քրիստոնեայք՝  
այսպէս ըսելու համար, ամենակարող չըլլան,  
քանի որ իրենց բոլոր փափաղածներն ըն-  
դունելու ապահով եւ անվճէպ միջոց մ'ու-  
նին, եւ այս միջոցն է մի միայն խնդրել: Չկայ  
բան մը որուն Յիսուս Քրիստոս այնքան ստէպ  
եւ այնքան հանդիսաւոր եղանակաւ ինք  
զինքը պարտաւորած ըլլայ, որքան մեր ա-  
ղօթքները լսելու:” (Բրոնզէ) խնդրեցէ՛  
եւ պիտի ընդունի. քնարեցէ՛ եւ պիտի գտնէ.  
չարիէ՛ եւ պիտի բռնան յեղի. ի՛նչ անսամբ  
դեռ բան մը չէ՛ որ չէ՛ս չէ՛ցէ՛ եւ պիտի ըն-

դունի, որդե՛ս զի ուրիշներ չարեալ  
ըլլա՛յ...: Ինչ որ չէ՛ս չէ՛ս չէ՛ս չէ՛ս  
որո՛ւն յեղի: (Աւերարան:)

Աղօթքն առաջին պէտքն է զոր Հոգին  
սուրբ կը թելադրէ այն հոգիներուն, զորոնք  
կ'ուզէ կորստեան անդունդէն հանել. դարձի  
առաջին նշանն է: Անանիա կը վախնար  
դՍաւուղ փնտռելու, որուն Աստուած զինքը  
կը զօկէր. անոր այլ եւս հայածող չըլլալուն  
եւ սրտով եւ կամօք հաւատարիմ ըլլալուն  
ի՛նչ ապացոյց կը տրուի. սա միայն՝ կայ դե-  
յաղբիւն: Աղօթքն է նաեւ առաջին միջոցը զոր  
հոգիներու թշնամին լքանել կու տայ, երբ  
զանոնք իւր ծուղակին մէջ ձգել կ'ուզէ:  
Ուստի Սրբուհի Թերեզիա կ'ըսէր. “կ'ուզէի  
ունենալ ձայն մը՝ որ բոլոր աշխարհքը կա-  
րենար թնդացընել եւ անդադար ամէնուն  
ականջէն վար կրկնել՝ աղբիւնցէ՛ս, աղբիւնցէ՛ս:”

Ուրեմն աղօթե՛ք եւ աղօթե՛ք վստա-  
հու թեամբ, խոնարհութեամբ եւ մանաւանդ  
յարատեւութեամբ. չյողանիք երբեք, չվհա-  
տինք: Այն վայրկեանը՝ յորում աստուած-  
ային գութը խնդրելէ կը դադրինք, թերեւս  
այն վայրկեանն է՝ որուն մէջ Աստուած  
պիտի լսէր մեր աղաղակը: Աղօթքը կ'ըսէ  
Ս. Լարենտիոս Յուստինիանոս, կ'իջեցընէ  
Աստուծոյ բարկութիւնը, որ կը ներէ խոնար-  
հութեամբ աղօթող մեղաւորին: Մարդուս  
բոլոր խնդրածները կ'ընդունի աղօթքը, կը  
յաղթէ մեր փրկութեան թշնամեաց ճիգէ-

բուն, Սեղաւորները կը մաքրէ, կը փոխէ եւ սուրբ կ'ընէ: «Հաղիւ թէ Աստուծոյ դիմեցի, կ'ըսէ Սողոմոն, ինձ իմաստութիւն պարգեւեց»: — «Հաղիւ թէ աղօթելու համար բերան բացի, կ'ըսէ Դաւիթ, Աստուծոյ օգնութիւնն ընդունեցայ»:

Տէրն մեր ըսաւ Սրբուհի Պրիճիտայի թէ մեր խնդրածներէն եւ մեր իղձերէն միշտ աւելին կը պարգեւէ եւ թէ միշտ տրամադիր է պարգեւելու եթէ պատշաճ պատրաստութեամբ խնդրենք:

«Բայց ամէն աղօթքներու մէջէն շկայ աղօթք մը, որ Յիսուսի Քրիստոսի այնչափ հաճելի ըլլայ, որչափ այն՝ որով իրմէ իւր սուրբ Սրտին սէրը կը խնդրենք: Աղօթենք, պաղատինք. անկարելի է որ թախանձագին խնդրելով՝ չընդունինք: Միջոցը գիւրին եւ ազգու է, եւ կրնայ ըսուիլ որ՝ այս պարագային մէջ խնդրածն ընդունիլ է քան թէ խնդրել: Չեր աղաչանքը զօրացընելու համար այս սուրբ Սիրտը գործածեցէք, եւ սիրով ընդունուելուն վրայ մի տարակուսէք:» (Քրտուէ):

Օր մը Սրբուհի Մաթիլտէ Աստուծոյ կ'աղօթէր իւր բարեխօսութիւնն խնդրող անձի մը համար, եւ կը խնդրէր որ անոր մաքուր, խոնարհ, եռանդուն եւ ճշմարտապէս հոգեւոր սիրտ մը տայ, Աստուծմէ սա պատասխանն ընդունեցաւ. «Ըսէ անոր որ ամէն ուղածը եւ պէտք ունեցած բոլոր շնորհքները

Սրտէս խնդրէ, եւ ինձի դիմէ այնպէս ինչպէս մանուկ մ'իւր հօրը՝ որմէ պարզապէս իրեն պէտք եղածը կ'ուզէ: Մաքրութեան շնորհքն ընդունելու համար պէտք է որ իմ անմեղութեանս դիմէ: Եթէ կ'ուզէ խոնարհութիւն ունենալ, պէտք է որ իմինիս մէջէն քաղէ: Պէտք է որ իւր փափագներուն պակասը իմիններովս լեցընէ եւ իմ սէրս գրաւէ այն ամէն առաքինութիւններով, որոնց կատարեալ օրինակը ցուցուցի մարդկան՝ մահկանացու կենացս մէջ:» Սրբուհին շարունակեց. «Տէր, երբ անոր վերջին ժամը հասնի, գթած՝ վրան եւ ապահովցուր զինքը թէ պիտի չլիցողուս:» Աստուած պատասխանեց. «Ո՞ր իմաստունն ինք զինքը վտանգի մէջ կը ձգէ, տաժանաւոր աշխատութեամբ ձեռք ձգած թանկագին մէկ գանձը կորսնցընելու: Բովանդակ մարդկութիւնն իմ մարդեղութեամբս սրբագործեցի, եւ մկրտութեամբ հոգիս մարդկան հոգւոյն կը հաղորդեմ, ուրեմն անկարելի է որ զինքը լքանեմ:»

Հրահանգ: Չես կրնար Յիսուսը Սրտին աւելի հաճոյական բան մ'ընել քան թէ անոր որ կը ստեպ հոգիոր հաղորդութիւն միանալով, որ կը կայանայ ըստ Ս. Թովմայի, զՅիսուս Քրիստոս ընդունելու հրավառ եռանդի եւ զինքն իրապէս սիրան ընդունածի պէս գորովալից զգացման վրայ. ուրեմն փափագի ու զգացումի վրայ, զոր կարող ես զարթուցանել ի քեզ ցերեկուան եւ զիշերուան ամէն մէկ ժամերուն: Տէրն մեր Նէա-



||  
 պոլոյ մէջ Ս. Կատարինէ Սիենացւոյ վանքին հիմնադիր մայրապետին հասկցուց այն մեծ հաճոյքը՝ որ իրեն կը պատճառեն այս հոգեւոր հաղորդութիւնները, ցուցնելով իրեն երկու թանկագին ամաններ, մին օսկիէ միւսը արծաթէ եւ իրեն ըսաւ թէ՛ օսկիէ ամանին մէջ կը պահէ անոր խորհրդական հաղորդութիւնները եւ արծաթէ ամանին մէջ հոգեւոր հաղորդութիւնները:

Սուրբ Սիրոտ Յիսուսի, ողորմանց մեզ:  
 Անարատ Սիրոտ Մարեմայ, առօթեմ վասն մեր:

Միացական առօթք: Եթէ զքեզ մոռնամ, ո՛վ Սիրոտ Յիսուսի, աշս ալ զիս մոռնայ. եւ լնզուս կցուի քիմքիս՝ եթէ յիշատակդ կորսնցնեմ: Եթէ մոռացայց զքեզ, մոռացի զիս աջ իմ: Կցեսցի ընգոս իմ ի քիմս իմ թէ ոչ յիշեսցի զքեզ: (Սղմ. ԾԼԶ. 5:)

Լ'ցեղութիւն ամենասուրբ Հաղորդութեան:

Ո՛վ Սիրոտ Յիսուսի, զիտեմ, մարդեղութեանդ առաջին վայրկենէն սկսեալ անըմբռնելի սիրով մը կը տոչորիս, եւ ես խեղճ արարածս եմ. այս սիրոյ առարկան: Մէրը կազմեց զիս քու յաւիտենական ծրագիրներուդ մէջ, եւ գոյութիւնս անոր սքանչելի պարգեւն եւ անհակառակելի անպացոյցն է: Չարաշար գործածեցի այս պարգեւը, զայն զնահատելու եւ անոր հեղինակը ծանշնալու վիճակին մէջ գտնուելէս ի վեր...: Ինչ դուն, սիրոտս շահելու համար, առաջին առատածեմութեանց վրայ նորանոր եւ արեւի հրատածեմութեանց վրայ նորանոր արեւցոցիք: Ո՛վ

կրնայ միտքը բերել քու բոլոր բարերարութիւններդ, շնորհացդ այցելութիւններդ, այն ծածուկ դողումներդ, Սրտիդ այն զանգատները՝ որ կը հալածէ մերինն ու ամենեւին հանգիստ չի թողուր: Առաթուր կոխեցի արդարութիւնդ, անարգեցի սէրդ, չմանչցայ, մոռցայ, քեզի դէմ՝ դարձուցի քու բարերարութիւններդ. իսկ դուն, եթէ մեղքովս ստիպեցի զքեզ հեռանալ ինծմէ, ակամայ միայն հեռացար ինծմէ եւ փախչելու միջոցիդ աշքերդ ինծի դարձուցած էիր, յիշատակս եւ սէրս վշտացեալ Սրտիդ մէջ մէկտեղ կը տանէիր, պատրաստ էիր զիս ընդունելու ցաւի եւ զոջման առաջին նշանին՝ որ զիս քեզի պիտի առաջնորդէր: Ո՛վ Սիրոտ Յիսուսի, եթէ երբեք մոռնամ այսքան սէրդ, այսքան զիջողութիւններդ, թող աշս ալ զիս մոռնայ, եւ լնզուս քիմքիս կցուի եթէ մոռնամ յիշատակդ:

**ԻԹ. Օ Բ**

Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեռանդութիւնն արեւալու երկրորդ իջնոն է՝ սրտի հալոցը:

Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեռանդութիւնն ըստ ինքեան սիրոյ հրահանգ մըն է: Արդ՝ Յիսուսի կատարած սիրոյ ամէն հրաշալեաց յիշատակն այս անունդն է, այս ատուածային Հաղորդութիւնը, զոր իւր երկիւղածներուն ատուած է իւր քաղցրութեանը չափազանցութեամբը: Երախտագիտութեան

ամենամեծ ապացոյցը՝ որ կրնանք տալ անոր՝ որ ինք զինքը մեզի կը պարզուէ, զինքն ընդունին է: Սիրոյ ամէնէն գիտուն դպրոցը՝ հաղորդութեան սեղանն է: Յիրաւի կը բաւէ գիտնալ թէ ինչ է հաղորդուիլ՝ հասկնալու համար՝ որ չկայ աւելի ապահով միջոց մը Յիսուսի ֆրիստոսի սիրով իսկոյն բորբոքելու, քան աստուածային խորհրդոյն ստեպ մերձենալն: «Կարելի չէ, կ'ըսէ Իմաստունը, որ մարդս իւր ծոցին մէջ կրակ պահէ եւ չայրի,» Այս նուիրական հուրը՝ երկրպագելի Հաղորդութիւնն է, որ ինչպէս սուրբ Բեռնարդոս կ'ըսէ, սէրերուն սերն է: «Ո՛հ, եթէ հոգին ուշադրութեամբ նկատէր թէ՛ ինչ կ'անցնի այս աստուածային խորհրդոյն մէջ, կ'ըսէ Սրբուհի Անժէլ Փօլօնիացի, անտարակոյս ինք զինքն այսչափ չափազանց սիրուած տեսնելով՝ իւր սրտին ամբողջ սառը սիրոյ եւ երախտագիտութեան բոցերու պիտի փոխուէր:»

Ուրեմն յաճախ երթանք ամէն բարեաց այս աղբիւրին. հոն է որ մենք Յիսուսի ֆրիստոսի՝ շնորհաց տուիչին հետ միանալով եւ մի մարմին կաղմելով՝ պիտի տեսնենք շնորհաց ամէն օր յորդառատութեամբ մեր վրայ վազելը. հոն է որ մեր կիրքերը՝ անզգալաբար պիտի տկարանան եւ վերջապէս պիտի անհետանան. հոն է որ մեր ամէն չարեաց միտումը քաղցր հրապոյրի մը պիտի փոխուի ամէն առաքինութեանց համար՝ որոնց սրբա-

րանը Յիսուսի ֆրիստոսի Սիրտն է, եւ որոնց այս սուրբ խորհրդոյն մէջ օրինակը կու տայ մեզի: Հոն է որ, թէեւ մեր աչքերէն ծածկուած՝ երկնային գանձը ստանալով, պիտի ընդունինք յաւիտենական երջանկութեան հաւաստիքը՝ որ խոստացուած է ամէն անոնց, որ այս սիրոյ խորհրդոյն արժանաբար կը մերձենան. որովհետեւ սուրբ խորհրդոյն մէջ զՅիսուս ֆրիստոս ընդունողը, կարելի չէ որ իւր կատարելութեան եւ իւր յաւիտենական փրկութեան համար պէտք եղած բաներէն զրկուի. այնպէս որ հաղորդուելէ վերջը, ըստ Սրբուհի Մագդաղինէի Փացեան, հաւատաստարիմ հոգին կրնայ ըսել՝ «մենայն ինչ կուրբեալ է: Յիրաւի այս երկնաւոր սնունդն ամէն բարութիւն կը պարունակէ, հոգւոյն մէջ ամէն առաքինութիւն կը տնկէ. այնպէս որ ասիկայ վայելող հաւատացեալն այլ եւս փափագելու բան մը չ'ունենար:»

Աւա՛ղ: Ի՞նչափ շնորհք կը կորսնցնենք աւելի ստեպ չհաղորդուելով: Նախնի Եկեղեցւոյ հաւատացեալք ամէն օր կը հաղորդուէին եւ ասոր համար ինչափ մեծ էր իրենց հաւատքն ու շերմեանդութիւնը: Ո՛հ, եթէ գիտնայինք թէ ինչ ցաւ կը պատճառենք Յիսուսի Սրտին, սուրբ Հաղորդութեան հանդէպ անտարբեր գտնուելով: Օր մը, աստուածային Տէրն մեր ըսաւ երանելոյն Մարգարիտա-Մարեմայ. «Ս. Հաղորդութեան մէջ մարդիկներէ սիրուելու եւ պատուելու

սաստիկ ծարաւ ունիմ, եւ սակայն գրեթէ մէկը չեմ տեսներ որ փութայ ըստ իմ կամացս ծարաւս անցընելու, ինծի հանդէպ փոխարէն մ'ընելով:

Այլ եւս այս ապերախտ հոգիներու թուոյն մէջ չըլլանք. ստեպ եւ պահանջուած տրամադրութեամբ սուրբ սեղանին մօտեանք. ասիկայ Յիսուսի Քրիստոսի հատուցում ընելու եւ անոր Սիրտը վաստկելու ամէնէն ապահով միջոցն է, քանի որ այս աստուածային Սրտին ջերմեւանդութիւնը հաստատուած է դարմանելու համար մեր ապերախտութեանց մէջէն գլխաւորաբար այն անարգանքը որուն առարկան է ինքն սուրբ Հաղորդութեան մէջ: Բայց եթէ յաճախ հաղորդուելու երջանկութիւնն ունինք, սի, ինչո՞ւ կատարելութեան եւ փրկութեան այսպիսի զօրաւոր միջոց մ'աւելի լաւ չգործածենք: Ինչո՞ւ այսչափ հաղորդուելէ վերջը միշտ միեւնոյններն ըլլանք. միշտ անհոգ, միշտ հաւատքի դէմ ցուրտ, մեր գէշ ունակութեանց յաղթելու տկար: Աւաղ, մի գուցէ Յիսուսի Քրիստոսի կը մօտենանք արարածոց կապուած սրտով մը, հարստութեանց, պատիւներու եւ այս աշխարհիս ուրախութեանց համար համարումով լեցուած. աստուածային սիրոյ սլաքներուն համար անթափանցելի եւ գոց սրտով մը: Չըլլայ թէ Յիսուս մեր սիրտը իւր ներսն ընդունի եւ մենք ընդհակառակը մեր սրտին

մուտքն անոր գոցենք, որովհետեւ ըսած է. Անիկա միայն աստուած պտուղ կրնայ բերել որ յիս հաստատուած է եւ ես ի նմա: Որ հաստատուէ է յիս՝ է- ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ: (Թ. Լ. Ժ. 5.)

Ինչո՞ւ ուրեմն հաւատքով եւ վստահութեամբ լի, չենք նետուիր Յիսուսի Քրիստոսի ոտուրներուն, որ իրապէս մեր մէջ ներկայ է, եւ ինչո՞ւ սրտերնուս խորէն չենք ըսեր. Ո՛չ Տէր, զքեզ չեմ թողուր զիս չորհնած. ոտք չեմ ելլեր, մինչեւ որ ինծի ոյժ չտաս յաղթելու գէշ ունակութեանցս՝ որ ստեպ զիս քեզմէ կը հեռացընեն, մինչեւ որ ինծի ալդու եւ անյագ փափագ մը չտաս քու սիրոյդ համար ամէն բան ընելու եւ տառապելու, ամէն վայրկեան եւ ամէն պարագայի մէջ քու սուրբ կամքդ կատարելու: Ըսենք վերջապէս որ իրեն փառացը մնաս կը հասնի՝ եթէ իրեն արժանաւոր վիճակի մէջ չդնէ սիրտ մը՝ որ իւր սրբարանն եղած է: Եւ ի՞նչ բան կրնայ մեզի զմանալ, իւր անձն իսկ ամբողջովին մեզի տուլէ վերջը:

Հրահանգ: Փոյթ տար յաճախ հաղորդուելու արժանի ըլլալու, եւ մի մոռնար որ այս գերականց գործողութեան բոլոր պտուղն կախում ունի անոր աղէկ պատրաստուելէն եւ ապա պարտուպատշաճ գոհութեան աղօթքէն: Սրբուհի Թերեզիա կ'ըսէ. "Երկրպագելի Հաղորդութենէն քիչ օգուտ քաղելնուս պատճառը աղէկ գործածել չգիտնալէն է այն վայրկեանները՝ ուր

Յիսուս Գրիստոս իրապէս մեր մէջն է. որով-  
հետեւ հազիւ թէ մեր սիրտը կու գայ, անոր բար  
իւրեք երես կը դարձնենք օտար մտածութիւն-  
ներով զբաղելով:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մշտցակաւ աղօթք: Ծ՞րբ պիտի երթամ, նրբ  
պիտի երեւամ Աստուծոյս առջև: Ծ՞րբ պիտի  
ըլլայ, որ զայն իմ սրտիս մէջ կարենամ ըն-  
դունիլ: Ծ՞րբ եկից երեւեցայց երեսացդ Աս-  
տուծոյ: (Մղմ. ԵԲ. 3:)

Այցեպատկերն ամենաստորոք Հարությունիւն:

Ծ՞րբ պիտի գամ, նրբ քու առջևիդ պիտի  
երեւամ, ո՞վ Սիրտ Յիսուսի: Ծ՞րբ պիտի կարե-  
նամ մտնել այս քաջուածքին մէջ զոր տէգն ու  
սէրը ինծի իբրև ապաստանարան պատրաստած  
ն: Ո՞հ, թո՛ղ որ անսասան կամքի մ՛ոյժը ջեր-  
մնոանդութեան տեղը բռնէ, սրտիս գտնուած  
արտորանքին մէջ, ուր քեզմէ հետու կը գտնուիմ:  
Դուն որ ամենակարող ես, օգնութեան եկուր  
ինծի, փոխէ՛ զիս, կենդանացուր զիս. որովհետեւ  
իմ մէջս ամէն բան կը մեռնի, եթէ վրայէս վեր-  
ջընես քու փրկաւէտ ձեռնտուութիւնդ: Ինծի սոր-  
վեցուր ինչ զինքէս ելլելով քեզի անցնիլ. որով-  
հետեւ առանց քեզի ժամ մը, վայրկեան մը  
ժշմարիտ ուրախութիւն շունչիմ: Բայց երբ քու  
շնորհքը գրեզ իմ աչքերէս բաժնող խաւարը  
փարատած է, երբ քու լուսոյդ մէկ ծառագայթը՝  
զիս շրջապատող ամպերը մեղքած է եւ թէ այս  
տխուր արտորանքէն գրեզ կը նշմարեմ, ո՞վ աս-

տուածային Սիրտ, քու՞ծիրելութեամբդ եւ սրտերդ  
ըորընցելու հրապոյրներովդ, այն ժամանակ ու-  
րախ եւ յուսալից կ'ըլլամ. մընչևս իսկ երբեմս  
պահ մը կը մոռնամ թէ հայրենիքէս արտորուած  
եմ: Ո՞հ, նրբ պիտի գամ, նրբ յաւիտեանս քու  
առջևիդ պիտի երեւամ առանց գրեզ կորսնցը-  
նելու վախի:

L. O P

Յիսուսի Սրտին ջերմեանդովնն սրտու-  
երբերդ մէջն է՝ Ս. Խորհրդոյն այցելութիւն  
ընել:

Սուրբ Հաղորդութեան օգուտը չեն քա-  
ղեր միայն անոնք՝ որ զայն իրապէս սրտերնին  
կ'ընդունին: Որպէս զի մէկը՝ ասոր կցուած  
կենաց պտուղներէն մաս մը ստանայ, բաւա-  
կան է որ այցելութիւն ընէ Յիսուսի, այս  
երկրպագելի խորհրդոյն մէջ, իրեն փափագի,  
վրան մտածէ, մտքով փոխադրուի եկեղեցի  
մը՝ ուր ինքը կը հանգչի: Այս եք շատ մը  
սուրբերու հրահանգը, ի մէջ այլոց Ս. Ալ-  
փոնտոս Լիգուորիի: Յիսուսի Սիրտը շուտով  
շահելու համար այս յաճախակի երկրպագու-  
թիւններէն եւ այցելութիւններէն աւելի լաւ  
միջոց չկայ: Այս երկրպագելի Սիրտը՝ իւր  
խորհրդոյն մէջ, կը նմանի գիշեր ցորեկ ա-  
նրեդհատ վաղող կենդանի աղբեր մը, որուն  
միակ փափագն է տարածուիլ սրտերու մէջ,  
զանոնք մտքերի եւ պողաբեր ընել: Ինքն

իսկ զմարդիկ կը հրաւիրէ անկէ ջուր հանելու եւ կարծես կը գոչէ իւր սրբարաններուն մէջէն, ինչպէս երբեմն ըրաւ Հրէից բազմութեան՝ որ Երուսաղէմ վազած եկած էին մեծ տօնի մը համար. բսելով՝ Եթէ մէկը ծարաւ է, Թող ինձի գայ եւ խմէ: Եթէ ո՛ր ծարար է, եթէ ո՛ր է ուրիշը:

Բայց իւր տաճարներուն մենութիւնը մեղի բաւական կը ցուցնէ թէ՛ այսօր ալ իւր հրաւերին մտիկ ընող չկայ, ինչպէս այն ատեն: Ուստի ուրիշներուն անտարբերութեան իբր հատուցում, կ'ուզէ որ հաւատարիմ հոգիներու փոքրամասնութիւնն իւր ձայնին համապատասխանէ. որովհետեւ կ'ընտրէ այս իրեն տրուած այցելութեանց ժամանակը՝ իրենց վրայ իւր շնորհքներն աւելի յորդութեամբ թափելու համար. եւ կրնայ ըսուիլ թէ այս բարութեանց ամէնէն սովորականը իւր սիրոյն շնորհքն է. որովհետեւ եթէ բարեկամութիւնը մարդկան քով կը պահուի եւ կ'աճի այցելութիւններով եւ խօսակցութիւններով, այս միջոցով է որ նաեւ զԵրուսաղէմի քրիստոս աւելի եռանդեամբ կրնանք սիրել:

Խօսէ ուրեմն հետը, հաւատարիմ հոգի, ինչպէս տղայ մը հօրը հետ, ինչպէս բարեկամ մը բարեկամին հետ, ինչպէս կին մը իւր ամենասիրելի ամուսնոյն հետ. երբեմն հոգեւոր հիւանդութիւններդ անոր առջեւ դնելով՝ ըսէ. Տէր, սիրածդ հիւանդացիք է:

Ահա-տայի շրջ գոռն սիրելի Հիւանդացեալ է: Երբեմն իւր բարիքներուն համար շնորհակալութիւնդ յայտնելով՝ ըսէ. Ո՛վ անձն իմ, օրհնէ զԱստուած եւ Թող իմ ամբողջ էութիւնս անոր սուրբ անունը օրհնէ: Օրհնէս անչէ իմ զՏէր, եւ ամենայն սիրտ իմ շունչն սուրբ նորա: Երբեմն իւր բարութիւնը գովելով՝ ըսէ. Ո՛րչափ բարի է Խորայելի Աստուածը. Եթէ ո՛ր իմ Բարեմն է Աստուած Խորայելի: Երբեմն իւր գթասրտութիւնը յիշելով, ըսէ. Ո՛վ Տէր, քու գթութիւնդ բովանդակ գործերդ կը գերազանցէ. ո՛վ սիրով վիրաւորեալ, սիրով նուաղեալ, Սիրտ Յիսուսի, ի՛նչ ըսելու եմ քու վրայ, քու սիրոյդ շափաղանցութեանը վրայ: Խոնարհէ առջեւը, ըսելով՝ Աստուծոյ հետ պիտի խօսիմ, ես որ փոշի եւ մոխիր եմ. Այժմ սխալ խօսել ընդ Տեռան. Բայց ես հող եմ եւ մոխիր: Ա երջապէս մինչեւ տապանակին մէջ մտիք, հոն հաստատէ քու բնակարանդ: Հոն, Մագդաղենացոյն հետ Յիսուսի ոտուրներն ինկիր եւ զանոնք քու արցունքովդ թրջէ, քու սիրոյդ համար գամբրով ծածկած ձեռուքները համբուրէ, իւր Սրտին վրայ հանգչէ իւր սիրելի աշակերտին հետ եւ հանգիստապէս յայտարարէ՝ որ հոս կ'ուզես հանգիստդ գտնել ցմիրչա այս եւ հանդերձեալ աշխարհին մէջ, առանց այլուր ուրախութիւն եւ սփոփանք մը փնտռելու:

Յիսուսի այցելութիւն ընելու անհոգութիւնդ՝ ժամանակի սղութիւնն առարկելով

չես կրննիր արդարանալ: Ապաքէն ժամանակ կը գտնես սնտոի խօսակցութիւններով ժամավաճառ ըլլալու, միթէ միայն Յիսուսի համար է որ հինգ վայրկեան չկարենաս զոհել: Այո, եթէ ամէն օր գոնէ հինգ վայրկեան մը տեսակցութիւն ընես Յիսուսի հետ, իւր խորհրդոյն մէջ. ահա ասով գոհ կ'ընես իւր Սիրտը: Ի՞նչ. թերեւս Յիսուսի հետ միեւնոյն յարկին տակ կ'ապրիս, առ առաւելն քանի մը քայլ պիտի առնուս իրեն այցելութեան երթալու համար եւ իրեն կը զլանան երախտագիտութեան աս փոքրիկ արտայայտութիւնը, զոր մեծամեծ շնորհքներով վարձատրելու պատրաստ է: Միթէ պատշաճ է բարեկամի մը տան առջեւէն անցնիլ, անոր բնակարանին այնչափ մօտ բնակիլ, առանց վայրկեան մը ներս մտնելու գոնէ բարեւելու համար, կ'ըսէր սուրբ կրօնաւոր մը:

« 4. Սալէզ՝ Յիսուսեան ընկերութենէն, մեծ մխիթարութիւն կը զգար, երբ սուրբ խորհրդոյն վրայ խօսուիլը կը լսէր. անոր այցելութիւն տալէ չէր կրնար կշտանալ. եթէ զինքը դուռը կանչէին, եթէ տան մէջ տեղ մ'երթալու ըլլար, միշտ այնպէս կը յարմարցընէր որ այս առիթներու մէջ իւր ամենասիրելի փրկչին ալ այցելութիւն մ'ընէ. անոր համար ալ հազիւ թէ օրուան մէջ ժամ մը կ'անցընէր՝ առանց իրեն այցելելու: Ասով վերջապէս հերետիկոսներու ձեռքով մեռ-

նելու արժանացաւ, Հաղորդութեան մէջ Յիսուսի իրական ներկայութեան վարդապետութիւնը պաշտպանելով: »

Ս. Ալոզիոս Գոնդակա, Ստանիսլաուս Բօսդգա, Պերքմանս, այս երկրաւոր հրեշտակներն ու երիտասարդութեան այս զարմանալի օրինակները, իրենց ուրախութիւնն միայն Յիսուսի քով՝ անոր խորհրդոյն մէջ կը գտնէին: Սրտերնին հոն կը ձգէին՝ երբ անկէ հեռանալու ստիպուէին: Հոն էր որ կու գար Ս. Փրանկիսկոս Քսապիէ՝ առաքելութեան աշխատութիւններէն վերջը հանգչելու համար, եւ նորոյժ կ'առնուր նոր պատերազմներու դէմ վազելու: Մէկ խօսքով, մեր խորաններուն վրայ ունայնացեալ Յիսուսի հանդէպ ջերմեռանդութիւնը՝ բոլոր սրբոց ջերմեռանդութիւնն եղած է: Թող քուկդալ ըլլայ՝:

Հրահանգ: Հպատատուն առաջադրութիւն դիր օր չանցընելու առանց Յիսուսի հրահանգի: Իսրայէլի մէջ շատ անգամ այցելութիւն ընելու, եթէ անոր հանգչած տեղը կը բնակիս. եւ եթէ այս երջանկութիւնը չունիս, գոնէ անգամ մը այս նպատակաւ եկեղեցի մը մտիր:

1 ընթերցողը մտադիր կ'ընենք սրանչի Գրքոյի մը. Այցելութիւն ամենասուրբ Հաղորդութեան, Ս. Ալի. Լիգուորեայ. Թրգմ. 4. Գրիգոր Վ. Գորիկեան, Վիեննա. որ ամսոյն ամէն օրուան համար պայցելութեան եռանդուն աղօթքներ կը պարունակէ:

Միտքդ դիր այս պայծառութեանց մէջ մասնաւորապէս Յիսուսի Սիրտը պատուել եւ հատուցում ընել բոլոր անոնց համար՝ որ իրեն հանդէպ անտարբեր են եւ կամ այս պաշտելի Սրտին ջերմեւանդութեան տարածութեանը կ'ընդդիմանան:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մրացական աղօթք: Ո՛վ Յիսուս. ո՛վ Աստուած իմ, քու խօսքերդ երբեք չեն ծանծրացըններ. խօսք մը ըսէ հոգւոյս, այսօր ըսէ՛, միշտ ըսէ՛, երբեք մն լւեր:

Այցեչորթիւն ամենաստորջ Հաղորդութեան:

Ո՛վ Յիսուսիս Սիրտը, հոգիներ կամ՝ որ զքեզ իրենց մտածութեանց. իրենց սիրոյն խորը կը կրեն, որոնք թէեւ քու խորամանկէդ հեռու, սակայն արեւի քեզի հետ են քան թէ իրենց գործերուն, իրենց վշտերուն, նեղութիւններուն հետ, որոնցմով անոնց կ'առաջնորդես...: Միշտ զանոնց քու ծայնիդ ուշադիր ընել զիտես, անոնք ալ միշտ կը փութան քեզի լսելու, եւ այս աշխարհիս մէջ քան մ'ալ չի կրնար ընդհատել այս քաղցր խօսակցութիւնն, այս մտերիմ միութիւնը՝ որ քու եւ անոնց միջեւ կը տրբէ: Ո՛վ երջանիկ հոգիներ: Ո՛վ Տէր իմ, շատացիր անոնցմով. վնասդ հանէ անոնց քով. անոնց հետ խօսքդ շարունակէ. յայտնէ անոնց քու հաղորդակցութեանցը լուծեանը մէջ այն նոր եւ հին ծշմարտութիւնները՝ զոր քու Սրտիդ բարի զանձէն կը հանես: Անոնց հասկցուր զասոնք արեւի լուսաւոր

կերպով մը. թափէ՛ անոնց հոգւոյն մէջ այն յորդառատ շափը՝ զոր խոստացար անոր՝ որ հոգ տարած է հաստատ հաւատարմութեամբ հարջտանալու: Իսկ ես, խեղճ ու ողորմելիս, ստոյգ է հազար անգամ խօսած ես իմ քարացած սրտիս. երկայն տարիներէ ի վեր անոր քովս ես եւ անիկայ քու քովդ չէ. երկայն տարիներէ ի վեր քու լուսոյդ մէջ կը քալէ՝ առանց անոր համապատասխանելու: Բայց մի՛ յուսահատիր. ո՛հ, դարձեալ խօսէ ինձի. միշտ ըսէ, մի՛ յոգնիր երբեք, սիրտս միշտ թափառական եւ քեզմէ հեռու դատարկաշրջիկ պիտի չըլայ. վերջապէս զանիկայ ուղղութեան պիտի քերես, քուկինիդ մէջ պիտի պահես եւ քու վէրքերդ պիտի բուժեն անոր վէրքերը:

ԼԱ. Օ Բ

Յիսուսի մեծագոյն Սրտին վերջնականութիւնն  
արեւելս շրջապէս է՝ Տէր վերջնական  
բարութիւն Տարեւոյ անբար Սրտին:

Մարիամ Յիսուսի Սրտին վրայ լիազօր իշխանութիւն ունի. անիկայ կատարեալ սիրոյ մայրն է. սիրով վառեալ ըլլալու համար անոր դիմելու ենք:

Յիսուսի եւ Մարեմայ սուրբ Սրտերն այնչափ միակերպ եւ այնչափ միացեալ են՝ որ մին անվրէպ միւսին կը տանի, սա տարբերութեամբ որ Յիսուսի Սիրտը մասնաւորապէս մաքուր հոգիներու կը նպաստէ, իսկ

Մարեմայ Սիրտը, իւր ընդունած շնորհքներով կը մաքրէ զանոնք՝ որ անմաքուր են, եւ զանոնք Յիսուսի Սրտին մէջ ընդունուելու վիճակը կը բերէ: Մեղաւորներն անգամ պէտք չեն Մարիամէն այս շնորհքն ընդունելէ յուսահատիլ: Անիկայ բովանդակ թշուառներուն ապաստանարանը, բովանդակ աշխարհիս յոյսն է: Առանց այս ողորմած Մօր հանդէպ գորովալից սէր մ'ունենալու, Յիսուսի Սիրտը մտնելու վրայ պէտք չէ մտածել:

Օր մը որ Սրբուհի Գեղարուտա մեծ ջերմեանդուութեամբ «Ողջ լեր, թագուհի, աղօթքին՝ դարձ» — «Եւ շուրջ ողորմութեան Կոյս Մարիամ անոր երեւեցաւ եւ բազկացը վըայ բռնած Յիսուս մանուկին աշուրները ցուցընելով. «Ահա, ըսաւ, ողորմութեան աշուրները՝ զորոնք ուզածիս պէս կը դարձընեմ ինձի դիմողներուն:» Ուրեմն Մարեմայ գորովալից սէր մ'ունենանք. եւ ապա՝ իւր աստուածային Որդւոյն հանդէպ սիրով պիտի տոչորուինք: Հոս է այն յանսահմանս մեծ վարձքը՝ զոր կ'ընդունի ամէն անոնց համար՝ որ իրեն անձնատուր են եղած: Ամէն բարիք մի միայն Մարեմայ ձեռքը եկած են մեզի եւ պիտի դան: Ով որ զանիկայ գտած է, փրկութիւնն ու կեանքն ալ գտած է:

Այսու ամենայնիւ դժուարին չէ մօտենալ այս քաղցր Մօր, քանի որ ինքն իսկ կ'ըսէ

Թէ զինքը փնտռողները կը կանխէ եւ առաջին անգամ ինքն անոնց կ'երեւնայ: Այս, ինքն է որ զինքը սիրելու եւ իրեն ծառայելու փափագը կը ներշնչէ մեզի, որպէս զի կարենայ հարստացընել զմեզ այն ամէն գանձերով՝ որոնց աւանդապահն ինքն է: Իւր ձեռքէն պիտի անցնին այն ամէն շնորհքները՝ որոնցմով Յիսուսի Սիրտը կ'ուղէ զմեզ զեղու:

Մարեմայ դիմենք ուրեմն. գլխաւորաբար իւր Սրտին դիմենք, որ Յիսուսի Սրտին ճշմարիտ պատկերն է, այն Սրտին՝ որ իւր աստուածային Որդւոյն Սրտին հետ այնպէս միացած է, որ ամէն վայրկեան անոր զգածումներուն, ուրախութեանցը, աշխատութեանցը, ցաւոցը եւ մեզի ունեցած սիրոյն մասնակից եղած է: Երբեք զՅիսուս առանց Մարեմայ եւ զՄարիամ՝ առանց Յիսուսի պիտի չգտնենք:

Մարեմայ աղօթենք, գլխաւորաբար իւր առանձնաշնորհութիւններէն ամէնէն սիրելին՝ Անարատ Յղութեան ձեռքը, որ զինքը վայրկեան մ'իսկ իւր Աստուծոյն թշնամին ըլլալէ ազատեց եւ ապահով ըլլանք որ բան մ'ալ պիտի չզլանայ մեզի: Մեր ջերմեանդուութեան մէջ Մարեմայ Սիրտը, Յիսուսի Սրտէն երբեք չզատենք, սիրենք զանոնք, երկուքն ալ սիրենք ի բոլոր սրտէ. ինք զինքնիս այս սիրելի Սրտերուն նուիրենք, բոլորովին իրենց տանք մեր անձը: Յիսուսի



Արտին միջոցաւ Աստուծոյ Հօր ուղղենք մեր աղաչանքները. Մարեմայ Արտին միջոցաւ Յիսուսէն շնորհք խնդրենք. ամէն բան Հօրմէն պիտի ընդունինք Որդւոյն Արտին միջոցաւ եւ Որդիէն Մօրը Արտին միջոցաւ:

Երանելին Հերման իւր կենացը ամէն մէկ օրը Մարեմայ Սիրտը կը պատուէր, եւ կենացը ամէն մէկ օրը նշանաւոր շնորհքներ կ'ընդունէր:

Երանելի Մարիամ Մարգեղութեան ուրիշ կերպ չէր ըներ, Մարեմայ Սիրտը կը դործածէր Յիսուսէն խնդրելու համար եւ Յիսուսի Սիրտը՝ յաւիտենական Հօրմէն խնդրելու համար: Եղջն իսկ Մարիամ աստուածածին հաճեցաւ Սրբուհի Գերգրուտայի ցուցընել թէ այս հրահանգն որչափ հաճելի է իրեն, եւ թէ որչափ Աստուծոյ առջեւ արդիւնաւոր է: Ծանոթեան խթման օրը, այս Սրբուհին սրտի դառնութեամբ կը մտածէր որ Յիսնակաց ժամանակն անյուշած էր՝ առանց զՍ. Աղոյս պատուելու համար առանձինն բան մ'ընելու, երբ Ս. Հոգւով ուսեալ, իբր հատուցում այս անհոգութեան, սուրբ Աուսին նուիրեց, իւր Որդւոյն՝ Յիսուսի քաղցր եւ ազնիւ Սիրտը: Մայրն ողորմութեան անոր հասկցուց թէ՛ երախտագիտութեամբ եւ սրտի ուրախութեամբ կ'ընդունէր այս թանկագին ձօնը, եւ թէ ասիկայ արդեամբք անհամեմատ կը գերազանցէր այն ամէն ուրիշ ներդործութիւնները՝

զոր կրնար ընել զինքը պատուելու համար:

Ո՛վ Մարիամ, մայր շնորհաց, տես մեր թշուառութիւնն ու վշտերը, որ կ'ընկճեն զմեզ այս արտասուաց հօլտին մէջ. խնդրէ Յիսուսէ որ իւր Սիրտը բանայ մեզի եւ սորվեցընէ մեզի որ խղճենք մեր տխրութիւններն ու ցաւերը իւր աստուածային Արտին մէջ, որ այս աշխարհիս մէջ դառնութեան ծով մը եղաւ. թող բաւական ըլլայ մեզի՝ այս սիրելի Արտին ակնարկ մը նետել, ինչպէս երբեմն Հրեայք պղնձէ օձին, իսկոյն բուժուելու համար այն ամէն հիւանդութիւններէն, որ սրտերնիս կը վշտագնեն:

Հրահանգ: Երբ սուրբ Պատարագի ներկայ գտնուիս, խաչին առջեւ Մարեմայ տրամագրութիւնները Յիսուսի Արտին նուիրէ. եւ երբ հաղորդուելու երթաս, նմանապէս նուիրէ Մարեմայ տրամագրութիւնները եւ Մարգեղութեան միջոցին իւր սուրբ զմայլումները: Ինքն իսկ այս հրահանգը սորվեցուց երանելի Մարգարիտա-Մարեմայ: ուրեմն կրնաս ապահով ըլլալ որ ասիկայ անոր հաճելի պիտի ըլլայ, եւ հոգեւոր կենաց այս ամէնէն նշանաւոր գործողութեանը միջոցին գործած վատութեանցդ ու ցրտութեանցդ հատուցում պիտի ընէ:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմանց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Միջոցակամ աղօթք: Ո՛վ Մարիամ, անձիս հանգիստ պիտի շտամ, ընզմէ Յիսուսի Արտին սէրը շնորհունամ:

Այցեդրութիւն ամենասուրբ Հաղորդութեան:

Յիսուսի Սիրտը ծանշնալու եւ սիրելու անգուսպ փափագովս, որոնն ղիմեմ, ո՞վ Մարիամ, եթէ ոչ քեզի՝ որ անոր մայրն ես եւ նաեւ իմ մայրս. քեզի՝ որ զինքը ծանշցար եւ սիրեցիր ըստ արժանւոյն: Ո՞վ Մարիամ, իմ խուզարկութեանցս մէջ քու փրկաւէտ ձեռնտուութեանդ նեցուկը շնորհի՛ ինձ. Յիսուսի նետ միացուր զիս, որմէ նեռու ամէն քան ղսոն է ինձ: Դոնն որ մի միայն անհկայ ծանշնալով զբաղեցար, ղոնն որ զինքն անընդհատ սիրեցիք, ղոնն որ ի նմս կ'ապրիս առաւել, քան ի քեզ, զձս իմ թշուառութեանս վրայ: Տես իմ անկարողութիւնս: Օր մը՝ զինքը կը փնտռեմ, ուրիշ օր մը իրմէ կը հեռանամ. սիրտս կը մարքեմ զինքը տեսնելու արժանանալու համար, յետոյ արարածոց, հաճոյից եւ աշխարհիս մոլութեանց կը ղսոնամ. քայլ մը կ'առնսմ զինքը ղիմաւորելու համար, իսկ հարիւրաւոր քայլեր զիս իրմէ կը հեռացնեն: Ո՞վ Մարիամ, եթէ քեզմէ աւելի զձած փաստաքան մը, աւելի կարեկից մայր մը ծանշայի, անոր պիտի երթայի իմ խնդժութիւնս եւ փափագներս յայտնելու: Դոնն՝ որ ամէն քան կընաս, ղոնն՝ որ զիս կը սիրես, ղոնն՝ որ անձամբ սրտիս մէջ անօթութիւն եւ ծարաւ կը զարթուցանես, պիտի չծգեմ զքեզ եթէ զՅիսուս սրտիս չտաս, եթէ անոր Սրտին սէրն եւ առաքինութիւնները չյայտնես ինձ, եթէ քու անընդհատ պաշտպանութիւնդ ինձ չխոստանաս, պահպանելու համար այս գանձը, զայն անգամ մ'ինձի յանձնելէ՞ վերջը:

ԼԲ. Օ Ր

Յիսուսի սուրբ Սրտին ջերմ-ամբողջ-բնական սուրբ-հալո-հինգերորդ փնջն է՝ Ս. Յովնէ-յ, Ս. Յովնանէ- Աւետարանի է- Ս. Ալդի-Գոնչակ-այ-յն մասնա-որ ջերմ-ամբողջ-բնական է:

Երկնից Սուրբերը հաճոյք կը զգան զիրենք պատուողներուն համար ընդունելու այն առաքինութիւնը՝ յորում իրենք նշանաւոր եղած են, եւ փրկութեան այն միջոցները՝ որ իրենց հզօրագոյնս սատարած են կատարելութեան հասնելու: Յիշեցիրք թէ որչափ սաստիկ էր Սրբոց ջերմեանդութիւնը՝ Յիսուսի Սրտին հանդէպ. հոս յառաջ բերենք նաեւ այն Սուրբերը՝ որոնց բարեխօսութիւնն աւելի ազգու կ'երեւի այս փրկաւէտ ջերմեանդութեան հոգին ընդունելու համար. որովհետեւ անոնք զայն աւելի լաւ ծանշցած եւ աւելի շարունակաբար գործադրած են:

Առաջինն է Ս. Յովնէ: Յիրաւի այս փառաւորեալ Սուրբը, զՅիսուս մանկութեան ժամանակ բազկացը վրայ ստէպ կրելու եւ երեսուն տարի անոր հետ ընտանեբար ապրելու առանձնաշնորհութիւնն ունեցած ըլլալով, ո՞վ կրնայ տարակուսիլ, որ Յովնէփայ Նազարէթի մէջ անցուցած աղօթքի եւ աշնդհատ լուութեան կեանքին մէջ, աստուածային փրկիչն անոր ցուցուցած չըլլայ իւր Սրտին գանձերը, իբրեւ ամէն սուրբերու

մէջէն առաջինին եւ ամէնէն աւելի առանձնաշնորհեալին, իւր աստուածածին Վօրմէն վերջը: Ուրեմն Յովսէփայ դացէք, եթէ կ'ուզէք Յիսուսի Սիրար ճանչնալ ու սիրել. որովհետեւ իւր իբրեւ հայրը սիրած այս մեծ Սուրբին ձեռքը յանձնած է իւր Սրտին բովանդակ գանձերը, որպէս զի գանձը հաւատարիմ ծառաներուն վրայ սփռէ:

Յովսէփէն ետքը, դացէք Յիսուսի սիրելի աշակերտին, սուրբ Յովնանէն Աւետարանի: Յիրաւի որոնն աւելի աղէկ կրնաք դիմել, Յիսուսի Սրտին հանդէպ քաղցր ջերմեռանդութեամբ մը վառեալ ըլլալու համար, եթէ ոչ այս սիրելի աշակերտին՝ որ ընթրեաց միջոցին այս աստուածային Սրտին վրայ հանգչեցաւ, եւ որ առաջին անգամ ամէն գաղտնեաց խելամուտ եղաւ. այս առաքելոյն՝ որ մինակ ըլլալով՝ խաչին վրայէն այս Սրտին վերջին հառաչանքներն ընդունեցաւ. ինքը մինակ Մարեմայ ցաւերուն մասնակից եղաւ՝ երբ Մարիամ այս սուրբ Սրտին տէգով խոցուիլն եւ ասկէ շուր եւ արիւն վազելը տեսաւ, ինչպէս որ ինք կը վկայէ, եւ որ առաջինն ըլլալով՝ սիրոյ այս վերքին մէջ մտաւ եւ հոն հաստատեց իւր բնակարանը:

Գալով սուրբ Ալոզիոս Գոնզալուցոյն, իւր ներանձնացեալ եւ Աստուծոյ հետ անընդհատ միութեամբ միացեալ կեանքին մէջ, Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեռանդութիւնն՝ իւր բնորոշ յատկութիւնն եղաւ:

«Ո՛հ, Ալոզիոս սրչափ սիրած է աշխարհիս վրայ, կը գոչէ Ս. Մադաղենէ Փացեան, որուն շնորհուեցաւ տեսնել այս սուրբին երկնից մէջ վայելած փառքը. ո՛հ, Ալոզիոս սրչափ սիրած է: Երբ այս մահահանացու կենաց մէջ էր, Մարդացելոյն Սրտին մէջ անգաղար սիրոյ նետեր կ'արձակէր, հիմայ որ երկինքն է, նետերը դէպ ի իւր սիրար կը գառնան եւ հոն կը մնան, որովհետեւ այն ժամանակ բրած սիրոյ եւ ընկերութեան գործքերը, անոր անսահման ուրախութիւն մը կը պատճառեն:

«Ո՛հ, Իգնատիոսի որդւոյն՝ Ալոզիոսի փառքն սրչափ մեծ է. երբեք պիտի չհաւատայի անոր, եթէ Յիսուս զայն չցուցընէր ինձի: Կ'ուզէի բոլոր աշխարհը պատիլ ըսելու համար որ՝ Ալոզիոս մեծ սուրբ մ'է. կը բաղձայի անոր փառքը բոլոր աշխարհիս մէջ ծանօթացընել, որպէս զի Աստուած անով փառաւորուի: Ներքին կեանք մը վարած ըլլալուն համար է, որ երկնից մէջ այնչափ մեծ փառքի հասած է: Ո՛վ կրնայ ներքին կենաց արդիւնքն ու զօրութիւնը ըստ արժանւոյն գնահատել: Ո՛չ, ներքին ներգործութեանց եւ արտաքիններուն միջեւ համեմատութիւն մ'ընել կարելի չէ երբեք:»

Այս սիրելի սուրբը ձեռք օրինակն է, ներանձնացեալ հոգիներ, քրիստոնեայ պատանիներ, անիկայ առանձինն կերպով ձեռք պաշտպանն է. չէք կրնար անոր զձեզ առան-

11  
 ձինն հողալուն վըայ տարակուսիլ: Մա-  
 նաւանդ որ ինքն իսկ յայտնած է թէ՛ Յի-  
 սուսի Սրտին ջերմեռանդութեան տարա-  
 ծուիլը անչափս կը փափաղի. ուստի եւ  
 ապահով եղէք որ իրեն հաճելի պիտի ըլլաք,  
 եթէ այս ջերմեռանդութիւնն ընդունելու  
 համար իրեն դիմէք:

Յամին 1765, Յիսուսեանց ընկերու-  
 թ ենէն՝ Նիկողայոս-Ղուգովիկոս Չէլէսթինի  
 անուամբ նորընծայ մը, շատ վտանգաւոր  
 հիւանդութեամբ մը վարակուած եւ գրե-  
 թէ մահամերձ, տեսաւ որ հրեշտակամանն  
 Ալոզիոս Գոնդակացի իւր քովը եկած է,  
 եւ որ իրեն մխիթարական խօսքեր ուղղեց  
 եւ յորդորեց զինքը որ սիրէ Յիսուսի Սիրտը  
 եւ անոր ջերմեռանդութիւնը տարածէ: Նի-  
 կողայոս խոստացաւ անոր պատուէրը կա-  
 տարել, եւ իբրեւ վարձք ո՛չ միայն հիւան-  
 դութենէն առողջացաւ, հապա նաեւ ա-  
 նոր ամէն անհաճոյ հետեւանքներէն ազա-  
 տեցաւ: Այսպէս այն որ նախընթաց օրը  
 հազիւ անկողնոյն մէջ կրնար շարժիլ, հե-  
 տեւեալ օրը կրցաւ սոսկալի ցուրտով մը,  
 շատ մը մղոն քալել, եւ միւս նորընծանե-  
 րուն հետ կէտ առ կէտ հետեւիլ կանոնաց:  
 Այս հրաշալի ապաքինութիւնը՝ սուրբ Սրտին  
 ջերմեռանդութեան տարածման մեծապէս  
 նպաստեց:

Հրահանգ: Ըստ օրինակի Ս. Ալոզիոս Գոնդա-  
 կացոյն, երբեմն երբեմն սուրբ-ազնիւիք ընելու

վարժէ. Յիսուսի սիրոյն մէջ քիչ ժամանակուան  
 մեջ յառաջանալու համար ամէնէն աղքատ միջոցն  
 է այս: Այս կարճ աղօթքները բոցավառ սլաք-  
 ներ են, որ ուղղակի անոր Սրտին կ'երթան, գո-  
 ռոնք չեն կրնար կեցընել մտաց ցրումներն ու  
 թուլութիւնը՝ որ այնչափ յաճախ մեր միւս հո-  
 գեւոր հրահանգներուն մէջ կը խառնուին:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
 Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեալ վասն մեր:

Մըսցակաւ աղօթք: Ե՞րբ զքեզ մննակ պիտի  
 կարենամ գտնել, ո՞վ Սիրտ Յիսուսի:

Այցեդռնիս ամենատուրս Հաղորդութեան:

Ինծի տուած բոլոր ժամերուդ մէջէն՝ զորոնք  
 պարտական էի ամբողջապէս քեզի դարձընել,  
 զամէնքը քեզի նուիրել, երբ կը փորձեմ օրը՝  
 ժամ մը միայն քեզմով զբաղիւ, ինչու այս կարճ  
 ժամանակամիջոցը կ'անցնի, կը սրանայ վնասե-  
 լով այն մտտի մտածութիւնները՝ որ կու գան  
 փոխանակ քեզի՝ մեքս զբաւելու: Ո՞վ Յիսուս,  
 ո՞վ իմ աստուածային Յիսուսիս Սիրտը, կ'ըր  
 պիտի կարենամ զքեզ մննակ գտնել: Ո՞հ, երբ  
 այս տխուր կենաց բոլոր կիրքերը, բոլոր մտա-  
 զբաղումները, վախերն ու փափազները զիս  
 պիտի թողուն, այնպէս որ առանց մտաց ցրման  
 կարենամ քեզի նտ խօսակցիլ. մննակ քեզի  
 զաւ, ինչպէս որ զքեզ մննակ ինձմով զբաղած  
 կը գտնեմ: Հո՛ս, ո՞վ Յիսուս, այս փափագելի  
 մննութեան մէջ, քեզի պիտի ընեմ գանգատ-  
 ներս. որովհետեւ զիմ մեղացս վըայ շացի. զեռ  
 քու ցաւոցը շկարեկցեցայ. եւ այսու հանդի՞րձ

այս կեանքը միակ ժամանակն է ուր կրնանք սիրոյ եւ երակտագիտութեան մեր այս պարտականութիւնները կատարել: Հո՛ս, ո՞վ Յիսուս ոտքերուդ ինկած, պիտի լռեմ՝ եւ քու Սիրող իմ լուծիչես պիտի լսէ: Ո՛հ, ո՞վ պիտի տայ ինձի զքեզ մինակ գոննէ, զքեզ մինակ սերել, զքեզ մինակ նկատել, եւ մինակ քեզի համար զաշխարհ եւ աշխարհային բաները մոռնալ, եւ մանաւանդ ինք զինքս անպակէս մը մոռնալ՝ որ չկարենամ քեզմէ դուրս տեղ մը գտնուիլ: Ո՞վ Աստուած իմ, քանի որ չուզեցիս զիս քեզի հետ տանիլ այն մենութեանց մէջ՝ ուր մի միայն քեզի համար կ'ապրին, աշխարհէս քուրորդին հետու, թո՛ղ տուր որ ես զքեզ քաշեմ տանիմ ինձի հետ այս արտաքին կեանքին մէջ, ուր ամէն բան ինձի դէմ կը միանայ հեռացնելու համար զիս քեզմէ, որմէ հետու ալ չեմ կարող ապրիլ: Եթէ իմ շուրջս չէ՛ գոնէ ըստ քու խոստմանդ իմ մէջս, սրտիս խորը հաստատէ այն քու էութեամբդ լեցուն յաւիտենական դարերու անպատմները, այն անապատները՝ ուր արարածները կը լռեն եւ ուր մի միայն դո՛ւն կը լուսիս, դո՛ւն կը տեսնուիս, եւ մի միայն զքեզ կ'ուզեն, քու աստուածային Սրտիդ ամէնէն սերտ միութեանը մէջ:

**ԼԳ. Օ Ր**

Ահա ասորք Սրտին ջերմ-անդր-իւնն ասե-  
նորէ՛ր որարածելու ետանդին վրայ, զոր Յիսուսի  
Սիրտն իբեւ նո-խրո-ծնեբէն կը սպասէ:  
Յիսուսի Սրտին հանդէպ մեծ ջերմեռան-  
դութիւն մ'ունենալը բաւական չէ, պէտք է

որ բոլոր կարողութեամբդ զայն տարածելու  
ալ աշխատիս. եւ այս դժուարին պիտի չըլ-  
լայ, եթէ կը սիրես: Սիրոյ ամէնէն անվրէպ  
ապացոյցն՝ եռանդն է, եռանդ չունեցողը,  
սէր ալ չ'ունենար, կ'ըսէ Ս. Օգոստինոս:

Բայց եռանդը ցուցնելու միջոցներն որո՞նք  
են: Երէք հաս են, որ ամէն մարդ կարող է  
դործածել: Առաջինն է օրինակը. դուն ան-  
ձամբ Յիսուսի Սրտին խանդակաթ ջերմե-  
ռանդութեան մը օրինակը տուր. ասիկայ  
դասերուն ամենակարճն ու ամէնէն ազդուն  
է: Երկրորդ միջոցն է զայն յաճախութե-  
լ շնանչցողներուն ծանչցընել. քիչ շատ ջեր-  
մեռանդութիւն մ'ունեցողներուն մէջ զայն  
պահպանել եւ աճեցընել: Երրորդ միջոցը՝  
ամէնէն ազդուն եւ ամէնէն ալ դիւրինը,  
այս սուրբ Սրտին եռանդեամբ ողջիւն է,  
որպէս զի ինքն իսկ իւր լոյսերովն ու հոգի-  
ները փոխող եւ լուսաւորող գաղտնի թելա-  
դրութիւններովը, ինք զինքը սիրցնէ եւ  
ճանչցընէ. որովհետեւ այս ջերմեռանդու-  
թիւնը կը թուի թէ պտուղն է աղօթքի,  
մին այն բացառիկ շնորհքներէն՝ զոր Տէրն  
մեր սրտերու մէջ տարածելն իրեն վերապա-  
հած է:

Ոչ գը կրնայ այսպիսի դիւրին միջոց մը  
չդործածելուն համար արդարանալ. սուրբերը  
լաւ գիտէին թէ՛ Աստուծոյ փառաց համար  
եղած ձեռնարկութեանց մէջ ինչպիսի զորու-  
թիւն ունի աղօթքն Աստուծոյ սրտին վրայ:

անիւր համար երբեք չէին մտնար զայն իրենց քարոզութեանց կցելու, յիշելով Պօղոս առաքելոյն ըսածը՝ թէ ոչ անկողն է եւ ոչ ալ ջուր տուողն է որ աճում կու տայ, այլ Աստուած: Այսուհետեւ ոչ այն ինչ որ է՝ որ ունիւցն է ոչ այն որ զընդուն էր. այլ որ անկողնն Աստուած:

Յիսուսեան ընկերութենէն Հ. Բենեդիկտոս Բալմիոյին նկատմամբ կը պատմուի որ՝ յառաջ քան ժամերով արտասուախառն եւ ջերմեանդ սրտիւ աղօթելու չէր քարոզեր երբեք: Նոյն ընկերութեան աշխատաւոր եղբայրներէն մէկուն երբ հարցուցին թէ՛ իւր դանապանի պաշտօնին մէջ ինչպէս Աստուծոյ այնչափ հոգիներ կը շահէր, պատասխանեց. «Մարդկան խօսք մը կ'ուզղեմ, իսկ Աստուծոյ հարիւր:» Նոյնպէս վարուինք եւ յաջողութեան վրայ վստահ ըլլանք:

Աղօթենք ուրեմն, եւ եթէ մեղքերնիս զմեզ անարժան կ'ընեն Յիսուսի Քրիստոսի իւր Սիրաբ ճանչցընելու համար գործածել ուզած գործիքներն ըլլալու, խնդրենք իրմէ որ մեր տեղը ուրիշներ գնէ: Պաղատինք որ իւր հունձքին համար իւր Սրտին առաքեալները զօրէ, որոնք՝ այս ջերմեանդութեան առաւելութեանց լիւր խելամուտ՝ ինք զինքնին նուիրեն զայն աճեցընելու եւ տարածելու: Աղօթենք այն, աղօթենք, ամենայն ինչ խոստացուած է աղօթքին: Սուրբ հոգի մը որ մը Աստուծոյ հարցուց թէ՛ Ինչ

չու այս ապականեալ դարուս մէջ չէր յարուցաներ այն սուրբերէն մէկը՝ որուն եռանդը կերպով իւր զաշխարհս կը փոխէ. «Ինձի բաւական չեն աղօթքեր», պատասխան տրուեցաւ իրեն:

Հոգիներու բարեոյն համար Աստուծոյ ուղղած աղօթքներնուս մէջ յաջողելու հաստատուն միջոցը՝ զանոնք Յիսուսի Սրտին միջնորդութեամբը մատուցանելն է, ինչպէս որ ըսուեցաւ Գանատայի Ուրսուլեանց հիմնադիր՝ Մարդեղութեան Մարեմայ: Ահա թէ այս նկատմամբ ինչ կը պատմէ իւր ինքնակենսագրութեան երկրորդ գրքին մէջ. «Գիշեր մը, որ յաւիտենական Հօր, հոգիներուն փրկութեան մեծ գործքը կը ներկայացընէի, ներքին լուսով մը հասկցուց որ իւր աստուածային Մեծ վայելչութիւնը զիս մտիկ չէր ըներ եւ իմ անոր ըրած պաղատանացս ու թախանձանացս ըստ սովորականին հաճութիւն չէր ցուցընէր: Ոտքերուն ինկած կը հայէի, կը մաշէի, նուաստութեանս եւ ոչնչութեանս միջեւ կը խորասուզուէի, որպէս զի իւր աստուածային բարութիւնը իմ մէջս դներ՝ ինչ որ իրեն աւելի հաճելի էր աղօթքս լսուելու համար: Այն ժամանակ սա խօսքերը լսեցի. «Ամենասիրելի Որդւոյս՝ Յիսուսի Քրիստոսի Սրտովն խնդրէ իզմէ. անոր միջոցովն է որ աղօթքներդ պիտի լսեմ եւ խնդրածներդ պիտի պարգեւեմ:» Այս ժամանակէս ի վեր, կ'ըսէ

Սրբուհին, այս հրահանգով է որ իրիկունք ջերմեանդու թիւններս կը կատարեմ եւ այս կերպով նորանոր շնորհաց հեղեղներ կ'ընդունիմ, զոր անկարելի է նկարագրել<sup>1</sup> :

<sup>1</sup> Մարդեղութեան Մարեմայ աղօթքը:

«Յիսուսի Սրտին միջոցաւ, որ է ծանապարհ, ծշմարտութիւն եւ կեանք իմ, քեզի կը մերձեանամ, ո՞վ Հայրդ յաւիտենական: Այս աստուածային Սրտին միջնորդութեամբ զքեզ կը պաշտեմ անոնց համար՝ որ չեն պաշտեր զքեզ, կը սիրեմ զքեզ անոնց համար՝ որ չեն սիրեր զքեզ, կը ծանչնամ զքեզ քոյր ա՛յն կամաւոր կոյրերուն համար՝ որ արձամբոյնսդ մը չեն ծանչնար զքեզ: Այս աստուածային Սրտին միջոցաւ կ'ուզեմ քոյր մահկանացուներուն պարտուց համար հատուցում ընել: Մտքով աշխարհիս շրջանը կ'ընեմ, աստուածային փեսիս ամենապատուական արեամբը փրկուած հոգիները փնտոելու համար, որպէս զի ամէն հոգիներու համար այս աստուածային Սրտով հատուցում ընեմ քեզի: Չանոնք կը գրկեմ, Յիսուսի Սրտով քեզի ներկայացընելու համար, եւ Անով անոնք դարձը կը ինդրեմ: Ի՞նչ, Հայրդ յաւիտենական, կրնաս հանդուրժել որ անոնք իմ Յիսուս չծանչնան, եւ միայն Անոր համար չսարին, երբ անիկայ ամէնուն համար մեռաւ: Կը տեսնես, ով Հայր յաւիտենական, որ անոնք դեռ չեն սարբի: Ո՛հ, զանոնք այս աստուածային Սրտին մէջ ապրեցուր:

Ո՞վ բանն մարդացեալ, իմ ամենասիրելի Յիսուս, դուն զիտես ինչ որ կ'ուզեմ ըսել Հօրդ, քու աստուածային Սրտովդ եւ քու սուրբ հոգ-

Աւելցրենք հոս նաեւ Յիսուսի սրանչելի խոստումներն անոնց համար, որ իւր աստուածային Սիրտը ծանօթացընելու պիտի աշխատին եռանդեամբ: «Տէրն մեր, կ'ըսէ երանելի Մարգարիտա-Մարիամ, ինձի ցուցուց սիրոյ եւ շնորհաց գանձերը, այն անձանց համար՝ որ իրենք զիրենք կը նուիրեն անոր Սրտին սալու եւ մատակարարելու ամէն պատիւը, սէրն ու փառքը՝ որ իրենց կարողութեան ներքեւ պիտի ըլլայ: Բայց այնչափ մեծ գանձեր՝ զոր չեմ կարող նկարագրել:» Եւ այլուր՝ «Տէրն մեր ինձի ցուցուց որ բազմաթիւ անձանց անուններն իւր սուրբ Սրտին մէջ նշանակուած են, իրենց զայն սիրել եւ պատուել տալու ունեցած փափագին պատճառաւ, եւ թէ ասոր համար երբեք անկէ պիտի չաւրուին, բայց ինձի չըսաւ, կը յարէ Երանելին, թէ իւր բարեկամները խաչ պիտի չունենան: որովհետեւ կ'ուզէ որ իրենց ամենամեծ երջանկու թիւնը՝ իւր գառնութիւնները ճաշակելու վրայ դնեն:»

Յիշե՛ք գլխաւորաբար որ պողպէր ըլլալու համար՝ եռանդնիս խոհեմ՝ եւ լուսաւորեալ ըլլալու է: Աստուծոյ հայտը գործերն

լովդ: Անոր ըսելով քեզի կ'ըսեմ, որովհետեւ դուն քու Հօրդ մէջն ես, եւ Հայրդ քու մէջդ է: Բոլոր այս հոգիները քեզի կը ներկայացընեմ. ըսէ որ քեզի հետ միեւնոյն բանն ըլլան:»

Սրբուհին, այս հրահանգով է որ իրիկունք ջերմեռանդու թիւններս կը կատարեմ եւ այս կերպով նորանոր շնորհաց հեղեղներ կ'ընդունիմ, զոր անկարելի է նկարագրել<sup>1</sup> :

<sup>1</sup> Մարդեղութեան Մարեմայ աղօթքը:

«Յիսուսի Սրտին միջոցաւ, որ է ծանապարհ, ծշմարտութիւն եւ կեանք իմ, քեզի կը մերձեցնամ, ո՛վ Հայրդ յաւիտենական: Այս աստուածային Սրտին միջնորդութեամբ զքեզ կը պաշտեմ անոնց համար՝ որ շնն պաշտեք զքեզ, կը սիրեմ զքեզ անո՞նց համար՝ որ շնն սիրեք զքեզ, կը ծանջնամ զքեզ բոլոր ա՛յն կամաւոր կոյրերուն համար՝ որ արհամարհանքով մը շնն ծանջնար զքեզ: Այս աստուածային Սրտին միջոցաւ կ'ուզեմ բոլոր մահկանացուներուն պարտուց համար հատուցում ընել: Մտքով աշխարհիս շրջանը կ'ընեմ, աստուածային փեսիս ամենապատուական արեամբը փրկուած հոգիները փնտռելու համար, որպէս զի ամէն հոգիներու համար այս աստուածային Սրտով հատուցում ընեմ՝ քեզի: Զամոնք կը գրկեմ, Յիսուսի Սրտով քեզի ներկայացընելու համար, եւ Անով անոնց դարձը կը ինդրեմ: Ի՞նչ, Հայրդ յաւիտենական, կրնաս հանդուրժել որ անոնք իմ Յիսուս շճանջնան, եւ միայն Անոր համար շապրին, երբ անիկայ ամէնուն համար մեռաւ: Կը տեսնես, ով Հայր յաւիտենական, որ անոնք դեռ շնն ապրիր: Ո՛հ, զամոնք այս աստուածային Սրտին մէջ ապրեցուր:

Ո՛վ քանն մարդացեալ, իմ ամենասիրելի Յիսուս, դուն զիտես ինչ որ կ'ուզեմ ըսել Հօրդ, քու աստուածային Սրտովդ եւ քու սուրբ հոգ-

Աւելցընենք հոս նաեւ Յիսուսի սքանչելի խոստումներն անոնց համար, որ իւր աստուածային Սիրտը ծանօթացընելու պիտի աշխատին եռանդեամբ: «Տէրն մեր, կ'ըսէ երանելի Մարգարիտա - Մարիամ, ինձի ցուցուց սիրոյ եւ շնորհաց գանձերը, ա՛յն անձանց համար՝ որ իրենք զիրենք կը նուիրեն անոր Սրտին տալու եւ մատակարարելու ամէն պատիւը, սէրն ու փառքը՝ որ իրենց կարողութեան ներքեւ պիտի ըլլայ. բայց այնչափ մեծ գանձեր՝ զոր չեմ կարող նկարագրել:» Եւ այլուր՝ «Տէրն մեր ինձի ցուցուց որ բազմաթիւ անձանց անուններն իւր սուրբ Սրտին մէջ նշանակուած են, իրենց զայն սիրել եւ պատուել տալու ունեցած փափագին պատճառաւ, եւ թէ ասոր համար երբեք անկէ պիտի չաւրուին, բայց ինձի չըսաւ, կը յարէ երանելին, թէ իւր բարեկամները խաչ պիտի չունենան. որովհետեւ կ'ուզէ որ իրենց ամենամեծ երջանկու թիւնը՝ իւր գառնութիւնները ճաշակելու վրայ դնեն:»

Յիշենք գլխաւորաբար որ պողպէր ըլլալու համար՝ եռանդնիս խոհեմ եւ լուսաւորեալ ըլլալու է: Աստուծոյ հայր գործերն

տովդ: Անոր ըսելով քեզի կ'ըսեմ, որովհետեւ դուն քու Հօրդ մէջն ես, եւ Հայրդ քու մէջն է. ուրեմն այս ամէն քան անոր հետ ըրէ: Բոլոր այս հոգիները քեզի կը ներկայացընեմ. ըրէ որ քեզի հետ միեւնոյն քանն ըլլան:»



աշխարհիս գործերէն շատ տարբեր են. ասոնց մէջ շատ գործելու է. իսկ Աստուծոյ գործերուն մէջ պէտք է գոհանալ իւր ներշնչումներուն հետեւելով, յետոյ թողուլ որ շնորհքը գործէ, եւ բոլոր մեր կարողութեամբն անոր շարժումներուն հետեւիլ: Ամենասուրբ Սրբին ջերմեանդուութիւնը պէտք է սիրոյ օժումովը մեղմով մտնել այն որտեղուն մէջ՝ գործնք: Աստուած իրեն սահմանած է: (Մարգարէիս - Մարգարէի):

Հրահանգ: Խնայութեանցդ մէկ մասը գրքդկներ եւ Ս. Սրբի մետաղներ գնելու գործածէ եւ ջանա որ զանոնք ամէն կողմ տարածես: Չարերը միշտ ստակ եւ միջոց կը գտնեն ազականեալ գրքեր տարածելու. միթէ պիտի թողունք որ անոնք վմեզ անցնին:

Սուրբ Սիրտ Յիսուսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարիամայ, աղօթեալ վասն մեր:

Մշացական աղօթք: Ո՛վ Սիրտ Յիսուսի, թո՛ղ քու փառացոյ եռանդը զիս լսիէ: Նախաձեռն տամ քո կերպից գլխ:

Այցեդուրթիւն ամենասուրբ Հայրդոյութեան:

Ո՛վ Սիրտ Յիսուսի, որչափ սրտեր կան՝ որ երբեք չեն տոչորուած քու սիրովը: Բանն ազգեր մահուան շուքին ներքեւ նստած՝ կը սպասեն դեռ, որ երկնից Թագաւորութեան արեւտիսն իրենց տարուի: Գանք ուրեմս, մենք որ ամէնշնչիս ալ զԱստուած կը պաշտենք, զմեզ ստեղծող Աստուծոյ առջեւ երկրպագութիւն ընենք, որպէս

զի իւր պաշտական ձեռքը տարածէ նաեւ այն ազգերուն վրայ՝ որոնց Աստուածն է. եւ որոնք իւր արեամբը գնուած ժողովուրդ է եւ իւր հօտին ոչխարներն են, որպէս զի զանոնք իւր սքանչելի լուսոյն ներքեւ կանչէ, զանոնք մեզի հետ մէկ հաւատքով միացնէ, որպէս զի այլ եւս մի հօտ եւ մի հովիւ ըլլայ:

Բայց ով Տէր, իղծերս այսչափ հեռու տարածելով պիտի մոռանամ միթէ քու ընտրած ժողովուրդդ, քրիստոնեայ ազգը՝ որ քու սիրոյդ շափազանցութիւնները կը ծանշնայ, որուն այնչափ կը մօտենաս հակառակ Աստուած ըլլալուդ: Անոնց միջեւ քու անունդ նախատիպ մըն է. քու տօներդ ու խորհուրդներդ արճամարհուած ձգուած են: Դնչո՛ւ ազգերը սասանեցան: Դնչո՛ւ ժողովուրդներն ազատութեան եւ երջանկութեան սնոտի կերպեր մտածեցին: Դնչո՛ւ իրենց լուծն օր քան զօր ծանրացաւ: Ա՛հ, որովհետեւ քուկիսնդ իրենցմէ հեռու նետեցին, եւ դուն անոնց ցուցնել ուզեցիր թէ՛ Աստուծմէ հեռանալն որչափ գէշ բան է: Ո՛վ Յիսուս, դո՛ւն միայն կրնաս կոյրերը լուսաւորել. այս Թափառական ոչխարները փարախդ դարձուր, բաց անոնց առջեւ աստուածային Սրտիդ ծածկար: Ո՛հ, երանք թէ զիս արժանի դատէիր այս փրկութեան զործին մէջ քեզի նպաստամատոյց ըլլալու: Սրտիս եռանդին հուրը բորբոքէ: Թո՛ղ բոլոր իմ կարողութիւններս զբաւէ, թո՛ղ զիս սպառէ, թո՛ղ զիս՝ զքեզ սիրուած եւ ծանշցուած տեսնելու փափագով ցամփեցնէ, ով աստուածային Սիրտ: Թո՛ղ զքեզ սիրելով եւ զքեզ ծանօթացնել եւ սիրել տալով միանիմ:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

ԱՖի-----րք Արտին Վերտեւերք-բեւսն ՎՋ  
յ-րարե-եւ-ւ- ի-ր-յ:

«Այս ամսոյն մէջ բարի յառաջադրու-  
թեանցդ կատարման մեծ գաղտնիքը՝ Յիսուսի  
Արտին մէջ մտնել, Յիսուսի Արտէն ելլել եւ  
դարձեալ Յիսուսի Սիրտը մտնել սորվիլն է:

«Նախ՝ Յիսուսի Սիրտը մտիբ մտամհոփի եւ  
աղօթքով. բովանդակ կենացդ մէջ աղօթքը  
մեծ համարէ եւ զՅիսուս աչքէ մի կորսնցը-  
նեք երբեք: Յիշէ թէ Արբուհի Թերեզիս  
ասիկայ սրչափ կը յանձնարարէ. անոր պէս  
դուն ալ Յիսուսիւ հոն մտիբ:

«Երկրորդ. Յիսուսի Արտէն ել, Յիսուսի  
Արտին համար աշխատելու համար. դուքս ել  
անկէ, ինչպէս Աերովբէններն արքայութենէ  
կ'ելլեն առանց անկէ հեռանալու. դոնէ  
կարելի եղածին չափ շուտ հոն վերադառ-  
նալու փափազդ պահէ: Իւր ներկայութեանը  
առջեւ քայլէ: ՉՅիսուս քեզի հետ կրէ,  
զայն դնելու համար անոնց սիրտը՝ որոնց  
հետ կը խօսիս: Ել Յիսուսէն, ինչպէս ճա-  
ռագայթներն արեւէն կ'ելլեն առանց անկէ  
զատուելու եւ ինչպէս Յիսուս իւր Հօրը ծա-  
ցէն ելաւ, առանց անոր հետ միացած ըլլալէ  
զադրելու:

«Երրորդ. դարձեալ Յիսուսի Սիրտը մտիբ,  
կրցածիդ չափ շուտով, երկու կերպով. նախ՝

սիրտդ ու հոգիդ ստեպ վեր ամբառնալով:  
Երբ դբաղմանց մէջ կը գտնուիս, ժամէ ի  
ժամ կամ աւելի յաճախ, դեպ ի Յիսուս  
վերացիր ըսելով օրինակի աղագաւ՝ Սիրտ  
Յիսուսի, դուն ես իմ ոյժս, ուրախութիւնս  
եւ երջանկութիւնս:

Յիսուսի Արտին մէջ վերստին մտնելու  
երկրորդ կերպը կ'ըլլայ՝ խղճի մտաց քննու-  
թեամբ եւ ապաշխարութեամբ: Սիրտդ իւր  
խոտորումներէն ետ կանչէ, գլուխդ խաչին  
տակ դիր եւ եթէ հպարտութեամբ մեղան-  
չած ես, ըսէ. Տէր Աստուած, շախշափէ այս  
գոռոզ գլուխը: Եթէ անհամբերութեամբ  
մեղանչած ես, ըսէ. Ո՛հ, ինչո՞ւ չունիմ քու  
Սիրտդ վերաւորող այն տէգը՝ որ իմինս ալ  
ծանկեր եւ մէջի դառնութիւնը դուքս հա-  
նէր: Եթէ որ եւ իցէ մեղքի մէջ խնաս, Յիսուսին  
դիմէ եւ ըսէ. Փրկիչ իմ, լաւ գի-  
տեմ որ դուն իմ դատաւորս ես, անոր հա-  
մար կ'ուզեմ զքեզ կանխել. երանի ինձ՝  
եթէ դուն զիս չպատժած՝ ապաշխարեմ,  
որովհետեւ լաւ գիտեմ թէ զիս երկու ան-  
գամ պատժելու կամք պիտի չունենաս: Յի-  
սուսի Արտին մէջ այսպէս մտիբ ելիր, նորէն  
մտիբ. բովանդակ կենացդ մէջ անոր հետ  
միացած ըլլալու միջոցն այս է:

Բնաւ մի տարակուսիբ թէ միշտ լաւ ըն-  
դունելութիւն կը գտնես, ինչ պարագայի  
մէջ ալ իրեն դիմելու ըլլաս, նոյն իսկ այն  
ատեն՝ յորում իւր յիշատակը յիշելու ան:

փոյթ գտնուած ես: Ուրբաթ օր մը, Սրբուհի Գերդրուտա, իւր աչքը խաչելութեան դարձընելով, զղջացեալ սրտիւ ըսաւ. «Աւա՛ղ, ամենաքաղցր Արարիչ իմ, այսպիսի օր մը իմ փրկութեան համար որչափ շարժարանք կրեցիր: Իսկ ես, ողորմելիս, ուրիշ հոգեբով զբաղած՝ այս օրն անցուցի առանց յիշելու այն ամէն շարժարանքները, զորոնք հաճեցար այս ամէն մէկ ժամուն կրել, ո՛վ զո՛ւն, կեանքդ կենդանորար, որ իմ սիրոյս համար հաճեցար մեռնիլ:» Ասոր վրայ Տէրն մեր պատասխանեց. «Ես քեզի համար լրացուցի բոլոր զանց առածներդ, որովհետեւ ամէն վայրկեան Սրտիս մէջ միացուցի ինչ որ պէտք էիր քու կինիդ մէջ անցընել. եւ իմ աստուածային Սիրտս անհամբերութեամբ կը սպասէր քու կինիդ առ իս դառնալուն, որպէս զի Աստուծոյ՝ Հօրս մատուցանես բովանդակ արժանիքը՝ զոր դիզած եմ, եւ որ չէին կրնար քու հոգւոյդ տրուիլ; առանց քու կողմանէդ այսպիսի գիտաւորութեան մը:»

«Ահա՛ յսյամ, կ'աւելցընէ Սրբուհին, Աստուծոյ սէրը կ'արտայայտուի, որ սքանչելի կերպով մեր մոռացութիւնները կը լրացընէ եւ իւր Հայրը կ'ողջէ այն ցաւի զօրութեամբ՝ զոր հոգին կ'ունենայ իւր զանցառութեանց համար:»

Հրահանգ: Այս ամսոյս մէջ ցուցուած դանազան հրահանգները վերջացընենք այն հրահանգով՝ զոր Տէրն մեր առաջարկած է Երանելի

Մարգարիտա-Մարեմայ: «Ուրբաթ օր մը, կ'ըսէ, սուրբ Պատարագի միջոցին, մեծ փափագ մը զգացի խաչեցեալ փեսիս շարժարանքները պատուելու. այն ատեն ինք ինծի ըսաւ թէ կը փափագէր որ ամէն ուրբաթ երթամ, օրը քանի մ'անգամ, ցորեկը կամ գիշերը, զայն պատուելու խաչափայտին վրայ՝ որ իւր գթութեան գահն է, խոնարհաբար ոտքն իյնամ միեւնոյն արամադրութեամբ, զոր ունէր Ս. Կոյն իւր շարժարանաց ժամանակ եւ այն սուրբ արամադրութիւնները մատուցանելով:» Տէրն մեր նմանապէս ըսաւ Սրբուհի Մարգարիտէ Փացեանի. «Ամէն ուրբաթ, խաչելութեան վրայ մեռած ժամն մատուաւոր ուշադրութեամբ մը պատուելով, ի փոխարէն պիտի ընդունիս մասնաւոր շնորհքները հոգւոյս, զոր այն միջոցիս յաւիտենական Հօրս աւանդեցի: Եւ թէ եւ չզգաս այս շնորհաց ազդեցութիւնը, սակայն անընդհատ քու մէջդ պիտի հանգչի:»

Սուրբ Սիրտ Եփեսոսի, ողորմեաց մեզ:  
Անարատ Սիրտ Մարեմայ, աղօթեմ վասն մեր:

Մշացական աղօթք: Ապրիմ, քայց ոչ թէ ես ապրիմ, հապա Եփեսոսի Սիրտը յիս ապրի:

Այցեդուրծիւն ամենատարբէր հաղորդութեան:

Ո՛րչափ ցած, թշուառ, ամօթաւից է ընական զգայարանաց եւ կրօն կեանքը՝ զոս կ'անցընն ամէն անոնք՝ որ զքեզ չեն ծանշար, ո՛վ Աստուած իմ: Ո՛հ, եթէ կարենային մեզի պատմել, եթէ մերկապարանոց տեսնէինք իրենց սրտին

խորը, իրենց սրտին նանրութիւնն ու յուսահատութիւնը, որչափ քիչ պիտի նախանձէինք այս կեղծ ազատութեան վրայ՝ որով իրենք կը պարծին. այն ինչքերը, այն պատիւները, որոնց հոգինքն կը զոհեն, երբեք անոնց փափագներէն մին անգամ չեն յագեցուցած: Գալով ինձի՝ զոր յիշած ես սիրոյդ մէջ, ո՛չ միայն այս թշուառ կեանքէն պիտի հեռանամ, հապա նաեւ պիտի շղթայակապեմ հոգիս, զայն պիտի գերեմ, զայն կերպով իւր պիտի կորսնցընեմ ազատելու համար: Դեռ ասիկայ բաւական չէ, ո՛վ Սիրտ Յիսուսի: Տո՛ւր ինձի այս շնորհքը՝ առանց որոյ այս աշխարհիս մէջ հաստատ ըան մը չկայ, այս շնորհքը՝ առանց որոյ չեմ կրնար զքեզ իրապէս փառաբանել, այս շնորհքը՝ որ քու սուրբ առաքեալը կերպարանափոխ կ'ընէր եւ ինք իրմէ ելած՝ եւ ամէն ըան ի քեզ կորսնցուցած կը կոչէ՞՞ Կ'ապրիմ, ո՛չ թէ ես, հասցա Յիսուս Կ'ապրիմ մեջս: Ո՛վ Յիսուս, Սիրտ Յիսուսի, այսօր եւ միշտ իմ մէջս ապրէ. իստէ՛, գործէ՛. տանջուէ՛ զքեզ սիրող արարածիդ մէջ. ախ ժամանակ միայն պիտի սկսիմ զքեզ ծանշնալ, քեզի ծանայել, զքեզ սիրել եւ փառաբանել հոգով եւ ծշմարտութեամբ, ինչպէս որ դուն բաղձացիր որ ապրինք մարդեղութեանդ, կենացդ եւ մահուանդ ամէն խորհրդներովը, Սրտիդ բոլոր սիրովը:



## ՅԱԽԵԼՈՒԱԾ ԱՂՕԹԻՑ

### Աղօթք նուիրման:

(Յիսուսի Սրտին Տէ՛լ Կ'ապրիմէն -- ԳԼ--):

Ո՛վ սիրելի Յիսուս, բազմապատիկ անհաւատարմութեանցս հատուցում ընելու դիտմամբ՝ երախտապարտ սրտիւ կը պարգեւեմ քեզի սիրտս, եւ կը նուիրեմ ինք զինքս բոլորովին քեզի. եւ քու շնորհքդ կ'առաջագրեմ զքեզ մէյ մ'ալ չվշտացընել: (Օրը Տէ՛լ անգամ 100 օր--ան ներդ. -- 2. Ա՛բողջ -- Ինչ մ'ըողին մ'առնէ Տէ՛լ օր մը փակատար ներդ. ելիէ իստորակնի, հաղորդութեան Եւ Ելիէ Երոյ ԳԼ-- Եւ արժի: Պիտս Է. 1807 Յունիս 9.):

### Ամէնօրեայ նուիրում (կամ՝ Բարի դիտաւորութիւն) Ս. Սրտին Յիսուսի:

Տէր Յիսուս Բրիտոս, այն աստուածեղէն դիտաւորութեան հետ միացած՝ որով երկրիս վրայ անձամբ ամենասուրբ Սրտովդ գովութիւններ մատուցիր Աստուծոյ, եւ դեռ հիմայ ալ անդադար Հաղորդութեան սուրբ

Խորհրդոյն մէջ ամէն կողմ՝ յաւիտեանս ժամանակաց կը մատուցանես, այս ամբողջ օրւանս մէջ՝ առանց ամենափոքր մասն ալ ի բաց տունելու, ըստ նմանութեան միշտ անարատ կուսին, Երանելւոյն Մարիամու ամենասուրբ Սրտին՝ կը նուիրեմ Քեզի բոլորով սրտիւ բովանդակ դիտաւորութիւններս եւ խորհուրդներս, ամէն յօժարութիւններս եւ իղձերս, բոլոր խօսքերս ու գործքերս: (Օրը թէ՛ անգամ 100 օր. Եբր. 1 Էւոն ԺԳ. 19 Գեկտ. 1885.)

**Պաղատանք առ Ս. Սիրտն Եհսուսի:**

Աստուածային Սիրտ Եհսուսի, շնորհէ՛ կ'աղաչեմ, քաւարանի հոգւոց յաւիտենական հանգիստ, այսօր մեռնողներուն՝ վախճանական յարատեւութիւն, մեղաւորաց՝ ճշմարիտ ապաշխարութիւն, հեթանոսաց՝ հաւատոյ լոյս, ինձի եւ բոլոր իմիկներուս՝ Քու օրհնութիւնդ: Արդ՝ ամենազթած Սիրտ Եհսուսի, Քեզի կը յանձնեմ այս ամէն հոգիները, եւ ասոնց համար կը նուիրեմ Քեզի Քու բոլոր արդիւնքներդ՝ ի միութեան արդեանց երանեալ Մօրդ, ամենայն սրբոց եւ հրեշտակաց, եւ բոլոր այն սուրբ պատարագները, սուրբ հաղորդութիւնները, աղօթքներն ու բարի գործքերն՝ որ այսօր կ'ըլլան բովանդակ քրիստոնեայ աշխարհքի վրայ: (Օրը թէ՛ անգամ 100 օր. Եբր. 1 Էւոն ԺԳ. 13 Մարտ 1901.)

**Առաջին նուիրումն առ ամենասուրբ Սիրտ Եհսուսի (շարադրեալ ի Մարգ.-Մարեմայ Ալազօզ):**

Ես Ա. Ա. կը յանձնեմ եւ կը նուիրեմ Տեառն մերոյ Եհսուսի Քրիստոսի ամենասուրբ Սրտին իմ անձս, կեանքս, գործքերս, նեղութիւններս ու վշտերս, սրպէս զի ասկէ ետքը զինքը պատուելու, սիրելու եւ փառաւորելու համար միայն ապրիմ: Հաստատ կ'առաջադրեմ միանգամայն բոլորովին Եհսուսի Սրտին ըլլալ, ամէն բան իւր սիրոյն համար ընել, եւ սրտանց հրաժարիլ այն ամէն բանէ, որ այս աստուածային Սրտին կրնայ անհաճոյ ըլլալ:

Անոր համար, ո՞ ստուածեղէն Սիրտ Եհսուսի, կ'ընտրեմ զՔեզ սիրոյս միակ առարկան, կենացս պաշտպան, փրկութեանս ապաստանարան, տկարութեանս եւ յողորդութեանս նեցուկ, բովանդակ կենացս մէջ գործած յանցանքներուս քաւութիւն, եւ մահուանս ժամանակ ամուր ապաւէն: Ա՛ղէ, Սիրտ բարութեան, արդարացումը զիս Հօր Աստուծոյ առջեւ եւ անցուր ինձմէ իւր արդար բարկութեան պատիժները: Ո՛վ Սիրտ սիրոյ, բոլոր վստահութիւնս Քու վրադ գրած եմ, վասն զի իմ տկարութենէս եւ շարութենէս ամէն բան կը վախճամ, բայց եւ Քու անհուն բարութենէդ ամէն բան կը յուսամ:

Արդ ջնջէ վերցուր ինծմէ ինչ որ քեզի  
անհաճոյ եւ կամացդ ընդդէմ է: Սուրբ սերդ  
այնպէս խորունկ տպաւորուի սրտիս մէջ, որ  
դճեզ բնաւ չմոռնամ եւ քեզմէ երբեք չբաժ-  
նուիմ: Ար խնդրեմ քու անսահման բարու-  
թենէդ: ամենասուրբ Սիրտ Յիսուսի, որ իմ  
անունս քու վրադ միշտ գորշմուած մնայ, վասն  
զի կ'ուզեմ, որ իմ բոլոր երջանկութիւնս ու  
փառքս ըլլայ՝ քու ծառայութեանդ մէջ ա-  
պրիլ ու մեռնիլ: (Օրբ Բէկ անգամ 300 օր.  
Ներք. Լեւոն ԺԳ. 1 Յունիս 1897: — Ա՛-  
բող միս յ'ընդիւ Լեւի. Ներդո-նի-ն  
Պ,Յ. Խ. Հ. Այցելու-նի-ն ելիդեցի Տէ ե-  
ազնի Ելիդեցոյ դէրման. Պիոս Ժ. 21  
Ապր. 1908:)

**Սուիրումն Սրտին Յիսուսի:**

Սիրելի Յիսուս իմ, այսօր վերստին կը  
նուիրեմ զիս քու աստուածային Սրտիդ  
առանց բան մ'ինձ վերապահելու: Ար նուի-  
րեմ քեզի մարմինս իւր բոլոր զգայարանք-  
ներովն, հոգիս իւր բոլոր կարողութիւն-  
ներովն, եւ ինք զինքս ամբողջովին այն  
ամէն բաներով՝ որ եմ եւ ունիմ: Ար նուի-  
րեմ քեզի բոլոր խորհուրդներս, խօսքերս  
եւ գործքերս, ամէն վշտերս եւ յոգնու-  
թիւններս, ամէն յոյսերս, մխիթարութիւն-  
ներս եւ ուրախութիւններս, բայց առանձինն  
իմն եղանակաւ կը նուիրեմ քեզի իմ այս

խեղճ սիրտս, որպէս զի զքեզ միայն սիրէ եւ  
իբրեւ զո՛հ ծախի սպառի քու սիրոյդ բոցե-  
րուն մէջ:

Սիրելի փեսայդ իմ Յիսուս, հաճէ ընդու-  
նիլ իմ սրտագին փափագս, զոր ունիմ քու  
աստուածային Սիրտդ մխիթարելու եւ ընդ  
միշտ քուկդ ըլլալու:

Այնպէս մը զիս քեզի սեպհականէ, որ  
այսուհետեւ ուրիշ ազատութիւն չունենամ,  
բայց եթէ զքեզ սիրելու, եւ ոչ ուրիշ  
կեանք՝ բայց եթէ քեզի համար կրելու եւ  
մեռնելու:

Քու վրադ կը դնեմ իմ անչափ վստա-  
հութիւնս, եւ քու անսահման ողորմու-  
թենէդ կը յուսամ մեղացս թողութիւնը:

Քու ձեռքդ կը յանձնեմ իմ ամէն հո-  
գերս, եւ մանաւանդ յաւիտենական փրկու-  
թեանս հոգը: Ար խոստանամ քեզի որ՝  
զքեզ սիրեմ եւ մեծարեմ մինչեւ կե-  
նացս վերջին վայրկեանն, եւ քու ամենա-  
սուրբ Սրտիդ պաշտօնն կրցածիս չափ տա-  
րածեմ:

Յիսուս իմ, տրամադրէ իմ վրաս ինչ որ  
քեզի հաճոյ է. ես ուրիշ փոխարէն չեմ  
խնդրեր, բայց եթէ քու մեծագոյն փառքդ  
եւ սուրբ սերդ:

Տո՛ւր ինձի այս շնորհքն, որ քու աստուա-  
ծային Սրտիդ մէջ գտնեմ իմ բնակարանս.  
հոգ կ'ուզեմ անցընել կենացս բոլոր օրերն:

Հոգի ուղեմ փշեւ վերջին շունչս: Գուն ալ  
իմ սրտիս մէջ հաստատէ քու բնակարանդ  
եւ ապաստանարանդ, որպէս զի այսպէս  
սերտիւ իրարու հետ միացեալ մնանք,  
մինչեւ որ օր մը գրեզ փառաբանեւ, սիրեւ  
եւ ընդ ամենայն յաւիտեանս հոն վերն ար-  
քայութեան մէջ ժառանգել կարենամ, ուր  
ընդ միշտ պիտի գովաբանեմ ամենասուրբ  
Սրտիդ անեղբ ողորմութիւններն:

(Վերջ - ղ ընդ շարժում է Բարեւ Հոգի - ն  
մայրապետներէն՝ սրբութեան համբաւով Լիւիս-  
նեաւ՝ Բոյր Մարիամ Սրտին Յիսուսի: — Լեւոն  
Ժ. Գ. 1902 Գիւլ. 11 ին՝ այն աղջկան ընդնե-  
րուն օրը մէկ անգամ 300 օր. ներք. շնորհած  
է. Կարանի հոգոց ալ կարելի է մերչեցընել:)

Լիթանիա Ս. Սրտին Յիսուսի:

- Տէր ողորմեաց:
- Քրիստոս ողորմեաց:
- Տէր ողորմեաց:
- Քրիստոս լուր մեզ:
- Քրիստոս անսա մեզ:
- Հայր երկնաւոր Աստուած, ողորմեաց մեզ:
- Որդի Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեաց մեզ:
- Հոգիդ սուրբ Աստուած, ողորմեաց մեզ:
- Սուրբ Երրորդութիւն մի Աստուած, ողորմեաց մեզ:

- Սիրտ Յիսուսի, Որդւոյ Հօր յաւիտեանականի,
- Սիրտ Յիսուսի, որ Հոգւովն սրբով կերպարանեցար յարգանդի Վոսին Մարեմայ,
- Սիրտ Յիսուսի, միաւորեալ էութեամբ ընդ Բանին Աստուծոյ,
- Սիրտ Յիսուսի, անհուն մեծ վայելչութեան,
- Սիրտ Յիսուսի, սուրբ տաճար Աստուծոյ,
- Սիրտ Յիսուսի, տապանակ Բարձրելոյն,
- Սիրտ Յիսուսի, տուն Տեառն եւ դուռն երկնից,
- Սիրտ Յիսուսի, վառեալ հնոց ընկերսիրութեան,
- Սիրտ Յիսուսի, խորան արդարութեան եւ սիրոյ,
- Սիրտ Յիսուսի, լցեալ բարութեամբ եւ սիրով,
- Սիրտ Յիսուսի, խորք ամենայն առաքինութեանց,
- Սիրտ Յիսուսի, արժանի ամենայն գովութեան,
- Սիրտ Յիսուսի, թագաւոր եւ կենդրոն համբէն սրտից,
- Սիրտ Յիսուսի, յորում ծածկեալ կան ամենայն դանձք իմաստութեան եւ գիտութեան,

Եղբ Երրորդութեան

Սիրտ Յիսուսի, յորում բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն,  
 Սիրտ Յիսուսի, ընդ որ հաճեցաւ  
 Հայր,  
 Սիրտ Յիսուսի, յորոյ ի լրութենէն  
 ընկալաք մեք ամենեքին,  
 Սիրտ Յիսուսի, ցանկալին բլրոցն յա-  
 լիտենականաց,  
 Սիրտ Յիսուսի, համբերող եւ բազում  
 ողորմ,  
 Սիրտ Յիսուսի, առատաձեռն աս ամեն-  
 սին որ կարդան առ քեզ,  
 Սիրտ Յիսուսի, աղբիւր կենաց եւ  
 սրբութեան,  
 Սիրտ Յիսուսի, քաւութիւն վան  
 մեղաց մերոց,  
 Սիրտ Յիսուսի, զեղեալ նախատանօք,  
 Սիրտ Յիսուսի, բեկեալ վան մերոց  
 անօրէնութեանց,  
 Սիրտ Յիսուսի, հնազանդ մինչեւ ի  
 մահ,  
 Սիրտ Յիսուսի, խոցեալ տիգաւ,  
 Սիրտ Յիսուսի, աղբիւր ամենայն մսի-  
 թարութեան,  
 Սիրտ Յիսուսի, կեանք եւ յարութիւն  
 մեր,  
 Սիրտ Յիսուսի, խաղաղութիւն եւ  
 հաշտութիւն մեր,  
 Սիրտ Յիսուսի, զո՛հ մեղաւորաց,

որպէս ճշգրտելու

Սիրտ Յիսուսի, փրկութիւն յուսացե-  
 լոց ի քեզ,  
 Սիրտ Յիսուսի, յոյս ննջեցելոց ի սէր  
 քո,  
 Սիրտ Յիսուսի, քաղցրութիւն ամե-  
 նայն սրբոց,  
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս աշ-  
 խարհի, խնայեա ի մեզ Տէր.  
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս աշ-  
 խարհի, անսա մեզ Տէր.  
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս աշ-  
 խարհի, ողորմեաց մեզ:  
 Յիսուս հեզ եւ խոնարհ Սրտիւ,  
 Արա զսիրտ մեր ըստ քում Սրտի:

որպէս ճշգրտելու

Ա Ղ Օ Թ Ք

Ամենակալ յաւիտենական Աստուած,  
 հայեաց ի Սիրտ Որդւոյ քոյ սիրելոյ եւ ի  
 գոլութիւնս եւ հատուցմունս՝ զորս մատու-  
 ցանէ քեզ ի կողմանէ մեղաւորաց. եւ որոց  
 հայցենն զողորմութիւն քո՝ հաճեաց շնոր-  
 հել թողութիւն յանուն Որդւոյ քոյ Յի-  
 սուսի Քրիստոսի, որ կենդանի է եւ թա-  
 դաւորէ ընդ քեզ եւ ընդ սրբոյ Հոգւոյն  
 Աստուած յամենայն յաւիտեանս, ամէն:

(Ս. Գառնայապետն Լէոն ԺԳ. 1899 Ա-  
 ղրիւ 2ին Լիթանիայիս համար 300 օր-ան ներք.  
 շնորհած է:)



Հոգեւորապէս հաղորդուելու եղանակ  
(ի Ս. Ալփոնս. Լիկուորեայ:)

Յիսուս իմ, կը հաւատամ որ դուն ամենասուրբ Հաղորդութեան մէջ ներկայ ես: Ամէն բանէ վեր կը սիրեմ զԲեզ, եւ հոգիս առ Բեզ կը տենչայ: Բայց որովհետեւ հիմայ զԲեզ սուրբ Խորհրդոյս մէջ ընդունելու անկարող եմ, դոնէ հոգեւորապէս սիրտս եկնւր: Կը գրկեմ զԲեզ, իբրեւ թէ ճշմարտապէս իմ սիրտս եկած ըլլայիր, եւ բոլորովին կը միաւորիմ Բեզի հետ. ո՛հ, թող մի տար՝ որ այսուհետեւ երբեք Բեզմէ բաժնուիմ: Յիսուս, գերագոյն բարիք եւ քաղցր սէր իմ, վերաւորէ եւ բորբոքէ իմ սիրտս, որպէս զն միշտ եւ մի միայն Բեզի համար վառի: (60 օր-ան Ներողութիւն. Լեւոն ԺԳ. 30 Յունիս 1893):



Յ Ա Ն Կ

	Եջ
ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . .	Թ
Ամիս ամենասուրբ Սրտին Յիսուսի . . . . .	1
Ա. ՕՐ Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեռանդութեան սկիզբն ու հաստատութիւնը . . . . .	8
Բ. ՕՐ Այս ջերմեռանդութիւնն ընդգրկողին առատ շնորհք խոստացուած է . . . . .	15
Գ. ՕՐ Ամենասուրբ Սրտին ջերմեռանդութեան գլխաւոր արդիւնքը՝ աստուածային սէրը . . . . .	21
Դ. ՕՐ Յիսուսի ամենասուրբ Սրտին ջերմեռանդութեան առարկան ու վախճանը: - Ամենասուրբ Սրտին եւ սուրբ Խորհրդոյն ջերմեռանդութեանց մէջ եղած տարբերութիւնն ու իրարու հետ աղերսը . . . . .	27
Ե. ՕՐ Յիսուսի ամենասուրբ Սրտին աղնուութիւնն ու գերազանցութիւնը . . . . .	33

Ջ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին ազնուութիւնն ու գերազանցութիւնը . . . . . 37

Է. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին ազնուութիւնն ու գերազանցութիւնը . . . . . 42

Ը. ՕՐ Յիսուսի Սրտին գուժն ու գորովը առ մարդիկ . . . . . 47

Թ. ՕՐ Յիսուսի Սրտին գորովն առ մարդիկ . . . . . 54

Ժ. ՕՐ Յիսուսի Սրտին հարստութիւնները . . . . . 60

ԺԱ. ՕՐ Յիսուսի Սրտին ցաւերը . . . . . 66

ԺԲ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին վէրքը . . . . . 72

ԺԳ. ՕՐ Ամենասուբբ Սրտին չորս իղձերը . . . . . 78

ԺԴ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին մեղմէ ու զածն ինչ է . . . . . 84

ԺԵ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտը զմեզ զամէնքս իրեն կը կանչէ . . . . . 90

ԺԶ. ՕՐ Ինչպէս պէտք ենք երթալ Յիսուսի ամենասուբբ Սրտին . . . . . 95

ԺԷ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտն ապահով դարման մըն է մեր հոգւոյն ամէն տեսակ հիւանդութիւններուն . . . . . 101

ԺԸ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին Ձեթենեաց պարտիզին մէջ հոգեվարքը . . . . . 107

ԺԹ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին Ձեթենեաց պարտիզին մէջ հոգեվարքը . . . . . 113

Ի. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին ջերմեռանդ անձինք անոր չարչարանքը խորհիւ կը սիրեն . . . . . 119

ԻԱ. ՕՐ Մարդկան ապերախտութիւնը Յիսուսի ամենասուբբ Սրտին հանդէպ . . . . . 125

ԻԲ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին գանգատները . . . . . 131

ԻԳ. ՕՐ Հրահանգի պատիւ ամենասուբբ Սրտին Յիսուսի . . . . . 137

ԻԴ. ՕՐ Սուբբերու Յիսուսի ամենասուբբ Սրտին ունեցած ջերմեռանդութիւնը . . . . . 142

ԻԵ. ՕՐ Յիսուսի ամենասուբբ Սրտին պատկերներուն վրայ . . . . . 148

ԻԶ. ՕՐ Ամենասուբբ Սրտին ջերմեռանդութեան առատ պտուղներուն հակառակող չորս արդելքներուն վրայ . . . . . 153

ԻԷ. ՕՐ Ամենասուբբ Սրտին ջերմեռանդութեան արդելքներուն յաղթելու միջոցը՝ մահացուցումը . . . . . 161

ԻԸ. Օր. Յիսուսի Արտին ջերմեռանդու-  
թիւնն ստանալու միջոցներ: Ա-  
ռաջին միջոց՝ աղօթք . . . . . 168

ԻԹ. Օր. Յիսուսի ամենասուրբ Արտին  
ջերմեռանդութիւնն ստանալու  
երկրորդ միջոցն է՝ ստէպ հա-  
ղորդուիլ . . . . . 173

Լ. Օր. Յիսուսի Արտին ջերմեռանդու-  
թիւնն ստանալու երրորդ միջոցն  
է՝ Ս. Խորհրդոյն այցելութիւն  
ընել . . . . . 179

ԼԱ. Օր. Յիսուսի ամենասուրբ Արտին  
ջերմեռանդութիւնն ստանալու  
չորրորդ միջոցն է՝ մեծ ջերմե-  
ռանդութիւն մը Մարեմայ ա-  
նարատ Արտին . . . . . 185

ԼԲ. Օր. Յիսուսի սուրբ Արտին ջերմե-  
ռանդութիւնն ստանալու հին-  
գերորդ միջոցն է՝ Ս. Յովսէփայ,  
Ս. Յովհաննէս Աւետարանչի եւ  
Ս. Ալբրուս Գոնզակացւոյն  
մասնաւոր ջերմեռանդութիւն  
մը . . . . . 191

ԼԳ. Օր. Ամենասուրբ Արտին ջերմեռան-  
դութիւնն ամենուրեք տարածե-  
լու եռանդին վրայ, զոր Յիսու-  
սի Արտն իրեն նուիրուածներէն  
կը սպասէ . . . . . 196

ՎԵՐՋԱԲԱՆ Ամենասուրբ Արտին ջերմե-  
ռանդութեան մէջ յարատեւե-  
լու վրայ . . . . . 204

Յաւելուած աղօթից . . . . . 209

ՅԱՆԿ . . . . . 219



« Ազգային գրադարան »



NL0028674

1707